ՀԱՒԱՔԱԾՈՅ [illegible] Ի ԹԻՒ........

ՀԱՒԱՔԱԾՈՅ Թ. ԱԶԱՏԵԱՆ Ի ԹԻՒ______

# ՍՈՒՐԲ
# ԱՒԵՏԱՐԱՆ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Յայսմ տպագրութեան դնի՛ ի սկզբան
համառօտ միաձայնութիւն չորից
աւետարանչաց, և շարակարգութեան կանոնացն
Եւսեբեայ։

ՏԻՓԼԻՍ.
Յամի Տն 1807. և ՚ի Թուին Հայոց՝ ՌՄԾԶ.
Ի Տպարանի Հօրը Միքայէլեանց։
Արտօնութեամբ Կայսերագթութեան
Հրովարտակին։

ՊԵՏ ԿԵՆՏՐ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ՓԱՀՑԱՐԱՆ

# ՄԻԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ
# ՉՈՐԻՑ
# ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ.

կամ

Կարգ ժամանակին ամաց, և գոր-
ծոցն Քրիստոսի.

Յորում չորս աւետարանչացն ասացեալք կար-
գաւ ժամանակի դասաւորին. և ընդ մի-
մեանս յարմարեալքն ՚ի կազմել մի պատմութիւն
կենացն Քրիստոսի։

Մանկութիւն, պատանեկութիւն, և
երիտասարդութիւն Քրիստոսի.

կամ

Գործքն Քրիստոսի ՚ի ծննդենէ անտի մինչև յերեսնամ
երեսներորդ ամն, յորժամ մկրտեցաւ
՚ի Յորդանան։

ԲԱՆՆ, որ էր ՚ի սկզբանէ առ Աստուած, և զա-յն լոյս և կեանք աշխարհի որ արարչա-գործեցաւ ՚ի ժամանակի, եղև մարմին, այս է Որդին Աստուծոյ եղև մարդ, զի զմարդիկ արասցէ որդիս Աստուծոյ, յամի արարչագործութեան աշխարհի 3950, որ է ՚ի Ջրհեղեղէ 2293 ամ. յԱբրահամէ 2001, ՚ի շինութենէ Հռովմայ 751, ՚ի գերութենէ Բաբելացւոց 591, յեօթներորդացն Դանիէլի 453, ՚ի Մակաբայեցւոց 165, յամացն Յու-

)( 2 լեանի

կեցոլ 43, կայսերն Օգոստոսի՝ իբր 42. (Յովս. ա.) Եւ այս կատարեցաւ օրինակ զայս.

Ե Առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակապետն յԱյ աւետել Զաքարեայ զծնունդն որդւոյն Յովհաննու մկրտչի, որ հանդերձեալն էր լինել յառաջընթաց և մանկացոյց Քի. նմին իրի և Եղիսաբեթ կին նր յղացաւ զորդն Յովհաննէս: Նոյն Գաբրիէլ առաքեցաւ յամսեանն վեցերորդի 'ի 25 Մարտի քերովբեալ ամին աւետել մեր կուսին Մարիամու զյղանալ Որդւոյն Այ. Մարիամ հաւանեցաւ, և յղացաւ. և 'ի նմա բանն մարմին եղև: Աշնորհեալ կոյսն յայց եկ Եղիսաբեթի, և լցոյց զնա ընդ Յովհաննու Հոգւով սրբով. Ծնանի Յովհաննէս 'ի 24 Յունիսի: Ծնանի և Քս 'ի Բեթղեհէմ 'ի 25 Դեկտեմբերի նորին ամսոյ, և յաւուրն ութերորդի, այս է՝ յառաջնում աւուր ամսեանն Յունվարի թլփատեցաւ, և կոչեցաւ Յս, որ է՝ փրկիչ: (Ղուկ. ա. և բ.) Զազգաբանութիւն Քի 'ի նախահարց և 'ի թագաւորաց գրեաց (Մատթ. 'ի գլ. ա. և Ղուկ. գլ. գ:)

Դ Յերեքտասաներորդի աւուր զկնի ծննդեանն Քի, Ի 'ի վեցերորդ աւուր յաջորդ Յունվարի, գան մոգք առաջնորդութեամբ աստեղն 'ի Բեթղեհէմ, և անկեալ երկրպագանեն Քն, և մատուցանեն նմա ոսկի, կնդրուկ, և զմուռս. և փախուցեալ 'ի Հերովդէէ, ընդ այլ ճանապարհ գնան յաշխարհն իւրեանց: (Մատթ. բ. 1:)

Դ Ի քառասներորդ աւուր զկնի ծննդեանն Քսի, Ի՝ յերկրորդ աւուր Փետրվարի իբր յաւուր սըրբութեան ծննդականի ըստ գրելոյ յօրէնս, ամենօրհնեալ կոյսն յանդիման արար զմանուկն Յս 'ի տաճարին, զոր ընկալեալ 'ի գիրկս ծերունոյն Սիմէոնի, քարոզեաց զնա Մեսիա, ընդ նմին օրհնեալ և Աննա Մարգարէ: Ղուկ. բ. 22:

Գ Տեսեալ Հերովդի, թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, կոտորել զամ մանկունսն որ 'ի Բեթղեհէմ, որպէս զի ընդ նոսա և զՔս սպանցէ. այլ նա յառաջագոյն ազդեցութեամբ հրեշտակի արդէն փախուցեալ էր 'ի Յովսեփայ և 'ի Մարիամայ յԵգիպտոս. և 'ի վախճանին Հերովդի, եկն և բնակեցաւ 'ի Նազարեթ յեօթներորդ աւուր ամսեանն

Յուն.

Յունվարի. վճռոյ և Նազովրեցի կոչի: Մատթ.
Բ. 23:

Զ Քն երկոտասանամեայ, յելանելն ընդ ծնողսն յԵրուսաղէմ, կորուսին զնա ծնօղքն իւր. և յետ երից աւուրց գտանեն զնա 'ի տաճարի ընդ վարդապետսն, և դարձեալ անդրէն 'ի Նազարեթ ընդ նոսա. էր նոցա հնազանդ. և զարգանայր իմաստութեամբ. և հասակաւ, և շնորհօք յԱյ և 'ի մարդկանէ:
Ղուկ. Բ. 42:

Է Յերկոտասաներորդ ամէ մինչև յերեսներորդ ամն եկաց Քն անյայտ, և առնէր զհիւսնութիւն:
Ղուկ. Գ. 23: Մարկ. Զ. 3: Մատթ. ԺԳ. 55:

## ԱՅՐԱԿԱՆ ՀԱՍԱԿՆ ՔՐԻ·

Գործոց Քրի 'ի Մկրտութենէն մինչև չարչարանաց զատկին, այս է՝ գործոց յերից ամբողջ ամաց, այն է՝ 'ի սկզբանէ ամսեանն Յունուարի երեսն և մինչև ամ Քրի մինչև յ25 Մարտի:

Ը 'Ի Հնգետասաներորդի ամի Տիբերեայ կայսեր որն Յովհաննէս մկրտիչ յանապատի անդ մերձ 'ի Յորդանան հրամանաւն Այ սկսաւ քարոզել զապաշխարութիւն, և մկրտել. և պատրաստ առնել զճանապարհն Քի: Ղուկ. Գ. 1:

Թ 'Ի նմին ամի Քն 'ի լրանալ երեսներորդ ամին հասակի իւրոյ, և 'ի մտանել յերեսուն և 'ի մի երորդ ամն զաւուրս երեքտասան, մկրտեցաւ 'ի Յովհաննէ 'ի վեցերորդ աւուր ամսեանն Յունվարի, այս է՝ 'ի նմին աւուր՝ յորում երեսուն ամօք յառաջագոյն մանուկ ծնեալ երկրպագեցաւ 'ի մոգուց. Ղուկ. Գ. 21. Մատթ. Գ. 13. Մարկ. Ա. 9. և յայնժամ յայտնեցաւ յԱյ. թէ ո՛ իցէ, ո՛չ որդի Յովսեփայ, այլ Այ. քանզի էջ Հոգին ՍԲ իբրև զաղաւնի 'ի վերայ նորա. և եղև ձայն Հօր. * Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ|: Մատթ. Գ. 16. Ղուկ. Գ. 21. Յովհ. Ա. 28. և 'ի ձայնէ անտի Յովհաննէս վկայ-

եայ՝ թէ սա է Մեսիայն, որ հարցն խոստացեալ, զ՝ փրկիչ, և կեցուցիչ աշխարհի։ Անդ.

Ժ Նոյնժամայն ընդ մկրտելն, թ՝ 'ի նմին աւուր 'ի 6 Յունուարի, մեկնեցաւ Քս յանապատ, և անդ՝ առ 'ի պատրաստելոյ զանձն 'ի պաշտօն քարոզութեան եկաց զաւուրս քառասուն յաղօթս և 'ի պահս, և ապա քաղցեալ փորձեցաւ 'ի սատանայէ, և յաղթեաց նմա, և հրեշտակք պաշտէին զնա իբրև զՏր իւրեանց։ Մատ. դ. 1. Ղուկ. դ. 1. Մարկ. ա. 12։ Արդ՝ սկսաւ Քս զքառասնօրեայ պահս յեօթներորդ աւուր Յունուարի, և կատարեաց 'ի քառասներորդ աւուրն, որ էր հնգետասաներորդ օրն Փետրվարի, յորում աւուր յաղթեալ քննարկութին սատանայի, դարձաւ 'ի Գալիլեա, և զնեղն առնու 'ի Նազարեթ զաւուրս հնգետասան, ըստ որում ասէ Տէր Եղիշան հերեա. Ծն։

ԺԱ 'Ի յետոյն և 'ի վեցերորդ աւուր զննի մկրտութեան ասէ Տէր Եղիշան հերեա. Ծա. այն է յաջորդում աւուր Մարտի (քանզի տարին այն նահանջ էր, ուստի և ամիսն Փետրվարի ունէր զաւուրս 29.) առաքեցին Հրեայք հրեշտակս առ Յովհաննէս հարցանել, եթէ նա իցէ Մեսիայն. և նա խոստովան եղև և ոչ ուրացաւ, եթէ ես ոչ եմ Մեսիա. և 'ի վաղիւ անդր, որ էր երկրորդ օր Մարտի, տեսեալ Յովհաննու զՔս զի գայր, եցոյց զնա մատամբն, և ասէ. * Ահաւասիկ գառն Այ, որ բառնայ զմեղս աշխարհի ‖։ Զնոյն արար և սաւց Յովհաննէս և 'ի միւսում աւուր, այն է յերրորդ աւուր Մարտի. զոր լուեալ երկուց աշակերտացն նորա, անդէն զհետ գնացին Յսի. յորոց մին, որ էր Անդրէաս 'ի վաղիւ անդր ած է զեղբայր իւր զՍիմոն առ Յս։ 'Ի նմին աւուր, այն է 'ի չորրորդ աւուր Մարտի, կոչեաց Յս զՓիլիպպոս, որ եած զՆաթանայէլ. քանզի զայսոսինակ ը իւրաքանչիւր աւուրց պատմէ, և նշանակէ Տէր Յովհաննէս ա. 2. 29. 35. 43. 45։

ԺԲ Յետ երից աւուրց զննի կոչելոյն զՊետրոս և զԱնդրէաս, այն է 'ի հինգերորդ աւուր Մարտի, որ էր վեցերորդ օր զննի մկրտութեն Քի, ար

ա

դաէ ծքն Եղբիփան հերնա. ՃԺ. Քրիս հռչեցու-
թ հարսանիս 'ի Կանա Գալիլեացւոց, և արար
զջուրն գինի, և այս եղև սկիզբն նշանաց Նորա.
որով յայտնեաց աշխարհի զանձն Թէ ո՛ իցէ. Յովհ.
Բ. 1. Յետ այսորիկ էջ 'ի Կափառնաում. անդ ՃԺ

# ԱՌԱՋԻՆ ԱՄ

## Քարոզութիւն Քրիստոսի.

Այսուհետև գործոց Քրիստոսի սկսեալ յառաջին պատ-
մէ զհետ Մկրտութեանն մինչև ցերկրորդ զատիկն.
այս է՝ զորս գործեաց 'ի սկզբան և 'ի հինգե-
րորդ օրէ Մարտի՝ երեսուն և մի երորդ ամին
Քրիստոսի, մինչև ցհանգստեան Մարտի երեսուն երկո-
երորդ ամին Քրիստոսի.

ՃԷ Քրիստոս եւ 'ի քաղաքէն Կափառնաում յերուսա-
ղէմ մերձ զատկին, ուր արտաքսեաց զվաճառականս
չուանեայ եհան 'ի տաճարէն զգնողս և զվաճառա-
ողս, և քարոզէր և արարեալ զբազում նշանս
զարմացումն հզեաց 'ի հաւատս իւր. Յովհ. Բ. 13.
և 14. Այս ամ եղև 'ի Մարտի նորին ամսեան.
որ էր երեսուն և մի երորդ ամ Քրիստոսի.

ՃԸ 'Ի հաւատացելոց անտի մին եղև Նիկոդեմոս իշ-
խան Հրէից, որում Քրիստոս եցոյց զհարկաւորութիւն
հոգևորական վերստին ծննդեան 'ի ձեռն մկրտութեան.
և հաւատոյ որ 'ի խաչելեալն Քրիստոս. Յովհ. Գ. 1.

ՃԹ Արդ՝ սկսաւ Քրիստոս յերեսուն և մի երորդ ամին
հաւանել իւրոյ յաւուրս զատկի ինքնին քարոզել.
և 'ի ձեռն առաքելոց 'ի սկզբան Ապրիլի մկրտել
'ի Հրէաստանի. վասն որոյ և բազումք 'ի Յովհաննէ
մկրտութեան և յորդորմամբ նորին գային առ Յի-
սուսի. Յովհաննէս իւրովի կատարեալ զպաշտօն
իւր, յանդիմանեալ զՀերովդէս վասն շնութեան, արգ-
ելաւ 'ի նմանէ 'ի բանտ յամսեանն Դեկտեմբերի.
Յովհ. Գ. 22. և 23. Մատթ. ԺԴ. 3. Մարկ. Զ. 17.
Ղուկ. Գ. 19.

Յայն ամս Քս փախուցեալ 'ի Հերովդէէ, եթող զՀրէաստան 'ի սկիզբն երեսն և երկրորդ ամին իւրոյ (որպէս յայտ է 'ի բանից նորա, զոր ինքն ասաց. * Այլ եւ չորք ամիսք են, և հունձք գան I. Յովհ. Դ. 35.) և գնաց 'ի Գալիլեա. և 'ի ճանապարհի յանցանելն ը Սամարիա, դարձուցեալ Սամարացին, և նովաւ զայլ եւս Սամարացիս դարձոյց 'ի հաւատս. և յետ երկուց աւուրց գնացեալ 'ի Գալիլեա, քաղցրութք ընկալան զնա Գալիլեացիք ։ Այս 'ի սկզբան փետրվարի եղև 'ի Կանա Գալիլեացւոց, և անդ յաղաչել զնա Թագաւորազին, բժշկեաց զորդի նորա, որ դնէր ջերմացեալ. զայս գործեալ երկրորդ նշանս արար անդէն Քս, և ապա զայլ բազումս եւս, որովք նա ինքն իսկ հաստատեաց 'ի Կափառնաում զբնակութիւն իւր ։ Մատթ. Դ. 12. և 13. Մարկ. Ա. 14. Յովհ. Դ. 22. և Դ. 1. 4. 45. և 46 ։

ԺԷ Գնացեալ անտի յառաջ ը եզր ծովուն Գալիլեացւոց, նշանաւ որսոյ ձկանցն զՊետրոս և զԱնդրէաս, նոյն և զՅակոբոս, և զՅովհաննէս կոչեաց գնալ զհետ իւր, և արար զնոսա որսորդս մարդկան ։ Մատթ. Դ. 18. Ղուկ. Ե. 1. Մարկ. Ա. 16.

ԺԸ Մտեալ նորօք հանդերձ 'ի Կափառնաում 'ի ժողովուրդն, քարոզեաց, և ազատեաց զայսահարն 'ի դիւէն. և մտեալ 'ի տունն Պետրոսի բժշկեաց զզոքանչ նը 'ի ջերմանէ, և զայլս բազումս 'ի պէսպէս հիւանդութեանց ։ 'Ի վաղիւն անդր գնաց յանապատ տեղի կալ յաղօթս. և անդ 'ի գտանել զնա Պետրոսի, և ը նմա ամբոխին, ա- խոյս տալով 'ի նոցանէ հրամայեաց աշակերտացն երթալ յայնկոյս, և 'ի նաւին 'ի քուն մտեալ 'ի յառնել մրրկին զարթուցեալ յաշակերտացն սաստեաց հողմոյն և ծովուն ։ Մարկ. Ա. 21. 29. 32. 42. Ղուկ. Դ. 28. 31. 38. 40. 42. Մատթ. Ը. 14. 16. 18. 24. Երևի, թէ այսուհետև, և որք զկնի գան, եղեն 'ի սկզբան Մարտի երեսուն և երկրորդ ամին Քի, յառաջ քան զպասեքն ։

ԺԹ Այս անցեալ յայնկոյս, եկն յերկիրն Գերգեսացւոց. ուր բժշկեաց զերկուս դիւահարս, հրա-

մանն

ման առնեալ դիւացն՝ որք աղաչէին զնա՝ երթալ
յերամակն խոզից, և մտեալ 'ի նոսա՝ զերկուս հա-
զարս 'ի նոյանէ հեղձուցին 'ի ծովուն. և վասն
այսորիկ աղաչեալ 'ի քաղաքացւոց անտի գնալ
'ի սահմանաց նոցա, անցեալ յայնկոյս եկն միւս-
անգամ 'ի Կափառնաում, ուր զանդամալոյծն
զոր 'ի ցուցն իջուցին առաջի նորա, բժշկեաց.
Մատթ. ը. 28. և թ. 1. Մարկ. ե. 1. և բ. 1.
Ղուկ. ը. 26. և ե. 18.

ծը Գնացեալ անտի առ ծովեզերբն՝ կոչեաց զՄատ-
թէոս, որ նստէր 'ի մաքսաւորութե գալ զկնի
իւր. Եւ ապա յարոյց 'ի մեռելոց զդուստր Յայ-
րոսի, և զձանապարհայն բժշկեաց զկին մի ու-
ռատես յաղբերս արեանն, և զերկուց կուրաց
զաչս երաց. և եհան զդև մի համր: Մատթ. թ.
գ. 18. և 27. Մարկ. բ. 14. և ե. 22. Ղուկ. ե.
27. և ը. 41.

# ԵՐԿՐՈՐԴ ԱՄ

## Քարոզութեն Քրիստոսի.

Որ բովանդակէ զգործն՝ սկսեալ 'ի յերկրորդ
զատկէ զկնի Մկրտութեանն մինչև յերրորդն,
այս է՝ 'ի վախճանէ Մարտի լբ ամին Քրիստի,
մինչև յվախճան Մարտի լգ ամին Քրիստի.

է Քս գնացեալ 'ի Գալիլէէ յԵրուսաղէմ յերկ-
րորդ զատկին՝ ողջացոյց զերեսուն և ութամեայ
հիւանդն՝ որ անկեալ դնէր 'ի Պրոբատիկէ ա-
ւազանին, և հրամայեաց նմա՝ առնուլ զմահիճսն.
և գնալ յաւուր շաբաթու, և վասն ամբաստան
լինին Հրէայքն, որպէս թէ այնու զշաբաթն
լուծանէ. այլ Քս բազում բանիւք արդարա-
ցուցանէ զինքն. Յովհ. ե. 2: Նոյնպէս և զաշա-
կերտսն՝ որք թշնամանէին զաշակերտսն նորա,
զի գոլով քաղցեալ 'ի շաբաթու հասկ կորզէին.
(մտս 'ի վերջն Ապրիլի լբ ամին Քի) պա-
պանձեցոյց: Ղուկ. զ. Մատթ. ժբ. 1. Մարկ.
բ. 23: Ձեռոյն ոչոր և 'ի բժշկելն 'ի մա-
տան

տուամ շաբաթու զգօսացեալ ձեռն ուրուք ։ Վերջ
խոյս տուեալ 'ի արտմտութենէ Հրէից , եմուտ
'ի ծովն , և անտի ուսոյց զամբոխն , և զբազում
հիւանդս և զդիւահարս բժշկեաց ։ Մատթ. ԺԲ.
9. և 15. Մարկ. Գ. 1. և Ղուկ. Զ. 6 ։

ԾԱ Յետ այսորիկ 'ի կեան Սիմոնի ել 'ի լեառն , և
հանեալ զգիշերն ողջոյն յաղօթս՝ ընդ առաւօտն
ընտրէ զերկոտասան առաքեալս , որոց առաջի
անբաւ բազմութեան մարդկան խօսեցաւ զքարոզն՝
որ 'ի լերինն անուանի , և զլրումն քրիստոնէա-
կան վարուց , և աւետարանական կատարելութեն
բովանդակէ ։ Մարկ. Գ. 13. Ղուկ. Զ. 12. և 17.
Մատթ. Ե. 1 ։

ԾԲ Իջեալ 'ի լեռնէ անտի 'ի յարտօրայս Կափառ-
նաւումայ՝ սրբեաց զբորոտ մի , և մտեալ 'ի քաղաքն՝
ողջացոյց զհարիւրապետին ծառայ , որ էր անդա-
մալոյծ . և 'ի մտանելն 'ի Նային յարոյց 'ի մե-
ռելոց զորդի այրւոյն ։ Մատթ. Ը. 1. և 5. Մարկ.
Ա. Ղուկ. Ե. և Է. 1. և 11 ։

ԾԳ Լուեալ զայսոսիկ Յովհաննու 'ի բանտին , առ-
աքեաց առ նա զերկուս յաշակերտաց իւրոց ,
զի ասասցեն 'ի նմանէ՝ եթէ նա՞ է Մեսիայն . և 'ի
դառնալն նց առ Յովհաննէս , գովէ Քս զՅով-
հաննէս , և նշանակէ զդպիրս և զփարիսեցիս՝ որք
ոչ Յովհաննու և ոչ ինքեան հաւատային , զոր և
լաւ համարի քան զնս զմաքսաւորս , և զպոռնիկս՝
որք ապաշխարեցին ։ Ղուկ. Է. 18. և 24. Մատթ.
ԺԱ. 2. և 7 ։

ԾԴ Վասն այսորիկ և 'ի բազմելն 'ի ճաշ 'ի տան Սիմովնի
փարիսեցւոյ , շնորհեաց զմեղս Մագդաղենաց-
ւոյն՝ որ ապաշխարեաց , և զնա լաւ եցոյց քան
զՍիմովն ։ Ղուկ. Է. 36 ։ Իսկ ապա բժշկեաց 'ի
Կափառնաում զդիւահարն կոյր և համր . և զփա-
րիսեցիս , որք զնշանս զայս մոգութեան արարեալ հա-
մարէին՝ պապանձեցոյց ։ Մատթ. ԺԲ. 22. 24.
Ղուկ. ԺԱ. 14. 15. Մարկ. Գ. 21 ։

ԾԵ Եկեալ են ազգականքն ունել զնա , որպէս եթէ մո-
լեգնեալ իցէ ։ Մարկ. Գ. 21 ։ Իսկ որում ասացն
ցնա , եթէ ազգականք քո եկեալ են՝ պատասխանի
ետ , թէ նք են եղբարք և ազգականք իմ՝ որք լսեն ,
և առնեն զբանն Այ ։ Մատթ. ԺԲ. 48. Մարկ.
Գ. 31. Ղուկ. Ը. 19 ։ Գնա-

Գտանեալ ՚ի տանէն առ ծովեզերբն՝ ուսուցանէ անդ զժողովուրդն ակնարկս առակօք սերման, որոմանց, մանանխոյ, խմորոյ, զորս և մեկնեաց աշակերտացն ՚ի տան, յաւելեալ ՚ի վր և զայլ եւս առակս գանձի, մարգարտի, և ուռկանի արկելոյ ՚ի ծով: Մատթ. ժգ. 1. Ղուկ. ը. 4. Մարկ. դ. 1.

Գնացեալ ՚ի գաւառ իւր ՚ի Նազարեթ, և անդ քարոզեալ՝ չեղև ընդունելի յիւրոցն, այնչափ արտաքսեցաւ ՚ի քաղաքէն, և գրեթէ գահավէժ եղև. Վայ ՚ի մերձակայ շէնս և յայլ գիւղս և ՚ի քաղաքս Գալիլեայ աւետարանելով շրջէր ընդ իւրսն: Մարկ. զ. 6. Ղուկ. ը. 1:

Առաքէ զերկոտասան առաքեալս երկուս երկուս ՚ի քարոզել զարքայութիւն Այ, և բժշկել զհիւանդս. և նոքա ամ ուրեք քարոզէին, հալածէին զդևս, և բժշկէին զախտաժէտս օծմամբ իւղոյ: Զնոյն արար և Յս շրջեալ ընդ Գալիլեա: Մատթ. ժ. 1. և ժա. 1. Մարկ. զ. 7. 12:

Լուեալ Հերովդի զայս ամ, կասկածէր, եթէ Յս իցէ Յովհաննէսն զոր ինքն փոքր մի յառաջ սպանեալ էր, և արդ ՚ի մեռելոց յարուցեալ: Ղուկ. թ. 7. Մատթ. ժդ. 1. Մարկ. զ. 14.

Ապա խոյս տուեալ Յսի ՚ի գաղտնականութենէ նորա՝ գնայ ընդ իւրոյն յայնկոյս ծովուն Գալիլեացւոց յանապատ տեղիս, և անդ ուսուցեալ և բժշկեալ զամբոխն, որք խուռն ընթացան, կերակրեաց զհինգ հազարս հինգ գարեղէն հացիւն, և երկու ձկամբք. և քանզի կամէր ժողովուրդն թագաւոր կացուցանել զնա, հրամայեաց աշակերտացն անցանել յայնկոյս, և ինքն ընդ երեկս առանձինն փախեաւ ՚ի լեառն կալ յաղօթս. այլ ՚ի վտանգիլ աշակերտացն ՚ի ծովուն, գնացեալ ՚ի վերայ ծովուն, զՊետրոս՝ որ գայր առ նա այլ երկմտեալ ՚ի հաւատս իբրև մերձ էր ընկղմիլ, կանգնեաց. և հանդարտեցոյց զհողմն, և հասեալ ՚ի Գեննէսարէթ՝ զամենայն հիւանդս մերձեցուցմամբ քղանցից հանդերձին բժշկեաց: Մատթ. ժդ. 13. 22. 24. 34. Մարկ. զ. 30. 45. 48. 53. Ղուկ. թ. 10. Յովհ. զ. 1. 15. 18:

Ի վաղիւն անդր ՚ի գիւղն բազմաց զհետ նորա

մեան քաղմնացուցանելոյն զհացն. խրատեաց զնա հոգևորական և երկնաւոր հացին 'ի խնդիր լինել, որ կեանս տայ աշխարհի. և առանց որոյ չէ հնար ումեք կեալ. և եցոյց՝ թէ ինքն է հացն այն. քանզի մարմին իւր է կերակուր, և արիւն իւր՝ ըմպելի որ տայ զկեանս յաւիտենականս։
Յովհ. Զ. 24.

# ԵՐՐՈՐԴ ԱՄ

## Քարոզութեան Քրիստոսի.

Որ բովանդակէ զգործս նր 'ի յերրորդ զատկէ մինչև ցառաջիկայ չորրորդ զատկին, այսինքն՝ մինչև ցյարութիւնն Ղազարու. այս է՝ զգործսն Քրիստոսի 'ի վախճանէ Ամսոյ լԳ ամի հասակին Քրիստոսի, մինչև 'ի սկիզբն Ամսոյ լԴ ամինն.

ԿԷ Յայս յերրորդ զատիկ ոչ ել Յիսուս յԵրուսաղէմ ըստ սովորութեան օրինաց, զի Հրէայքն խորհէին սպանանել զնա. այլ խոյս ետ 'ի Գալիլեա. ուր դպրացն, որք բամբասէին զաշակերտսն՝ զի անլուայ ձեռօք ուտէին, ուսոյց՝ թէ ոչ որ ընդ բերանն մտանէ, այլ որ 'ի սրտէն ելանէ՝ այն պղծէ զմարդն։ Յովհ. Է. 1. Մատթ. ԺԵ. 1. Մարկ. Է. 1.

ԿԸ 'Ի սկիզբն Մայիսի՝ որպէս երևի, գնաց 'ի Գալիլեէ 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի, ուր ըզդուստր Քանանացւոյն՝ յաղթեալ յաղերսանաց մօրն՝ ազատեաց 'ի դիւէն. և անտի եկեալ միւսանգամ 'ի Գալիլեա, բժշկեաց զբազում ախտաժետս, և ողջացոյց զխուլ մի և զհամր՝ արկանելով զմատունսն յականջսն, և թքով շօշափելով զլեզուն։ Մատթ. ԺԵ. 21. և 29. Մարկ. Է. 32.

ԿԹ Յետ այսորիկ. գթացեալ 'ի վերայ ժողովրդեանն, որ եկեալ էին զհետ նորա՝ և էին նօթի, միւսանգամ զչորս հազար արս եօթն հացիւ և սակաւ ձկամբք յագեցոյց. և նոյնժամայն մտեալ 'ի նաւ եկն 'ի սահմանս Մագդաղենայ։ Մատթ. ԺԵ. 32. և 39. Մարկ. Ը. 1. և Է. 10.

Ընդ զՔաղաքորդութեան Փարիսեցւոց՝ որք նշան յերկնից խնդրէին՝ կշտամբեալ ։ Եւ դարձեալ գնացեալ յայնկոյս պատուիրէ աշակերտացն զգոյշ լինել ՚ի խմորոյ, այս է՝ ՚ի կեղծաւորութենէ փարիսեցւոց. եւ եկեալ ՚ի Բեթսայիդա՝ եբաց արտաքոյ շինին զաչս կուրին. անտի եկեալ ՚ի կողմանս Կեսարեայ Փիլիպպեայ, սակս հաւատոյն Պետրոսի՝ որով ասացն՝ թէ *Դու ես Որդի Այ կենդանւոյ]. խոստացաւ նմա լինել վէմ եկեղեցւոյ. եւ յետ այնորիկ գուշակեաց ՚նք զմահ խաչին զոր ը̄նդունելոց էր յԵրուսաղէմ, յորմէ զարհուրեալ Պետրոսի. կշտամբէ զնա Յս. եւ ուսուցանէ, թէ որ կամի զանձն իւր կեցուցանել. պարտի բառնալ զխաչն իւր ։ Մատթ. ժզ. 1. 13. 21. Մարկ. ը. 11. 22. 27. 31. Ղուկ. թ. 18. եւ 22 ։ Երեւի թէ այսպատահեցաւ ՚ի մերձն Յուլիսի. քանզի

Յաւուրն ութերորդի զկնի այնորիկ, որ էր վեցերորդ օր Օգոստոսի (զի յայնմ աւուր կատարէ Եկեղեցին զՊայծառակերպութենէ Քի̄) յայլակերպս եղեւ առաջի Պետրոսի, Յակոբայ. եւ Յովհաննու, եւ լուսաւորեալ իբրեւ զարեգակն՝ խօսի ը̄ Մովսեսի եւ ը̄ Եղիայի ՚ի վր̄ մահուն իւրոյ ։ Եւ եկն ձայն ՚ի հօրէ. *Դա է Որդի իմ սիրելի. ը̄ որ հաճեցայ, դմա լուարուք]։

՚Ի վաղիւ անդր, այս է՝ յեօթներորդ օրն Օգոստոսի իջեալ ՚ի լեռնէ առ ժողովուրդն, բժշկեաց զդիւահարն՝ զոր ոչ կարացին աշակերտքն բժշկել. զի այն ազգ դիւաց ոչ ելանէր՝ բայց եթէ աղօթիւք եւ պահովք ։ Եւ մինչդեռ շրջէին ը̄ Գալիլեայ միւսանգամ գուշակեաց ՚նք զմահ իւր եւ զյարութիւն ։ Եւ մտեալ ՚ի Կափառնաում հրամայեաց տալ մաքսաւորաց զերկդրամեանն, մի վս̄ իւր, եւ միւս վասն Պետրոսի ։ Մատթ. ժէ. 14. 22. 24. Մարկ. թ. 13. 29. Ղուկ. թ. 37. 44 ։

Ընդ. յայտնեալ եւ կշտամբեալ զպատուասիրութին Առաքելոցն, որ զճանապարհայն վիճէին ը̄ միմեանս վս̄ նախագահութե̄. եւ ուսոյց նոցա մեծապէս զգոյշ լինել ՚ի գայթակղութենէ. ուսոյց եւ զեղանակ յանդիմանելոյ զընկերն մեղուցեալ, եւ թէ պարտ է թողուլ նմա եթէ մեղուցեալ իցէ, եւ զայս ցուցանէ առակաւ ան-

գութ ծառային, յորժամ տէրն վերստին պահանջանջեաց զնա զպարտսն զոր միանգամ թողեալն էր։ Մատթ. ժը. 1. 6. Մարկ. թ. 32. 41. Ղուկ. թ. 46. և ժէ. 1։

ԼԷ Եւ անտի ՚ի Սեպտեմբերի յԵրուսաղէմ ՚ի տօն տաղաւարահարաց ( որ կատարի ՚ի 15 ամսեանն Թիշրի, որ յայնմ ամի թուի համդիպեալ ՚ի 29 Սեպտեմբերի) այլ ՚ի ծածուկ, և ՚ի Ճանապարհին յոչ ընդունելոյ զնա Սամարացւոց, և ՚ի կամելն Յակոբու և Յովհաննու հուր կործանելոյ զնոսա, ասաց թէ հոգի ձեր ոչ է վրէժխնդրութեան, այլ սիրոյ. և դէպ բժշկեաց զՍամարացի բորոտն, և գովեաց զնա քան զայլսն ինն երախտամոռս։ Մտեալ ապա յԵրուսաղէմ ՚ի միջին աւուր տօնի տաղաւարահարաց, այնէ ՚ի վեցերորդ աւուր Հոկտեմբերի, այնպէս զքանչելիս քարոզեաց, մինչև պաշտօնեայքն որք առաքեցան ունել զնա կալան ՚ի նմանէ. իսկ յերեկոյն ել ՚ի լեառն Ձիթենեաց։ Մատթ. ժթ. 1. Յովհ. է. 2. և 14. ը. 1. Ղուկ. թ. 51. և ժէ. 11։

ԼԸ ՚Ի վաղիւ անդր իջեալ ՚ի լեռնէն Ձիթենեաց եմուտ ՚ի տաճարն, և արձակեաց զշնացեալ կինն ամբաստանեցուցեալ դպրաց որք ամբաստան լինէին զնմանէ. և անդէն ՚ի յուցանելն թէ ինքն է որդի Այ, իբրև կամէին Հրեայքն քարկոծ առնել զնա իբրև զհայհոյիչ, լռելեայն խոյս ետ ՚ի տաճարէն։ Յետ այնորիկ բժշկեաց յաւուր շաբաթու զկոյրն ՚ի ծնէ արարեալ կաւ ՚ի թքոյն, և այնու ծեփեալ զաչսն. ապա հաստատեալ թէ ինքն է քաջ հովիւ, զքաջ հովուէ և զվարձկանէ և զոչխարացն Ճշմարտապէս խօսեցաւ։ Յովհ. ը. 2. 12. և թ. 1. և ժ. 1։

Խ Իջեալ յԵրուսաղեմէ՝ շրջի Է գիւղս և Է քաղաքս Հրէաստանի, և երևեցուցեալ զայլ ևս եօթանասուն և երկու աշակերտս, առաքեաց զնոսա երկուս երկուս ԺԲ օրինակի առաքելոցն պատուիրանօք՝ յամ տեղիս, ուր ինքն երթալոց էր։ Եւ ՚ի դառնալն նոցա խնդութեամբ առ նա, ՚ի բարեկարգութիւն կրթէ զնոսա և երանելիս կարգայ զնոսին. և ցնծացեալ հոգւովն՝ փառաւորէ զիմաստութիւն Այ, որ զծածկեալս իւր յայտնէ

տղայոց՝

տղայոց՝ և ծածկէ զայնս յամբարտաւան իմաստնոց։
Ղուկ. Ժ. 1. 17. Մատթ. Ժա. 25։ Մինչև ցայս
վայր հաստատի և կարգն։ Իսկ որոց զհետն գան,
հաւանական է, այլ ոչ այնպէս ստոյգ։

ՃԱ Փորձեալ Յսի յօրինականէն, թէ որ իցէ ճանա-
պարհ կենացն յաւիտենականից, զպատուիրանս
սիրելոյ զԱծ և ընկերն՝ նշանակեաց լինել. և
՚ի հարցանելն Նր թէ ո՛ իցէ ընկերն, յայտնեաց զայն
առակաւ Սամարացւոյն՝ որ հոգ տարաւ վիրա-
ւորելոյն։ Ղուկ. Ժ. 25։

ՃԲ Յամսեանն Նոյեմբերի հիւրընկալաւ ՚ի Մար-
թայէ և ՚ի Մագդաղենացւոյն, և զբարեպաշտ
անգործունէութիւն որ նախամեծար վարկաւ քան
զփոյթ պաշտօնատարութեան նորա։ Ղուկ. Ժ. 38։

ՃԳ ՚Ի դադարելն յաղօթից՝ ուսուցանէ աշակերտացն
զկերպ աղօթելոյ. *Հայր մեր]. ԻՆ. և խրատէ,
թէ պարտ է խափառ համբերել յաղօթս, և զզօ-
րութիւն որ նշոյ առակաւ այնորիկ՝ որ ժտութեամբ
՚ի գիշերի խնդրէր զհաց վն հիւրընկալեալ բա-
րեկամին։ Ղուկ. Ժ. 1. 5. և ԺԸ. 1։

ՃԴ Հրաւիրեալ ՚ի փարիսեցւոյն ՚ի ճաշ, կշտամբէ
զփարիսեցւոյն լուացմունս, զնախաթոռութիւնս,
զկեղծաւորութիւնս, և զօրս ՚ի կարգին։ Ղուկ.
ԺԱ. 37։

ՃԵ Յաղաչել ումեմն առ նա տանելով. *Ասա եղ-
բօրն իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն]. զգու-
շացուցանէ յագահութենէ և ՚ի հոգս կենցա-
ղոյս. և բազմօք յորդորէ խնդրել զյաւիտե-
նականս, և յուսալ ՚ի նախախնամութիւն Այ.
ցուցեալ զխարխլութիւն աստի կենցաղոյս, և զանս-
տուգութիւն գալստեան Տն։ Ղուկ. ԺԲ. 13։

ՃԶ Լուեալ վն Գալիլեացւոց՝ զորս սպան Պիղա-
տոս, զամենեսեան յորդորէ յապաշխարութիւնն,
զի մի ըստ նմին օրինակի զօրէն անպտուղ թզե-
նւոյն հատցին։ Ղուկ. ԺԳ. 1։

ՃԷ Բժշկեալ ՚ի շաբաթու զկին մի կարկամեալ, որոյ
վն ցասուցեալ էր ժողովրդապետին ՚ի վն Նր, յա-
մօթ արար զառասպելապաշտ կրօնաւորութիւն նորա,
և առակաւ հատոյ մանանխոյ, և խմորոյ ցուցանէ
թէ պարտ է քարոզութեան աւետարանին ՚ի փոքր
սկզբանց առ մեծամեծ աճումն ժամանել։ Ղուկ.
ԺԳ. 10։

Հար-

ԽԷ Հարցեալ յումեմնէ, թէ սակաւք իցեն, որ ապրելոց իցեն, պատասխանի ետ այս. և թէ մնկ պարտ է ամենեցուն բուռն հարկանել զանձուկ ճանապարհէ առաքինութեան և այնմ վաղվաղակի, զի մի 'ի փակել դրանն երկնից' 'ի դուրս բաղխեսցուք զայն: 'Ի նմին աւուր 'ի դեկուցանել ամենից պէտս լինել անձին 'ի Հերովդէէ, ասէր ետ՝ թէ ոչ 'ի Հերովդէէ. այլ յԵրուսաղեմացւոց անտի սպանանի. և թէ մի այնորիկ աւերէ զնոսա Տիտոս: Ղուկ. ԺԳ. 22. և 31:

ԽԸ Յամսեանն Դեկտեմբերի հրաւիրեալ յումեմնէ իշխանացն փարիսեցւոց 'ի ճաշ, յաւուր շաբաթու բժշկէ զջրգողեալ մին, և յայտնապէս ցուցանէ' թէ արժան է առնել զայն, և կոչնականացն ուսուցանէ զխոնարհութիւն, զի 'ի յետին տեղւոջ բազմեսցին, իսկ զկոչնատէրսն լինել ողորմած 'ի վերայ աղքատաց: Վասն այսորիկ առաջի բերէ զառակ հրաւիրողին յընթրիս, յորմէ 'ի հրաժարիլ մեծատանց, կոչեաց զաղքատս ժողովել 'ի յամենուստեք. որով նշանակէ, թէ մերժեալ զՀրէայս մի ամբարտաւանութեան նց, զխոնարհ հեթանոսս հանդերձեալ էր կոչել 'ի մեծամեծ ընթրիսն երկնից: Ղուկ. ԺԴ. 1:

Ծ Ուսուցանէ ժողովրդեանն՝ որք խուռն ընթանային, թէ որ ոք կամի աշակերտ լինել նմա՝ պարտի հրաժարիլ յամ յերկրային ցանկութեանց և բառնալ զխաչ իւր. և մնկ Բ օրինակի այնորիկ՝ որ շինել կամի զտուն, կամ տալ պատերազմ, պարտ է յառաջագոյն տեսանել զզօրութիւն իւր, թէ արդեօք բաւական իցէ յաղթելոյ դժուարահաս գործոյ: Ղուկ. ԺԴ. 25:

ԾԱ Դարձեալ Յն յԵրուսաղէմ 'ի տօն նաւակատեաց, որ կատարէր 'ի 25 աւուր ամսեանն Քասլև, զոր Մաթաթիայքն հաստատեն դնել յայնմ տարւոջ յեօթներորդ աւուր Դեկտեմբերի, 'ի խնդրելն Հրէից՝ զի յայտնապէս ասասցէ, եթէ ինքն իցէ Քն, ասէ ետ, թէ գործքն իւր իսկ յայտնապէս ցուցանեն զայն, այլ թէ նոքա ոչ հաւատան, զի չեն յոչխարաց անտի նր. մի խոյս տուեալ 'ի որոտմունս և 'ի չարութէ նց, մեկնեցաւ 'ի Բեթաբարա, ուր մկրտեցն Յովհաննէս.

և

և կի խուռն ընթանալ անդ բազմաց եւս և մեղաւորաց և մաքսաւորաց, ըստ սովորութեն իւրում ուսուցանել և բժշկելոյ զնոսա։ 'Ի տրտնջել փարիսեցւոցն ընդ այնմ, զի զմեղաւորս ընդունէր, յամօթ արար զնոսա երիւք առակօք, որ է՝ մոլորեալ ոչխարին, կորուսեալ դրամոյն, և անառակ որդւոյն։ Յովհ. Ժ. 22. 40. 41. Մատթ. ԺԹ. 2. Մարկ. Ժ. 1. Ղուկ. ԺԵ. 1։

ԺԲ Յետ այսորիկ յորդորէ յողորմութիւն օրինակաւ անտեսին անիրաւութեան, և խորտկանաց մեծատան, Ղուկ. ԺԶ. 1. որովք յաւելեայն կշտամբէ զագահութիւն փարիսեցւոց։

ԺԳ Անդանօր վիճէ ընդ փարիսեցւոց 'ի վերայ արձակելոյ զկանայս, և զամուրութիւն նախամեծար վարկանի քան զամուսնութիւնն։ Մատթ. ԺԹ. 3. Մարկ. Ժ. 2։

ԺԴ 'Ի սկզբան Յունվարի ուսուցանէ զաշակերտսն զգուշանալ 'ի գայթակղութենէ, ունել զհաւատս իբրև զհատն մանանխոյ, և լինել իբրև զհողագործ ծառայ. և որ 'ի կարգին։ Ղուկ. ԺԷ. 1. 5. և 7։ Յետ այսորիկ 'ի Փետրվարի կշտամբէ զփարիսեցւոցն ամբարհաւաճութիւն առակաւ փարիսեցւոյն և մաքսաւորին, որ խոնարհութեամբ խոստովանեալ զմեղս իւր՝ արդարացաւ քան ըզմիւսն։ Դարձեալ օրինակաւ մանկտւոյն՝ զորս մատուցին նմա, և նա եդեալ զձեռսն՝ օրհնեաց զնոսա, և ասէ. *Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Ղուկ. ԺԸ. 9. և 15. Մատթ. ԺԹ. 13. Մարկ. Ժ. 13։

ԺԵ Յորդորէ զպատանին մեծատուն՝ որ պահէր զպատուիրանս Այ՝ 'ի խնդիր աւետարանական աղքատութեան. այլ նորա շիտուցեալ 'ի դժուարահաճ իրացն, յետս դարձաւ։ Ուստի եցոյց Քս. թէ որպէս դժուարին իցէ մեծատանց փրկիլ. և թէ քանի իմաստութեան իցեն որք վս սիրոյն Այ թողուն զամ ինչ, զի զՔնի զհետ երթիցեն. որոց վճէ խոստանայ զհարիւրապատիկն, և զկեանսն յաւիտենականս։ Մատթ. ԺԹ. 23. Մարկ. Ժ. 17. 23. Ղուկ. ԺԸ. 18. 24։

ԺԶ Այս առակաւ մշակացն՝ որք 'ի զանազան պահս

կոչեցան 'ի գործել յայգին, ցուցանէ թէ 'ի յեր-
կինս եղիցին առաջինքն յետինք, և յետինքն ա-
ռաջինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք
են ընտրեալք: Մատթ. ի. ժզ:

# ՉՈՐՐՈՐԴ ԵՄ

## Յարուցութեան, չարչարանաց, և յարու- թեանն Քրի.

Որ եօթնօրեակն զգործսն նորա 'ի յարութենէն Ղազարու, մինչև ցհամբարձումն յերկինս:

Յարութիւն այս Ղազարու եղև փոքր մի յառաջ քան զչորրորդ և զվերջին զատիկն, յորում խաչե- ցաւ Քս, նոյն այն եղև պատճառ, կամ յաւելեալ առիթ սպանմանն Քի, որպէս արդ ունիմք ա- սել. քանզի Քս եկեաց զերեսուն և զերիս ամս և զերիս ամիսս, որք հաշուին 'ի ծննդենէ նորա մինչև ցզատիկն: Յայս սակս այս չորրորդ ամ քարոզութեն և չարչարանացն Քի սկզբնաւորե- ցաւ միայն, այլ ոչ լցաւ. այնզի զերկուս ա- միսս ևեթ բովանդակեաց. զի զՄարտի և զԱպ- րիլի, և զսկիզբն Մայիսի. յորս զայն ամ ապրր, և կեցաւ, զորս 'ի յարութենէն Ղազարու մինչև ցհամբարձումն պատմեն աւետարանիչք. քանզի Քս յարոյց զՂազարոս յետ սկսանելոյ Մարտի, խաչեցաւ 'ի 25 աւուր Մարտի, յարեաւ 'ի 27 աւուր Մարտի. և համբարձաւ 'ի յերկինս 'ի 5 աւուր Մայիսի, սկսեալ զամն լդ երորդ հասակի իւրոյ չորիւք ամսօք:

ԾԷ Քս 'ի Բեթանիա յարուցանէ 'ի մեռելոց զՂա- զարոս զմեռեալն չորեքօրեայ. և 'ի սքանչելեաց աստի յորդորեալ բազմաց հաւատային 'ի Քս, յոյր սակս նախանձեալ ընդ նա քահանայապե- տացն և փարիսեցւոց յատենի՝ որում նախագահ էր Կայիափա, վճռեն, թէ պարտ է զնա սպա- նանել: Գիտացեալ Յսի զայս՝ գնաց 'ի սահ- մանս Հրէաստանի 'ի քաղաքն Եփրայիմ, և անդ

քան-

քանզի մերձ էր զատիկն, ել յԵրուսաղէմ. և 'ի
ճանապարհին եցոյց առաքելոցն, եթէ հասեալ է
'ի վերայ ժամանակ խաչին, և մահուն իւրոյ. և
թէ ընդէր կամովին մատչի առ այն: Յովհ. ժա. 17.
46. 54. 65. Մատթ. ի. 17. Մարկ. ժ. 32. Ղուկ.
ժը. 31:

ԾԸ Համարեալ Յովհաննու և Յակոբայ թէ ելանէ
Քն յԵրուսաղէմ՝ մտանել յարքայութիւն իւր, հայ-
ցեն 'ի ձեռն մօրն իւրեանց, զի յայսմ արքայութեան
զկնի Նր ունիցին զառաջին տեղիս. այլ Յս փոխէ
արքայութեն զչարչարանաց բաժակն Նր մատու-
ցանէ: Մատթ. ի. 20. Մարկ. ժ. 35. Ղուկ.
ժթ. 11:

ԾԹ Յանցանել Յնի ը Երիքով՝ դարձուցանէ 'ի հա-
ւատս զԶաքէոս մաքսաւորն՝ որ ընկալաւ զնա 'ի
տուն. և 'ի գնալն անտի յԵրուսաղէմ, բանայ
զաչս երկուց կուրաց, յորոց միումն անուն էր
Բարտիմէոս, և վեց աւուրբ յառաջ քան զզա-
տիկն, այս է՝ յաւուր ուրբաթու որ յառաջ քան
զկիւրակէ ծաղկազարդի, գայ 'ի Բեթանիա:
Ղուկ. ժը. 35. և ժթ. 1. Մատթ. ի. 29. Մարկ.
ժ. 46. Յովհ. ժբ. 1:

Կ Ընդ 'ի միւսում աւուր, այն է՝ 'ի շաբաթու՛
'ի տան Սիմոնի բորոտի առնէ ընթրիս ը Ղա-
զարու. և Մարթա կայ 'ի սպասու, իսկ Մագ-
դաղենացին թափէ 'ի գլուխ Նր իւղ նարդեան:
և 'ի գժգմնիլն ը այս ագահին Յուդայի յանդի-
մանէ զնա Յս: Մատթ. իզ. 6. 8. Մարկ. ժդ. 3. 4.
Յովհ. ժբ. 24:

ԿԱ 'Ի վաղին անդր, այս է՝ 'ի ծաղկազարդի կիւ-
րակէի, որ յայնմ ամի դիպէր 'ի 20 Մարտի,
գնայ 'ի Բեթանիայ 'ի Բեթփագէ, և նստեալ
անդ 'ի վր իշոյ, և աշակերտացն տարածեալ 'ի
վր ճանապարհին զհանդերձս իւրեանց, և ժողո-
վրդեանն ոստովք ձիթենեօք ցնծալով, և աղա-
ղակելով, *Ովսաննա որդւոյ Դաւթի||, իբրև
յաղթանակեայ, և իբրև Մեսիա մտանէ յԵրու-
սաղէմ. և 'ի մերձենալն առ նա, նախապատմեաց
զկործանումն Նր՝ և արտասուեաց: Մատթ. իա. 1.
Մարկ. ժա. 1. Ղուկ. ժթ. 29. և 41. Յովհ.
ժբ. 12:

ՃԼԵ Մտեալ 'ի քաղաքն նախ 'ի տաճարին երթայ, և արտաքսէ անտի զգնողս և զվաճառօղս, և բժշկեաց զբազում ախտաժէտս, Ը. որ կրճատէին փարիսեցիքն զատամունսն: Հանդէպ հեթանոսքն տեսանել զնա և ճանաչել: Անդէն բարբառ եղեալ 'ի յերկնից փառաւորէ զՅս: Մատթ. իա. 12. 15. Մարկ. ժա. 15. Ղուկ. ժթ. 45. և 39. Յովհ. ժբ. 20:

ՃԼԶ 'Ի նմին աւուր, 'ի յերեկոյի ծաղկազարդի կիւրակէի ելեալ 'ի քաղաքէն գնայ 'ի Բեթանիա. և 'ի վաղիւն յառաւօտու, 'ի յաւուր երկուշաբաթի 'ի 21 Մարտի 'ի մտանելն միւսանգամ 'ի քաղաքն, անէծ զթզենին որ չունէր զպտուղ, և արտաքս ընկեց 'ի տաճարէն զվաճառօղս, և զօրն ողջոյն ուսուցեալ 'ի տաճարին յերեկոյին ել անտի միւսանգամ 'ի Բեթանիա: Մատթ. իա. 17. Մարկ. ժա. 11:

ՃԼԷ 'Ի միւսում առաւօտու, որ էր երեքշաբաթի. 22 որ Մարտի, դարձեալ 'ի քաղաքն, իբրև զարմացան աշակերտքն Ը. չորանալ թզենւոյն զոր անէծ Յս, եցոյց նց թէ որչափ մեծ իցէ զօրութի կենդանի հաւատոյ և աղօթից: Յետ այնորիկ Ը. սովորութե իւրում ուսուցեալ 'ի տաճարին, յաղթ առնէ զփարիսեցիս որք հակառակէին նմա, և սպառնայ զկործանումն նց: Նա նոքա' զի ըմբռնեսցեն զնա բանիւք, մատուցանեն նմա առաջի զխնդիրս խորամանկութե, 'ի վր հարկաց, 'ի վր յարութե, և 'ի վերայ մեծի պատուիրանին. զայն ամ գերագոյն իմաստութբ եղոյծ. և փոխարէն հարցեալ զնս վս ածութեն Մեսիային, ամփիբերան արար զնոսա, և զկեղծաւորութիւն նց, և զհպարտութիւն, և զագահութիւնն, և զայլ մոլութիւն կշտամբեաց: Մատթ. իա. 20. 23. և իբ. 15. 41. և իգ. 1. Մարկ. ժա. 20. 27. և ժբ. 13. 15. 38. Ղուկ. Ի. 1. 20. 41. 45:

ՃԼԸ Յետ այսորիկ նստեալ յանդիման գանձանակին, նախամեծար համարեցաւ զայրին որ զերկուս լումայս էարկ, քան զայլսն որք արկին 'ի գանձանակն: Ելեալ 'ի տաճարէն և 'ի զարմանալ աշակերտացն Ը. շինուած տաճարին, նախագուշակեաց զնր զաւերումն: Մարկ. ժբ. 41. և ժգ. 1. Ղուկ. իա. 5. Մատթ. իդ. 1.

Ե-

կզ Ելեալ 'ի տաճարէն 'ի լեառն Ձիթենեաց իբրև հարցաւ յաշակերտացն, թէ *երբ լինիցի այդ, և կամ զինչ նշան իցէ քոյոց գալստեանն, և վախճանի աշխարհիս | . եցոյց նոցա զնշանս կործանմանն Երուսաղեմի և աշխարհիս. իսկ վասն աւուրն գալստեան իւրոյ 'ի դատաստան, ասաց լինել անստոյգ. և թէ վասն այսորիկ պարտ է ամենեցուն հսկել, զի պատրաստ գտցին այնմ, և զայս պէսպէս առակօք իմաստութեան կուսանացն և յիմարաց, հեղգ ծառային, գողոյ, և ջրհեղեղին' որ առ Նոյիւ: Մատթ. իդ. 3. 36. Մարկ. ժգ. 3. 32. Ղուկ. իա. 7. 34: Եւ ապա զեղեցիկս նկարագրէ զկերպարան վերջին դատաստանին: Մատթ. իե. 31:

կէ 'Ի չորեքշաբաթի աւուրն, 'ի 23 Մարտի պատմէ Յս̃, թէ յետ երկուց աւուրց, այն է' յաւուր զատկի խաչելոց է: Ուստի և Յուդա սակ արկանէ ը̃ Հրէայս երեսուն արծաթոյ, վաճառել զնա նց̃: Մատթ. իզ. 1. 3. 14. Մարկ. ժդ. 1. 10. Ղուկ. իբ. 1:

կը Յաւուր հինգշաբաթի 'ի 24 Մարտի առաքէ զՊետրոս և զՅովհաննէս 'ի քաղաքն. զի պատրաստեսցեն զզատիկն, այս է' որ ինչ պիտոյն է 'ի յընթրիս գառինն զատկի. և գնացեալ զկնի նց̃ յերեկոյին եկեր ը̃ աշակերտսն զընթրիս գառինն, և յետ այնորիկ լուաց զոտս աշակերտացն, և հաստատեաց զխորհուրդ հաղորդութե̃, և բաշխեաց զայն աշակերտացն: Եւ իսկոյն պատմեաց զմատնութիւն Յուդայի, և զմատնիչն' նշանաւ պատառոյն, զոր ետ Յուդայի, յայտնեաց Յովհաննու. և Յուդայի իմացեալ, թէ յայտնեցաւ, ել արտաքս' 'ի կատարել զեղեռն ապիրատութիւն: Միւսանգամ վիճեալ աշակերտացն 'ի վերայ նախադասութե̃, պատուիրանաւ խոնարհութե̃ յանդիմանեաց զնոսա. և զնոր պատուիրան սիրոյ աւանդեաց, և պատմեաց յառաջագոյն զմերձաւոր? զմերձեալն իւր որ մերձեալն էր, և զաշակերտացն փախուստ, և զՊետրոսի որ պարծէրն 'ի մի հաստատութեան իւրոյ' զերիցս ուրացութիւնն. ուստի 'ի տալն զհրաժարական ողջոյն տրտմեալ աշակերտացն իւրոց, խօսեցաւ երկար բանս վառեալ սիրով և հոգւով, զոր ճոխագոյնս ստորագրէ

ծըն Յովհաննէս 'ի ԺԳ. գլխոյ մինչև ցԺԸ. և ապա յանձն առարեալ զձն խնամոց Հօրն՝ աւարտեաց և հրաժարեցաւ։ Մատթ. ԻԶ. 17. 20. 26. Մարկ. ԺԴ. 12. 17. 22. 18. Ղուկ. ԻԲ. 7. 14. 19. 21. 24. 26. 31. Յովհ. ԺԳ. 21. 20. 34. 36. և ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ։

## [illegible] չարչարանացն Քսի։

ԿԵ Ի նմին գիշերի մատուցեալ զգոհութիւն աղօթից՝ և ելեալ 'ի վերնատանէն և 'ի քաղաքէ անտի, և գնացեալ 'ի լեառն Ձիթենեաց, մեկնեցաւ 'ի պարտէզ մի կալ յաղօթս, և առանձինն առաջի Պետրոսի և Յակոբայ և Յովհաննու առ ուժգին ըմբռնման վերահաս չարչարանացն սկսաւ երկնչել, տրտմել, հոգալ, և տխրել։ Ուր յաղօթս կացեալ, ասէ. *Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին ‖։ Եւ 'ի վախճանի մըտեալ 'ի տագնապ մահու՝ արեան և ջրոյ քրտունս հոսէր. յոյր սակս և զօրացուցանէր զնա հրեշտակն. և յետ այսորիկ ինքնակամ մատոյց զանձն Յուդայի 'ի համբուրել, և Հրէից՝ կապել զինքն. և արգել Պետրոսի վերացուցանել զսուսերն։ Մատթ. ԻԶ. 31. 36. 37. 39. 41. 51. Մարկ. ԺԴ. 27. 32. 33. 35. 44. 47. Ղուկ. ԻԲ. 39. 40. 42. 47. 50. Յովհ. ԺԸ. 1. 3. 7. 10։

ԿԶ Ապա կապեալ զՅն տանին նախ առ Աննա, և ապա առ Կայիափա՝ որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ. և 'ի պնդելն նմա Յնի համարձակ՝ ապտակահար լինի 'ի ծառայէն. և կացուցեալ զսուտ վկայս, և ըստ ստութեն 'ի բաց մերժել. հարցանէն զՅն, թէ դու ես Քն Որդի Այ. և 'ի հաստատելն նր զայն, դատապարտեցին զնա իբրև զհայհոյիչ և այսպն արարին։ Իսկ Պետրոսի հարցեալ յաղջկանէ և 'ի Հրէից, թէ իցէ աշակերտ Քնի, երիցս ուրանայ. այլ 'ի հայել Յնի 'ի նա՝ ապաշաւեալ ել արտաքս, և ելաց դառնապէս։ Այս ամ գործեցաւ յաւուր հինգշաբաթի 'ի գիշերի զկնի ընթրեացն։ Յովհ. ԺԸ. 13. 19. 16. Մատթ. ԻԶ. 59. 63. 69. 67. Մարկ. ԺԴ. 55. 61. 66. 65. Ղուկ. ԻԲ. 56. 63. Յա-

հա Յաւուրն ուրբաթու, 'ի 25 Մարտի յառաւօ-
տու ժողովեալ 'ի Կայիափայ ծերակոյտ ժողովր-
դեան, միաբանգամ դատապարտեցին զՅս̃, և մատ-
նեցին 'ի ձեռս Պիղատոսի դատաւորին Հռոմայ-
եցւոց, զի պատուհասեսցէ: Զայն տեսեալ Յու-
դայի, յուսահատեալ՝ չոգաւ խեղդեցաւ, ընկե-
ցեալ յառաջագոյն զարծաթսն 'ի տաճարին,
որովք գնեցին Հրէայքն զագարակն 'ի գերեզման
օտարաց: Ղուկ. իբ. 66. և իգ. 1. 2. Մատթ.
իէ. 1. 3. 6. Մարկ. ժե. 1. Յովհ. ժը. 28:

հբ Հրաժարի Պիղատոս 'ի դատապարտելոյ զՅս̃,
եթէ ոչ նախ ծանիցէ զպատճառն. Թէպէտ և
քահանայապետքն դատապարտեալ էին զնա, և
մատնեալ նմա: Ապա չարախօս լինէին զնմանէ,
թէ զանձն Թագաւոր առնէր Հրէից, և խռո-
վութիւս յարուցանէր սկսեալ 'ի Հրէաստանէ
մինչև ցԳալիլեա: Հարցանէ Պիղատոս զՅս̃,
թէ արդարև Թագաւո՞ր ես Հրէից. և Նա հաս-
տատէ զայն, բայց և 'ի վե՛ր յաւելու, թէ Թագա-
ւորութիւն Նր է երկնային, և ոչ աշխարհային, և
թէ յայս սակս չէր պարտ Տիբերեայ կայսեր և
նորին դատաւորին Պիղատոսի երկնչել 'ի նմանէ:
Վ՛յս անմեղ և ոչ ծանուցեալ զնա Պիղատոսի,
պէսպէս եղանակօք գուն գործէ արձակել զնա և
թողուլ: Քանզի նախ լուեալ զանուանն Գալի-
լեայ, հարցանէ թէ Գալիլեացի՞ իցէ Յս̃. զոր
ստուգեալ, առաքէ զնա առ Հերովդէս Թագա-
ւոր Գալիլեայ, և այսու պատուելով զնա բա-
րեկամանայ ը̃ նմա: Ակնունէր Հերովդէս նշան
ինչ և զարմանալիս տեսանել 'ի Յս̃է, և իբրև ոչ
ինչ այնպիսի ետես, արկեալ զնովաւ հանդերձ
սպիտակ՝ արհամարհեաց զնա. և ետ անդրէն տա-
նել առ Պիղատոս: Յովհ. ժը. 29. 33. Ղուկ.
իգ. 23. 46. 8. Մատթ. իէ. 11. Մարկ. ժե. 2:

հգ Երկրորդ՝ Պիղատոս հնարս հնարէ ազատել զՅս̃
որ միաբանգամ առաքեցաւ առ Նա, և կացու-
ցանէ զնա առաջի ընդ խռովարար մարդասպանին
Բարաբբայ. որպէս զի գոլով նոցա սովորութիւն
զմի ոք 'ի զատկի ազատել 'ի մահուանէ, զՅս̃
ընտրեսցեն և արձակեսցեն. այլ նք յուզեալ 'ի
քահանայապետից, խնդրեն արձակել զԲարաբ-
բա,

քա, իսկ զՅս՛ ՚ի խաչ հանել ։ Մատթ. իէ. 15.
Մարկ. ժե. 6. Ղուկ. իգ. ժէ. Յովհ. ժը. 39։

հզ Երրորդ՝ տեսեալ Պիղատոսի զկատաղութիւն Հրէից ՚ի վր Քսի, որպէս զի դադարեցուցէ զայն հրամայեաց գան հարկանել, և գանիւք ձաղանաց տանջեցաւ, պսակաւ փշոց, և ծիրանի հանդերձիւք իբրև կեղծեալ և ձևացեալ թագաւոր այսպէս նախատանաց եղեալ՝ ածէ ՚ի տես Հրէից. զի ողորմեսցին ՚ի վերայ զայնօրինակ վշտացելոյն. բայց նոցա առաւել կատաղեալ, անընդհատ բարբառով խնդրեն ՚ի խաչ հանել զնա, և սպառնան Պիղատոսի, եթէ ոչ համարէին զնա բարեկամ կայսեր, եթէ զՅս՛ որ զանձն թագաւոր առնէր, արձակէր անպատիժ։ Վասն այնորիկ լուացեալ Պիղատոսի զձեռսն իւր՝ վկայելով անմեղութեան Յսի, յաղաղակել Հրէից *Արիւն նր ՚ի վր մեր, և ՚ի վր որդւոց մերոց ]. տայ զնա ՚ի ձեռս Հրէից զի ՚ի խաչ ելանիցէ, թէպէտ և փոքր մի յառաջ խոստացեալ էր զնա կնոջն, չհաղորդել մահուան արդարոյն այնորիկ։ Մատթ. իէ. 28. 19. 23. Մարկ. ժե. 17. 14. Ղուկ. իգ. 15. 20. Յովհ. ժթ. 1. 7. 13. 15։

հէ Առեալ ապա զՅս՛ յապարանիցն տարան ՚ի լեառն Գողգոթա, և էր ինքնին բարձեալ զխաչն. յորմէ երկուցեալ Հրէից՝ թէ գուցէ մեռցի ՚ի ներքոյ նր, յելանել արտաքս ՚ի դրանէ՝ ետուն բառնալ զխաչն Սիմոնի կիւրենացւոյն զկնի Յսի։ Երթայքն զհետ նր բարեպաշտ կանայք ողբ աշխարհէին զնա. իսկ Յս՛ հրամայէ նց լալ ՚ի վր անձանց և ՚ի վր որդւոց իւրեանց, վր վերահաս կործանման [illegible] քաղաքին։ Մատթ. իէ. 31. 32. Ղուկ. իգ. 25. 26. 27. Մարկ. ժե. 21։

հը Իբրև չոգաւ ՚ի լեառն Գողգոթա, ետուն նմա Հրեայքն ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և ապա գինի զմռսեալ. իսկ նա և ոչ զմին կամեցաւ ըմպել. յետ այնորիկ մերկացեալ ՚ի հանդերձիցն, և տարածեալ ՚ի գետնի ՚ի վր խաչին, բեւեռեցին զնա ՚ի վեցերորդ ժամու, իմա լինչ ՚ի կէս աւուր. և ապա բարձրացուցին զխաչն. եդին ապա ՚ի վր և զգիր վճռատուն. և աստի և անտի կախեցին երկուս աւազակս իբր թէ նա իցէ իշ-

խան

խառն ընդ. Եւ զկնի զինուորքն յանդիման նորա բաժա-
նեցին զհանդերձսն վիճակաւ: Մատթ. իէ. 34.
35. 37. 38. 39. Մարկ. ժե. 23. 26. 27. 24. Ղուկ.
իգ. 33. 34. 36. 38. Յովհ. ժթ. 19. 18. 23:

ՃԷ Իշխանքն և ժողովուրդն անարգանէին և այպն առ-
նէին զխաչելեալն Յս, իսկ նա աղօթս առնէր վր
նոցա առ Հայր: Այլ առնէ զնա և աւազակն որ
'ի համխմբն կախեալ, զոր միւսոյն կշտամբեալ. և
խոստովանեալ զՅս Մեսիա՝ աղերս մատուցանէր
նմա. և վաղ լսէ 'ի Յսէ. *Այսօր ը՟ իս իցես 'ի
դրախտին|. Մատթ. իէ. 39. Մարկ. ժե. 29.
Ղուկ. իգ. 35. 59:

ՃԸ Յետ այսորիկ յանձն առնէ զՄայրն իւր Յով-
հաննու: Աղաղակէ թողեալ զանձն 'ի Հօրէ:
Գոչէ. *Ծարաւի եմ|, որոյ վասն ճաշակեաց
զքացախ. և 'ի վախճանի կարդայ 'ի ձայն մեծ.
*Ամ ինչ կատարեալ է|: Եւ ապա յանձն արա-
րեալ զհոգի իւր 'ի ձեռս Հօր՝ աւանդեաց իբրև
յիններորդ ժամու: Եւ ահա արեգակն խաւա-
րեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան,
գերեզմանք բացան, և վարագոյր տաճարին հեր-
ձաւ, զի երևեսցի թէ արարածք ամ զարարչէն իւ-
րեանց զմահ ողբան և կոծեն. յորոց շարժեալ հա-
րիւրապետին, և բազմաց 'ի ժողովրդենէն որ անդն
կային և տեսանէին զտեսիլն զայն, խոստովանեցան,
և բաղխելով զկուրծսն դարձան 'ի տունս իւ-
րեանց: Յովհ. ժթ. 25. 28. 30. Մատթ. իէ.
45. 46. 49. 51. Մարկ. ժե. 33. 34. 37. 38. Ղուկ.
իգ. 44. 46. 47:

ՃԹ 'Ի մեռանիլն Յսի, խորտակեցին Հրէայքն զբարձս
աւազակացն որք տակաւին կենդանի էին, այլ
զի վաղվաղակի մեռցին, բայց զՅսի ամենևին ոչ,
այլ մի ոմն 'ի զինուորաց տիգաւ խոցեաց զկողս
նր, յորմէ ել արիւն և ջուր. յետ այսորիկ իս-
կոյն իջուցեալ զմարմինն Յսի 'ի խաչէն, և պա-
տեալ զնա կտաւովք և խնկովք, թաղեցին զնա
փառօք Յովսէփ որ յԱրիմաթեայ, և Նիկո-
դեմոս. և ապա առաքէ Պիղատոս պահապանս
'ի վր գերեզմանին, և փակել դրունս գերեզմանին
վիմաւ և կնքի: Յովհ. ժթ. 31. 38. Մատթ. իէ.
57. 62. Մարկ. ժե. 42. Ղուկ. իգ. 50.

Առ.

## Շարակարգութիւն Յարութեան Քրիստոսի :

Ճ Յս՟ յաւուրն երրորդի զկնի մահուան իւրոյ,
այս է՝ յաւուր կիւրակէի, որ էր 27
օր Մարտի, յառաջ քան զարշալոյսն յարեաւ
փառօք 'ի գերեզմանէն, և ընդ վէմն որով փա-
կեալն էր գերեզմանն նրբութեան ձրիւք թափան-
ցանց ել արտաքս. և ապա հրեշտակն 'ի բաց
թաւալեցոյց զվէմն, և զպահապանսն զարհուրե-
ցոյց. և 'ի փախուստ դարձոյց, զի կարօղ լիցին
կանայքն որ գային՝ մտանել 'ի գերեզմանն: Վասնզի
կանայքն բոլոր գնեալ և պատրաստեալ էին զիւղ
յօծանել զմարմինն Յսի, իբրև եկին 'ի գերեզ-
մանն վաղ քաջ ընդ առաւօտն 'ի կիւրակէի, տե-
սին զի բաց էր գերեզմանն, և ոչ գտին զմարմինն
Քրիստոսի, այլ միայն կտաւքն, և լուան 'ի հրեշտա-
կաց թէ յարեաւ Քրիստոս: Իսկ զայն 'նոյնժամայն
պատմեն սոքա առաքելոյն, և վաղվաղակի ըն-
թանան Պետրոս և Յովհաննէս 'ի գերեզմանն,
և գնան զկնի նոցա և կանայքն ընդ Մագդաղենացւոյն:
Պետրոս և Յովհաննէս տեսեալ զկտաւսն լոկ
Քրիստոսի, դարձան զարմացեալ 'ի տուն. և դար-
ձեալ գնացին զկնի նոցա և կանայքն, այլ Մագ-
դաղենացւոյն միայն կացեալ առ գերեզմանաւն՝
ողբալով, արժանի եղև նախ տեսանել զՅս 'ի
կերպարանս պարտիզպանի, այլ ոչ ծանեաւ զնա.
բայց լուեալ 'ի նմանէ, *Մարիամ||, իսկոյն ծա-
նեաւ: Իսկ վաղվաղակի հասեալ առ կանայսն՝
պատմեաց նոցա եթէ ետես նա զՅս, և ահա եւ
Յս ընդ առաջ անմենեցուն նոցա 'ի ճանապարհի, և
ասէ. *Ողջ էք||: Այս է առաջին երեւումն
յարութեան Քրիստոսի, որ գտանի 'ի նոր գիրս, որ
եղև Մագդաղենացւոյն և կանանցն: Մատթ. ԻԸ.
1. 2. 3. 5. 9. Մարկ. ԺԶ. 5. Ղուկ. ԻԴ. 1. 3. 4.
Յովհ. Ի. 1:

ՃԱ Իբրև ոչ հաւատային առաքեալքն կանանցն՝ որք
վկայէին թէ յարուցեալ է Քրիստոս, երկրորդ՝ երևե-
ցաւ Յս նմին իսկ Պետրոսի: Ղուկ. ԻԴ. 34:

ՃԲ Երրորդ՝ 'ի նմին աւուր, այս է՝ 'ի կիւրակէի,
յորում յարեաւ, երևեցաւ երկուց աշակեր-
տացն,

տայն, որ երթային յԷմմաուս, և յերեկային՝ի բեկանել հացին եւ ն̃ց ծանօթս: Ղուկ. իԴ. 13. Մարկ. ԺԶ. 12:

ՅԺԳ Չորրորդ՝ 'ի նմին աւուր և յերեկային երևեցաւ մետասան աշակերտաց 'ի վերնատան, և Թովմաս ոչ էր անդ. և մատոյց ն̃ց զձեռն 'ի շօշափել. և եկեր ը̃ նոսա. և ետ ն̃ց իշխանութիւն թողուլ զմեղս: Մարկ. ԺԶ. 14. Ղուկ. իԴ. 36. Յովհ. ի. 19:

ՅԺԴ Հինգերորդ՝ երևեցաւ ն̃ց յաւուրն ութերորդի. այն է՝ 'ի 3 Ապրիլի, և Թովմաս էր անդ. և տայ ն̃ց տեսանել և շօշափել զպալս վիրացն. վ̃ն անդէն հաւատացեալ Թովմայի եթէ յարուցեալ է, աղաղակէ. *Տէր իմ և Ա̃ծ իմ‖: Յովհ. ի. 24:

ՅԺԵ Վեցերորդ՝ երևեցաւ առ ծովեզերբն եօթն աշակերտաց, որք ձուկն որսային 'ի ծովն Տիբերեայ, և ետ ն̃ց ծանօթս որսալ բազմութեան մեծամեծ ձկանցն: Անդանօր ասաց ցՊետրոս, *Արածեա զոչխարս իմ‖: Յովհ. իա. 1:

ՅԺԶ Եօթներորդ՝ երևեցաւ առաքելոցն և այլոց հաւատացելոց 'ի լերանն Գալիլեայ, զոր յառաջագոյն իսկ նշանակեալ էր ն̃ց, և անդ պատուիրեաց ն̃ց աւետարանել և մկրտել զա̃մ հեթանոսս, և նշանօք հաստատել զաւետարանն: Մատթ. իԸ. 19:

ՅԺԷ Հուսկ ապա 'ի յաւուրն քառասներորդի զկնի յարութեան, այն է՝ 'ի 5 Մայիսի, հանեալ զն̃ս մինչև 'ի լերանն Ձիթենեաց, ուսոյց զնոսա և պատուիրեաց, և խոստացեալ առաքել զՀոգին Ս̃բ 'ի Պենտեկոստէին, օրհնեաց զնոսա, և համբարձաւ փառօք յերկինս, և նստի ը̃ աջմէ Ա̃յ. և անտի կառավարէ զեկեղեցի իւր, և առ սակաւ սակաւ ձգէ զնա և ժողովէ առ ինքն: Մարկ. ԺԶ. 19. Ղուկ. իԴ. 50:

Սաւ-

## Ստուգութիւն չորից միայն Աւետարանաց:

Բազումք 'ի վաղուց հետէ գրեցին զաւետարանս, մանաւանդ հերետիկոսք, և զայնս վերագրեցին Առաքելոց, և յանուն նոցա նշանակեցին, զի զխօսսն և զսուտ այնոցիկ զիւրեանցն հերետիկոսութեան վկայութեամբ հաստատեսցեն: *Վա՜յ 'ի զանազան մատենագրաց 'ի լոյս ածեալ, (ասէ մերն Հերոնիմոս 'ի յառաջաբանութեան սբյն Մատթ.) զանազան հերետիկոսութեանց եղեն սկիզբն, որպէս է այն որ ըստ Եգիպտացւոյն, և ըստ Թովմայի, և ըստ Մատաթիայ, և ըստ Բարթողիմեայ, և ըստ երկոտասան Առաքելոցն, այլև ըստ Բասիլիդեայ, և ըստ Ապեղղեայ, և ըստ այլոց, զորս 'ի թիւ արկանել կարի երկար լինի. առ այժմ զայս միայն հարկաւոր է ասել, թէ գտան ոմանք, որք առանց հոգւոյն և շնորհացն Այ ջանացին յաւէտ կարգել զպատմութիւն, քան զպատմութեանն յօրինել զճշմարտութիւն: Որոց իրաւամբ մարթ է պատշաճել զբանն զայն մարգարէական. վա՜յ դոցա որք մարգարէանան 'ի սրտէ իւրեանց, որք երթան զհետ հոգւոյ իւրեանց. որք ասեն. թէ Տէր ասաց, և Տէր ոչ առաքեաց զնա. զորոց և փրկիչն յաւետարանին Յովհաննու ասէ. ամենեքեան որ յառաջ քան զիս եկին, գողք էին և աւազակք ||: Եւ զնոյն քաղուած բանից ասէ. *Եւ համօրէն սուրբ քաղցրայոյս ցուցանի, եթէ զչորս աւետարանս եւեթ պարտ է ընդունել, և յամ շաղփաղփութեանց արտաքնոց զգուշանալ պարտ է, որք են առաւել մեռեալ հերետիկոսաց, քան եկեղեցականաց ||: Այս չորեքին սոքա միայն են կանոնական Աւետարանք, քանզի իբրև զկանոնականս զսոսին հաստատեաց եկեղեցին 'ի վարդապետութենէ և 'ի յաւանդութենէ Առաքելոց: Քանզի զաւետարանն Մարկոսի հաստատեաց մերն Պետրոս. զմիւսն Ղուկայ՝ Պօղոս. զմերն Մատթէի՝ Առաքելոցն դասք, որք յերթալն իւրեանց յայլ և յայլ գաւառս, տարան զայն ընդ իւրեանս. զմիւսն Յովհաննու՝ ամ Եփեսոսացւոցն Ասիոյ և այլ հաւատացեալք:

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ.

Աւետարանն որ ըստ Մատթէոսի գրեալ է. զի ինքն Մատթէոս աշակերտ Տն գրեաց զաւետարանն զայս։ Նա առաջին մեզ 'ի սկզբանն զըստ մարմնոյ ծնանելոյ փրկչին 'ի զաւակէ Դաւթի. Զի եւ զազգահամարն ծագմանն մինչեւ 'ի Քս՝ ազգս յառաջատան եւ եբրէա։ Ունի ըստ կարգի եւ զմկրտութեան Յովհաննու, եւ 'ի լեռինն 'ի դիւաց զփորձութիւն, եւ նշանս եւ արարելոց մեծամեծս 'ի փրկչէն եղելոյ, եւ զնորոգութիւն աշակերտացն, եւ զՏն խորհրդոց մարմնութիւն. եւ զչարչարանսն, զի մատնեցաւ Փիլատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ մարմնովն եդաւ 'ի գերեզմանի, եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն եւ զերրորդ աւուր յարութիւն. եւ զպատուիրէր աշակերտացն՝ աշակերտել զամ հեթանոսս եւ մկրտել զնոսա. պատուիրելոց լինել ընդ նոսա զամ աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի։ Մատթէոս գրեաց զաւետարանս իւր յԵրուսաղէմ շարադրեալ 'ի լեզու եբրայեցի զկնի ութ ամի համբառնալոյ փրկչին, 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի։

Մատթէոս քարոզմանն՝ երգ հնոց.

# ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

## Աւետարանին որ ըստ Մատթէոսի ։


| | Գլ. | Համր. |
|---|---|---|
| Վասն մոգուցն ։ | Բ. | 1. |
| Վասն կոտորածի մանկանցն ։ | Բ. | 16. |
| Վասն յառաջընթացին քարոզութեան Յովհաննու Մկրտչին ։ | Գ. | 1. |
| Վասն զօրագործութեան Տեառն ։ | Դ. | 23. |
| Վասն երանութեանց ։ | Ե. | 2. |
| Վասն բորոտին ։ | Ը. | 1. |
| Վասն հարիւրապետին ։ | Ը. | 5. |
| Վասն զոքանչին Պետրոսի ։ | Ը. | 14. |
| Վասն բժշկութեան ամ ցաւոց ։ | Ը. | 16. |
| Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի ։ | Ը. | 19. |
| Վասն սաստելոյն ՚ի ծովու ջուրցն ։ | Ը. | 23. |
| Վասն դիւահարացն ։ | Ը. | 28. |
| Վասն անդամալուծին ։ | Թ. | 1. |
| Վասն Մատթէի ։ | Թ. | 9. |
| Վասն դստեր ժողովրդապետին ։ | Թ. | 18. |
| Վասն արիւնահոսին ։ | Թ. | 20. |
| Վասն երկուց կուրացն ։ | Թ. | 27. |
| Վասն խլոյ և համր դիւահարին ։ | Թ. | 32. |
| Վասն առաքելոցն իշխանութեան ։ | Ժ. | 1. |
| Վասն առաքելոյն Յովհաննու աշակերտացն ։ | ԺԱ. | 2. |
| Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր ։ | ԺԲ. | 10. |
| Վասն կոյր և համր դիւահարին ։ | ԺԲ. | 22. |


Վասն՝

Մասն՝ որ խնդրելին նշանաւ. ժբ. 38.
Մասն առաքելոյն. ժգ. 1.
Մասն Յովհաննու, և Հերովդէի. ժդ. 1.
Մասն հինգ հացիցն. ժդ. 15.
Մասն երթալոյն 'ի վերայ ծովուն. ժդ. 22.
Մասն աւանդութեանցն [illegible]. ժե. 1.
Մասն կնոջն քանանացւոյն. ժե. 21.
Մասն բժշկելոյ զժողովուրդն. ժե. 29.
Մասն եօթն հացիցն. ժե. 32.
Մասն խմորոյ փարիսեցւոցն. ժզ. 6.
Մասն՝ որ 'ի Կեսարիա հարցմանն. ժզ. 13.
Մասն այլակերպութեան Տն. ժէ. 1.
Մասն լուսնոտահարին. ժէ. 14.
Մասն խնդրելոյ զերկդրամեանն. ժէ. 23.
Մասն հարցանելոյն՝ թէ ո՛ է 'ի մէնջ մեծ. ժը. 1.
Մասն առակին հարիւր ոչխարին. ժը. 12.
Մասն ծառայոյ զբիւր քանքարացն. ժը. 23.
Մասն հարցմանն արձակելոյ առն զկին. ժթ. 1.
Մասն հարցանելոյ մեծատանն զՅի. ժթ. 16.
Մասն վարձկանութեան մշակացն. ի. 1.
Մասն որդւոցն Զեբեդեայ. ի. 20.
Մասն երկուց կուրացն. ի. 29.
Մասն իշոյն, և յաւանակին. իա. 1.
Մասն կուրացն, և կաղացն. իա. 14.
Մասն չորանալոյ թզենւոյն. իա. 18.
Մասն հարցանելոյ զՔն քահանայապետ-
ացն, և ծերոց. իա. 23.
Մասն երկուց որդւոցն առակաց. իա. 28.
Մասն այգւոյն առակին. իա. 33.
Մասն կոչելոյն 'ի հարսանիսն. իբ. 1.

Մասն

Վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն. ԻԲ. 15.
Վասն սադուկեցւոցն. ԻԲ. 23.
Վասն օրինականացն. ԻԲ. 34.
Վասն Քի հարցանելոյն փարիսեցւոցն. ԻԲ. 41.
Վասն վայից դպրաց օրինացն, և փարիսեցւ-ոցն. ԻԳ. 13.
Վասն կատարածի. ԻԴ. 3.
Վասն աւուրն և ժամուն. ԻԴ. 36.
Վասն տասն կուսանացն. ԻԵ. 1.
Վասն տաղանդականին տալոյ. ԻԵ. 14.
Վասն գալստեանն Քի. ԻԵ. 31.
Վասն օծանելոյն զՏէրն իւղով. ԻԶ. 6.
Վասն պատրաստելոյ զպասեքն. ԻԶ. 17.
Վասն օրհնութեան խորհրդոյն. ԻԶ. 26.
Վասն մատնութեան Քի. ԻԶ. 41.
Վասն ուրացութեանն Պետրոսի. ԻԶ. 69.
Վասն Յուդայի զղջմանն. ԻԷ. 3.
Վասն խնդրելոյ զերեւելականն մարմնոյն. ԻԷ. 57.
Վասն իւղաբերից կանանցն. ԻԸ. 1.

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ·
### ԳԼ· Ա·

1 ԳԻՐՔ ԾՆՆԴԵԱՆ Ծնն·
Յսի Քսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահա- 21· 3·
2 մու: * Աբրահամ ծնաւ զԻսահակ· 25·26·
Իսահակ ծնաւ զՅակոբ· Յակոբ ծնաւ 29·35·
3 զՅուդա, և զեղբարս նորա: * Յուդա 38·29·
ծնաւ զՓարէս և զԶարա 'ի Թամարայ· 1·Մնա·
Փարէս ծնաւ զԵզրոմ· Եզրոմ ծնաւ զԱ- 2· 4·
4 րամ: * Արամ ծնաւ զԱմինադաբ· Ամինա- 2· 10·
դաբ ծնաւ զՆաասոն· Նաասոն ծնաւ [illegible]·
4· 20·

զՍաղմովն: *Սաղմովն ծնաւ զԲոոս 'ի Ռախ- 5
աբայ. Բոոս ծնաւ զՈվբէթ 'ի Ռութայ.
Ովբէթ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴա-
‖ 2. Թագ. ւիթ արքայ: * ‖ Դաւիթ արքայ ծնաւ 6
12. 24. զՍողոմոն 'ի կնոջէն Ուրիայ: * ‖ Սողո- 7
‖ 3. Թագ. մոն ծնաւ զՌոբովամ. ‖ Ռոբովամ ծնաւ
11. 43. զԱբիա. ‖ Աբիա ծնաւ զԱսափ: * ‖ Ասափ 8
‖ 14. 31. ծնաւ զՅովսափատ. ‖ Յովսափատ ծնաւ
‖ 15. 8. զՅովրամ. Յովրամ ծնաւ զՈզիա: * ‖ Ոզիա 9
‖ 2. Մն. ծնաւ զՅովաթամ. ‖ Յովաթամ ծնաւ զԱ-
17. 1. քազ. ‖ Աքազ ծնաւ զԵզեկիա: * Եզեկիա 10
‖ 21. 1. ծնաւ զՄանասէ. ‖ Մանասէ ծնաւ զԱմովն.
‖ 26. 23. Ամովն ծնաւ զՅովսիա: * ‖ Յովսիա ծնաւ 11
27. 9. զՅեքոնիա, և զեղբարս նր̃ առ գերութե̃ն
‖ 4. Թագ. Բաբելացւոց: * Յետ գերութեն Բաբելաց- 12
18. 2. ւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ. ‖ Սաղա-
‖ 20. 21. թիէլ ծնաւ զԶօրաբաբէլ: * Զօրաբաբէլ 13
‖ 21. 18. ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիա-
‖ 2. Մն. կիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր: * Ազովր 14
36. 1. և ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Ա-
4. և 9. քին ծնաւ զԵղիուդ: * Եղիուդ ծնաւ զԵ- 15
‖ 2. Եզր. ղիազար. Եղիազար ծնաւ զՄատթան. Մատ-
3. 2. թան ծնաւ զՅակովբ: * Յակովբ ծնաւ 16
զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խօսե-
ցեալ զՄարիամ կոյս. յորմէ ծնաւ Յս̃, որ
անուանեցաւ Քս̃: * Արդ՝ ա̃մ ազգք յԱբ- 17
րահամէ մինչև 'ի Դաւիթ՝ ազգք չորեքտա-
սանք. և 'ի Դաւթէ մինչև 'ի գերութին Բա-
բելացւոց՝ ազգք չորեքտասանք. և 'ի գե-
րութենէն Բաբելացւոց մինչև 'ի Քս̃՝ ազգք
չորեքտասանք: ‖* Եւ

18 ‖*Եւ Յսի Քսի ծնունդն էր այսպէս: Խօ- ‖ Ղուկ.
սեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, 1. 27.
մինչչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ
19 'ի Հոգւոյն սրբոյ: *Եւ Յովսէփ այր նորա,
քանզի արդար էր՝ և ոչ կամէր առակել զնա,
20 խորհեցաւ լռելեայն արձակել զնա: *Եւ
մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա
հրեշտակ Տն 'ի տեսլեան երևեցաւ նմա՝ և
ասէ. Յովսէփ որդի Դաւթի՝ մի երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քան-
զի որ 'ի նմայն ծնեալ է՝ 'ի Հոգւոյն սրբոյ է:
21 *‖Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա ‖ Ղուկ.
Յս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի 1. 31.
22 մեղաց իւրեանց: *Այլ այս ամ եղև, զի Գործ.
լցցի որ ասացաւն 'ի Տնէ 'ի ձեռն Եսայեայ 4. 12.
23 մարգարէի: *‖Ահա կոյս յղասցի՝ և ծնցի ‖ Եսայ.
որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. 7. 14.
24 որ թարգմանի՝ ընդ մեզ Այ: *Եւ զար-
թուցեալ Յովսէփ 'ի քնոյ անտի, արար որպէս
հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, և առ
25 յինքն զկինն իւր: *Եւ ոչ գիտէր զնա,
մինչև ‖ծնաւ զորդին իւր զանդրանիկ. և կո- ‖ Ղուկ.
չեաց զանուն նորա Յս: 2. 7.

## Գլ. Բ.

1 Եւ 'ի ծնանելն Յսի 'ի Բեթղեհէմ Հր-
րէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա
2 Մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ, *և ա-
սեն. ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տե-

սաք զաստղն նր յարևելս, և եկաք երկիրպա-
գանել նմ: *Եւ իբրև լուաւ արքայ Հերով- 3
դէս՝ խռովեցաւ, և ամ Երուսաղէմ ը նմա:
*Եւ ժողովեալ զամ զքահանայապետս և 4
զդպիրս ժողովրդեանն, հարցանէր 'ի նոցա-
նէ՝ թէ ուր ծնանիցի Քսն: *Եւ նք ասեն 5
ցնա. 'ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այս-
‖ Միք. պէս գրեալ է 'ի ձեռն մարգարէին: *‖ Եւ 6
5. 2. դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչինչ կրտ-
Յովհ. սեր ես յիշխանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ
7. 42. իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻս-
րայէլ: *Յայնժամ Հերովդէս գաղտ կո- 7
չեաց զՄոգսն, և ստուգեաց 'ի նոցանէ ըզ-
ժամանակ աստեղն երևելոյ: *Եւ արձա- 8
կեալ զնոսա 'ի Բեթղեհէմ, ասէ. գնացէք
ստուգեցէք վն մանկանն, և յորժամ գտա-
նիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ
երկիրպագից նմա: *Եւ նք իբրև լուան 'ի 9
թագաւորէն՝ գնացին. և ահա աստղն զոր
տեսին յարևելս՝ առաջնորդեաց նց, մինչև
եկեալ եկաց 'ի վր՝ ուր էր մանուկն: *Իբ- 10
րև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրա-
խութի մեծ: *Եւ իբրև մտին 'ի տունն, տե- 11
սին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն
իւրով, և անկեալ երկիրպագանէին նմա.
‖ Սաղմ. ‖ և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմ
71. 10. պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս:
*Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառ- 12
նալ անդրէն առ Հերովդէս, ը այլ ճանա-
պարհ գնացին յաշխարհն իւրեանց: *Եւ 13

իբ-

իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ
Տն երեւէր 'ի տեսլեան Յովսեփու, եւ ասէր.
արի՛ առ զմանուկդ եւ զմայր իւր՝ եւ փախիր
յԵգիպտոս, եւ անդ լինիջիր՝ ցորժամ ասա-
ցից քեզ. քանզի 'ի խնդիր է Հերովդէս
14 կորուսանել զմանուկդ: * Եւ նա յարու-
ցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ
գնաց յԵգիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախ-
15 ճան Հերովդի: * Զի լցցի ասացեալն 'ի
Տնէ 'ի ձեռն մարգարէին որ ասէ. ‖ յԵգիպ- ‖ Ովսէայ.
16 տոսէ կոչեցից զորդի իմ: * Յայնժամ իբ- 11. 1.
րեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի Մո-
գուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց
կոտորեաց զա̃մ մանկունսն որ էին 'ի Բեթ-
ղեհէմ եւ յա̃մ սահմանս նր՝ յերկեմենից եւ
'ի խոնարհ, ը̃ ժամանակին զոր ստուգեաց
17 'ի Մոգուց: * Յայնժամ կատարեցաւ ա-
սացեալն 'ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ
18 ասէ: * ‖ Ձայն գուժեաց 'ի Ռամայ, ող- ‖ Երեմ.
բումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Ռա- 31. 15.
քէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթա-
19 րել՝ զի ոչ էին: * Եւ 'ի վախճանել Հերով-
դի, ահա հրեշտակ Տն 'ի տեսլեան երեւէր
20 Յովսեփայ յԵգիպտոս, * եւ ասէր. արի առ
զմանուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն
Իսրայելի. զի մեռան որ խնդրէին զանձն
21 մանկանդ: * Եւ նա յարուցեալ առ զմա-
նուկն եւ զմայր նր, եւ եկն յերկիրն Իսրայելի:
22 * Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագա-
ւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի

հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրա-
ման առեալ ՚ի տեսլեան, գնաց ՚ի կողմանս
Գալիլեացւոց: * Եւ եկեալ բնակեցաւ ՚ի 23
քաղաքին՝ որ կոչէր Նազարէթ. զի լցցի
բան մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի:

## ԳԼ. Գ.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկըր- 1
տիչ քարոզել յանապատին Հրէաստանի,
‖ Մարկ. * ‖ և ասել. ապաշխարեցէք՝ զի մերձեալ 2
1. 4. է արքայութիւն երկնից: * Զի սա է՝ վն որոյ 3
Ղուկ. ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ
3. 3. ասէ. ‖ ձայն բարբառոյ յանապատի, պատ-
‖ Եսայ. րաստ արարէք զճանապարհ Տն, և ուղիղ
40. 3. արարէք զշաւիղս նր: * Եւ ինքն Յովհան- 4
նէս ունէր հանդերձ ՚ի ստեոյ ուղտու, և
գօտի մաշկեղէն ը մէջ իւր. և կերակուր
նորա էր մարախ և մեղր վայրենի: * Յայն- 5
ժամ ելանէին առ նա ամ Երուսաղէմացիք՝
և ամ Հրէաստան՝ և ամ կողմն Յորդանա-
նու, * և մկրտէին ՚ի նմանէ ՚ի Յորդանան, և 6
խոստովան լինէին զմեղս իւրեանց: * Եւ 7
տեսեալ զբազումս ՚ի սադուկեցւոցն և ՚ի
փարիսեցւոց եկեալս ՚ի մկրտութի նր, ասէ
ցնս. ծնունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել
՚ի բարկութէն որ գալոցն է: * Արարէք այ- 8
սուհետև պտուղ արժանի ապաշխարութն:
* Եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ 9
‖ Յովհ. ‖ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ,
8. 39. զի

զի կարող է Ա՟ծ 'ի քարանցս յայսցանէ յա-
10 րուցանել որդիս Աբրահամու: *Եւ ահա-
սիկ տապար առ արմին ծառոց դնի. ամե-
նայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հա-
11 տանի և 'ի հուր արկանի: ‖*Ես մկրտեմ ‖Մարկ.
զձեզ ջրով յապաշխարութ՟ի. բայց որ զկնի 1. 8.
իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ Ղուկաս.
բաւական բառնալ զկօշիկս ն՟ր. նա մկրտես- 3. 16.
12 ցէ զձեզ 'ի հոգին ս՟բ՝ և 'ի հուր: *Որոյ Յովհ.
հեծանոցն 'ի ձեռին իւրում. և սրբեսցէ 1. 26.
զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն 'ի շտե- Գործ.
մարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ 1. 5.
13 հրով: *‖Յայնժամ գայ Յ՟ս 'ի Գալիլեէ 'ի ‖Մարկ.
Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմա- 1. 9.
14 նէ: *Եւ Յովհաննէս արգելու զնա՝ և ա- Ղուկաս.
սէ. ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել՝ և դու առ 3. 21.
15 իս գաս: *Պատասխանի ետ Յ՟ս՝ և ասէ
ցնա. թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել է
մեզ լնուլ զա՟մ արդարութ՟ի. և ապա թոյլ
16 ետ նմա: *Եւ իբրև մկրտեցաւ Յ՟ս, ել
վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան
նմա երկինք. և ետես զհոգին Ա՟յ՝ զի իջա-
նէր իբրև զաղաւնի, և գայր 'ի վ՟ր նորա:
17 *Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է
որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

## ԳԼ. Դ.

‖Մարկ.
1 Յայնժամ ‖վարեցաւ Յ՟ս յանապատ 'ի 1. 12.
2 հոգւոյն՝ փորձել 'ի սատանայէ: *Եւ պա- Ղուկաս.

հեալ զքառասուն տիւ և զքառասուն գի-
շեր՝ ապա քաղցեաւ։ *Եւ մատուցեալ փոր- 3
ձիչն՝ ասէ ցնա. եթէ որդի ես Այ՟՝ ասա՛ զի
քարինքս այսոքիկ հաց լինիցին։ *Նա պա- 4
2. Օրէ. տասխանի ետ և ասէ. գրեալ է՝ թէ Ոչ
8. 3. հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամ՟ բանիւ
որ ելանէ ՚ի բերանոյ Այ՟։ *Յայնժամ ա- 5
ռեալ ածէ զնա սատանայ ՚ի քաղաքն սբ՟,
և կացուցանէ զնա ՚ի վր՟ աշտարակի տաճա-
րին, *և ասէ ցնա. եթէ որդի ես Այ՟ արկ 6
Սաղ. զքեզ աստի ՚ի վայր. զի գրեալ է՝ Թէ Հրեշ-
90. 11. տակաց իւրոց պատուիրեալ է վն՟ քո, և ՚ի
վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի երբէք
հարցես զքարի զոտն քո։ *Ասէ ցնա դար- 7
2. Օրէ. ձեալ Յս՟. գրեալ է՝ թէ Ոչ փորձեսցես զՏր՟
6. 16. ԱԾ՟ քո։ *Դարձեալ առնու ածէ զնա 8
սատանայ ՚ի լեառն մի բարձր յոյժ, և ցու-
ցանէ նմա զամ՟ թագաւորութիւնս աշխարհի. և
զփառս նոցա. *և ասէ ցնա. զայս ամ՟ քեզ 9
տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ։
*Յայնժամ ասէ ցնա Յս՟. երթ յետս իմ 10
2. Օրէ. սատանայ. զի գրեալ է՝ Տն՟ ԱԾ՟ քում եր-
6. 13. կիրպագցես, և զնա միայն պաշտեսցես։
*Ապա եթող զնա սատանայ. և ահա հր- 11
րեշտակք մատեան՝ և պաշտէին զնա։
Բ Բ *Եւ իբրև լուաւ Յս՟ եթէ Յովհաննէս մատ- 12
Մարկ. նեցաւ, մեկնեցաւ գնաց ՚ի Գալիլեա. *և 13
1. 14. թողեալ զՆազարէթ, եկն բնակեցաւ ՚ի Կա-
Ղուկ. փառնաում ՚ի ծովեզերին, ՚ի սահմանս Զա-
4. 14. բուղոնի և Նեփթաղիմայ. *զի լցցի բանն՝ 14
որ

որ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի:
15 *‖Երկիր Զաբուղոնի եւ երկիր Նեփթաղի- ‖Եսայ.
մայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանա- 9. 1.
16 նու, Գալիլեա հեթանոսաց: * Ժողովուրդ
որ նստէր ՚ի խաւարի՝ ետես լոյս մեծ. եւ
որոց նստէին յաշխարհին եւ ՚ի ստուերս մա-
17 հու՝ լոյս ծագեաց նց: * Յայնմհետէ ըս-
կսաւ քարոզել Յս՝ եւ ասել. ապաշխարեցէք՝
18 զի մերձեալ է արքայութիւն երկնից: * Մինչ-
դեռ գնայր Յս ընդ եզր ծովուն Գալիլեաց-
ւոց, ‖ետես երկուս եղբարս զՍիմոն զկոչե- ‖Մարկ.
ցեալն Պետրոս, եւ զԱնդրէաս եղբայր նր՝ 1. 16.
արկեալ ուռկան ՚ի ծով. քանզի ձկնորսք էին: Ղուկ.
19 *Եւ ասէ ցնս. եկայք զկնի իմ, եւ արարից 5. 2.
20 զձեզ որսորդս մարդկան: *Եւ նք թողեալ
վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նորա:
21 *Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ
երկուս եղբարս, զՅակոբոս Զեբեդեայ եւ
զՅովհաննէս զեղբայր նորա ՚ի նաւի Զեբե-
դեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազ-
մէին զուռկանս իւրեանց. եւ կոչեաց զնս:
22 *Նոքա թողեալ վաղվաղակի զնաւն եւ ըզ-
23 հայրն իւրեանց, գնացին զհետ նր: *Եւ
շրջէր Յս ընդ ամ կողմն Գալիլեացւոց. ուսու-
ցանէր ՚ի ժողովուրդս նց՝ եւ քարոզէր զաւե-
տարանն արքայութեն, եւ բժշկէր զամ հի-
ւանդութիւն՝ եւ զամ ախտս ՚ի ժողովրդեանն:
24 *Եւ ել լուր նր ընդ ամ երկիրն Ասորւոց, եւ
մատուցին առ նա զամ հիւանդս՝ որ նեղեալ
էին ՚ի պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս, եւ ըզ-

դե-

դիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս.
‖Մարկ. և բժշկեաց զնոսա: * ‖Եւ երթային ըզ- 25
3: 7. հետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալի-
‖Ղուկ. լեէ և ՚ի Դեկապօլեայ և յԵրուսաղեմէ և
6. 17. ՚ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու,
ծ և բժշկեաց զնս:

## ԳԼ. Ե:

Բ Գ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. 1
և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա ա-
շակերտք նորա. * և բացեալ զբերան իւր 2
‖Ղուկ. ուսուցանէր զնս, և ասէր: * ‖Երանի աղ- 3
6. 20. քատաց հոգւով, զի նց է արքայութի երկ-
‖Եսայ. նից: * ‖Երանի սգաւորաց, զի նոքա մխի- 4
61. 3. թարեսցին: * ‖Երանի հեզոց, զի նք ժա- 5
‖Սաղմ. ռանգեսցեն զերկիր: * Երանի որ քաղցեալ 6
36. 11. և ծարաւի իցեն արդարութ, զի նք յագես-
ցին: * Երանի ողորմածաց, զի նք ողորմու- 7
‖Սաղմ. թիւն գտցեն: * ‖Երանի այնոցիկ՝ որ սբ են 8
23. 4. սրտիւք, զի նոքա զԱծ տեսցեն: * Երանի 9
խաղաղարարաց, զի նոքա որդիք Այ կոչես-
‖1. Պետ. ցին: * ‖Երանի որ հալածեալ իցեն վս ար- 10
3. 14. դարութ, զի նց է արքայութի երկնից: * Ե- 11
4. 14. րանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և
հալածեսցեն, և ասիցեն զամ բան չար ըզ-
ձէնջ սուտ վասն իմ: * Ցնծացէք և ուրախ 12
լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յա-
ռաջ քան զձեզ էին: * Դուք էք աղ երկրի. 13

‖ապա

ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի . ոչ Մարկ.
իմիք աղիցէ այնուհետեւ, բայց եթէ ըն- 9. 49.
կենուլ արտաքս՝ եւ կոխան լինել 'ի մարդկա- Ղուկ.
14 նէ։ *Դուք էք լոյս աշխարհի . ոչ կարէ 14. 34.
քաղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ։ Մարկ.
15 *Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ը̄ գըր- 4. 21.
ուանաւ, այլ 'ի վ̄ աշտանակի . եւ լոյս տայ Ղուկ.
16 ամենեցուն՝ որ 'ի տանն իցեն։ *Այնպէս 8. 16.
լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, 11. 33.
ոպ̄ զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փա- 1. Պետ.
ռաւորեսցեն զհ̄այր ձեր որ յերկինս է։ 2. 12.
17 *Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս Բ. Պ.
կամ զմարգարէս . ոչ եկի լուծանել՝ այլ լը-
18 նուլ։ *Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն Ղուկ.
երկինք եւ երկիր յովտ մի, որ նշանախեց մի 16. 17.
է, ոչ անցցէ յօրինացն եւ 'ի մարգարէից՝ մին-
19 չեւ ա̄մ եղիցի։ *Որ ոք լուծցէ մի ինչ 'ի Յակոբ.
պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, եւ 2. 10.
ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի
յարքայութ̄ն երկնից . իսկ որ արասցէ՝ եւ ու-
սուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութ̄ն երկ-
20 նից։ *Բայց ասեմ ձեզ . զի եթէ ոչ առա-
ւելուցու արդարութ̄ի ձեր աւելի քան զդպ-
րացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յար-
21 քայութ̄ի երկնից։ *Լուարուք զի ասացաւ
առաջնոցն, թէ մի՛ սպանաներ . զի որ սպա- Ելից.
նանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։ 20. 13.
22 *Այլ ես ասեմ ձեզ . եթէ ա̄մ որ բարկա- 2. Օրին.
նայ եղբօր իւրում տարապարտուց, պար- 5. 18.
տաւոր լիցի դատաստանի . եւ որ ասիցէ ցեղ-

բայր

բայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի.
և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր
լիցի 'ի գեհեն հրոյն: * Եթէ մատուցանի- 23
ցես զպատարագ քո 'ի վր սեղանոյ, և անդ
յիշեսցես' եթէ եղբայր քո ունի ինչ խէթ
զքէն, * թո՛ղ զպատարագն քո առաջի սե- 24
ղանոյն. երթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր
քում, և ապա եկեալ մատուսջիր զպատա-
‖Ղուկ. րագն քո: * ‖ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում 25
12. 58. վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանա-
պարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դա-
տաւորի, և դատաւորն դահճի. և արկանի-
ցիս 'ի բանտ: * Ամէն ասեմ քեզ. ոչ ելա- 26
նիցես անտի, մինչև հատուցանիցես զյե-
տին նաքարակիտն: * Լուարուք զի ասա- 27
‖Ելից. ցաւ, ‖ մի շնար: * Բայց ես ասեմ ձեզ. թէ 28
20. 14. ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ
նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւ-
‖Մատթ. րում: * ‖ Եթէ ակն քո աջ գայթակղեցու- 29
18. 9. ցանէ զքեզ, խլեա՛ զնա' և ընկեա՛ 'ի քէն.
Մարկ. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորի-
9. 46. ցէ, և մի' ամ մարմինդ քո անկանիցի 'ի գե-
‖2. Օրէ. հեն: * Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղե- 30
24. 1. ցուցանէ զքեզ, հա՛տ զնա' և ընկեա՛ 'ի քէն.
Մատթ. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորի-
19. 7. ցէ, և մի ամ մարմինդ քո արկանիցի 'ի գե-
Մարկ. հեն: * Ապաքէն ասացաւ, եթէ ‖ որ ար- 31
10. 4. ձակիցէ զկին իւր' տացէ նմա զարձակմանն:
Ղուկ. * Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամ որ արձա- 32
16. 18. կէ զկին իւր առանց բանի պոռնկութե' նա

տայ

տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ
33 շնայ: *Դարձեալ լուարուք զի ասացաւ ա-
ռաջնոցն. ||մի՛ երդնուցուս սուտ, բայց հա- || Ղևտ.
34 տուսցես Տն զերդմունս քո: *Այլ ես ա- 19. 12.
սեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝
35 զի աթոռ է Այ, * և մի՛ յերկիր՝ զի պատ-
ուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քա-
36 ղաք է մեծի արքայի. * և մի՛ 'ի գլուխ քո
երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ || Յակոբ.
37 առնել՝ կամ թուխ: *||Այլ եղիցի ձեր բան, 5. 12.
այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն
38 'ի չարէն է: *Լուարուք զի ասացաւ. ||ակն || Ելից.
39 ընդ ական, և ատամն ընդ ատաման: *Այլ 21. 24.
ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ չարին.
||այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ || Ղուկ.
40 դարձո՛ նմա և զմիւսն: *Եւ որ կամիցի ընդ 6. 29.
դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նա
41 և զբաճկոն քո: *Եւ որ տարապարհակ վա-
րիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս:
42 * ||Որում խնդրէ 'ի քէն՝ տուր. և որ կամի || 2. Օրէն.
փոխ առնուլ 'ի քէն՝ մի՛ դարձուցաներ զե- 15. 7.
43 րեսս: *Լուարուք ապաքէն զի ասացաւ.
||սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնա- || Ղևտ.
44 մին քո: *Այլ ես ասեմ ձեզ. ||սիրեցէք 19. 18.
զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր. || Ղուկ.
բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս 6. 27.
արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ Հռովմ.
45 և հալածեն. *զի եղիջիք որդիք Հօր ձերոյ 12. 20.
որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի
վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ

ար-

արդարոց և մեղաւորաց : * Զի եթէ սիրի- 46
ցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք
իցեն , ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գոր-
ծեն : * Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բա- 47
րեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք , ո՞չ ա-
պաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գոր-
ծեն : * Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեալք . 48
ոպ՟ և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է :

## ԳԼ. Զ.

Բ Ն Զգո՛յշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՛ առ- 1
նել առաջի մարդկան , ոպ՟ թէ 'ի ցոյց ինչ
նոցա . գուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի
Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է : * Այլ յոր- 2
ժամ առնիցես ողորմութ՟ի , մի՛ հարկաներ
փող առաջի քո , ոպ՟ կեղծաւորքն առնեն 'ի
ժողովուրդս և 'ի հրապարակս , ոպ՟ զի փա-
ռաւորեսցին 'ի մարդկանէ . ամէն ասեմ
ձեզ՝ այն իսկ են վարձք նց՟ : * Այլ դու յոր- 3
ժամ ողորմու՟թի առնիցես , մի՛ գիտասցէ ձախ
քո զինչ գործէ աջ քո . * ոպ՟ զի եղիցի ողոր- 4
մութ՟ի քո 'ի ծածուկ . և Հայրն քո որ տե-
սանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնա-
պէս : * Եւ յորժամ յաղօթս կայցես , մի՛ լի- 5
նիցիս ոպ՟ կեղծաւորքն . զի սիրեն 'ի ժողո-
վուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յա-
ղօթս , ոպ՟ զի երեւեսցին մարդկան . ամէն
ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նց՟ : * Այլ 6
դու յորժամ կայցես յաղօթս , մուտ 'ի սե-
նեակ

նեակ քո՝ և փակեա զդուրս քո, և կաց յա-
ղօթս առ Հայր քո 'ի ծածուկ. և Հայրն քո
որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտ-
7 նապէս: *Եւ յորժամ կայցէք յաղօթս,
մի շատախօսք լինիք իբրև զհեթանոսսն. զի
համարին եթէ 'ի բազում խօսից իւրեանց
8 լսելի լինիցին: *Արդ՝ մի նմանիցէք նոցա.
զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ
9 չև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ: *Եւ
արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. ‖ Հայր ‖ Ղուկ.
10 մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո: *Ե- 11. 2.
կեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպ
11 յերկինս և յերկրի: *Զհաց մեր հանապա-
12 զորդ տուր մեզ այսօր: *Եւ թող մեզ ըզ-
պարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց
13 պարտապանաց: *Եւ մի տանիր զմեզ 'ի
փորձութիւն, այլ փրկեա զմեզ 'ի չարէ. զի քո
է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս
14 ամէն: *‖ Զի եթէ թողուցուք մարդկան ‖ Մարկ.
զյանցանս նց, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկ- 11. 25.
15 նաւոր: *Ապա թէ ոչ թողուցուք մարդկան Սիրաք.
զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ 28. 2.
16 ձեզ զյանցանս ձեր: *Եւ յորժամ պահի-
ցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտ-
մեալք. որ ապականեն զերեսս իւրեանց,
որպէս զի երևեսցին մարդկան թէ պահի-
ցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք
17 նց: *Այլ դու յորժամ պահիցես, օծ ըզ-
18 գլուխ քո՝ և լուա զերեսս քո, *զի մի ե-
րևեսցիս մարդկան իբրև զպահօղ. այլ Հօրն
քում

քում 'ի ծածուկ. եւ Հայրն քո որ տեսանէ
'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս:
* Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց 19
եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական
Ղուկ. հատանեն եւ գողանան: * Այլ գանձեցէք 20
12. 33. ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ու-
Ա. Տիմ. տիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատա-
6. 19. նեն եւ գողանան: * Զի ուր գանձք ձեր են՝ 21
անդ եւ սիրտք ձեր եղիցին:
Բ. Օ. * Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո ա- 22
Ղուկ. ռատ է, ամ մարմինդ լուսաւոր եղիցի: * Ա- 23
11. 34. պա թէ ակն քո չար է՝ ամ մարմինդ խաւա-
Ղուկ. րին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ 'ի քեզ
16. 13. է՝ խաւար է, խաւարն ո՛րչափ եւս: * Ոչ ոք 24
կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին
ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծա-
րիցէ, եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք
Ղուկ. Այ ծառայել եւ մամոնայի: * Վն այդո- 25
12. 22. րիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վն ոգւոց ձերոց՝
Ա. Պետ. զի՛նչ ուտիցէք, կամ զի՛նչ ըմպիցէք. եւ մի՛
5. 7. վն մարմնոց ձերոց՝ թէ զի՛նչ ագանիցիք. ո՛չ
Սաղմ. ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ
54. 23. մարմին քան զհանդերձ: * Հայեցարուք 'ի 26
թռչունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ հնձեն
եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս, եւ Հայրն ձեր
երկնաւոր կերակրէ զնս. ո՛չ ապաքէն դուք
առաւել էք քան զնս: * Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ 27
առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հա-
սակ իւր կանգուն մի: * Եւ վն հանդերձի 28
զի՞ հոգայք. հայեցարուք 'ի շուշանն վայրե-
նի

29 նի՛ որ՟պ աճէ. ոչ ջանայ, եւ ոչ նիւթէ: *Ա-
սեմ ձեզ՝ զի եւ ոչ Սողոմոն յամ՟ ՚ի փառսն
30 իւրում զգեցաւ իբրեւ զմի ՚ի նոցանէ: *Իսկ
եթէ զխոտն ՚ի վայրի որ այսօր է՝ եւ վաղիւն
՚ի հնոց արկանի, Ա՟ծ այնպէս զգեցուցանէ.
ո՞րչափ եւս առաւել զձեզ թերահաւատք:
31 * Մի՛ այսուհետեւ հոգայցէք՝ եւ ասիցէք.
զի՛նչ կերիցուք՝ կամ զի՛նչ արբցուք՝ կամ
32 զի՛նչ զգեցցուք: *Զի զայդ ամ՟ հեթանոսք
խնդրեն. քանզի գիտէ Հ՟այրն ձեր երկնա-
33 ւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամ՟: *Խնդրե-
ցէք նախ զարքայութի՟ն Ա՟յ եւ զարդարութի՟
34 նը. եւ այդ ամ՟ յաւելցի ձեզ: *Մի՛ այսու-
հետեւ հոգայցէք վա՟ վաղուին՝ զի վաղիւն վա՟
իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր:

## Գլ. Է.

1 Մի՛ ‖դատէք՝ զի մի՛ դատիցիք: *Զի ո- Բ. Է.
2 րով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք. ‖Ղուկ.
եւ ‖որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: 6. 37.
3 *Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, Հռովմ.
եւ ՚ի քում ական զգերանդ ոչ տեսանես: 2. 1.
4 *Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թո՛ղ ‖Մարկ.
հանից զշիւղդ յականէ քումմէ. եւ ահաւա- 4. 24.
5 դիկ ՚ի քում ական գերան կայ: *Կեղծա-
ւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ,
եւ ապա հայեսցես հանել զշիւղն յականէ
6 եղբօր քո: *Մի՛ տայք զսրբութի՟ շանց. եւ
մի՟ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խո-

ղաց, զի մի՛ առ ոտն կոխեսցեն զնս, և դար-
‖Մատ. ձեալ երգիծուցանիցեն զձեզ: *‖Խնդրե- 7
21. 22. ցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բա-
Ղուկ. խեցէք՝ և բացցի ձեզ: *Զի ամ որ խնդրէ՝ 8
11. 9. առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝
Յովհան. բացցի նմ: *Ո՞իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր խնդ- 9
14. 13. րիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ
Յակով. նմա. *և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ 10
1. 6. տայցէ նմ: *Արդ՝ եթէ դուք որ չար էք՝ 11
գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց,
ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է
տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա:
‖Ղուկ. *‖Զամ որ միանգամ կամիջիք՝ թէ արաս- 12
6. 31. ցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք
Տոբիթ. նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք:
4. 16. *‖Մտէք ը նեղ դուռն. քանզի ընդարձակ 13
‖Ղուկ. է դուռնն՝ և համարձակ ճանապարհն՝ որ
13. 24. տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտա-
նեն ընդ նա: *Քանզի անձուկ է դուռնն՝ 14
և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, և
սակաւք են որ գտանեն զնա: *Զգոյշ լե- 15
րուք 'ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ
հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են
‖Ղուկ. գայլք յափշտակօղք: *‖'Ի պտղոյ նց ծա- 16
6. 44. նիջիք զնս. միթէ քաղիցե՞ն 'ի փշոց խաղող՝
կամ 'ի տատասկէ թուզ: *Այսպէս ամ 17
ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝
պտուղ չար առնէ: *Ոչ կարէ ծառ բարի 18
պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ
‖Մատ. բարի առնել: *‖Ամենայն ծառ՝ որ ոչ առ- 19
3. 10.

նէ

նէ պտուղ բարի, հատանի եւ ՚ի հուր արկա-
20 նի։ *Ապա ՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։
21 *Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յար- Մտթ.
քայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր 25. 11.
22 իմոյ որ յերկինսն է։ *Բազումք ասիցեն Ղուկ.
ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՞չ յա- 6. 46.
նուն քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս Գործ.
հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս 19. 13.
23 արարաք։ *Եւ յայնժամ ասացից ցնոսա՝
Եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ՚ի բաց կա- Սաղմ.
ցէք յինէն ամենեքեան՝ ո՛յք գործէիք զանօ- 6. 9.
24 րէնութիւն։ *Ամենայն որ լսէ զբանս իմ Ղուկ.
զայսոսիկ՝ եւ առնէ զնոսա, նմանեսցի առն 13. 27.
իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ Ղուկ.
25 վիմի։ *Իջին անձրեւք՝ եւ խաղացին գետք, 6. 48.
շնչեցին հողմք՝ եւ բախեցին զտունն, եւ
ոչ կործանեցաւ. քանզի ՚ի վերայ վիմի
26 հաստատեալ էր։ *Եւ ամենայն որ լսէ զբանս
իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զնոսա, նմանես-
ցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր ՚ի
27 վերայ աւազոյ։ *Իջին անձրեւք՝ յարեան
գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, եւ
անկաւ. եւ էր կործանումն նորա մեծ յոյժ։
28 *Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս
զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ Մարկ.
29 վարդապետութիւն նորա։ *Զի իբրեւ իշ- 1. 22.
խանութեամբ ուսուցանէր՝ եւ ոչ որպէս Ղուկ.
դպիրքն։ 4. 32.

## Գլ. Ը.

Այլ իբրև էջ 'ի լեռնէ անտի, գնացին 1
‖Մարկ. զկնի նորա ժողովուրդք բազումք: *‖Եւ 2
1. 40. ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագա-
Ղուկ. նէր նմ, և ասէր. Տէր՝ եթէ կամիս՝ կարող
5. 12. ես զիս սրբել: *Ձգեաց զձեռն իւր և հա- 3
սոյց 'ի նա Յս՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և
վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւն:
*Եւ ասէ ցնա Յս, զգո՛յշ լեր՝ մի՛ ումեք ա- 4
‖Ղևտ. սիցես. այլ ‖ երթ ցո՛յց զանձն քո քահա-
14. 2. նային. և մատո՛ զպատարագն, զոր հրամայ-
‖Ղուկ. եաց Մովսէս, 'ի վկայութի՛ նց: *‖Եւ մը- 5
7. 1. տեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա
հարիւրապետ մի, աղաչէր զնա, *և ասէր. 6
Տէր՝ մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդա-
մալոյծ՝ չարաչար տանջեալ: *Ասէ ցնա Յս. 7
ես եկից՝ և բժշկեցից զնա: *Պատասխանի 8
‖Ղուկ. ետ հարիւրապետն՝ և ասէ. ‖Տէր՝ չեմ բա-
7. 6. ւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ
ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ:
*Զի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, 9
ունիմ ընդ ինև զինուորս. ասեմ սմա երթ՝ և
երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծա-
ռայի իմում թէ արա զայս՝ և առնէ: *Իբ- 10
րև լուաւ Յս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝
որ զհետ երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ
յիսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք:
‖Մաղաք. *Բայց ասեմ ձեզ, զի բազումք ‖ յարևելից 11
1. 11. և

և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ը՟ Աբ-
րահամու՝ և ը՟ Սահակայ՝ և ընդ Յակոբու
12 յարքայութե՟ երկնից: * Եւ որդիքն արքայ-
ութե՟ ելցեն՝ 'ի խաւարն արտաքին. անդ ե-
13 ղիցի լալ և կրճել ատամանց: * Եւ ասէ Յս՟
ցհարիւրապետն. Երթ՝ և ո՟պ հաւատացերդ
եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նր՟ յաւուր
14 յայնմիկ: * Եւ եկեալ Յս՟ 'ի տուն Պետրո-
սի, ետես ‖ զի զոքանչ նորա անկեալ դնէր ‖ Մարկ.
15 տապացեալ. * կալաւ զձեռանէ նորա՝ և ե- 1. 30.
թող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր
16 զնս՟: * Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա
դիւահարս բազումս, և եհան զայսսն բա-
17 նիւ. և զա՟մ հիւանդսն բժշկեաց: * Զի
լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն ‖ Եսայեայ ‖ Եսայ.
մարգարէի. Նա զհիւանդութիս մեր վերա- 53. 4.
ցոյց, և զցաւս մեր եբարձ:
18 * Տեսեալ Յս՟ի ժողովուրդս բազումս զիւ- Գ Կ
19 րև, հրամայեաց երթալ յայնկոյս: * Եւ
մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝
եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես:
20 * Ասէ ցնա Յս՟. ‖ աղուէսուց որջք գոն՝ և ‖ Ղուկ.
թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ 9. 58.
21 ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր: * Եւ մի ոմն
յաշակերտացն նր՟ ասէ ցնա. Տէր՝ տուր ինձ
հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր
22 իմ: * Ասէ ցնա Յս՟. Եկ զկնի իմ, և թո՛յլ
տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց: ‖ Մարկ.
23 * ‖ Եւ իբրև եմուտ 'ի նաւն, գնացին ըզ- 4. 36.
24 կնի նր՟ աշակերտքն նորա: * Եւ ահա շար- Ղուկաս.

ժումն մեծ եղեւ 'ի ծովուն՝ մինչ նաւին ծած-
կել յալեաց անտի, եւ ինքն ննջէր ։ * Եւ 25
մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ա-
սեն. Տէր՝ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք ։ * Եւ 26
ասէ ցնս. ընդէ՞ր վատասիրտք էք սակաւա-
հաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց
հողմոցն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղութի մեծ ։
* Եւ մարդիկն զարմացան՝ եւ ասէին. ո՞ր- 27
պիսի ոք իցէ սա՝ զի եւ հողմք եւ ծով հնազան-
Մարկ. դին սմա ։ * Եւ իբրեւ անց յայնկոյս յեր- 28
5. 1. կիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դի-
Ղուկ. ւահարք երկու՝ ելեալք 'ի գերեզմանացն,
8. 26. չարաչարք յոյժ. որպ զի չէր հնար անցանել
ումեք ընդ այն ճանապարհ ։ * Եւ ահա ա- 29
ղաղակեցին եւ ասեն. զի՞ կայ մեր եւ քո Յս
Որդի Այ, եկիր տարաժամ տանջել զմեզ ։
* Եւ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի 30
խոզից արօտական ։ * Եւ դեքն աղաչէին 31
զնա եւ ասէին. եթէ հանես զմեզ աստի, հր-
ամայեա մեզ երթալ յերամակ խոզիցն ։
* Եւ ասէ ցնս. երթայք ։ Եւ նք ելեալ գնա- 32
ցին յերամակն խոզից. եւ դիմեաց ամ երա-
մակն 'ի դարէ անտի 'ի ծով, եւ մեռան 'ի
ջուրսն ։ * Եւ խոզարածքն փախեան, եւ եր- 33
թեալ 'ի քաղաքն պատմեցին զամ, եւ զիրս
դիւահարացն ։ * Եւ ահա ամ քաղաքն ել 34
ընդ առաջ Յսի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին
զի գնասցէ 'ի սահմանաց նց ։

## ԳԼ. Թ.

1 Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս, եւ եկն ☩
2 'ի քաղաք իւր: *‖Եւ ահա մատուցին առ ‖ Մարկ.
նա անդամալոյծ մի, որ դնէր 'ի մահիճս. 2. 3.
եւ տեսեալ Յ̅ի զհաւատս ն̅ց՝ ասէ ցանդա- Ղուկ.
մալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: 5. 18.
3 *Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ը̅ միտս.
4 հայհոյէ դա: *Եւ ծանուցեալ Յ̅ի զխոր-
հուրդս ն̅ց՝ ասէ ցն̅ս. ընդէ՞ր խորհիք դուք
5 չարիս 'ի սիրտս ձեր: *Զի՞նչ դիւրին է.
ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ
6 ասել արի՛ եւ շրջեա՛ց: *Այլ զի գիտասջիք՝
եթէ իշխանութի̅ ունի որդի մարդոյ յերկրի
թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամա-
լոյծն. արի՛ առ զմահիճս քո՝ եւ երթ 'ի
7 տուն քո: *Եւ յարուցեալ գնաց 'ի տուն
8 իւր: *Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմա-
ցան. եւ փառաւոր առնէին զԱ̅ծ զտուիչն
այնպիսի իշխանութեան՝ մարդկան:
9 *‖Եւ անցեալ ը̅ այն Յ̅ի՝ ետես զայր մի, Գ. Ի.
զի նստէր 'ի մաքսաւորուն՝ Մատթէոս ա- ‖ Մարկ.
նուն. եւ ասէ ցնա՝ եկ զկնի իմ: Եւ յարու- 2. 14.
10 ցեալ գնաց զկնի ն̅ր: *Եւ եղեւ իբրեւ բազ- Ղուկ.
մեալ էր նա 'ի տան, եւ ահա բազում մաք- 5. 27.
սաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին
11 ը̅ Յ̅ի՝ եւ ը̅ աշակերտս ն̅ր: *Իբրեւ տեսին
փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս ն̅ր. ը̅է՞ր ը̅
մաքսաւորս եւ ը̅ մեղաւորս ուտէ վարդապետն
ձեր:

ձեր: *Իսկ Յս իբրեւ լուաւ՝ ասէ ցնս. ոչ 12
է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց:
‖ Ովսէէ. *Երթայք՝ ուսարուք զի՞նչ է. ‖ զողորմու- 13
6. 6. թիւն կամիմ, եւ ոչ զպոհ. զի ոչ եկի կոչել
Մատ. զարդարս՝ այլ ‖ զմեղաւորս: *Յայնժամ 14
12. 7. մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՝ եւ
‖ 1. Տիմ. ասեն. ‖ ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք
1. 25. յաճախ, եւ քո աշակերտքդ ոչ պահեն:
‖ Մարկ. *Ասէ ցնս Յս. միթէ մարթ ի՞նչ իցէ ման- 15
2. 18. կանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փե-
Ղուկ. սայն ը̅ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝
5. 33. յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, եւ ապա
պահեսցեն: *Ոչ ոք արկանէ կապերտ ան- 16
թափ 'ի վր̅ հնացեալ ձորձոյ. զի առնու ե-
լանէ զլրութին նր̅ 'ի հանդերձէն, եւ եւս
չար պատառումն լինի: *Եւ ոչ արկանեն 17
գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն
պատառին՝ եւ գինին հեղու, եւ տիկքն կորն-
չին. այլ արկանեն զգինի նոր 'ի տիկս
նորս, եւ երկոքին պահին:
✠ *‖ Մինչ դեռ նա զայս խօսէր ը̅ նս, ահա 18
Գ. Գ. իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝
‖ Մարկ. եւ ասէր. դուստր իմ արդ եւս վախճանեցաւ.
5. 22. այլ եկեալ դիցես զձեռն քո 'ի վր̅ նր̅՝ եւ կեց-
Ղուկ. ցէ: *Յարեաւ Յս՝ եւ գնաց զկնի նորա աշա- 19
8. 41. կերտօքն հանդերձ: *‖ Եւ ահա կին մի տե- 20
‖ Մարկ. ռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յե-
5. 25. տոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա:
Ղուկ. *Քանզի ասէր 'ի միտս իւրում. թէ միայն 21
8. 43. մերձենամ 'ի հանդերձս նր̅՝ փրկիմ: *Իսկ 22

Յս

Յն իբրեւ դարձաւ եւ ետես զնա՝ ասէ. քա-
ջալերեա՛ց դո՛ւստր՝ հաւատք քո կեցուցին
զքեզ. եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմա-
23 նէ: *Իբրեւ եկն Յն 'ի տուն իշխանին, եւ
ետես զփողահարսն եւ զամբոխ յոյժ, ասէ ցնս.
24 'ի բա՛ց գնացէք. *զի ոչ եթէ մեռեալ է
25 աղջիկդ՝ այլ ննջէ: *Եւ ծաղր առնէին
զնա: Եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝
կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն:
26 *Եւ ել համբաւս այս ը͞ ա͞մ երկիրն ը͞ այն:
27 *Եւ մինչ դեռ անցանէր ը͞ այն Յն, զհետ Գ՟Գ
եղեն նր կոյրք երկու, աղաղակէին՝ եւ ա-
28 սէին. ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի: *Եւ
իբրեւ եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն.
եւ ասէ ցնս Յն. հաւատա՞յք՝ եթէ կարող
եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո՛ Տէր:
29 *Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ եւ ասէ.
30 ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: *Եւ բա-
ցան աչք նց, եւ սաստեաց նոցա Յն՝ եւ ասէ.
31 զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ: *Եւ նոքա
ելեալ համբաւեցին զնա ը͞ ա͞մ երկիրն ը͞
32 այն: *‖Եւ յելանելն նոցա արտաքս, ահա ‖ Մատթ.
մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար: 12. 22.
33 *Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ Ղուկ.
զարմացան ժողովուրդքն՝ եւ ասեն. թէ եւ 11. 14.
ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայ-
34 էլի: *Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշ-
խանաւն դիւաց հանէ դա զդեւս:
35 *‖Եւ շրջէր Յն ը͞ ա͞մ քաղաքս եւ ը͞ Գ՟Ե
գիւղս. ուսուցանէր 'ի ժողովուրդս նց, եւ ‖ Մարկ.
քա- 6. 7.

քարոզէր զաւետարանն արքայութեան. և
բժշկէր զամ ախտս և զամ հիւանդութիւն ՚ի
ժողովրդեանն: * Եւ տեսեալ զժողովուրդսն՝ 36
գթացաւ ՚ի նոսա. զի էին աշխատեալք և
ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հո-
վիւ: * Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. 37
‖ Ղուկ. ‖ Հունձք բազում են՝ և մշակք սակաւ: * Արդ՝ 38
10. 2. աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ՚ի
հունձս իւր:

## ԳԼ. Ժ.

‖ Մարկ. Եւ ‖ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին 1
3. 13. աշակերտսն իւր, ետ նց իշխանութիւն այսոց
Ղուկ. պղծոց հանել զնս, և բժշկել զամ ցաւս
6. 13. և զամ հիւանդութիւն: * Եւ առաքելոցն 2
9. 1. երկոտասանից էին անուանք այսոքիկ. ա-
ծ ռաջին Սիմոն՝ անուանեալն Պետրոս, և
Անդրէաս եղբայր նր: * Յակոբոս Զեբե- 3
դեայ, և Յովհաննէս եղբայր նորա. Փի-
լիպպոս, և Բարթողիմէոս. Թովմաս, և
Մատթէոս մաքսաւոր. Յակոբոս Ալփեայ, և
Ղեբեոս՝ որ անուանեցաւ Թադէոս: * Սի- 4
մոն կանանացի, և Յուդայ իսկարիովտացի՝
որ և մատնեացն զնա: * Զնս երկոտասա- 5
նեսին առաքեաց Յս, պատուիրեաց նոցա՝
և ասէ, ՚ի ճանապարհ հեթանոսաց մի եր-
թայցէք, և ՚ի քաղաքս Սամարացւոց մի մտա-
‖ Մատթ. նիցէք: * Այլ երթայք առաւել առ ‖ ոչ- 6
15. 24. խարսն կորուսեալս տանն Իսրայէլի: * Եւ 7
իբ-

իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք,
8 թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ * Զհի-
ւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք,
զդեւս հանէք, ձրի առիք՝ եւ ձրի տուք։
9 * ‖ Մի՛ ստանայք ոսկի՝ եւ մի՛ արծաթ՝ եւ մի՛ ‖ Մարկ.
10 պղինձ 'ի գօտիս ձեր։ * Մի՛ պարկ 'ի ճանա- 6. 8.
պարհ, եւ մի՛ երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, Ղուկ.
մի՛ ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւ- 9. 3.
11 րոյ։ * Յոր քաղաք մտանիցէք կա՛մ 'ի գեօղ, 10. 4.
հարցանիցէք՝ թէ ո՞ է 'ի նմա արժանի. եւ
12 անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի։ * Եւ
իբրեւ մտանիցէք 'ի տունն, ողջո՛յն տայջիք
նմա՝ եւ ասասջիք. ողջոյն տանս այսմիկ։
13 * Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ող-
ջոյնն ձեր 'ի վ՟ր ն՟ր. ապա թէ ոչ իցէ ար-
14 ժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ * Եւ
որ ոչ ընկալցի զձեզ՝ եւ ոչ լուիցէ բանից
ձերոց, իբրեւ ելանիցէք 'ի տանէն՝ կամ 'ի
քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփո-
15 շին յոտից ձերոց։ * Ամէն ասեմ ձեզ՝ դիւ-
րագոյն լիցի երկրին Սոդոմացւոց եւ Գոմո-
րացւոց յաւուրն դատաստանի, քան քա-
ղաքին այնմիկ։
16 * ‖ Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչ- Գ. Օ.
խարս 'ի մէջ գայլոց. եղերո՛ւք այսուհետեւ ‖ Ղուկ.
խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ 10. 3.
17 զաղաւնիս։ * Զգո՛յշ լինիջիք 'ի մարդկանէ.
զի մատնեսցեն զձեզ յատեանս. եւ 'ի ժողո-
18 վուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ։ * Եւ
առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանի-
ցին

‖Մարկ. ցին զձեզ վն իմ 'ի վկայութի նց, և հեթա-
13. 11. նոսաց: * ‖ Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, 19
Ղուկ. մի հոգայցէք՝ թէ ո՞րպ կամ զի՞նչ խօսիցիք.
12. 11. զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօ-
սիցիք: * Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօ- 20
սիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի
ձեզ: * Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, 21
և հայր զորդի. և յարիցեն որդիք 'ի վերայ
հարց՝ և սպանանիցեն զնս: * Եւ եղիջիք 22
ատեցեալք յամենեցունց վն անուան իմոյ.
իսկ որ համբերեսցէ իսպառ, նա կեցցէ:
* Եւ յորժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղա- 23
քիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. և եթէ յայն-
մանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս:
ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս
Իսրայէլի՝ մինչև եկեսցէ որդի մարդոյ:
‖Ղուկ. * ‖ Ոչ է աշակերտ առաւել քան զվար- 24
6. 40. դապետ, ‖ և ոչ ծառայ քան զտէր իւր:
Յովհան. * Շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև 25
13. 16. զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր
իւր: Եթէ զտանուտէրն բեեղզեբուղ կոչե-
ցին, ո՞րչափ ևս առաւել զընտանիս նր:
* Մի այսուհետև երկնչիցիք 'ի նոցանէ: 26
‖Մարկ. ‖ զի ոչինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի,
4. 22. և գաղտնի՝ որ ոչ ծանիցի: * Զոր ասեմ 27
Ղուկ. ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս. և զոր
8. 17. լսէք յունկանէ՝ քարոզեցէք 'ի վր տանեաց:
12: 2. * Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն 28
զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել.
այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ
կա-

կարօղն է զոգի և զմարմին կորուսանել 'ի
29 գեհենի։ *Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք
դանկի միոջ վաճառին, և մի 'ի նոցանէ
30 յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։ *Բայց
31 ձեր և ամ̃ իսկ հեր գլխոյ թուեալ է։ *Եւ
արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբ̃մ
32 ճնճղուկս։ *‖Ամենայն որ խոստովանեսցի ‖Մարկ.
յիս առաջի մարդկան, խոստովանեցից և 8. 38.
ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինսն Ղուկ.
33 է։ *Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, 9. 26.
ուրացայց և ես զնա առաջի Հօր իմո՛յ որ 12. 8.
34 յերկինսն է։ *Մի՛ համարիք եթէ եկի ար- 2. Տիմ.
կանել խաղաղութի̃ յերկիր. ոչ եկի ար- 2. 12.
35 կանել խաղաղութի̃, այլ սուր։ *.Քանզի ‖Ղուկ.
եկի քակել ‖զայր 'ի հօրէ իւրմէ, և զդ- 12. 51.
դուստր 'ի մօրէ իւրմէ, և զհարսն 'ի սկես- ‖Միք.
36 րէ իւրմէ։ *‖Եւ թշնամիք առն ընտանիք 7. 6.
37 իւր։ *‖Որ սիրէ զհայր կամ զմայր առա- ‖Ղուկ.
ւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ սիրէ 14. 26.
զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ՛ ‖Մարկ.
38 ինձ արժանի։ *‖Եւ որ ոչ առնու զխաչ 8. 34.
39 իւր՝ և գայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի։ *Որ Մատթ.
գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա՝ և որ կո- 16. 24.
40 րուսցէ զանձն իւր վ̃ն իմ, գտցէ զնա։ *‖Որ Ղուկ.
ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ըն- 9. 24.
41 դունի՝ ընդունի զառաքիչն իմ։ *Որ ըն- 14. 27.
դունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս 17. 33.
մարգարէի առցէ. և որ ընդունի զարդար ‖Յովհ.
յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ 13. 20.
42 *‖Եւ որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս ‖Մարկ.
յայս- 9. 40.

յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝
յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ
կորուսցէ զվարձս իւր։

## ԳԼ. ԺԱ.

Գ. Ե. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յս զպատուէր 1
երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց
անտի քարոզել եւ ուսուցանել 'ի քաղաքս
‖ Ղուկ. նոցա։ *‖ Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ 'ի բան- 2
7: 18. տին զգործսն Քի, առաքեաց 'ի ձեռն աշա-
կերտացն իւրոց, * եւ ասէ ցնա. դու ես՝ որ 3
գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։
* Պատասխանի ետ Յս՝ եւ ասէ ցնս. գնա- 4
ցէք պատմեցէք Յովհաննու, զոր լսէք եւ
‖ Եսայ. տեսէք։ *‖ Կոյրք տեսանեն, կաղք գնան, 5
35. 5. բորոտք սրբին, եւ խուլք լսեն, եւ մե-
ռեալք յառնեն, եւ աղքատք աւետարանին։
* Եւ երանի է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։ 6
‖ Ղուկ. *‖ Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յս ա- 7
7. 24. սել ցժողովուրդսն զՅովհաննէ. զի՞նչ ե-
լէք տեսանել յանապատին, եղէ՞գն շար-
ժուն 'ի հողմոյ։ * Այլ զի՞նչ ելէք տեսա- 8
նել, մա՞րդ 'ի համդերձս փափկութեան զար-
դարեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգե-
ցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են։ * Այլ 9
զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛ ա-
‖ Մաղաք. սեմ ձեզ, եւ առաւել եւս քան զմարգարէ։
3. 1. * Զի նա է՝ վն որոյ գրեալ է. ‖ ահա ես 10
Մարկ. առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց
1. 2. քոց՝

քոյ՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո
11 առաջի քո: *Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ
'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս
մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից
12 մեծ է քան զնա: *Բայց յաւուրցն Յովհան-
նու մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից
բռնադատի, և բռունք յափշտակեն զնա:
13 *Քանզի ամ̄ օրէնք և մարգարէք մինչև
14 ցՅովհաննէս մարգարէացան. *և թէ կա-
միք ընդունել՝ ‖նա է Եղիա՝ որ գալոցն է: ‖Մաղաք.
15 *Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: *Ու՞մ 4. 5.
16 նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտւոյ՝
որ նստիցին 'ի հրապարակս, կարդայցեն
17 զընկերս իւրեանց, *և ասիցեն. փողս հարաք
ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ
18 կոծեցարուք: *Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և
19 ոչ ըմպէր. և ասեն՝ դև գոյ 'ի նմ̄: *Եկն որդի
մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր
կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց
և մեղաւորաց: և արդարացաւ իմաստութի̄
20 յորդւոց իւրոց: *Յայնժամ սկսաւ նախա-
տել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրու-
21 թիւնք նր̄, և ոչ ապաշխարեցին: *‖Վա՜յ ‖Ղուկ.
քեզ Քորազին, վա՜յ քեզ Բեթսայիդա. զի 10. 13.
եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօ-
րութիւնքն՝ որ 'ի ձեզ եղեն, վաղու ևս ար-
դեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր:
22 *Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին
Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝
23 քան ձեզ: *Եւ դու Կափառնաում, մի

մին-

մինչև յերկինս բարձրասցիս. այլ մինչև 'ի
դժոխս իջցես. զի եթէ 'ի Սոդոմ եղեալ
էին զօրութիւնքն՝ որ 'ի քեզ եղեն, ապաքէն
կային ևս մինչև ցայսօր: * Բայց ասեմ 24
ձեզ՝ եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն
լիցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ:
Գ. Կ * Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յս՝ 25
և ասէ. գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի և
երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի
գիտնոց, և յայտնեցեր տղայոց: * Այո 26
Հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո:
* Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ: 27
‖ Յովհ. ‖ Եւ ոչ որ ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր,
8. 19. և ոչ զՀայր որ ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, և
10. 15. ում Որդին կամիցի յայտնել: * Եկայք առ իս 28
ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես
‖ Երեմ. հանգուցից զձեզ: * ‖ Առէք զլուծ իմ 'ի 29
6. 16. ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խո-
նարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց
‖ 1. Յովհ. ձերոց: * ‖ Զի լուծ իմ քաղցր է. և բեռն 30
5. 3. իմ փոքրոգի:

## ԳԼ. ԺԲ:

Գ. Բ Յայնժամ ‖ գնաց Յս ընդ արտորայսն նց̃ 1
‖ Մարկ. 'ի շաբաթու. և աշակերտքն նր̃ քաղցեան,
2. 23. և սկսան հասկ կորզել և ուտել: * Փարի- 2
Ղուկ. սեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւա-
6. 1. սիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է ար-
ժան գործել 'ի շաբաթու: * Եւ նա ասէ 3
ցնս,

ցնա․ ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ ‖ զոր արար ‖ 1․ Թագաւ․
Դաւիթ, յորժամ քաղցեաւ․ և որ ընդ 12․ 4․
4 նմայն էին, *Զիարդ եմուտ ՚ի տունն Ա՟Յ՝
և եկեր զհացն առաջաւորութեն․ զոր ոչ
էր օրէն նմա ուտել, և ոչ՝ որոց ընդ նմայն
5 էին, ‖ բայց միայն քահանայից։ *Կամ թէ ‖ Ղեւտ․
չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ ‖ զի ՚ի շաբաթս 24․ 9․
քահանայքն ՚ի տաճարին պղծեն զշաբաթն, ‖ Թուոց․
6 և անմեղք են։ *Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ 28․ 9․
7 քան զտաճարն է աստ։ *Իսկ եթէ գիտէիք
զինչ է՝ ‖ զողորմութի կամիմ՝ և ոչ զզոհ․ ‖ Ովսէ․
ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն։ 6․ 6․
8 *Զի տէր է շաբաթու՝ որդին մարդոյ։
9 *Եւ գնացեալ անտի Յ՟ս եկն ՚ի ժողովուրդն
10 նց։ *‖ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր ‖ Մարկ․
գօսացեալ էր․ հարցին ցնա՝ և ասեն, եթէ 3․ 1․
պա՞րտ իցէ ՚ի շաբաթու բժշկել․ զի չարա- Ղուկ․
11 խօսեսցեն զնմանէ։ *Եւ նա ասէ ցնոսա․ 6․ 6․
‖ Ո՞վ է ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, ‖ 2․ Օրէն․
և անկանիցի այն ՚ի խորխորատ ՚ի շաբա- 22․ 4․
թու․ միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ
12 զնա։ *Իսկարդ՝ ո՞րչափ լաւ առաւել է մարդ
քան զոչխար․ ապա ուրեմն պարտ է ՚ի
13 շաբաթու բարիս գործել։ *Յայնժամ ասէ
ցայրն․ ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և
14 եղև ողջ իբրև զմիւսն։ *Իսկ փարիսեցիքն
ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝
15 թէ ո՞րպէս կորուսցեն զնա։ *Եւ Յ՟ս իբրև գի-
տաց, մեկնեցաւ անտի․ և գնացին զհետ
նր ժողովուրդք բազումք, և բժշկեաց զա-

մենեսեան ։ *Եւ սաստեաց նց՝ զի մի յայտ- 16
նեսցեն զնմանէ ումեք ։ *Զի լցցի, որ ա- 17
Եսայ. սացաւն ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի ։ *Ե- 18
42. 1. հա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝
ը՛ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ՚ի
վր նր, և իրաւունս հեթանոսաց պատմես-
ցէ ։ *Ոչ հակառակեսցի՝ և ոչ աղաղակես- 19
ցէ, և ոչ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբար-
բառ նր ։ *Զեղէգն ջախջախեալ ոչ փշրես- 20
ցէ, և զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուս-
ցէ. մինչև հանցէ ՚ի յաղթութի զդատաս-
տան ։ *Եւ յանուն նորա հեթանոսք յու- 21
սասցին ։

Դ.Գ.

*Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար 22
մի կոյր և համր, և բժշկեաց զնա. ոպ զի
համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ ։ *Զար- 23
մացան ամ ժողովուրդքն՝ և ասէին. միթէ
Մարկ. սա իցէ Քսն որդի Դաւթի ։ *Բայց փա- 24
3. 22. րիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ ինքն հա-
Ղուկ. նէ դա զդևս՝ եթէ ոչ բեեղզեբուղաւ իշ-
11. 15. խանաւն դիւաց ։ *Իբրև գիտաց Յս զխոր- 25
Մտթ. հուրդս նց՝ ասէ ցնս. ամ թագաւորութի
9. 34. բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամ քա-
Ղուկ. ղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ
11. 17. կացցէ ։ *Եւ եթէ սատանայ զսատանայ 26
հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զի-
արդ կացցէ թագաւորութի նր ։ *Եւ եթէ 27
ես բեեղզեբուղաւ հանեմ զդևս՝ որդիքն ձեր
իւ՞ հանիցեն. վս այնորիկ նոքա եղիցին ձեր
դատաւորք ։ *Ապա թէ հոգւով Այ հանեմ 28

ս զդևս, ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր
րքայութիւն Այ։ *Կամ զիա՞րդ կարէ ոք
մտանել 'ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա
ափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն,
ապա զտունն նր յափշտակիցէ։ *Որ ոչ
նդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժո֊
ղվէ ըն իս՝ ցրուէ։ *Վն այդորիկ ասեմ || Մարկ.
եզ. ամ մեղք և հայհոյութիւնք թողցին 3. 28.
արդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի Ղուկ.
թողցի։ *Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ 12. 10.
մարդոյ՝ թողցի նմ. բայց որ զհոգւոյն սբյ
ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխար֊
հի՝ և մի 'ի հանդերձելումն։ *Կամ արա֊
րէք զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի,
կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նր
չար. քանզի ||'ի պտղոյ անտի ծառն ճա֊ || Ղուկ.
նաչի։ *Ծնունդք իժից, զիա՞րդ կարիցէք 6. 44.
բարիս խօսել՝ որ չարքդ էք. քանզի 'ի յա֊
ւելուածոյ սրտի խօսի բերան։ *Մարդ բա֊
րի 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբա֊
րիս. և մարդ չար՝ 'ի չար գանձուց սրտի
իւրոյ հանէ զչարիս։ *Բայց ասեմ ձեզ.
զի ընդ ամ դատարկ բանի զոր խօսիցին
մարդիկ, տացեն համար յաւուրն դատաս֊
տանի։ *Զի 'ի բանից քոց արդարասցիս.
և 'ի բանից քոց պարտաւորեսցիս։

Դ. Դ.

Յայնժամ պխի ետուն նմա ոմանք 'ի
դպրացն և 'ի փարիսեցւոց՝ և ասեն. վար֊ || Մարկ.
դապետ՝ կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն։ 16. 4.
Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս. || ազգ Ղուկ.

չար և շնացող նշան խնդրէ. և նշան
տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգ
‖Յովնան. րէի: *Զի որպէս էր ‖Յովնան 'ի փոր կ
2. 1. տին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպ
եղիցի և որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զեր
‖Յովնան. տիւս և զերիս գիշերս: *‖Արք նինուէ
3. 5. ցիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս
այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա, զի զղ
ջացան 'ի քարոզութիւն Յովնանու. և ա
աւասիկ մեծ քան զՅովնան է աստ: *Դշ
խոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի
ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ զս
‖3.Թագաւ. ‖զի եկն 'ի ծագաց երկրի՝ լսել զիմաստ
10. 1. թիւնն Սողոմոնի. և ահա մեծ քան զՍ
‖Ղուկ. ղոմոն է աստ: *‖Այլ յորժամ այսն պ
11. 24. ելանէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղ
խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ: *Յայ
ժամ ասէ. դարձայց 'ի տուն իմ՝ ուստի
լի. և եկեալ գտանէ զնա պարապորդ, մա
րեալ և յարդարեալ: *Յայնժամ ե
թայ՝ և առնու ընդ իւր եօթն այլ այս չ
րագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ ան
‖2.Պետր. և ‖լինի յետինն մարդոյն այնորիկ չար ք
2. 20. զառաջինն. այնպէս եղիցի և ազգիս այսմ
‖Մարկ. չարի: *‖Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խ
3. 31. սէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային ա
Ղուկ. տաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա: *Ասէ ա
8. 19. նա ոմն, ահա մայր քո՝ և եղբարք քո կ
արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ: *
պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ց
և

ասէ. ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք: *Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. ահա մայր իմ և եղբարք իմ: *Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝ և մայր:

## ԳԼ. ԺԳ.

Յաւուր յայնմիկ ելեալ Յս ՚ի տանէն՝ նստաւ առ ծովեզերբն: *Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմ ՚ի նաւն՝ և նստել. և ամ ժողովուրդն կայր առ ծովեզերբն, *և խօսէր ընդ նս բազում առակօք՝ և ասէր: *Ահա ել սերմանահան սերմանել. և ՚ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկին թռչունք երկնից՝ և եկեր զնա: *Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ՝ առ ՚ի չգոյէ հիւթոյ երկրին. *՚ի ծագել արեւու յապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ: *Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա: *Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր: *Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: *Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նս: *Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս. քանզի

ԳՆ
Մարկ. 4. 1.
Ղուկ. 8. 4.

ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքա
‖ Մատթ. ութեն երկնից, և նոցա չէ տուեալ: * ‖ Զ
25. 29. որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի. և
ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմ
նէ: * Վս այնորիկ առակօք խօսիմ ընդ ն
զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և լսեն՝ և
լսեն, և ոչ առնուն ՚ի միտ: * Եւ կատ
րի առ նս մարգարէութիւն Եսայեայ՝ որ աս
‖ Եսայ. ‖ լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և տես
6. 9. նելով տեսջիք՝ և մի տեսջիք: * Զի թան
Մարկ. բացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և
4. 12. կանջօք իւրեանց ծանուանս լուան. և զ
Ղուկ. իւրեանց կափուցին՝ զի մի երբէք տես
8. 10. աչօք՝ և ականջօք լուիցեն՝ և սրտիւք
մասցին, և դարձցին՝ և բժշկեցից զնս
‖ Ղուկ. * Բայց ձեր ‖ երանի է աչացդ՝ զի տեսանե
10. 23. և ականջաց ձերոց՝ զի լսեն: * Ամէն աս
ձեզ. զի բազում մարգարէք և արդ
ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և
տեսին. և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան: *
արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացան
* Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութե
ոչ առնու ՚ի միտ, գայ չարն՝ և յափշտ
կէ զսերմանեալն ՚ի սիրտ նր. այն է՝ որ
ճանապարհաւն սերմանեցաւ: * Եւ որ յ
պառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրև
զբանն, և վաղվաղակի խնդութբ ընդ
զնա: * Բայց քանզի ոչ ունի արմատս յ
քեան, այլ առ ժամանակ մի է. ՚ի լի
նեղութե և հալածանաց վասն բանին՝ վ
վաղ

22 վաղակի գայթակղի։ *Իսկ որ 'ի մէջ փշոցն
սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն,
եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեն
հեղձուցանեն զբանն, եւ լինին անպտուղ։
23 *Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն
է, որ իբրեւ լսէ զբանն՝ եւ 'ի միտ առնու, եւ
տայ զպտուղ, է որ հարիւր; եւ է որ վաթ-
սուն, եւ է որ երեսուն։
24 *Այլ առակ արկ առ նս՝ եւ ասէ. Նմանե- Դ. Օ.
ցաւ արքայութի երկնից առն, որ սերմանի-
25 ցէ սերմն բարի յագարակի իւրում։ *Եւ 'ի
քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա.
եւ ցանեաց 'ի վր որոմն 'ի մէջ ցորենոյն՝ եւ
26 գնաց։ *Եւ իբրեւ բուսաւ խոտն՝ եւ արար
27 պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմնն։ *Մա-
տուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա.
տէր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարա-
կին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմնն։
28 *Եւ նա ասէ ցնս. այր թշնամի արար զայն։
Ասեն ցնա ծառայքն. կամի՞ս՝ զի երթիցուք
29 քաղեսցուք զայն 'ի բաց։ *Եւ նա ասէ ցնս.
մի. գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցո-
30 րեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք։ *Թո՛յլ
տուք երկոցունց աճել 'ի միասին մինչեւ 'ի
հունձս, եւ 'ի ժամանակի հնձոցն ասացից
ցհնձօղսն. քաղեցէք նախ զորոմնն եւ կապե-
ցէք զայդ խրձունս՝ առ 'ի այրել, եւ զցո-
31 րեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ։ *‖Այլ ‖Մարկ.
առակ արկ առ նս՝ եւ ասէ. Նման է արքայ- 4. 30.
ութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր ա- Ղուկ.

 ռեալ 13. 18.

առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւ-
րում: *Որ փոքր է քան զա̃մ սերմանիս . 32
և յորժամ աճիցէ, մեծ է քան զա̃մ բան-
ջարս . և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկ-
‖Ղուկ. նից և հանգչել յոստս նր̃: *‖Այլ առակ 33
13. 20. խօսեցաւ ընդ նս̃՝ և ասէ . Նման է արքայութ̃ի
երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց
'ի գրիւս երիս ալեր՝ մինչև ա̃մ խմորեցաւ:
*Զայս ա̃մ խօսեցաւ Յս̃ առակօք ընդ ժողո- 34
‖Մարկ. վուրդսն . ‖և առանց առակի ոչինչ խօսէր
4: 34. ընդ նս̃: *Զի լցցի ասացեալն 'ի մարգարէէն . 35
‖Սաղմ. ‖բացից առակօք զբերան իմ, բղխեցից ըղ-
77. 2. ծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի:

ԳԺ

*Յայնժամ թողեալ Յս̃ի զժողովուրդսն՝ 36
եկն 'ի տուն . մատեան առ Նա աշակերտքն
նր̃՝ և ասեն . մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն
ագարակի: *Նա պատասխանի ետ՝ և ասէ 37
ցնոսա . որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի
մարդոյ: *Եւ ագարակն աշխարհս է: Սերմն 38
բարի նոքա են՝ որ որդիքն արքայութե̃ն են .
իսկ որոմն որդիք չարին են: *Եւ թշնա- 39
‖Յայտ. մին որ վարեաց զայն՝ սատանայ է: ‖Եւ
14. 15. հունձքն կատարած աշխարհիս է, և հըն-
ձօղքն հրեշտակք են: *Որպէս ժողովի ո- 40
րոմնն՝ և 'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի
կատարածի աշխարհիս: *Առաքեսցէ որ- 41
դի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն
յարքայութէ նր̃ զա̃մ գայթակղութիս՝ և
զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութի: *Եւ 42
‖Մատթ. արկցեն զնս̃ 'ի հնոց հրոյ . ‖անդ եղիցի լալ՝
24. 51. և

43 և կրճել ատամանց: *‖ Յայնժամ ար- ‖ Իմաստ.
դարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայ- 3. 7.
ութեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ՝ Դանիէ.
44 լուիցէ: *Դարձեալ՝ նման է արքայութիւն 12. 3.
երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր
գտեալ մարդոյ՝ թագոյց. և 'ի խնդութենէ
անտի երթայ վաճառէ զամ ինչ զոր ունի,
45 և գնէ զագարակն զայն: *Դարձեալ՝ նման
է արքայութի երկնից առն վաճառականի՝
46 որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: *Եւ
գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ
վաճառեաց զամ զոր ինչ ունէր՝ և գնեաց
47 զայն մարգարիտ: *Դարձեալ՝ նման է ար-
քայութի երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով և
48 յամ ազգաց ժողովելոյ: *Զոր՝ իբրև լցաւ,
հանեալ 'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին
զբարի բարին յամանս, և զխոտանն 'ի բաց
49 ընկեցին: *Այնպէս եղիցի 'ի կատարածի
աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն
50 զչարս 'ի միջոյ արդարոց, *և արկցեն զնս
'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ա-
51 տամանց: *Ասէ ցնս Յս. իմացարո՞ւք զայս
52 ամ: Ասեն ցնա. այո Տր: *Եւ նա ասէ
ցնս. վասնայսորիկ ամ դպիր աշակերտեալ
արքայութեն երկնից՝ նման է առն տանու-
տեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և
զհին:

53 *Եւ եղև իբրև կատարեաց Յս զառակս ՆԿ
54 զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: *Եւ եկեալ 'ի
գաւառ իւր՝ ուսուցանէր զնս 'ի ժողով-

դեանն

դեանն նց, մինչև զարմանալ նց՝ և ասել․
ուստի՞ իցէ այս իմաստութի՛ և զօրու-
‖Մարկ. թիւնք։ *‖Ո՞չ սա է հիւսանն որդի․ ո՞չ 55
6. 3. մայր սր կոչի Մարիամ․ և եղբարք սորա
Ղուկ. Յակոբոս՝ և Յովսէս՝ և Սիմոն՝ և Յուդաս։
4. 16. *Եւ քորք սորա ամենեքեան առ մեզ են․ 56
արդ ուստի՞ է սմա այս ամ։ *Եւ գայթակ- 57
ղէին ՚ի նա։ Եւ Յս ասէ ցնս․ չիք մարգա-
րէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և
յիւրում տան։ *Եւ ոչ արար անդ զօրու- 58
թիւնս բազումս վասն անհաւատութե նց։

## ԳԼ. ԺԴ.

ԵԲ Յայնմ ժամանակի ‖լուաւ Հերովդէս չոր- 1
‖Մարկ. բորդապետ զլուր Յսի։ *Եւ ասէ ցծառայս 2
6. 14. իւր․ նա է Յովհաննէս մկրտիչ, նա յա-
Ղուկ. րեաւ ՚ի մեռելոց, և վն այնորիկ զօրութիւնք
9. 7. լինին նովաւ։ *‖Քանզի Հերովդէս կալաւ 3
‖Ղուկ. զՅովհաննէս, կապեաց զնա և եդ ՚ի բան-
3. 19. տի՝ վն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր
նր։ *Զի ասէր ցնա Յովհաննէս․ չէ ար- 4
ժան քեզ ունել զդա։ *Եւ կամէր զնա 5
սպանանել, բայց երկնչէր ՚ի ժողովրդենէ
‖Մատթ. անտի․ ‖քանզի իբրև զմարգարէ ունէին
21. 26. զնա։ *Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի՝ 6
կաքաւեաց դուստրն Հերովդիայ ՚ի մէջ բազ-
մականին․ և հաճոյ թուեցաւ Հերովդի։
*Ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա 7
զինչ և խնդրեսցէ։ *Եւ նա յառաջագոյն 8

խրատեալ 'ի մօրէ իւրմէ, տուր ինձ ասէ
12 այսր 'ի վ՟ր սկտեղ զգլուխն Յովհաննու
9 մկրտչի: *Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց
վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց
13 10 տալ նմա: *Եւ առաքեաց գլխատեաց զՅով-
11 հաննէս 'ի բանտի: *Եւ բերաւ գլուխ ն՟ր
14 սկտեղբ՝ և տուաւ աղջկանն, և տարաւ առ
12 մայր իւր: *Եւ մատուցեալ աշակերտքն
ն՟ր՝ բարձին զմարմինն և թաղեցին, և ե-
15 կեալ պատմեցին Յ՟սի:
13 *‖Եւ իբրև լուաւ Յ՟ս, գնաց անտի նաւու
յանապատ տեղի առանձինն: Իբրև լուան
ժողովուրդքն, գնացին զհետ ն՟ր հետի 'ի
14 քաղաքաց անտի: *Եւ իբրև ել՝ ետես ժո-
ղովուրդ բ՟զմ, գթացաւ 'ի ն՟ս, և բժշկեաց
16 15 զհիւանդս նոցա: *Իբրև Է̃ երեկս եղև,
17 մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն. տե-
ղիս անապատ է՝ և օրս տարաժամեալ, ար-
ձակեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ
18 'ի շէնսն՝ գնեսցեն իւրեանց կերակուրս:
16 *Եւ ասէ Յ՟ս. ոչինչ պիտոյ է դոցա եր-
19 17 թալ. դուք տուք դոցա ուտել: *Եւ ն՟ք ասեն
ցնա. ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկա-
18 նակ և երկուս ձկունս: *Եւ ասէ ցն՟ս. բե-
20 19 րէք այսր զայն: *Եւ հրամայեաց բազմե-
ցուցանել զժողովուրդսն 'ի վ՟ր խոտոյ. և
առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձ-
21 կունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց և ե-
բեկ՝ և ետ ցաշակերտսն զնկանակսն, և ա-
20 շակերտքն ժողովրդոցն: *Եւ կերան ամենե-

քեան՝

քեան՝ և յագեցան, և բարձին զնշխարս կո-
տորոցն երկոտասան սակառի լի: * Եւ որք 21 49
կերանն՝ էին արք իբրև հինգ հազար. թող
զկանայս և զմանկտի: * ‖ Եւ ստիպեաց 22 50
վաղվաղակի զաշակերտսն մտանել 'ի նաւ՝
և յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողո-
վուրդսն արձակեսցէ:
* Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ‖ ել 23
'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև
ը̄ երեկս եղև, անդ էր միայն: * Եւ նաւն 24 1
մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարի- 2
սօք ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր
հողմն: * Եւ 'ի չորրորդում պահու գիշե- 25
րոյն եկն առ նոսա Յս̄ գնալով 'ի վերայ 3
ծովուն: * Իբրև տեսին զնա աշակերտքն 26 4
զի գնայր 'ի վերայ ծովուն՝ խռովեցան, և
ասեն թէ առաչօք ինչ իցէ. և առ ահին
աղաղակեցին: * Եւ վաղվաղակի խօսեցաւ 27 5
ընդ նոսա Յս̄՝ և ասէ, քաջալերեցարո՛ւք
ես եմ, մի երկնչիք: * Պատասխանի ետ 28
նմա Պետրոս՝ և ասէ, Տէ՛ր՝ եթէ դու ես, 6
հրամայեա՛ ինձ գալ առ քեզ 'ի վերայ
ջրոցս: * Եւ նա ասէ, եկ: Եւ իջեալ 'ի նա- 29 7
ւէն Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջրոցն, և եկն 8
առ Յս̄: * Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ եր- 30
կեաւ. և իբրև սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝
և ասէ. Տէր փրկեա՛ զիս: * Եւ վաղվաղա- 31 9
կի Յս̄ ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և 10
ասէ. թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր:
* Եւ իբրև ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն: 32 11

* Եւ

33 *Եւ որ 'ի նաւին էին՝ մատեան երկիրպա-
գին նմա՝ եւ ասեն. արդարեւ որդի ԱՅ ես
40 34 դու: *‖ Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գենե- ‖ Մար
35 նեսարէթ: *Եւ իբրեւ ծանեան զնա արք 6. 5
տեղւոյն այնորիկ, առաքեցին ը̄ ամ գա-
41 36 ւառն՝ եւ ածին առ նա զամ հիւանդս: *Եւ
աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս
հանդերձի նր մերձեսցին. եւ որ միանգամ
մերձեցան՝ փրկեցան:

42

## ԳԼ. ԺԵ:

1 Յայնժամ մատեան առ Յս՝ որ յԵրուսաղեմէ
2 փարիսեցիքն եւ դպիրք՝ եւ ասեն: *‖ Ընդէ՞ր ‖ Մար
43 աշակերտքն քո անցանեն զաւանդութբ ծե- 7. 5
րոցն. զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց
44 3 ուտեն: *Նա պատասխանի ետ՝ եւ ասէ
ցնս. իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուի-
4 րանաւ ԱՅ՝ վն ձերոյ աւանդութեն: *Զի ‖ Ելից
45 ՏՐ ասաց. ‖ պատուեա զհայր քո եւ զմայր: 20. 1
5 *‖ Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մա- 2. Օր
6 հու վախճանեսցի: *Եւ դուք ասէք. որ 5. 1
ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պա- ‖ Ելից
տարագ է՝ զոր յինէն օգտիցիս, եւ ոչ պատ- 21. 1
46 ուիցէ զհայր իւր եւ զմայր իւր. եւ խոտէք
7 զբանն ԱՅ վն ձերոյ աւանդութեն: *Կեղ- 20. 9
47 ծաւորք՝ բարւոք մարգարէացաւ 'ի վն ձեր
8 Եսայի՝ եւ ասէ: *‖ Ժողովուրդս այս շրթ- 20. 2
48 թամբք պատուէ զիս, եւ սիրտ իւրեանց հե- ‖ Եսայ
9 ռացեալ մեկուսի է յինէն: *Զուր պաշտեն 29. 1
զիս.

զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդ-
կան պատուիրանս: *Եւ կոչեցեալ առ 10 29
ինքն զժողովուրդն՝ ասէ ցնս. լուարուք՝
և 'ի միտ առէք: *‖ Ոչ որ ինչ մտանէ ի 11
15· բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ 'ի 30
բերանոյ՝ այն պղծէ զմարդ: *Յայնժամ 12
մատուցեալ աշակերտացն նր՝ ասեն ցնա. 31
գիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրև լուան զբանն՝
գայթակղեցին: *Նա պատասխանի ետ նց՝ 13
և ասէ. ‖ Ամ տունկ զոր ոչ տնկեաց Հայր 32
2· իմ երկնաւոր, խլեսցի: *Թո՛յլ տուք զնոսա. 14
‖ Կոյրք են՝ կուրաց առաջնորդ. կոյր կուրի
39· յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին 33
'ի խորխորատ անկանին: *‖ Պատասխանի 15
17· ետ նմա Պետրոս և ասէ. մեկնեա մեզ զա-
ռակս զայս: *Ասէ Յս. տակաւին և դուք 16
անմիտք էք: *Եւ ո՞չ իմանայք, եթէ ամ 17 34
որ մտանէ 'ի բերան, յորովայն երթայ՝ և
արտաքս ելանէ: *Իսկ որ ելանէ 'ի բե- 18 35
րանոյ՝ 'ի սրտէ անտի գայ. և այն պղծէ
զմարդն: *Զի 'ի սրտէ ելանեն խոր- 19
հուրդք չարք՝ սպանութիւնք շնութիւնք 36
պոռնկութիւնք գողութիւնք սուտ վկայու-
թիւնք հայհոյութիւնք: *Այս ամ է՝ որ 20
պղծէ զմարդն, այլ անլուայ ձեռօք ուտել՝ 37
ոչ պղծէ զմարդ:

*‖ Եւ ելեալ անտի Յսի գնաց 'ի կողմանս 21 38
Տիւրոսի և Սիդոնի: *Եւ ահա կին մի քա- 22
25· նանացի 'ի սահմանաց անտի նց ելեալ, ա-
ղաղակէր և ասէր. ողորմեա՛ց ինձ Տր որդի 39

Դաւ-

Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի:
23 *Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մա-
տուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա
և ասէին. արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ ‖ Վեր.
24 մեր: *Նա պատասխանի ետ և ասէ. ոչ 10. 6.
ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ ‖ առ ոչխարս կո-
25 րուսեալս տանն Իսրայելի: *Եւ նա մա-
տուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. Տէ՛ր
26 օգնեա՛ ինձ: *Պատասխանի ետ նմ̃ և ասէ.
ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և
27 արկանել շանց: *Եւ նա ասէ. այո՛ Տէր,
քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց ան-
28 կելոց 'ի սեղանոյ տն̃ իւրեանց: *Յայնժամ
պխի ետ նմա Յն̃ և ասէ. ո՛վ կին դու՝ մեծ
են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կա-
միս. և բժշկեցաւ դուստր նր̃ 'ի նմին ժամու:
29 *Եւ գնացեալ անտի Յն̃ի, եկն 'ի ծովեզրն ԿԱ:
Գալիլեացւոց, և ելեալ 'ի լեառն նստէր
30 անդ: *‖ Մատեան առ նա ժողովուրդք ‖ Եսայ.
բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս 35. 5.
կոյրս համերս միակողմանիս, և այլս բա-
զումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և
31 բժշկեաց զն̃ս: *Մինչև զարմանալ ժողո-
վրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին՝
կաղք գնային՝ միակողմանիք բժշկէին՝ կոյրք
տեսանէին, և փառաւոր առնէին զԱ̃ծ Իս-
32 րայելի: *‖ Եւ կոչեցեալ առ ինքն Յն̃ի զա- ‖ Մարկ.
շակերտսն՝ ասէ. գթամ 'ի ժողովուրդդ, զի 8. 1.
արդ երեք աւուրք են զի կան առ իս, և ոչ
ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսա

նօ-

նօթիս՝ չկամիմ, գուցէ նքթիցեն զճանա-
պարհայն։ *Ասեն ցնա աշակերտքն. իսկ 33
ուրդ՝ մեզ յանապատի աստ ուստի՞ լիցէ այն-
չափ հաց՝ մինչեւ յագեցուցանել զայսչափ
ժողովուրդ։ *Եւ ասէ ցնոսա Յիսուս. քանի՞ նկա- 34
նակ ունիք. եւ նոքա ասեն. եօթն, եւ սակաւ
ձկունս։ *Եւ հրամայեաց ժողովրդեանն բազ- 35
մել ի վերայ գետնոյ։ *Եւ առեալ զեօթն նկա- 36
նակսն եւ զձկունսն՝ գոհացաւ եւ եբեկ եւ ետ
ցաշակերտսն, եւ նոքա ժողովրդեանն։ *Կե- 37
րան ամենեքեան եւ յագեցան. եւ բարձին
զնշխարս կոտորոցն եօթն զամբիւղ լի։ *Եւ 38
որք կերանն՝ էին արք իբրեւ չորք հազարք.
թող զկանայս եւ զմանկտի։ *Իբրեւ արձա- 39
կեաց զժողովուրդսն, ել ի նաւ՝ եւ եկն ի
սահմանս Մագդաղենայ։

## Գլ. ԺԶ.

Մարկ. Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սադու- 1
8. 11. կեցիք փորձելով խնդրէին ի նմանէ՝ նշան
յերկնից ցուցանել նոցա։ *Եւ նա պատասխա- 2
Ղուկ. նի ետ՝ եւ ասէ ցնոսա. յորժամ երեկոյ լինի՝
12. 54. ասէք, պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է եր-
կին։ *Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շա- 3
ռագունի տրտմութեամբ երկին։ Արդ՝ զերեսս
երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանա-
Մտթ. կիս ոչ կարէք գիտել։ *Ազգ չար եւ շնա- 4
12. 39. ցող՝ նշան խնդրէ, եւ նշան մի տացի նմա,
Յովնան. բայց նշանն Յովնանու մարգարէի.
2. 1. եւ

5 և եթող զնոսա և գնաց: *Գնացին և աշա-
կերտքն յայնկոյս, և մոռացան առնուլ հաց:
6 *Ասէ ցնոսա Յս. ‖ տեսէք և զգոյշ լերուք 'ի ‖ Մարկ.
խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոցն: 8. 14.
7 *Նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին թէ Ղուկ.
8 հաց ոչ բարձաք: *Գիտաց Յս և ասէ. զի 12. 1.
խորհիք 'ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ
9 հաց ոչ ունիք: *Տակաւին չիմանայք՝ և ոչ
յիշէք ‖ զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և ‖ Մէր.
10 քանի սակառի բարձիք: *Եւ ոչ ‖ զեօթն 14. 17.
նկանակն 'ի չորս հազարսն, և քանի զամ- ‖ Մէր.
11 բիւղս բարձիք: *Արդ՝ զիա՞րդ ոչ իմանայք՝ 15. 34.
եթէ ոչ վն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել
'ի խմորոյ սադուկեցւոց և փարիսեցւոցն:
12 *Յայնժամ 'ի միտ առին, թէ ոչ ասաց ըզ-
գուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդոյ փարի-
սեցւոցն և սադուկեցւոց:
13 *‖Եւ եկեալ Յս 'ի կողմանս Փիլիպպեայ ՕԿ
Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն՝ և ա- ‖ Մարկ.
սէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ 8. 27.
14 որդի մարդոյ: *Եւ նք ասեն. ոմն զՅով- Ղուկ.
հաննէս մկրտիչ, և այլք զԵղիա, և կէսք 9. 18.
15 զԵրեմիա, կամ զմի ոք 'ի մարգարէից: *Ա-
սէ ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ ի-
16 ցեմ: *Պատասխանի ետ Սիմոն Պետրոս՝ և
ասէ. ‖ դու ես Քն Որդի Այ կենդանւոյ: ‖ Յովհ.
17 *Պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնա. երանի 6. 70.
քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին
և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ
18 որ յերկինս է: *‖Եւ ես քեզ ասեմ. զի ‖ Յովհ.

դու ես վէմ, և 'ի վր̃ այդր վիմի շինեցից
զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի
յաղթահարեսցեն։ *Եւ տաց քեզ զփականս 19
‖ Մտթ. արքայութեն երկնից. ‖ և զոր միանգամ կա-
18. 18. պեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս.
Յովհ. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձա-
20. 23. կեալ յերկինս։ *Յայնժամ սաստեաց ա- 20
շակերտացն, զի մի ումեք ասիցեն՝ թէ նա
է Քս̃ն։ *Յայնմհետէ սկսաւ Յս̃ ցուցա- 21
նել աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա
երթալ յԵ̃ղէմ. և թէ բազում չարչարանս
չարչարիլ 'ի քահանայապետիցն և 'ի դպրաց
և 'ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ, և
յերրիր աւուր յառնել։ *Եւ առեալ զնա 22
մեկուսի՝ Պետրոսի, սկսաւ կշտաբել ընդ նմա
և ասել. քաւ լիցի քեզ Տր̃, մի եղիցի
քեզ այդ։ *Եւ նա դարձեալ 'ի Պետրոս՝ 23
‖ Մարկ. ասէ. ‖ երթ յետս իմ սատանայ, գայթակ-
8. 33. ղութի իմ ես. զի ոչ խորհիս դու զԱյն,
այլ զմարդկան։ *Յայնժամ Յս̃ ասէ ցա- 24
‖ Մտթ. շակերտսն իւր. ‖ եթէ ոք կամի զկնի իմ
10. 38. գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և
Ղուկ. եկեսցէ զկնի իմ։ *‖ Զի որ կամիցի զանձն 25
9. 23. իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կո-
‖ Յովհ. րուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։
12. 25. *Զի՞նչ օգտիցի մարդ թէ զաշխարհս ա̃մ 26
շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ։ Կամ
զի՞նչ տացէ մարդ փրկանս ը̃ անձին իւրոյ։
*Զի գալոց է որդի մարդոյ փառօք Հ̃օր 27
‖ Գործ. իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, ‖ և
17. 31. յայն.

յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս
28 իւր: * Ամէն ասեմ ձեզ. || զի իցեն ոմանք || Մարկ.
'ի սոցանէ՝ որք աստ կան. որք ոչ ճաշա- 8. 39.
կեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զորդի մարդոյ
եկեալ արքայութբ իւրով:

## Գլ. ԺԷ:

1 Եւ || յետ վեց աւուր առնու ը̄ իւր Յս̄ || Մարկ.
զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս 9. 1.
զեղբայր նր̄, և հանէ զնոսա 'ի լեառն մի Ղուկ.
2 բարձր առանձինն: * Եւ այլակերպեցաւ ա- 9. 28.
ռաջի նց̄. և լուսաւորեցան երեսք նր̄ իբրև
զարեգակն, և հանդերձք նր̄ եղեն սպի-
3 տակ իբրև զլոյս: * Եւ ահա երևեցան նց̄
Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա:
4 * Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅս̄.
Տէ՛ր՝ բարւոք է մեզ աստ լինել. եթէ կա-
միս՝ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ և
5 մի Մովսեսի և մի Եղիայի: * Եւ մինչդեռ
նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի ե-
ղև 'ի վր̄ նց̄. || ձայն եղև յամպոյն՝ և ասէ. || 2. Պետ.
դա է Որդի իմ սիրելի՝ ը̄ որ հաճեցայ, դմա 1. 17.
6 լուարուք: * Իբրև լուան աշակերտքն, ան- Եբր.
կան 'ի վր̄ երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ: 3. 17.
7 * Եւ մատուցեալ Յս̄ բուռն եհար զնոցա-
նէ՝ և ասէ. յոտն կացէք՝ և մի երկնչիք:
8 * Ամբարձին զաչս իւրեանց՝ և ոչ զոք տե-
9 սին՝ բայց միայն զՅս̄: * Եւ մինչդեռ իջա-
նէին 'ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա

Յս՛ եւ ասէ. մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ՝
մինչեւ որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ :
||Մարկ. * Հարցին զնա աշակերտքն եւ ասեն. || զի՞- 10
9. 11. ա՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ
Մաղաք. պարտ է գալ: * Պատասխանի ետ Յս՛ եւ ա- 11
4. 5. սէ ցնս. Եղիա գայ՝ եւ հաստատեսցէ զա՛մ:
||Մէր. * Ասեմ ձեզ՝ || զի Եղիա եկեալ իսկ է. 12
11. 14. եւ ոչ ծանեան զնա, այլ արարին || ընդ նմա՝
||Մէր. զոր ինչ կամեցան. Նոյնպէս եւ որդի մարդոյ
14. 10. չարչարելոց է 'ի նոցանէ: * Յայնժամ 'ի 13
միտ առին աշակերտքն՝ թէ վա՛ Յովհաննու
մկրտչի ասաց ցնոսա :
Օր. ✠
* || Եւ իբրեւ եկին 'ի ժողովուրդն, մատեաւ 14
այր մի՛ 'ի ծունր իջանէր եւ ասէր. Տէ՛ր ո-
||Մարկ. ղորմեա՛ց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ եւ չա-
9. 16. րաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի
Ղուկ. 'ի հուր՝ եւ երբեմն 'ի ջուր: * Եւ մատուցի 15
9. 38. զնա աշակերտացն քոց՝ եւ ոչ կարացին բժշ-
կել: * Պատասխանի ետ Յս՛ եւ ասէ. ո՜վ 16
ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ ցե՞րբ իցեմ
ընդ ձեզ՝ մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ. ա՛ծ
զնա առ իս: * Եւ սաստեաց 'ի նա Յս՛ եւ 17
ել 'ի նմանէ դեւն, եւ բժշկեցաւ մանուկն 'ի
ժամէն յայնմանէ: * Յայնժամ մատեան ա- 18
շակերտքն առանձինն՝ եւ ասեն ցՅս՛. մեք
ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: * Եւ նա 19
ասէ ցնս. վա՛ թերահաւատութե՛ ձերոյ:
||Ղուկ. || Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս
17. 6. քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեաց աստի անդր, եւ փոխեսցի.

եւ

20 և ոչինչ անհնարին լինիցի ձեզ ։ *Բայց
այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և
պահովք ։
21 *Եւ մինչ դեռ շրջէին նք 'ի Գալիլեայ՝ ասէ Օ · Գ ·
ցնս Յս · ‖մատնելոց է որդի մարդոյ 'ի ձեռս ‖Մարկ·
22 մարդկան , *և սպանցեն զնա , և յերիր ա– 9 · 30 ·
23 ւուր յարիցէ · և տրտմեցան յոյժ ։ *Իբրև Ղուկ·
եկին նոքա 'ի Կափառնաում , մատեան՝ որք 9 · 44 ·
զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս , Մատթ·
և ասեն · վարդապետն ձեր ո՞չ տայ զերկ– 20 · 18 ·
24 դրամեանն , և ասէ՝ այո ։ *Եւ իբրև եմուտ
'ի տուն՝ յառաջեաց քան զնա Յս և ասէ ·
զի՞նչ թուի քեզ Սիմոն · թագաւորք ազ–
գաց յումմէ՞ առնուն զհարկս կամ զհասն ,
25 յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց ։ *Եւ իբ–
րև ասաց՝ թէ յօտարաց , ասէ ցնա Յս՝
26 ապա ուրեմն ազատ են որդիքն ։ *Բայց
զի մի գայթակղեցուսցուք զնոսա , երթ 'ի
ծով և ընկեա կարթ , և զառաջին ձուկն որ
ելանիցէ՝ առ և բաց զբերան նր , և գտա–
նիցես սատեր · և զայն առեալ տացես նց
ընդ իմ և ընդ քո ։

## ԳԼ · ԺԸ ։

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ
Յս՝ և ասեն · ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայ–
2 ութն երկնից ։ *‖Եւ կոչեաց առ ինքն Յս ‖Մարկ·
3 մանուկ մի , կացոյց զնա 'ի մէջ նց , *և ա– 9 · 35 ·
սէ · ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ դարձջիք , Ղուկ·

 ‖և 9 · 46 ·

‖Մատթ. ‖ Եւ եղիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք
19. 14. յարքայութիւն երկնից: * Որ՝ որ խոնարհե- 4
1. Կորն. ցուսցէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա
14. 20. է մեծ յարքայութեան երկնից: * Եւ որ ոք 5
ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս
‖Մարկ. ընդունի: * ‖ Եւ որ ոք գայթագղեցուսցէ 6
9. 41. զմի 'ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատա-
Ղուկ. ցելոց, լաւ է նմա եթէ կախիցէ երկան ի-
17. 2. շոյ ընդ պարանոց նր՝ եւ ընկղմեսցի 'ի խորս
ծովու: * Վա՜յ աշխարհի 'ի գայթագղութեց. 7
հարկ է գալ գայթագղութեց. բայց վա՜յ
մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն գայցէ գայթակ-
‖Մատ. ղութի: * ‖ Եթէ ձեռն քո կամ ոտն գայ- 8
5. 30. թակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ եւ ընկեա
Մարկ. 'ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ
9. 42. կաղ մտանել 'ի կեանս. քան թէ երկուս
ձեռս եւ երկուս ոտս ունել, եւ անկանել 'ի
հուրն յաւիտենական: * Եւ եթէ ակն քո 9
գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա եւ
ընկեա 'ի քէն. լաւ իցէ քեզ միականի
մտանել 'ի կեանս, քան երկուս աչս ունել՝
եւ անկանել 'ի գեհեն հրոյն:
Օ.Գ. * Զգո՛յշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի 'ի 10
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի
հրեշտակք նց յերկինս հանապազ տեսա-
‖Ղուկ. նեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինսն է: * ‖ Զի 11
19. 10. եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն:
‖Ղուկ. * ‖ Զինչ թուի ձեզ. եթէ լինիցի մար- 12
15. 4. դոյ հարիւր ոչխար՝ եւ մոլորեսցի մի 'ի նոցա-
նէ, ո՞չ թողուցու զինննսուն եւ զինն ոչխարն
'ի

'ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն.
13 *Եւ եթէ լինիցի գտանել զնա. ամէն ա-
սեմ ձեզ. զի ուրախ լինի 'ի վր՟ նր՟ առաւել՝
քան 'ի վր՟ իննսուն և իննուցն, որ չիցեն
14 մոլորեալ: *Այսպէս ոչ են կամք առաջի
Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի 'ի
15 փոքրկանցս յայսցանէ: *‖Եթէ մեղիցէ ‖Ղևտ.
քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա 19. 17.
յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուի- Ղուկ.
16 ցէ քեզ, շահեցար զեղբայր քո: *Ապա 17. 3.
թէ ոչ լուիցէ քեզ, առ ը՟ քեզ միւս ևս՝
կամ երկուս. ‖զի 'ի բերանոյ երկուց և երից ‖2. Օրէնս.
17 վկայից հաստատեսցի ա՟մ բան: *Իսկ եթէ 19. 15.
նց՟ ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ. ապա Յովհ.
թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, ‖եղիցի քեզ 8. 17.
18 իբրև զհեթանոսն և զմաքսաւոր: *‖Ամէն ‖1. Կորն.
ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կա- 5. 9.
պեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ ‖Մէր.
19 եղիցի արձակեալ յերկինս: *Դարձեալ 18. 19.
ասեմ ձեզ եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցեն
յերկրի վս՟ ա՟մ իրաց, զինչ և խնդրեսցեն՝
եղիցի նոցա 'ի Հօրէ իմմէ որ յերկինս է:
20 *Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ
յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա:
21 *Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս՝ և
ասէ. ‖Տէր՝ քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ‖Ղուկ.
ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև 17. 4.
22 ցեօթն անգամ: *Ասէ ցնա Յս՟. ոչ ասեմ
քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ, այլ մինչև
23 յեօթանասնեկին եօթն: *Վս՟ այսորիկ նը-

նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագա-
ւորի, որ կամեցաւ համար առնուլ 'ի մէջ
ծառայից իւրոց: *Եւ իբրեւ սկսաւ առնուլ, 24
մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քան-
քարոյ: *Իբրեւ ոչ ունէր հատուցանել, 25
հրամայեաց՝ զնա վաճառել տէրն նր̄, եւ զկին
նր̄՝ եւ զորդիս՝ եւ զա̄մ որ զինչ եւ ունիցի՝ եւ
հատուցանել: *Եւ անկեալ ծառայն եր- 26
կիրպագանէր նմա՝ եւ ասէր. երկայնամիտ
լեր առ իս՝ եւ զամենայն հատուցից քեզ:
*Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձա- 27
կեաց զնա, եւ զփոխն եթող նմա: *Եւ 28
ելեալ ծառայն այն եգիտ զմի 'ի ծառայ-
ակցաց իւրոց, որ պարտ էր նմ̄ հարիւր դա-
հեկան. եւ կալեալ զնա խեղդէր՝ եւ ասէր.
հատո՛ ինձ զոր պարտիս: *Արդ՝ անկեալ 29
ծառայակիցն առ ոտս նր̄, աղաչէր զնա եւ
ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ եւ հատու-
ցից քեզ: *Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ 30
արկ զնա 'ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտ-
սն: *Իբրեւ տեսին ծառայակիցքն որ ինչ 31
եղեն՝ տրտմեցան յոյժ, եւ եկեալ ցուցին
տն̄ իւրեանց զա̄մ որ ինչ եղեն: *Յայնժամ 32
կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ. ծառայ չար՝
զա̄մ զպարտսն թողի քեզ՝ վն̄ զի աղաչեցեր
զիս: *Իսկարդ՝ ո՞չ էր պարտ եւ քեզ ողոր- 33
մել ծառայակցին քում, ոպ̄ եւ ես քեզ ո-
ղորմեցայ: *Եւ բարկացեալ տէրն նորա՝ 34
մատնեաց զնա դահճաց. մինչեւ հատուսցէ
զա̄մ զպարտսն: *Նոյնպէս եւ Հայր իմ որ 35
յեր-

յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թո-
ղուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սր-
տից ձերոց զյանցանս նոցա:

## ԳԼ. ԺԹ:

1 Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց Յս՟ զբանս զայ- ԶԵ
սոսիկ, փոխեցաւ 'ի Գալիլեէ՝ ‖ եւ եկն 'ի ‖ Մարկ.
սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանա- 10. 1.
2 նու: *Եւ գնացին զհետ նր՟ ժողովուրդք
3 բազումք, եւ բժշկեաց զնս՟ անդ: *Եւ մա-
տուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա
եւ ասէին, եթէ արժա՞ն իցէ ումեք արձա-
4 կել զկին իւր ըստ ամ՟ վնասու: *Պատաս-
խանի ետ նց՟ եւ ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝
թէ ‖ որ հաստատեացն 'ի սկզբանէ՝ արու եւ ‖ Ծննդ.
5 էգ արար զնոսա, եւ ասէ: *‖ Վս՟ այսորիկ 1. 27.
թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ ‖ Ծննդ.
կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան 'ի մարմին 2. 24.
6 մի: *Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մար- Եփես.
մին: Արդ՝ զոր Ած՟ զուգեաց՝ մարդ մի՛ մեկ- 5. 31.
7 նեսցէ: *Ասեն ցնա. ‖ իսկ Մովսէս ընդէ՞ր ‖ 2. Օրէ.
պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ եւ 24. 1.
8 արձակել: *Ասէ ցնս՟. Մովսէս վս՟ խստա-
սրտութե՟ ձերոյ հրամայեաց ձեզ արձակել ‖ Մտթ.
զկանայս ձեր. այլ 'ի սկզբանէ ոչ եղեւ այն- 5. 32.
9 պէս: *‖ Բայց ասեմ ձեզ, զի ամ՟ որ ար- Մարկ.
ձակեսցէ զկին իւր՝ եւ ոչ վս՟ պոռնկութե՟, եւ 10. 11.
առնիցէ այլ՝ շնայ, եւ որ զարձակեալն առ- Ղուկ.
10 նիցէ՝ շնայ: *Ասեն ցնա աշակերտքն իւր. 16. 18.
եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ՟ այր եւ ընդ՟ կին, 1. Կորն.
լաւ 7. 10.

լաւ է չամուսնանալ: *Եւ նա ասէ ցնոսա. 11
ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի,
այլ որոց տուեալ է: *Զի են ներքինիք՝ 12
որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս.
և են ներքինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն ներ-
քինիք. և են ներքինիք՝ որ զանձինս իւ-
րեանց արարին ներքինիս վս արքայութեան
երկնից. որ կարողն է տանել՝ տարցի:
Մարկ. *Յայնժամ մատուցան առ նա մանկտի, 13
10. 13. զի ձեռն դիցէ 'ի վր նց՝ և աղօթս արասցէ.
Ղուկ. և աշակերտքն նր սաստէին նց: *Ասէ Յս, 14
18. 15. թոյլ տուք մանկտւոյդ՝ և մի արգելուք զդո-
Վեր. սա գալ առ իս, զի այդպիսեացդ է ար-
18. 2. քայութի երկնից: *Եւ եդեալ ձեռն 'ի վր 15
նց՝ գնաց անտի:
Օ. Օ. *Եւ ահա մատուցեալ ոմն առ նա՝ ասէ. 16
Մարկ. վարդապետ բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝
10. 17. զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս:
Ղուկ. *Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս 17
18. 18. զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս 'ի կեանս
յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուի-
րանսն: *Ասէ ցնա. զորս: Ասէ ցնա Յս. 18
Ելից. զմի սպանաներ՝ և մի շնար՝ և մի գողանար՝
20. 13. և մի սուտ վկայեր, *պատուեա զհայր քո 19
և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրև
զանձն քո: *Ասէ ցնա պատանին. զայդ ամ 20
պահեցի 'ի մանկութենէ իմմէ. արդ՝ ի՞չ
իւիք պակաս իցեմ: *Ասէ ցնա Յս. եթէ 21
կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճառեա
զինչս քո՝ և տուր աղքատաց, և ունիցիս

գանձս

22 գանձս յերկինս, և եկ զկնի իմ: * Իբրև
լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ,
23 զի ունէր ստացուածս բազումս: * Եւ ասէ Յս
ցաշակերտսն. ամէն ասեմ ձեզ. զի դժուա-
րաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից:
24 * Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ
մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան
25 յարքայութիւն Այ մտանել: * Իբրև լուան ա-
շակերտքն՝ զարմացան յոյժ և ասեն. իսկ ո՞
26 կարիցէ ապրել: * Հայեցաւ ՚ի նս Յս՝ և
ասէ. առ ՚ի մարդկանէ այդ անկար է, այլ
27 առ յԱյ ամենայն ինչ զօրաւոր: * Յայն-
ժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա.
ահաւասիկ մեք թողաք զամ. ‖ և եկաք զկնի ‖ Մրկ.
28 քո, արդ զի՞նչ լինիցի մեզ: * Եւ ասէ ցնս 10. 38.
Յս. ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք
զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեանն՝ յոր-
ժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց
իւրոց, նստջիք և դուք յերկոտասան ա-
թոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի:
29 * Եւ ամ որ ոք եթող զտուն՝ կամ զեղբարս
կամ զքորս կամ զհայր կամ զմայր՝ կմ զկին
կմ զորդիս՝ կմ զագարակս վս անուան իմոյ,
հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտե-
30 նականս ժառանգեսցէ: * ‖ Բազումք եղի- ‖ Մտթ.
ցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք: 20. 16.

## ԳԼ. Ի:

1 Քանզի նման է արքայութիւն երկնից առն
տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ՚ի վար-
ձու

ձու ունել մշակս յայգի իւր: *Եւ արկ վարձս 2
մշակացն աւուրն դահեկան, և առաքեաց
զնս յայգի իւր: *Եւ ելեալ զերրորդ ժամու՝ 3
ետես այլս զի կային դատարկ՚ի հրապարակս.
*ասէ և ցնս. երթայք և դուք յայգի իմ, 4
և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ. *գնացին և 5
նք: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն
ժամու՝ արար նոյնպէս: *Եւ զմետասանե- 6
րորդ ժամու ելեալ եգիտ այլս՝ զի կային դա-
տարկ, ասէ և ցնս. ընդէ՞ր կայք աստ զօրս
ցերեկ դատարկ: *Ասեն ցնա. զի ոչոք կալաւ 7
զմեզ՚ի վարձու: Ասէ ցնս. երթայք և դուք
յայգին, և որինչ արժան է՝ առնուցուք:
*Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն 8
ցգաւառապետ իւր. կոչեա զմշակսն և տուր
նց վարձս՝ սկսեալ ՚ի յետնոցն մինչև ցա-
ռաջինսն: *Իբրև եկին որք զմետասանե- 9
րորդ ժամուն, առին մէն մի դահեկան: *Ե- 10
կեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի
առնուցուն, և առին մէն մի դահեկան և
նոքա: *Իբրև առին, տրտնջէին զտանու- 11
տեառնէն՝ և ասէին. *թէ դոքա յետինքդ 12
մի ժամ գործեցին, և հասարակորդս մեզ
արարեր զդոսա, որ զծանրութի աւուրն բար-
ձաք և զտօթ: *Նա պնի ետ միում՚ի նո- 13
ցանէ՝ և ասէ. ընկեր՝ չզրկեմ զքեզ, ո՞չ
դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս: *Առ 14
զքոյդ՝ և երթ, եթէ կամիմ յետնոցս տալ՝
որպ և քեզ: *Եթէ չիցէ՞ ինձ իշխանութի 15
յիմս առնել զինչ և կամիմ. կամ թէ ակն

քո.

16 քո չար է, զի ես առատ եմ։ *Այսպէս Մտթ.
եղիցին յետինք առաջինք՝ եւ առաջինք յե- 19. 30.
տինք. զի բազումք են կոչեցեալք, եւ սա- Մարկ.
կաւք են ընտրեալք։ 10. 31.
17 *Իբրեւ ելանէր Յս յԵրուսաղէմ, առ Ղուկ.
զերկոտասանսն առանձինն, եւ 'ի ճանա- 13. 30.
18 պարհին ասէ ցնոսա։ *Ահաւասիկ ելա- Օ Ի
նեմք յԵրուսաղէմ. եւ որդի մարդոյ մատ- Մարկ.
նեսցի քահանայապետիցն՝ եւ դպրաց. եւ 10. 32.
19 դատապարտեսցեն զնա 'ի մահ. *եւ մատ- Ղուկ.
նեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել եւ հար- 18. 31.
կանել եւ 'ի խաչ հանել, եւ յերրորդ աւուր
20 յարիցէ։ *Յայնժամ մատեաւ առ նա Մարկ.
մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւ- 10. 35.
րովք հանդերձ. երկիրպագանէր՝ եւ խնդրէր
21 ինչ 'ի նմանէ։ *Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կա-
միս։ Ասէ ցնա. ասա՛ զի նստցին սոքա եր-
կու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ եւ մի
22 ընդ ահեկէ յարքայութեան քում։ *Պատաս-
խանի ետ Յս եւ ասէ. ոչ գիտէք զինչ
խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես
ըմպելոց եմ, կամ զմկրտութիւն զոր ես
մկրտելոց եմ մկրտիլ. ասեն ցնա. կարող
23 եմք։ *Ասէ ցնս Յս. զբաժակն իմ ըմպի-
ցէք, եւ զմկրտութիւն զոր ես մկրտելոց եմ՝
մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմէ եւ ընդ
ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ. այլ որոց տուե-
24 ալ է 'ի Հօրէ իմմէ։ *Եւ լուեալ տա-
սանցն, բարկացան 'ի վերայ երկուցն եղ-
25 բարց։ *Յս կոչեաց զնոսա առ ինքն եւ Ղուկ.
ասէ. 22. 25.

ասէ . գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նց,
եւ մեծամեծքն իշխեն նոցա : * Ոչ այնպէս 26
իցէ եւ 'ի ձերում միջի . այլ որ կամիցի 'ի
ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ :
* Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ ե- 27
Փիլիպ. ղիցի ձեր ծառայ : * Որպէս որդի մարդոյ ոչ 28
2. 7. եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել . եւ տալ
Ի Կ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց :
* Եւ յելանելն նց յԵրիքովէ, գնացին 29
✠ զհետ նր ժողովուրդք բազումք : * Եւ ահա 30
Մարկ. կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն .
10. 46. իբրեւ լուան թէ Յս անցանէ՝ աղաղակեցին
Ղուկ. եւ ասեն . ողորմեա՛ց մեզ Յս որդի Դաւթի :
18. 35. * Եւ ամբոխն սաստէր նց՝ զի լռեսցեն : Եւ 31
նք եւս առաւել աղաղակէին եւ ասէին, Տէր՝
ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի : * Զտեղի առ 32
Յս, կոչեաց զնս եւ ասէ . զի՞նչ կամիք՝ զի
արարից ձեզ : * Ասեն ցնա . Տէր՝ զի բաց- 33
ցին աչք մեր : * Եւ գթացեալ Յս մերձե- 34
ցաւ յաչս նց, եւ փաղփաղակի տեսին . եւ
գնացին զհետ նր :

## ԳԼ. ԻԱ.

Մարկ. Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ եկին 1
11. 1. 'ի Բեթփագէ մերձ 'ի լեառն ձիթենեաց .
Ղուկ. յայնժամ Յս առաքեաց երկուս յաշակեր-
19. 29. տացն իւրոց : * Եւ ասէ ցնս . երթայք 'ի 2
գեօղդ՝ որ առաջի ձեր է, եւ անդէն գտա-
նէք էշ կապեալ՝ եւ յաւանակ ընդ նմին, լու-
ծէք ածէք ինձ : * Եւ եթէ ոք ասիցէ ինչ 3
ձեզ,

ձեզ, ասասջիք, եթէ տն իւրեանց պիտոյ
4 են. և վաղվաղակի առաքեսցէ զնս: *Բայց
այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝
5 որ ասէ: *‖Ասացէք դստեր Սիովնի. ահա ‖Զաքար.
թագաւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ 9. 9.
6 յէշ և յաւանակի իշոյ: *Գնացին աշա֊ Եսայ.
կերտքն, և արարին որպ հրամայեաց նոցա 62. 11.
7 Յս: *Եւ ածին զէշն և զյաւանակն, և Յովհ.
արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ ՚ի 12. 14.
8 վր նց: *Եւ բազում ժողովուրդք տարածե֊
ցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին,
և այլք հատանէին ոստս ՚ի ծառոց՝ և տարա֊
9 ծանէին ՚ի ճանապարհին: *Եւ ժողովուրդքն՝
որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին
և ասէին. ‖օրհնութի որդւոյ Դաւթի. օրհ֊ ‖Սաղմ.
նեալ որ գայ յանուն Տն. օրհնութիւն ՚ի 117. 26.
10 բարձունս: *Եւ ՚ի մտանելն նր յԵրուսա֊
ղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամ, և ասէ՝ ո՞վ
11 իցէ սա: *Եւ ժողովուրդքն ասէին. սա է
մարգարէն Յս՝ որ ՚ի Նազարեթէ Գալի֊
12 լեացւոց: *‖Եւ եմուտ Յս ՚ի տաճարն՝ և ‖Մարկ.
եհան արտաքս զամենեսին, որ վաճառէինն 11. 15.
և գնէին ՚ի տաճարի անդ. և զսեղանս հա֊ Ղուկ.
տավաճառացն կործանեաց՝ և զաթոռս ա֊ 19. 45.
13 ղաւնեվաճառացն: *Եւ ասէ ցնս. գրեալ Յովհ.
է. ‖տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և 2. 14.
14 դուք արարիք զդա այրս աւազակաց: *Եւ ‖Եսայ.
մատեան առ նա կոյրք և կաղք ՚ի տաճա֊ 56. 7.
15 րին, և բժշկեաց զնս: *Իբրև տեսին քա֊ Երեմ.
հանայապետքն և դպիրք զսքանչելիսն զոր 7. 11.

ա֊

արար, և զմանկտին որ աղաղակէին 'ի տա-
ճարին և ասէին, օրհնութիւն որդւոյ Դաւ-
թի, բարկացան. * և ասեն ցնա. լսե՞ս 16
զինչ ասեն դոքա: Ասէ ցնս Յս. այո՛ չի-
‖ Սաղմ. ցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ ‖ 'ի բերանոյ տղայ-
8. 3. ոց և ստնդիեցաց կատարեցեր զօրհնութիւն:
* Եւ թողեալ զնս ել արտաքոյ քաղաքին 17
'ի Բեթանիա, և անդ ագաւ:
ԻԲ * Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի 18
քաղաքն՝ քաղցեաւ: * ‖ Եւ տեսեալ թզե- 19
նի մի 'ի վր ճանապարհին՝ եկն 'ի նա, և
‖ Մարկ. ոչինչ եգիտ 'ի նմա՝ բայց միայն տերև. և
11. 13. ասէ ցնա. մի այսուհետև 'ի քէն պտուղ
եղիցի յաւիտեան. և առժամայն չորացաւ
‖ Մարկ. թզենին: * ‖ Իբրև տեսին աշակերտքն՝ զար- 20
11. 20. մացան և ասեն, թէ զիարդ վաղվաղակի
ցամաքեցաւ թզենին: * Պատասխանի ետ 21
Յս՝ և ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ, եթէ
ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն
թզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ և լերինդ
ասիցէք. բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի:
‖ Վեր. * ‖ Եւ զամ ինչ զոր և խնդրիցէք յաղօթս 22
7. 7. հաւատովք՝ առնուցուք: * Եւ իբրև եկն 'ի 23
1. Յովհ. տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսու-
3. 22. ցանէր, քահանայապետքն և ծերք ժողո-
‖ Մարկ. վրդեանն՝ և ասեն. ‖ որով իշխանութեամբ առ-
11. 28. նես զայդ. և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ
Ղուկ. զայդ: * Պատասխանի ետ Յս և ասէ ցնս. 24
20. 2. հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասի-
ցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով իշխա-
նու-

25 նութեամբ առնեմ զայս։ *Մկրտութիւնն Յով-
հաննու ուստի՞ էր՝ յերկնից, թէ ՚ի մարդ-
կանէ։ Եւ նոքա խորհէին ընդ միտս՝ և ասէին։
26 *Եթէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդ-
է՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք
՚ի մարդկանէ, երկնչիմք ՚ի ժողովրդենէն.
‖զի ամենեքին զՅովհաննէս իբրև զմարգա- ‖Մրկ.
27 րէ ունէին։ *Պատասխանի ետուն Յիսուսի և 14. 5.
ասեն. ոչ գիտեմք։ Ասէ ցնոսա և նա. և ոչ
ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ
28 զայս։ *Բայց զի՞նչ թուի ձեզ. առն միոջ
էին երկու որդիք, և մատուցեալ առ ա-
ռաջինն ասէ. որդեակ՝ երթ այսօր գործեա՛
29 յայգւոջ։ *Նա պատասխանի ետ և ասէ.
30 երթամ տէր՝ և ոչ չոգաւ։ *Մատեաւ և
առ միւսն, և ասէ նոյնպէս. նա պատաս-
խանի ետ և ասէ. ոչ կամիմ. Բայց յետոյ
31 զղջացաւ՝ և չոգաւ յայգին։ *Արդ՝ ո՞ յեր-
կոցունց արար զկամս հօրն։ Ասեն՝ յետինն։
Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաք-
սաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ
32 յարքայութիւն երկնից։ *Զի եկն Յովհան-
նէս ճանապարհաւ արդարութեան և ոչ հա- Ի. Գ.
ւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք ‖Մրկ.
հաւատացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ 12. 1.
զղջացարուք յետոյ հաւատալ նմա։ Ղուկ.
33 *Այլ առակ լուարուք. այր մի էր տանու- 20. 9.
տէր, ‖որ տնկեաց այգի, և ցանգով պա- Եսայ.
տեաց զնա, և փորեաց ՚ի նմա հնձան, և 5. 1.
շինեաց աշտարակ. և ետ զնա մշակս, և Երեմ.

գնաց 'ի տար աշխարհ: *Իբրեւ մերձեցաւ 34
ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր
առ մշակսն՝ առնուլ զպտուղս նր̃: *Եւ կա- 35
լեալ մշակացն զծառայս նորա, զոմն տան-
ջեցին՝ զոմն սպանին՝ զոմն քարկոծեցին:
*Դարձեալ առաքեաց այլ ծառայս բա- 36
զումս քան զառաջինսն, եւ արարին նոցա
նոյնպէս: *Յետոյ առաքեաց առ նոսա զոր- 37
դի իւր՝ եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդ-
ւոյ աստի իմմէ: *Եւ մշակքն իբրեւ տեսին 38
Յովհ. զորդին, ասեն ը̃ միտս. Սա է ժառանգն.
11. 47. եկայք սպանցուք զսա, եւ կալցուք զժա-
ռանգութի̃ սորա: *Եւ առեալ հանին զնա 39
արտաքոյ քան զայգին՝ եւ սպանին: *Արդ՝ 40
յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ ա-
րասցէ մշակացն այնոցիկ: *Ասեն ցնա. Ըզ- 41
չարսն չարաւ կորուսցէ. եւ զայգին տացէ
այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս
'ի ժամու իւրեանց: *Ասէ ցնս Յս̃. Չիցէ՞ 42
Սաղմ. երբէք ընթերցեալ ձեր 'ի գիրս. Զվէմն՝
117.22. զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ
Գործ. անկեան. 'ի Տնէ եղեւ այս, եւ է սքանչելի
4. 11. յաչս մեր: *Վն̃ այսորիկ ասեմ ձեզ, զի 43
1. Պետ. բարձցի 'ի ձէնջ արքայութի̃ն Այ̃, եւ տացի
2. 7. ազգի՝ որ առնիցէ զպտուղս նր̃: *Եւ որ 44
անկցի 'ի վր̃ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, եւ
յոյր վր̃ անկցի՝ հոսեսցէ զնա: *Իբրեւ լուան 45
քահանայապետքն եւ դպիրք եւ փարիսեցիք
զառակս նր̃, գիտացին թէ վս̃ նց̃ ասաց:
*Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան 'ի 46
ժո-

ժողովրդոցն. քանզի իբրև զմարգարէ ու-
նէին զնա:

## ԳԼ. ԻԲ.

1 Դարձեալ պատասխանի ետ Յս, և ասէ ԻԴ
2 ցնոսա առակօք: *Նմանեցաւ արքայութիւն ‖Ղուկ.
երկնից առն թագաւորի՝ որ արար հարսա- 14. 16.
3 նիս որդւոյ իւրում: *Եւ առաքեաց զծա- Յայտ.
ռայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսա- 19. 9.
4 նիսն, և ոչ կամէին գալ: *Դարձեալ ա-
ռաքեաց այլ ծառայս՝ և ասէ. ասացէք հրա-
ւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաս-
տեցի. զուարակք իմ և պարարակք զենեալ
են, և ամ ինչ պատրաստ է. եկայք ՚ի
5 հարսանիսս: *Եւ նոքա յուլացեալ գնացին՝
ոմն յագարակ իւր, և ոմն ՚ի վաճառ իւր.
6 *և այլք կալան զծառայս նր, թշնամանե-
7 ցին, և սպանին: *Իսկ թագաւորն իբրև
լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր
և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքա-
8 ղաքն նց այրեաց: *Յայնժամ ասէ ցծա-
ռայս իւր. հարսանիքս պատրաստ են, և
9 հրաւիրեալքն չէին արժանի: *Արդ՝ եր-
թայք յանցս ճանապարհաց, և զորս միան-
գամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիսս:
10 *Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս ժո-
ղովեցին զամենեսեան զորս և գտին՝ զչարս
և զբարիս. և լցան հարսանիքն բազմակա-
11 նօք: *Եւ մտեալ թագաւորն հայել զբազ-

մականօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր
զգեցեալ հանդերձ հարսանեաց։ *Եւ ասէ 12
ցնա. ընկե՛ր՝ զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ու-
նէիր հանդերձ հարսանեաց. եւ նա պապան-
ձեցաւ։ *Յայնժամ ասէ թագաւորն ցսպ- 13
‖Վեր. ասաւորսն. ‖կապեցէք զոտս նորա եւ զձ-
8. 12. ձեռս՝ եւ հանէք զդա ՚ի խաւարն արտաքին,
13. 24. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։ *Զի 14
Վայր. բազումք են կոչեցեալք՝ եւ սակաւք են ընտ-
25. 30. րեալք։
Ի. Ե. *‖Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին 15
‖Մար. խորհուրդ զնմանէ՝ թէ ո՛պ դնիցեն նմա որո-
12. 13. գայթ բանիւք։ *Եւ առաքեն առ նա զա- 16
Ղուկ. շակերտսն իւրեանց Հերովդիանոսօքն հան-
20. 20. դերձ՝ եւ ասեն. վա՛րդապետ՝ գիտեմք զի ճշ-
մարիտ ես, եւ զճանապարհն ԱՅ ճշմարտու-
թեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ փոյթ
զումեքէ, եւ ոչ հայիս յերեսս մարդոյ։
*Արդ՝ ասա՛ մեզ, զիա՞րդ թուի քեզ. պա՞րտ 17
է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ *Գիտաց 18
Յս զխորամանկութիւն նոցա, եւ ասէ.
զի՞ փորձէք զիս կեղծաւորք. * ցուցէք 19
ինձ զդահեկան հարկին։ Եւ նոքա մատու-
ցին նմա դահեկան մի։ *Եւ ասէ ցնոսա. 20
‖Հռովմ. ո՞յր է պատկերս այս՝ կամ գիր։ * Ասեն՝ 21
13. 7. կայսեր։ Յայնժամ ասէ ցնոսա. ‖Երթա՛յք՝
տո՛ւք զկայսերն՝ կայսեր, եւ զԱՅն՝ ԱՅ։
*Իբրեւ լուան՝ զարմացան. եւ թողին զնա 22
‖Գործ. եւ գնացին։ *Յայնմ աւուր մատեան առ 23
23. 6. նա սադուկեցիքն. որ ասէին՝ թէ ‖չիք յա-
րու-

24 րութիւն. Հարցին զնա, * և ասեն. Վար- ‖ 2. Օրին.
դապետ՝ Մովսէս ասաց. ‖ եթէ ուրուք մեռցի ան- 25. 5.
որդի՝ արասցէ զկին նորա եղբայր իւր, և Մտթ.
25 յարուսցէ զաւակ եղբօր իւրում: *Եւթն առ 12. 19.
մեզ եղբարք էին. առաջինն առար կին՝ Ղուկ.
և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եթող 20. 28.
26 զկինն իւր եղբօր իւրում: *Նոյնպէս և երկ-
րորդն՝ և երրորդն, մինչև ցեօթներորդն:
27 * Յետ ամենեցուն մեռաւ և կինն: *Արդ՝
28 'ի յարութեան՝ ո՞յր յեօթանցն եղիցի նա
29 կին. զի ամենեքին կալան զնա կին: *Պա-
տասխանի ետ նմ̃ Յս̃ և ասէ. մոլորեալք՝
30 ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութի̃ Այ̃: *Զի
'ի յարութե̃ ոչ կանայս առնեն՝ և ոչ ա-
րանց լինին, այլ են իբրև զհրեշտակս յեր-
31 կինս: *Բայց վս̃ յարութե̃ մեռելոց չէ՞ք
ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱյ̃: ‖ Ելից.
32 *‖ Ես եմ Այ̃ Աբրահամու՝ Այ̃ Իսահա- 3. 6.
կայ և Այ̃ Յակոբայ. և չէ Այ̃՝ Այ̃ մե-
33 ռելոց՝ այլ կենդանեաց: *Իբրև լուան ժո-
ղովուրդքն՝ զարմանային ը̃ վարդապետութի̃
34 նր̃: *Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ ‖ Մարկ.
պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան 12. 28.
35 'ի միասին. *‖ Եւ եհարց միոմն 'ի նոցանէ՝ Ղուկ.
36 զնա փորձելով, և ասէ: *Վարդապետ՝ ո՞ր 10. 25.
37 պատուիրան է մեծ յօրէնս: *Եւ Յս̃ ասէ ‖ 2. Օրէն.
ցնա. ‖ սիրեսցես զՏր̃ Այ̃ քո յա̃մ սրտէ 6. 5.
քումմէ՝ և յա̃մ անձնէ քումմէ՝ և յա̃մ մը- ‖ Ղևտ.
38 տաց քոց: *Այս է մեծն և առաջին պատ- 19. 18.
39 ուիրան: *Երկրորդն նման սմին. ‖ սիրես- ‖ Մարկ.

 ցես 12. 31.

ցես զընկեր քո՛ իբրեւ զանձն քո։ *Յայս 40
երկուս պատուիրանս ամ՟ օրէնք եւ մարգա-
րէք կախեալ կան։ *Եւ 'ի ժողովել փա- 41
‖Ղուկ. րիսեցւոցն՝ եհարց ցնս Յս՟ եւ ասէ։ *Զի- 42
20. 41. ա՞րդ թուի ձեզ վս՟ Քսի, ո՞յր որդի է։ Ա-
‖Սաղմ. սեն ցնա. Դաւթի։ *Ասէ ցնս Յս. ‖Իսկ 43
109. 1. զիա՞րդ Դաւիթ հոգւովն կոչէ զնա Տր՝ եւ
ասէ։ *‖Ասաց Տր ցՏր իմ. նիստ ըն՟ աջմէ 44
իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
դան ոտից քոց։ *Իսկ եթէ Դաւիթ զնա 45
Տր կոչէ՝ զիա՞րդ որդի նր իցէ։ *Եւ ոչոք 46
կարէր տալ նմա պխի բան մի, եւ ոչ իշխէր
ոք յայնմ օրէ հարցանել զնա եւ ոչինչ։

## ԳԼ. ԻԳ.

Ի. Զ. Յայնժամ խօսեցաւ Յս ըն՟ ժողովուրդսն՝ 1
‖3 Եզր. եւ ըն՟ աշակերտսն իւր, եւ ասէ։ *Յաթոռն 2
8. 4. Մովսէսի նստան ‖դպիրքն եւ փարիսեցիք։
‖Ղուկ. *Զամ՟ ինչ՝ զոր ասիցեն ձեզ արարէք եւ պա 3
11. 46. հեցէք. բայց ըստ գործոցն նց մի առնէք, զի
Գործ. ասեն եւ ոչ առնեն։ *‖Կապեն բեռինս ծա- 4
15. 10. նունս եւ դժուարակիրս, եւ դնեն 'ի վր ուսոց
‖2. Օրէ. մարդկան. եւ մատամբ իւրեանց ոչ կամին
6. 8. շարժել զնս։ *Եւ զամ՟ զգործս իւրեանց 5
22. 12. առնեն 'ի ցոյց մարդկան. ‖լայնեն զգրապա-
Թւոց. նակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս հան-
15. 38. դերձից իւրեանց. *‖Սիրեն զյառաջագահս 6
‖Մրկ. յընթրիս, եւ զնախաթոռս 'ի ժողովուրդս՝
12. 38. եւ զողջոյնս 'ի հրապարակս։ *Եւ կոչել 'ի 7
‖Յակով. մարդկանէ՝ ռաբբի ռաբբի։ *‖Բայց դուք 8
3. 1. մի

մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր
ուսուցիչ. և ամենեքին դուք եղբարք էք։ Մաղաք.
9 *Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր 1. 6.
10 մի է հայր՝ որ յերկինսն է։ *Եւ մի՛ կո-
չեցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քս է։
11 *Եւ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ Ղուկ.
12 *Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, 14. 11.
և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։ 18. 14.
13 *Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծա-
ւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից ա-
ռաջի մարդկան. դուք ոչ մտանէք, և ո-
14 րոց մտանենն՝ ոչ տայք թոյլ մտանել։ *Վա՜յ
ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. Մարկ.
զի ուտէք զտունս այրեաց. պատճառանօք 12. 40.
երկարէք զաղօթս, վն զի աւելի դատաս- Ղուկ.
15 տան ընդունիցիք։ *Վա՜յ ձեզ դպրաց և 20. 47.
փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածիք ընդ
ծով և ընդ ցամաք առնել եկամուտ մի. և
յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհե-
16 նի կրկին ևս քան զձեզ։ *Վա՜յ ձեզ ա-
ռաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու 'ի
տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին
17 որ 'ի տաճարին է՝ արժան է։ *Յիմարք և
կոյրք՝ զի՞նչ մեծ է, ոսկին՝ եթէ տաճարն՝
18 որ սրբէ զոսկին։ *Եւ որ երդնու 'ի սեղանն՝
չէ ինչ, բայց որ երդնու 'ի պատարագն
19 որ 'ի վերայ նորա է՝ արժան է։ *Յիմարք և
կոյրք՝ զի՞նչ մեծ է, պատարագն, եթէ
20 սեղանն՝ որ սրբէ զպատարագն։ *Իսկ արդ՝
որ երդուաւ 'ի սեղանն, երդնու 'ի նա՝ և

յամ որ 'ի վր նր է. *և որ երդուեաւ 'ի 21
տաճարն, երդնու 'ի նա՝ և 'ի բնակիչն նր.
*և որ երդուեաւ յերկինս, երդնու յաթոռն 22
Ղուկ. Այ՝ և յայն որ նստին 'ի վր նր։ *Վայ 23
11. 42. ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց.
զի տասանորդէք զանանուխ և զսամիթ և
զչաման, և թողէք զծանր ծանր օրինացն՝
զդատաստան և զողորմութի և զհաւատս.
զայս արժան էր առնել՝ և զայն չթողուլ։
*Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք՝ 24
և զուղտս կլանէք։ *Վայ ձեզ դպրաց և 25
փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զար-
տաքին զբաժակին և զսկաւառակին, և 'ի
ներքոյ լի են յափշտակութ և անխառնութ։
*Փարիսեցի կոյր՝ սրբեա նախ զներքին բա- 26
ժակին և զսկաւառակին, զի լինիցի և ար-
տաքինն նց սբ. *Վայ ձեզ դպրաց և փա- 27
րիսեցւոց կեղծաւորաց. զի նման էք գե-
րեզմանաց բռելոց, որ արտաքոյ երևին գե-
ղեցիկք՝ և 'ի ներքոյ լի են ոսկերօք մեռե-
լոց և ամ պղծութբ։ *Նոյնպէս և դուք 28
արտաքոյ երևիք մարդկան արդարք, և 'ի
ներքոյ լի էք կեղծաւորութբ և անօրէնու-
թեամբ։ *Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց 29
կեղծաւորաց. զի շինէք զշիրիմս մարգա-
րէից՝ և զարդարէք զգերեզմանս արդարոց.
*Եւ ասէք. եթէ էաք յաւուրս հարցն 30
մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն։
*Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որ- 31
դիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն։

*Եւ

32 * Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց: * ‖ Օձք ‖ Մտթ.
33 ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք 'ի դա- 3. 7.
34 տաստանէ գեհենին: * Վասն այդորիկ ա-
հաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս
եւ իմաստունս եւ դպիրս, եւ 'ի նոցանէ սպա-
նանիցէք եւ 'ի խաչ հանիցէք, եւ 'ի նոցանէ
տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր, եւ հալածի-
35 ցէք 'ի քաղաքէ 'ի քաղաք: * Որպէս զի
եկեսցէ 'ի վր ձեր ամ արիւն արդար հե-
ղեալ յերկրի. ‖ յարենէն Աբելի արդարոյ ‖ Ծննդ.
մինչեւ ցարիւնն ‖ Զաքարիայ որդւոյ Բա- 4. 8.
րաքեայ՝ զոր սպանէք ըն մէջ տաճարին եւ Եբրայ.
36 սեղանոյ: * Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն 11. 4.
37 ամ 'ի վր ազգիս այսորիկ: * ‖ Երուսաղէմ, ‖ 2. Մնաց.
Երուսաղէ՞մ. որ կոտորէիր զմարգարէսն՝ եւ 24. 22.
քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. ‖ Ղուկ.
քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զման- 13. 34.
կունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զձագս
38 իւր ըն թեւովք, եւ ոչ կամեցարուք: * Ահա
թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ:
39 * Բայց ասեմ ձեզ՝ թէ ոչ եւս տեսանիցէք
զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, օրհ-
նեալ եկեալ յանուն Տն:

## Գլ. ԻԴ.

1 Եւ ելեալ արտաքս Յս 'ի տաճարէն գը- Ի: Ի
նայր. ‖ եւ մատեան աշակերտքն ցուցանել ‖ Մարկ.
2 նմա զշինուածս տաճարին: * Եւ նա պա- 13. 2.
տասխանի ետ եւ ասէ ցնս. տեսանէ՞ք զայդ Ղուկաս
ամ, ամէն ասեմ ձեզ. ոչ մնասցէ այդր 21. 6.

քար

քար ՚ի քարի վր՝ որ ոչ քակտեսցի: *Եւ 3
մինչդեռ նստէր ՚ի լերինն Ձիթենեաց, մա-
տեան առ նա աշակերտքն առանձինն և ա-
սեն. ասա՛ մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և կամ
զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն, և վախ-
ճանի աշխարհիս: *Պնի ետ Յս՝ և ասէ 4
‖Եփես. ցեն. ‖զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ:
5. 6. *Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ 5
Կողոս. թէ ես եմ Քն. և զբազումս մոլորեցուցա-
2. 18. նիցեն: *Լսելոց էք պատերազմունս՝ և համ- 6
բաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի խռո-
վեսջիք, զի պարտ է լինել այնմ ամի, այլ
չև է կատարած: *Յարիցէ ազգ յազգի վր, 7
և թագաւորութի ՚ի թագաւորութն վր. և
եղիցին սովք և սրածութիք և սասանութիք
՚ի տեղիս տեղիս: *Սակայն և այն ամե- 8
‖Մատ. նայն սկիզբն է երկանց. *‖Յայնժամ մատ- 9
10. 17. նեսցեն զձեզ ՚ի նեղութիս, և սպանանի-
Ղուկ. ցեն զձեզ. և եղիջիք ատեցեալք յամ ազ-
21. 12. գաց վր անուան իմոյ: *Եւ յայնժամ 10
Յովհան. գայթակղեսցին բազումք, և զմիմեանս մատ-
15. 20. նեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս: *Եւ բա- 11
16. 2. զում սուտ մարգարէք յարիցեն, և զբա-
զումս մոլորեցուսցեն: *Եւ վա բազմանա- 12
լոյ անօրէնութեն, ցամաքեսցի սէր բազ-
‖Դանիէ. մաց: *Բայց որ համբերեսցէ ի սպառ, նա 13
9. 27. կեցցէ: *Եւ քարոզեսցի աւետարանս ար- 14
Մարկ. քայութեն ընդ ամ տիեզերս՝ ՚ի վկայութիւն
13. 14. ամ հեթանոսաց, և ապա եկեսցէ կատա-
Ղուկ. րած: *Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութի 15
21. 20.

ա-

աւերածոյն, ‖ որ ասացեալն է 'ի ձեռն Դա-
նիէլի մարգարէի. զի կայցէ 'ի տեղւոջն
սրբութեան. որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ:
16 * Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն փա-
17 խիցեն 'ի լերինս. * Եւ որ 'ի տանիս կայցէ,
18 մի իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ. * Եւ
որ յանդի իցէ, մի դարձցի յետս առնուլ
19 զհանդերձս իւր: * Բայց վա՜յ իցէ յղեաց եւ
20 սնուցանողաց յաւուրսն յայնոսիկ: * Յաղօթս
կացէք՝ զի մի լինիցի փախուստն ձեր ձմե-
21 րանի, եւ մի 'ի շաբաթու: * Զի եղիցի
յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ
'ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ
22 ցայժմ, եւ ոչ այլ լիցի: * Եւ եթէ ոչ
կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ա՟մ
մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին ա-
23 ւուրքն այնոքիկ: ‖ * Յայնժամ թէ ոք ա- ‖ Մարկ.
սիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Ք՟ս կամ 13. 21.
24 անդ, մի հաւատայցէք: * Զի յարիցեն Ղուկ.
սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք. եւ տա- 17. 23.
ցեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչեւ
մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ եւ զընտ-
25 րեալսն: * Ահա յառաջագոյն ասացի ձեզ: ‖ Ղուկ.
26 * Արդ եթէ ասիցեն ձեզ. ահաւանիկ յա- 17. 36.
նապատի է, մի ելանիցէք. եւ թէ ահա ‖ Եսայ.
27 'ի շտեմարանս է, մի հաւատայցէք: * Զի 13. 10.
որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի Եզեկ.
մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գա- 32. 7.
28 լուստն որդւոյ մարդոյ. * ‖ Զի ուր գէշն Յովէլ.
29 իցէ, անդր ժողովեսցին արծուիք: * ‖ Վաղ 2. 10.
վա- 3. 15.

վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝
արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ
զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և
զօրութիւնք երկնից շարժեսցին: *Եւ ապա 30
երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և
Յայտ. յայնժամ կոծեսցին ամենայն ազգք. ‖ և
1. 7. տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց
‖Ա. Կորն. երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: *‖Եւ 31
15. 52. առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ,
Ա. Թեսաղ. և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հող-
4. 15. մոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նոցա:
*'Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի 32
յորժամ նորա ոստքն կակղասցին և տե-
րևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն:
*Այնպէս և դուք յորժամ տեսանիցէք 33
զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս:
*Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս 34
այս՝ մինչև այս ամենայն եղիցի: *Երկինք և 35
երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն:
*Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ոչ 36
ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որ-
‖Ծննդ. դի՝ բայց միայն Հայր: *‖Որպէս աւուրքն 37
7. 7. Նոյի, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մար-
ᵇՂուկ. դոյ: *Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան 38
ᵇ17. 26. զջրհեղեղն, ուտէին և ըմպէին՝ կանայս առ-
նէին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում
եմուտ Նոյ 'ի տապանն. *և ոչ գիտացին՝ 39
մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին,
այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ:
*Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին 40

առ-

41 առցի՝ և միւսն թողցի: *Եւ եթէ երկու
աղայցեն 'ի մի երկանս, մին առցի՝ և միւսն
42 թողցի: *Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յո-
43 րում ժամու Տէրն ձեր գայ: *Զայն գի-
տասջի՛ք, ‖ եթէ գիտէր տանուտէրն՝ յորում ‖ Մարկ.
պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր ական 13. 33.
44 հատանել զտուն իւրոյ: *Վասն այսորիկ և Ղուկ.
դուք եղերո՛ւք պատրաստք, զի յորում ժա- 12. 39.
մու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ:
45 *Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և ի-
մաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վր ծա-
ռայից իւրոց՝ տալ նց կերակուր 'ի ժամու:
46 *‖ Երանի՜ է ծառային այնմիկ զոր եկեալ ‖ Յայտ.
47 տէրն գտանիցէ արարեալ այնպէս: *Ամէն 16. 15.
ասեմ ձեզ, զի 'ի վր ամ ընչից իւրոց կա-
48 ցուսցէ զնա: *Ապա թէ ասիցէ ծառայն
չար 'ի սրտի իւրում, տէր իմ յամէ՛ գալ.
49 *և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր,
50 ուտիցէ և ըմպիցէ ըն արբեցօղս: *Գայցէ
տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ
ակն ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտի-
51 ցէ. *և կտրեսցէ զնա ըն մէջ, և զբաժին
նր ըն կեղծաւորս դիցէ. ‖ անդ եղիցի լալ և ‖ Մատ.
կրճել ատամանց: 25. 30.

## Գլ· ԻԵ·

1 Յայնժամ նմանեսցի արքայութին երկնից
տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս
իւրեանց ելին ըն առաջ փեսայի և հարսին:
2 *Հինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն
ի-

իմաստունք ։ * Յիմարքն առին զլապտերսն , 3
և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին ։ * Իսկ ի- 4
մաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապ-
տերս իւրեանց ։ * Եւ ՚ի յամել փեսային , 5
նիրհեցին ամենեքեան և ՚ի քուն մտին ․
* Եւ ՚ի մէջ գիշերի եղև բարբառ , ահա 6
փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ նր ։ * Յայն- 7
ժամ յարեան ամ կուսանք՝ և կազմեցին
զլապտերս իւրեանց ։ * Ասեն յիմարքն ցի- 8
մաստունսն , տուք մեզ ՚ի ձիթոյ ձերմէ , զի
ահա շիջանին լապտերքս մեր ։ * Պատաս- 9
խանի ետուն իմաստունքն՝ և ասեն ․ գուցէ
ոչ իցէ մեզ և ձեզ բաւական , այլ եր-
թայք ՚ի վաճառականս՝ և գնեսջիք ձեզ ։
* Իբրև նք գնացին գնել՝ եկն փեսայն , և 10
պատրաստքն մտին ը նմա ՚ի հարսանիսն՝ և
փակեցաւ դուռն ։ * Յետոյ գան և այլ 11
կուսանքն՝ և ասեն ․ տէր տէր՝ բաց մեզ ։
* Նա պնի ետ և ասէ ․ ամէն ասեմ ձեզ՝ 12
‖ Մրկ. թէ ոչ գիտեմ զձեզ ։ * ‖ Արթուն կացէք՝ 13
13. 33. զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն ։ * Որպէս 14
Ղուկ. այր մի գնացեալ ՚ի տար աշխարհ , կոչեաց
19. 12. զծառայս իւր՝ և ետ նց զինչս իւր ։ * Ումեմն 15
ետ հինգ քանքար՝ և ումեմն երկու՝ ումեմն
մի , իւրաքանչիւր ըստ իւրում կարի , և
գնաց ։ * Զօրաւ վաղվաղակի որ առ զհինգն՝ 16
գործեաց նոքօք , և շահեցաւ այլս հինգ ։
* Նոյնպէս և որ զերկուսն , շահեցաւ այլս 17
երկուս ։ * Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց 18
զերկիր , և թաքոյց զարծաթ տն իւրոյ ․

* Յետ

19 *Յետ բազում ժամանակի գայ տէր ծա-
ռայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ՚ի մէջ նց̄:
20 *Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ,
մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. տէ՛ր՝
հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ ահաւասիկ հինգ
21 այլ ևս քանքար ՚ի վր̄ շահեցայ: *Ասէ ցնա
տէրն իւր. ազնի՛ւ ծառայ՝ բարի և հաւատա-
րիմ, որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ
ես, ՚ի վր̄ բազմաց կացուցից զքեզ. մուտ
22 յուրախութիւն տն̄ քո: *Մատուցեալ և որոյ
զերկուս քանքարսն առեալ էր՝ և ասէ. տէ՛ր՝
երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ
երկուս ևս այլ քանքարս՝ զոր ՚ի վր̄ շահեցայ:
23 *Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ ծառայ՝ բա-
րի և հաւատարիմ, որովհետև ՚ի սակաւուդ
հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ. մուտ յուրախութիւն տն̄ քո:
24 *Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ
էր, և ասէ. տէ՛ր՝ գիտէի, զի այր մի խիստ
ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողո-
25 վես՝ ուստի ոչ սփռեցեր. *երկեայ՝ գնացի
և թագուցի զքանքարն քո յերկրի. արդ՝
26 ահաւասիկ քոյդ ցքեզ: *Պատասխանի ետ
տէրն՝ և ասէ ցնա. ծառա՛յ չար և վա՛տ՝
գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանե-
27 ցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. *պարտ
էր քեզ արկանել զարծաթդ իմ ՚ի սեղա-
նաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի
28 զիմն: *Արդ՝ առէք ՚ի դմանէ զքանքարդ՝
և տուք այնմ որ ունիցի զտասն քանքարն:

*Զի

‖ Վեր. *Զի ամ̃ի որ ունիցի՝ տացի և յաւելցի, 29
13. 12. և որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին, բարձցի 'ի
Մարկ. նմանէ: *Եւ զծառայդ անպիտան հանէք 'ի 30
4. 25. խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճ-
Ղուկ. ճել ատամանց:
8. 18. *Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք 31
19. 26. իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա,
յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց:
*Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն 32
ազգք, և մեկնեսցէ զն̃ն 'ի միմեանց, ոպ̃
հովիւ զի մեկնեսցէ զոչխս յայծեաց: *Եւ 33
կացուսցէ զոչխն ը̃ աջմէ իւրմէ՝ և զայծիսն
'ի ձախմէ: *Յայնժամ ասասցէ թագա- 34
ւորն ցայնոսիկ՝ որ ը̃ աջմէն իցեն. եկայք
օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատ-
‖ Եսայ. րաստեալ ձեզ արքայութիւն 'ի սկզբանէ
58. 7. աշխարհի: *Զի քաղցեայ՝ և ետուք ինձ 35
Եզեկ. ուտել. ծարաւեցի՝ և արբուցիք ինձ. օտար
18. 16. էի՝ և ժողովեցիք զիս. *մերկ՝ և զգեցուցիք 36
զիս. հիւանդ էի՝ և տեսիք զիս. 'ի բանտի
էի՝ և եկիք առ իս: *Յայնժամ պ̃ի տա- 37
ցեն նմա արդարքն և ասասցեն. Տէր՝ ե՞րբ
տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք,
կամ ծարաւի՝ և արբուցաք: *Ե՞րբ տե- 38
սաք զքեզ օտար՝ և ժողովեցաք, կամ մերկ՝
և զգեցուցաք: *Ե՞րբ տեսաք զքեզ հի- 39
ւանդ՝ կամ 'ի բանտի, և եկաք առ քեզ:
*Պատասխանի տացէ թագաւորն՝ և ասա- 40
ցէ ցն̃ն. ամէն ասեմ ձեզ, որովհետև ա-
րարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝
ինձ

41 ինձ արարիք ։ *Յայնժամ ասասցէ եւ ցայ-
նոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն . ||Երթայք յինէն ||Սաղմ.
անիծեալք ՚ի հուրն յաւիտենական , որ 6. 9.
պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց Մեր.
42 ն՟ր ։ *Զի քաղցեայ՝ եւ ոչ ետուք ինձ ու- 7. 23.
43 տել , ծարաւեցի՝ եւ ոչ արբուցիք զիս . *Օ- Ղուկ.
տար էի՝ եւ ոչ ժողովեցիք զիս , մերկ էի՝ 13. 27.
եւ ոչ զգեցուցիք զիս , հիւանդ՝ եւ ՚ի բանտի՝
44 եւ ոչ տեսիք զիս ։ *Յայնժամ պատասխանի
տացեն եւ նոքա՝ եւ ասասցեն . Տէր՝ ե՞րբ
տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի կամ
օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ՚ի բան-
45 տի , եւ ոչ պաշտեցաք զքեզ ։ *Յայնժամ
պ՟ի տացէ նոցա՝ եւ ասասցէ . ամէն ասեմ
ձեզ , որովհետեւ ոչ արարէք միում ՚ի փոքր-
46 կանցս յայսցանէ՝ եւ ոչ ինձ արարէք ։ *||Եւ ||Յովհ.
երթիցեն ն՟ք ՚ի տանջանսն յաւիտենականս , 5. 29.
եւ արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս ։

## ԳԼ. ԻԶ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յ՟ս զա՟մ զբանս
2 զայսոսիկ , ասէ ցաշակերտսն իւր ։ *Գի-
տէ՞ք , զի յետ երկուց աւուրց զատիկ լինի .
եւ որդի մարդոյ մատնի ՚ի խաչ ելանել ։
3 *Յայնժամ ժողովեցան ||քահանայապետ- Մ. Ի. Թ.
քն եւ դպիրքն եւ ծերք ժողովրդեանն ՚ի ||Մարկ.
սրահ քահանայապետին՝ որում անուն էր 14. 1.
4 Կայիափա . *եւ արարին խորհուրդ՝ զի նեն- Ղուկ.
5 գութ՟բ կալցին զՅ՟ս՝ եւ սպանցեն ։ *Բայց 22. 1.
ասէին , թէ մի ՚ի տօնի աստ՝ զի մի խռո-

Մարկ. վութիւն լինիցի 'ի ժողովրդեանն: *Եւ իբրեւ 6
14. 3. եղեւ Յս 'ի Բեթանիա 'ի տան Սիմոնի բո-
րոտի, *մատեաւ առ նա կին մի. որ ունէր 7
Յովհ. շիշ իւղոյ ծանրագնոյ, եւ եհեղ 'ի
12. 3. գլուխ նր 'ի բազմականին: *Իբրեւ տեսին 8
աշակերտքն' բարկացան եւ ասեն. ընդէ՞ր
է կորուստ այդ: *Զի մարթ էր 9
վաճառել զայդ բազում գնոյ եւ տալ աղքատաց:
*Գիտաց Յս' եւ ասէ ցնս. զի՞ աշխատ 10
առնէք զկինդ, գործ մի բարի գործեաց զա
յիս: *Յամ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, 11
բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք:
*Արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ, առ 12
'ի թաղելոյ զիս նշանակեաց: *Բայց ամէն 13
ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեսցի աւետա-
րանս այս 'ի յամ աշխարհ, խօսեսցի եւ զոր
Մարկ. արար դա' 'ի յիշատակ դորա: *Յայնժամ 14
14. 10. գնաց մի յերկոտասանիցն անուանեալ Յու-
Ղուկ. դա սխարիովտացի առ քահանայապետսն,
22. 4. եւ ասէ: *Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես 15
մատնեցից զնա ձեզ: Եւ նոքա կշռեցին
նմա երեսուն արծաթի: *Եւ յայնմհետէ 16
խնդրէր պարապ' զի մատնեսցէ զնա նոցա:
Մարկ. *Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն 17
14. 12. մատեան աշակերտքն առ Յս' եւ ասեն. ո՞ւր
Ղուկ. կամիս' զի պատրաստեսցուք քեզ ուտել
22. 7. զպասեքն: *Եւ նա ասէ ցնս. երթայք 'ի 18
քաղաքն առ այս անուն, եւ ասացէք ցնա.
վարդապետն ասէ' ժամանակ իմ մերձ է,
առ քեզ առնեմ զպասեքն աշակերտօքս

իմովք.

19 Հանդերձ: * Եւ արարին աշակերտքն որպէս
հրամայեաց նոցա Յս, և պատրաստեցին
20 զպասեքն: * || Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր || Մարկ.
21 բազմեալ ը̄ երկոտասան աշակերտսն: * Եւ 14. 17.
մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ Ղուկ.
ձեզ, || զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: 22. 14.
22 * Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա || Յովհ.
իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ. միթէ ե՞ս ի- 13. 21.
23 ցեմ Տէր: * Նա պատասխանի ետ և ասէ.
որ մխեաց ը̄ իս զձեռն իւր 'ի սկաւառակն՝
24 նա մատնելոց է զիս: * Որդի մարդոյ եր-
թայ՝ || որպէս և գրեալ է վ̄ն նր. բայց վա̃յ մար- || Սաղմ.
դոյն այնմիկ՝ յոյր ձեռս որդի մարդոյ մատ- 40. 10.
նեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն Գործ.
25 այն: * Պատասխանի ետ Յուդա՝ որ մատնելոցն էր 1. 16.
զնա՝ և ասէ. միթէ ե՞ս իցեմ վարդապետ:
26 Ասէ ցնա՝ դու ասացեր: * || Եւ մինչդեռ || 1. Կորն.
ուտէին նք՝ առ Յս հաց՝ օրհնեաց և եբեկ, 11. 24.
և ետ աշակերտացն՝ և ասէ. առէք կերայք՝
27 այս է մարմին իմ: * Եւ առեալ բաժակ
գոհացաւ՝ ետ նց և ասէ. արբէք 'ի դմա-
28 նէ ամենեքին: * Զի այդ է արիւն իմ նո-
րոյ ուխտի, որ 'ի վ̄ն բազմաց հեղանի 'ի
29 թողութիւն մեղաց: * Բայց ասեմ ձեզ. ոչ
ես արբից յայսմհետէ 'ի բերոյ որթոյ մին-
չև ցօրն յայն՝ յորժամ արբից զայն ը̄ ձեզ
30 նոր յարքայութեն Հ̊ր իմոյ: * Եւ օրհնեցին,
31 և ելին ի լեառն ձիթենեաց: * Յայնժամ || Մարկ.
ասէ ցնս Յս. || ամենեքին դուք գայթագ- 14. 27.
ղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի գրեալ Զաքար.

է՝ թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցին ոչխարքն
‖Մտթ. հօտին։ *Եւ յետ յառնելոյն իմոյ, ‖յա- 32
16. 7. ռաջեսցից քան զձեզ 'ի Գալիլեա։ *Պ͞տի 33
ետ Պետրոս՝ և ասէ ցնա. Թէպէտ և ա-
մենեքեան գայթագղեսցին 'ի քէն, սակայն
ես ոչ գայթագղեցայց։ *Ասէ ցնա Յս. 34
‖Յովհ. ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի ‖մինչև
13. 38. հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։
‖Մտթ. *Ասէ ցնա Պետրոս. ‖Թէ և մեռանել հա- 35
14. 31. սանիցէ ինձ ընդ քեզ զքեզ ոչ ուրացայց։ Նոյն-
Ղուկ. պէս և ամ աշակերտքն ասէին։ *Յայնժամ 36
22. 33. գայ Յս ը նս 'ի գիւղ մի՝ որում անուն էր
Գեթսեմանի, և ասէ ցնս. Նստարուք այդր,
մինչև երթայց կացից յաղօթս։ *Եւ ա- 37
ռեալ ընդ իւր զՊետրոս՝ և զերկոսս որդիսն
Զեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ։
*Յայնժամ ասէ ցնս. Տրտում է ոգի իմ 38
մինչև 'ի մահ, կացէք աստ՝ և սկսեցէք ընդ
իս։ *Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ 39
անկաւ 'ի վր երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝
և ասէ. Հայր իմ, եթէ հնար է անցցէ
բաժակս այս յինէն. բայց ոչ որպ ես կա-
միմ, այլ որպ դու։ *Գայ առ աշակերտսն, 40
և գտանէ զնս 'ի քուն, և ասէ ցՊետրոս.
Այդպէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ
ընդ իս։ *Արթուն կացէք և աղօթս արա- 41
րէք՝ զի մի անկանիցիք 'ի փորձութի. հո-
գիս յօժար է՝ բայց մարմինս տկար։ *Դար- 42
ձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս
Յս՝ և ասէ. Հայր իմ՝ եթէ հնար իցէ
ան-

անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ
43 ոչ՛ արբից զդա, եղիցին կամք քո: * Եւ
եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ՚ի քուն,
44 զի էին աչք իւրեանց ծանրացեալք: * Եւ
թող զնս̃՝ և գնաց, եկաց յաղօթս երրորդ
անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց:
45 * Յայնժամ գայ առ աշակերտսն՝ և ասէ
ցնս̃. Ննջեցէք այսուհետև՝ և հանգերո՛ւք.
զի ահա հասեալ է ժամ, և որդի մարդոյ
46 մատնի ՚ի ձեռս մեղաւորաց: * Արիք եր-
թիցուք աստի, զի ահաւասիկ եհաս՝ որ
47 մատնելոցն է զիս: * ‖ Եւ մինչդեռ նա զայն ‖ Մարկ.
խօսէր, ահա Յուդա մի յերկոտասանիցն 14. 43.
էին, և ը̃ նմա ամբոխ բազում սրովք և Ղուկ.
բրօք՝ ՚ի քահանայապետիցն՝ և ՚ի ծերոց 22. 47.
48 ժողովրդեանն: * Եւ որ մատնելոցն էր զնա, Յովհ.
ետ նց̃ նշան՝ և ասէ. զ̃ որում ես համբու- 18. 3.
49 րեցից՝ նա է, զնա՛ ունիցիք: * Եւ վաղվա-
ղակի մատուցեալ առ Յս̃՝ ասէ. ո՛ղջ եր
50 վարդապետ. և համբուրեաց ը̃ նմա: * Եւ
Յս̃ ասէ ցնա. ընկե՛ր՝ վս̃ որո՞յ եկիր.
յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յս̃,
51 և կալան զնա: * Եւ ահա մի ոմն յայնցանէ՝
որ էին ընդ Յս̃ի, ձգեաց զձեռն և եհան
զսուր իւր՝ և եհար զծառայ քահանայապե-
52 տին, և ՚ի բաց եհան զունկն նր̃: * Յայն-
ժամ ասէ ցնա Յս̃. դարձո՛ զսուր քո ՚ի
տեղի իւր. ‖ զի ամենեքեան՝ որ սուր առ- ‖ Ծննդ.
53 նուցուն՝ սրով անկանիցին: * Թէ համարի- 9. 6.
ցիս՝ թէ ո՞չ կարեմ աղաչել զՀայր իմ. և

հասուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան
‖Եսայ. զերկոտասան գունդս հրեշտակաց: *‖Արդ 54
53. 10. զիարդ լնուցուն գիրք՝ թէ այսպէս պարտ
է լինել: *Յայնժամ ասաց Յս ցամբոխն. 55
իբրեւ ՚ի վր աւազակի ելէք սուսերօք եւ բրօք՝
ունել զիս. հանապազ առ ձեզ ՚ի տաճա-
րին նստէի եւ ուսուցանէի, եւ ոչ կալայք
‖Ողբոց. զիս: *Այլ այս ամենայն եղեւ՝ զի ‖լցցին 56
4. 20. գիրք մարգարէիցն: Յայնժամ աշակերտքն
‖Ղուկ. ամենեքին թողին զնա եւ փախեան: *Իսկ 57
22. 54. նոքա կալեալ զՅս՝ ‖ածին առ Կայիափա
Յովհան. քահանայապետ՝ ուր դպիրքն եւ ծերք ժո-
18. 24. ղովեալ էին: *Եւ Պետրոս զհետ նր եր- 58
թայր բացագոյն մինչեւ ՚ի սրահ քահանայ-
ապետին. եւ մտեալ ՚ի ներքս նստէր ընդ
սպասաւորսն տեսանել զկատարածն: *Իսկ 59
քահանայապետքն եւ ամ ատեանն խնդրէին
սուտ վկայութի զՅսէ. զի սպանցեն զնա, *եւ 60
ոչ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն մա-
տուցելոց. յետոյ մատուցեալ երկու սուտ
‖Յովհ. վկայք, *ասէին՝ թէ սա ասէր՝ ‖կարող եմ 61
2. 19. քակել զտաճարն Այ, եւ զերիս աւուրս շի-
նել: *Եւ յարուցեալ քահանայապետն 62
ասէ ցնա. չտա՞ս ինչ պատասխանի, զինչ
դոքա ամբաստանեն զքէն: *Եւ Յս լռեա 63
‖Մտթ. կայր: Պատասխանի ետ քահանայապետն եւ
16. 27. ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յԱծ
Հռովմ. կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու ես
14. 10. Քն Որդի Այ: *Ասէ ցնա Յս. դու ա- 64
1. Թեսա. սացեր. բայց ասեմ ձեզ, ‖յայսմհետէ
4. 15. տե-

տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ 'ի աջմէ
զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից:
65 * Յայնժամ քահանայապետն պատառեաց
զհանդերձս իւր, և ասէ. Հայհոյեաց, զի՞
ևս պիտոյ են մեզ վկայք. ահա այժմ լուայք
66 զհայհոյութիւն նորա. * զի՞նչ հաճոյ է ձեզ:
Նոքա պատասխանի ետուն և ասեն. մա-
67 հապարտ է: * Յայնժամ ‖ թքին 'ի երեսս ‖Եսայ.
նորա, և կոփեցին զնա. և ոմանք ապտակե- 50. 6.
68 ցին, և ասեն: * Մարգարէա՛ց մեզ Քրիստոս, ‖Մարկ.
69 ո՞վ է որ եհար զքեզ: * ‖Իսկ Պետրոս 14. 65.
նստէր արտաքոյ 'ի գաւթին. մատեաւ առ ‖Ղուկ.
նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յիսուսի 22. 55.
70 գալիլեացւոյ էիր: * Նա ուրացաւ առաջի Յովհ.
ամենեցուն՝ և ասէ, թէ ոչ գիտեմ զի՞նչ 18. 17.
71 խօսիս: * Եւ ելեալ նորա արտաքս քան
զդրունն՝ ետես զնա այլ ևս մի, և ասէ
ցայնոսիկ որ անդն կային. և սա ընդ Յիսուսի
72 նազովրեցւոյ էր: * Եւ դարձեալ ուրացաւ
73 երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն: * Եւ յետ
սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ,
ասեն ցՊետրոս. արդարև և դու 'ի նոցա-
նէ ես, քանզի և խօսք քո յայտ առնեն
74 զքեզ: * Յայնժամ սկսաւ նզովել և երդ-
նուլ, թէ ոչ գիտեմ զայրն. և իսկոյն հաւ
75 խօսեցաւ: * Եւ յիշեաց Պետրոս զբանն
Յիսուսի զոր ասաց, ‖թէ մինչև հաւու խօ- ‖Վեր.
սեալ իցէ երիցս ուրասցիս զիս. և ելեալ 26. 34.
արտաքս՝ լայր դառնապէս:

## ԳԼ. ԻԷ.

Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ արարին ա՟մ 1
քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վ՟ն
‖ Մարկ. Յ՟սի սպանանել զնա: * ‖ Կապեցին զնա, 2
15. 1. եւ տարին գնացին. եւ ետուն 'ի ձեռս պոն-
Ղուկ. տացւոյ Պիղատոսի դատաւորի: * Յայնժամ 3
23. 1. տեսեալ Յուդայի՝ որ մատնեաց զնա, թէ
Յովհ. պարտաւորեցաւ, զղջացաւ՝ եւ դարձոյց զար-
18. 28. ծաթն առ քահանայապետսն եւ ծերս ժո-
ղովրդեանն, * եւ ասէ. մեղայ, զի մատնեցի 4
զարիւն արդար. եւ նո՟ք ասեն. մեզ չէ փոյթ,
դու գիտես: * Եւ ընկէց զարծաթն 'ի տա- 5
‖ Գործ. ճարին՝ ‖ եւ գնաց, եւ չոգաւ խեղդեցաւ:
1. 18. * Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ 6
ասեն. ոչ է արժան ընդունել զայդ 'ի կոր-
բանն, քանզի գինք արեան են: * Խորհուրդ 7
առեալ, գնեցին այնու զագարակն բրտի 'ի
‖ Գործ. գերեզման օտարաց: * ‖ Վասն այնորիկ կո- 8
1. 19. չեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մին-
չեւ ցայսօր: * Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն 9
‖ Զաքար. 'ի ձեռն Երեմիայ մարգարէի. ‖ եւ առին զե-
11. 13. րեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր
արկին յորդւոցն Իսրայելի: * Եւ ետուն 10
‖ Մարկ. զնա յագարակն բրտի. որպ՟ հրամայեաց ինձ
15. 2. Տէր: * Եւ Յ՟ս եկաց առաջի դատաւորին. 11
Ղուկ. ‖ Եհարց ցնա դատաւորն՝ եւ ասէ. դու՞ ես
23. 2. թագաւորն հրէից. եւ Յ՟ս ասէ. դու ասես:
Յովհ. * Եւ 'ի չարախօսելն նո՟ր 'ի քահանայապե- 12
18. 33.

տիցն

տիցն և 'ի ծերոց, ոչինչ ետ պատասխա-
13 նի: *Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. ո՞չ
լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն:
14 *Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան
մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ:
15 *Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն ար-
ձակել ժողովրդեանն կապեալ մի զոր կա-
16 մէին: *Ունէին յայնժամ կապեալ մի նշ-
անաւոր, որում անուն էր Յեսու Բարաբ-
17 բա: *Իբրև ժողովեցան, ասէ ցնոսա Պիղա-
տոս. զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձա-
կեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞՝ եթէ
18 զՅս զանուանեալն Քս: *Քանզի գիտէր՝
19 թէ առ նախանձու մատնեցին զնա: *Եւ
մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա
կինն իւր՝ և ասէ. չկայ ինչ քո և արդա-
րոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ
20 իս այսօր յանուրջս վասն նորա: *‖Իսկ քահա- ‖Մարկ.
նայապետքն և ծերք հաւանեցուցին զժողո- 15. 11.
վուրդսն, զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և Ղուկ.
21 զՅս կորուսցեն: *Պատասխանի ետ դա- 23. 18.
տաւորն՝ և ասէ ցնս. զո՞ կամիք զի արձա- Յովհ.
կեցից ձեզ յերկուց աստի. և նոքա ասեն. 18. 40.
22 զԲարաբբա: *Ասէ ցնոսա Պիղատոս. իսկ Գործ.
23 զի՞ արարից զՅս զանուանեալն Քս: *Աս- 3. 14.
են ամենեքեան՝ խաչեսցի. և նա ասէ,
զի՞նչ չար արար. և նք առաւել ևս աղա-
24 ղակէին և ասէին, խաչեսցի: *Եւ տեսեալ
Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել
խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս

ա-

առաջի ժողովրդեանն՝ և ասէ. Քաւեալ եմ
ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գի-
տասջիք։ * Պատասխանի ետ ամ ժողովուրդն՝ 25
և ասէ. արիւն դորա ՚ի վր մեր և ՚ի վերայ
որդւոց մերոց։ * Յայնժամ արձակեաց նց 26
զԲարաբբայն, և զՅն գանս հարեալ՝ ետ
՚ի ձեռս՝ զի խաչեսցի։ * Յայնժամ զինուորք 27
‖Սաղմ. դատաւորին առին զՅն յապարանս. ‖ և
21. 17. ժողովեցին ՚ի վր նր զամ զգունդն. * մեր- 28
կացին զնա. և արկին զնովաւ քղամիդ կար-
‖Յովհ. միր։ * ‖Եւ բոլորեալ պսակ ՚ի փշոց՝ եդին 29
19. 2. ՚ի գլուխ նր, և եղէգն յաջոյ ձեռին նորա.
՚ի ծունր իջեալ առաջի նր՝ կատակէին և
ասէին. ողջ եր թագաւոր Հրէից։ * Եւ 30
թքեալ ՚ի նա՝ առնուին զեղէգնն և ծեծէին
զգլուխ նր։ * Եւ յորժամ աղաղեցին զնա, 31
մերկացուցին ՚ի նմանէ զքղամիդն՝ և ագու-
ցին նմա զիւր հանդերձն, և տարան զնա
‖Մարկ. ՚ի խաչ հանել։ * ‖Եւ ելեալ արտաքս՝ 32
15. 21. գտին այր մի կիւրենացի անուն Սիմոն, զնա
Ղուկ. կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն նորա։
23. 26. * ‖Եւ եկեալ ՚ի տեղին անուանեալ Գող- 33
‖Մարկ. գոթա, որ է տեղի կառափելոյ, * ետուն 34
15. 22. նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և
Ղուկ. իբրև ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ * Եւ 35
23. 33. հանեալ զնա ՚ի խաչ՝ բաժանեցին զհան-
Յովհ. դերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ
19. 17. ասացաւ ՚ի մարգարէէն. ‖ բաժանեցին զհ-
‖Սաղմ. հանդերձս իմ յիւրեանս, և ՚ի վր պատ-
21. 19. մուճանի իմոյ վիճակս արկանէին։ * Եւ նս- 36
տեալ

37 տեսալ պահէին զնա։ *Եւ եդին ՚ի վերայ
գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նր. թէ՝ այս է
38 Յս թագաւորն Հրէից։ *Յայնժամ ‖ հա- ‖ Մարկ.
նին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի 15. 27.
39 յաջմէ նր՝ և մի յահեկէ։ *Եւ որ անցա- Ղուկ.
նէինն՝ հայհոյէին զնա, շարժէին զգլուխս 23. 34.
40 իւրեանց, * և ասէին. ‖ վա՞հ որ քակէիր ‖ Յովհ.
զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա. 2. 19.
ապրեցո՛ զքեզ, թէ Որդի ես Այ էջ ՚ի
41 խաչէդ։ *Նոյնպէս և քահանայապետքն
ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք՝ և ա-
42 սէին. *Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ
ապրեցուցանել. ‖ եթէ թագաւոր է Իս- ‖ Իմաստ.
րայէլի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատաս- 2. 18.
43 ցուք զնա. * ‖ եթէ յուսացաւ յԱծ, փրը- ‖ Սաղմ.
կեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի 21. 9.
44 ասաց՝ եթէ Այ որդի եմ։ *Զնոյն և ա-
ւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախա-
45 տէին զնա։ *Եւ ՚ի վեց ժամէ աւուրն՝ խա-
ւար եղև ՚ի վր ամ երկրի մինչև ցինն ժամ։
46 *Եւ զինն ժամաւն գոչեաց Յս ՚ի ձայն մեծ
և ասէ. ‖ Էլի Էլի լամա սաբաքթանի. այս ‖ Սաղմ.
ինքն է. Աձ իմ Աձ իմ ընդէ՞ր թողեր զիս։ 21. 2.
47 *Ոմանք յայնցանէ որ անդ կային, իբրև Մարկ.
48 լուան՝ ասէին. զԵղիա կարդայ դա։ *Եւ 15. 34.
վաղվաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ՝ առ
սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝
49 ետ ըմպել նմա։ *Եւ կէսքն ասէին. թո՛ղ
50 տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։ *Եւ
Յս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և

ար-

‖ 2. Մնաց. արձակեաց զոգին: * ‖ Եւ ահա վարագոյր 51
3. 14. տաճարին ցելաւ յերկուս՝ ՚ի վերուստ մին-
չեւ ՚ի վայր, եւ երկիր շարժեցաւ, եւ վէմք
պատառեցան: * Եւ գերեզմանք բացան, եւ 52
բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան:
* Եւ ելեալ ՚ի գերեզմանաց յետ յարու- 53
թեանն նորա, մտին ՚ի քաղաքն սուրբ, եւ
երեւեցան բազմաց: * Իսկ հարիւրապետն՝ 54
եւ որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին
զշարժումն եւ զեղեալսն, երկեան յոյժ՝ եւ
ասեն. արդարեւ Աստուծոյ Որդի էր սա: * Էին 55
անդ կանայք բազումք, կային ՚ի հեռաս-
տանէ՝ եւ հայէին, որք եկին զհետ Յիսուսի ՚ի
Գալիլեէ պաշտել զնա. * յորս էր Մարիամ 56
Մագդաղենացի՝ եւ Մարիամ Յակոբայ՝ եւ
Յովսեայ մայր, եւ մայր որդւոյն Զեբեդեայ:
‖ Մարկ. * ‖ Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մե- 57
15. 42. ծատուն յԱրիմաթեայ՝ որում անուն էր
Ղուկ. Յովսէփ. որ եւ աշակերտեցաւ իսկ Յիսուսի:
23. 50. * Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց 58
Յովհ. զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրա-
19. 38. մայեաց տալ զմարմինն: * Եւ առեալ ըզ- 59
մարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտա-
ւով, * եւ եդ ՚ի նոր գերեզմանի՝ զոր փո- 60
րեաց ՚ի վիմի. եւ թաւալեցուցեալ կափա-
րիչ զդրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց:
* Էր անդ Մարիամ Մագդաղենացի՝ եւ միւս 61
Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին:
* Եւ ՚ի վաղիւն անդր՝ որ է յետ ուրբաթուն, 62
ժողովեցան քահանայապետքն եւ փարիսե-

ցիքն

63 ցիքն առ Պիղատոս, *եւ ասեն. տէր, յի-
շեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ
կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառ-
64 նեմ: *Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզ-
մանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ
աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, եւ
ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ 'ի մե-
ռելոց. եւ լինիցի յետին մոլորութիւն չար
65 քան զառաջինն: *Ասէ ցնոսա Պիղատոս.
ունիք զզօրականն, երթայք զգուշացարուք
66 ոպ եւ գիտէք: *Եւ նոքա երթեալ զգուշա-
ցան գերեզմանին, եւ կնքեցին զվէմն հան-
դերձ զօրականօքն:

## ԳԼ. ԻԸ.

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լու- Մարկ.
սանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագ- 16. 1.
դաղենացի, եւ միւս Մարիամն՝ տեսանել զգե- Ղուկ.
2 րեզմանն: *Եւ ահա շարժումն մեծ ե- 24. 1.
ղեւ. զի հրեշտակ Տն իջեալ յերկնից՝ մա- Յովհան.
տուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրաց 20. 1.
3 անտի, եւ նստէր 'ի վր նր. *եւ էր տեսիլ
նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա
4 սպիտակ իբրեւ զձիւն: *Եւ յահէ անտի
նր խռովեցան պահապանքն, եւ եղեն իբ-
5 րեւ զմեռեալս: Պատասխանի ետ հրեշ-
տակն՝ եւ ասէ ցկանայսն. մի երկնչիք դուք,
6 գիտեմ զի զՅս զխաչելեալն խնդրէք. *չէ
աստ, քանզի յարեաւ, ոպ ասացն. եկայք
տե-

տեսէք զտեղին ուր կայր ։ * Եւ վաղվաղա- 7
կի երթայք ասացէք աշակերտացն նորա՝
‖ Վեր. թէ յարեաւ. և ‖ ահա յառաջանայ քան
26. 23. զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա.
ահա ասացի ձեզ ։ * Եւ ելեալ վաղվաղա- 8
կի 'ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութը
բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն ։
* Եւ ահա պատահեաց նոցա Յս՟ և ասէ. ողջ 9
էք ։ Եւ նոքա մատուցեալ կալան զոտս նո՟
և երկիրպագին նմա. * Յայնժամ ասէ ցնս՟ 10
Յս. մի երկնչիք, երթայք ասացէք եղ-
բարցն իմոց՝ զի երթիցեն 'ի Գալիլեա, և
անդ տեսցեն զիս ։ * Իբրև նոքա գնացին, 11
ահա ոմանք 'ի զօրականացն եկին 'ի քա-
ղաքն՝ և պատմեցին քահանայապետիցն զա-
մենայն որ ինչ եղեն ։ * Եւ նոքա ժողովեալ 12
հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ ար-
ծաթ յոյժ ետուն զօրականացն, * և ասեն. 13
ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գի-
շերի գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք ։
* Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, 14
մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս ա-
րասցուք ։ * Եւ նոցա առեալ զարծաթն, 15
արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս
'ի Հրէից մինչև ցայսօր ։ * Իսկ մետասան 16
աշակերտքն գնացին 'ի Գալիլեա՝ 'ի լեառնն՝
ուր ժամադիր եղև նոցա Յս ։ * Իբրև տե- 17
սին զնա, երկիրպագին նմա. և ոմանք յեր-
կուացան ։ * Եւ մատուցեալ Յս խօսեցաւ 18
ընդ նոսա՝ և ասէ. տուաւ ինձ ամ՟ իշխա-

նութի

նութիւն յերկինս և յերկրի. որպէս առա-
քեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ:
19 * Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք Մարկ.
զամ հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն 16. 15.
20 Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ: * Ու-
սուցէք նց պահել զամենայն որ ինչ պատ-
ուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ
եմ՝ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած
աշխարհի:



ՆԸ-

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ:

Աւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է. Սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի, և ընթացակից Պօղոսի գրեաց զաւետարանս զայս: Եւ ունի սկիզբն և աւարտ. Սկիզբն աւետարանին, ՚ի Յովհաննու քարոզութենէն. և զմկրտութենէն Յովհաննու. և ամենայն վկայութենէ յիսասցեալ մարգարէէ. Նշանակէ և զխորհրդութեանն ՚ի լերինն, և ոչ աւետ զխորհրդեանն. զգործն և զնոյն ընդունելութեան աշակերտացն, և նշանս և արտաքսեալ՝ զոր առնոր. և զխորհուրդ մարդեղութեանն, և զխաչելութիւն. որ և մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով. և զի զխոնարհութեանն խաձանեցին զհանդերձս նորա. և զի մարմինն եղաւ ՚ի գերեզմանի, և յարեաւ երրորդ աւուր. և զիջանել հրեշտակին, և երեւել կանանցն, և զնոյն պատմել

աշակերտացն:

Մարկոս հրամանաւ Պետրոսի ձեռն գրեաց զաւետարանս իւր յԱղեքսանդրիա քաղաքի ՚ի լեզու Եգիպտացի. զկնի ԺԷ ամ համբառնալոյ Փրկչին:

Մարկոս՝ բարձր պատուոյ, կամ ՚ի ձեռն տանեցոյն:

# ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

## Աւետարանին որ ըստ Մարկոսի.


| | Գլ. | Համր. |
|---|---|---|
| Վասն դիւահարին. | Ա. | 23. |
| Վասն Պետրոսի զոքանչին. | Ա. | 29. |
| Վասն բժշկութեան զանազան հիւանդութեանց. | Ա. | 32. |
| Վասն բորոտին. | Ա. | 40. |
| Վասն անդամալուծին. | Բ. | 3. |
| Վասն Ղեւեայ մաքսաւորին. | Բ. | 14. |
| Վասն գօսացելոյ ձեռինն. | Գ. | 1. |
| Վասն առաքելոցն ընտրութեան. | Գ. | 13. |
| Վասն սերմանողացն առակին. | Դ. | 2. |
| Վասն սաստելոյ ջուրցն. | Դ. | 35. |
| Վասն լէգէոնացն. | Ե. | 1. |
| Վասն դստեր ժողովրդապետին. | Ե. | 21. |
| Վասն դեռատեւին. | Ե. | 25. |
| Վասն համարոյ առաքելոցն. | Զ. | 7. |
| Վասն Յովհաննու, եւ Հերովդի. | Զ. | 14. |
| Վասն հինգ հացիցն՝ եւ երկու ձկանցն. | Զ. | 35. |
| Վասն ՚ի վերայ ծովուն գնալոյ. | Զ. | 47. |
| Վասն անցանելոյն զպատուիրանաւն. | Է. | 5. |
| Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ. | Է. | 24. |
| Վասն համրին եւ խլին. | Է. | 31. |
| Վասն եօթն հացիցն. | Ը. | 1. |
| Վասն խմորոյ փարիսեցւոցն. | Ը. | 16. |
| Վասն կուրին. | Ը. | 22. |

Վասն հարցանելոյն ՚ի Կեսարիա. Ը. 27.
Վասն այլակերպութեան Տն. Թ. 1.
Վասն լուսնահարին. Թ. 16.
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ. Թ. 32.
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է
արձակել զկին. Ժ. 1.
Վասն հարցանելոյ մեծատանն զՅս. Ժ. 17.
Վասն որդւոցն Զեբեդեայ. Ժ. 35.
Վասն Բարտիմէոսի. Ժ. 46.
Վասն յաւանակին. ԺԱ. 1.
Վասն չորանալոյ թզենւոյն. ԺԱ. 12.
Վասն անյիշաչարութեան. ԺԱ. 25.
Վասն հարցանելոյ քահանայապե-
տիցն զՏրն. ԺԱ. 27.
Վասն այգւոյն. ԺԲ. 1.
Վասն հարցանելոյ դահեկանէն. ԺԲ. 13.
Վասն սադուկեցւոյն. ԺԲ. 18.
Վասն դպրացն. ԺԲ. 28.
Վասն Տն հարցանելոյ զփարիսեցիսն. ԺԲ. 35.
Վասն երկու լումայիցն. ԺԲ. 41.
Վասն կատարածին. ԺԳ. 3.
Վասն աւուրն, եւ ժամուն. ԺԳ. 32.
Վասն օծանելոյ կնոջն զՏրն իւղով. ԺԴ. 3.
Վասն զատկին. ԺԴ. 12.
Վասն մատնութեան մարգարէանալոյ. ԺԴ. 18.
Վասն Պետրոսի ուրացութեան. ԺԴ. 66.
Վասն խնդրելոյ զտէրունական մար-
մինն. ԺԵ. 42.
Վասն իւղաբեր կանանցն. ԺԶ. 1.

ԸՍՏ



# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ։

### ԳԼ. Ա.

1 ՍԿԻԶԲՆ ԱՒԵՏԱ-
րանի Յ̃ի Ք̃ի Որդւոյ Ա̃յ։
2 * Որպէս գրեալ է 'ի մարգա-
րէս. || Ահաւասիկ ես առա- || Մաղաք.
քեմ զհրեշտակ իմ առաջի 3. 1.
քո, որ հանդերձեսցէ զճանապարհ քո
3 առաջի քո։ * || Ձայն բարբառոյ յանա- || Եսայ.
պատի, պատրաստ արարէք զճանապարհ 40. 3.
Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա։ Ղուկ.
4 * Եւ եղեւ' զի Յովհաննէս մկրտէր յա- 3. 4.
նապատի, և քարոզէր մկրտութիւն ապաշ-
5 խարութ̃ն 'ի թողութ̃ի մեղաց։ * || Եւ եր- || Մատթ.
թայր առ նա ա̃մ աշխարհն Հրէաստանի, և 3. 5.
Եւ Է̃մացիք ամենեքեան. և մկրտէին 'ի նմա-
նէ 'ի Յորդանան գետ' խոստովանեալ զմեղս

խուրեանց: *Եւ էր Յովհաննէս զգեցեալ 6
ստեւ ուղտու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ
‖ Ղեւտ. իւր. եւ կերակուր նր ‖ մարախ՝ եւ մեղր վայ-
11. 12. րենի: *Քարոզէր եւ ասէր. ‖ գայ զօրա- 7
‖ Ղուկ. գոյն քան զիս զկնի իմ, որում չեմ բա-
3. 16. ւական խոնարհել լուծանել զխրացս կօշ-
Յովհան. կաց նորա: *‖ Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ 8
1. 27. նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն սրբով: *Եւ 9
‖ Գործ. եղեւ՝ յաւուրսն յայնոսիկ եկն Յս 'ի Նազա-
1. 5. րեթէ գալիլեացւոց, եւ մկրտեցաւ 'ի Յով-
19. 4. հաննէ 'ի Յորդանան: *Եւ նոյնժամայն ել 10
վերանալ 'ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս,
եւ զՀոգին Այ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր 'ի
վր նր: *Ձայն եղեւ յերկնից՝ եւ ասէ. դու 11
ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ:
‖ Մատթ. *‖ Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յա- 12
4. 1. նապատ: *Եւ էր նա անդ զաւուրս քա- 13
Ղուկ. ռասուն փորձեալ 'ի սատանայէ, եւ էր ընդ
4. 1. գազանս. եւ հրեշտակք պաշտէին զնա:
Ի. Ի. *‖ Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն 14
‖ Մատթ. Յս 'ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն
4. 12. Այ՝ եւ ասէր. *թէ կատարեալ է ժամանակ, 15
Ղուկ. եւ հասեալ է արքայութիւն Այ. ապաշխա-
4. 14. րեցէք՝ եւ հաւատացէք յաւետարանն: *‖ Իբ- 16
Յովհան. րեւ անցանէր առ ծովեզերբն Գալիլեաց-
4. 43. ւոց, ետես զՍիմովն եւ զԱնդրէաս զեղբայր
‖ Մատթ. Սիմովնի, զի արկեալ էր նոցա ուռկանս 'ի
4. 18. ծով. քանզի ձկնորսք էին. *եւ ասէ ցնոսա 17
Ղուկ. Յս. եկայք զկնի իմ, եւ արարից զձեզ լի-
5. 2. նել որսորդս մարդկան: *Եւ վաղվաղակի 18
թո-

Թողեալ զուռկանսն, գնացին զհետ նորա։
19 * Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ,
ետես զՅակովբոս Զեբեդեայ՝ եւ զՅովհան-
նէս զեղբայր նորա. եւ զնս̃ ի նաւին մինչ
20 կազմէին ուռկանս, եւ կոչեաց զնս̃։ * Եւ
վաղվաղակի թողեալ զհայրն իւրեանց զԶե-
բեդէոս ի նաւին վարձկանօքն հանդերձ,
գնացին զհետ նորա։
21 * Եւ մտանեն ի Կափառնաում, եւ խկ եւ Բ. Գ.
խկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն,
22 ուսուցանէր զնս̃։ * ‖ Եւ զարմանային ընդ ‖ Մատթ.
վարդապետութի նր̃, զի ուսուցանէր զնս̃ 7. 28.
իբրեւ իշխանութբ̃՝ եւ ոչ որպէս դպիրքն։ Ղուկ.
23 * ‖ Եւ էր ի ժողովրդեանն նց̃ այր մի, յո- 4. 31.
րում այս պիղծ գոյր ի նմա. որ աղաղա- ‖ Ղուկ.
24 կեաց՝ եւ ասէ։ * Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր 4. 33.
եւ քո՝ Յս̃ Նազովրեցի, եկիր կորուսանել
զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սր̃դ Ա̃Յ։
25 * Սաստեաց ի նա Յս̃ եւ ասէ. կարկեա՛ց՝
26 եւ ել ի դմանէ։ * Եւ զարկոյց զնա այսն
պիղծ. եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ել
27 ի նմանէ։ * Եւ զարմացան ամենեքին, մին-
չեւ հարցանել ը̃ միմեանս՝ եւ ասել. զի՞նչ է
այս նոր վարդապետութի, զի իշխանութբ̃
եւ այսոց պղծոց սաստէ՝ եւ հնազանդին նմա։
28 * Եւ ել լուր նորա ը̃ ա̃մ կողմն Գալիլեաց-
29 ւոց։ * ‖ Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովր- ‖ Մատթ.
դենէն, եկն ի տուն Սիմոնի եւ Անդրեայ՝ 8. 14.
30 Յակոբաւ եւ Յովհաննու հանդերձ։ * Եւ Ղուկ.
զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, եւ վաղ- 4. 38.

վաղակի ասեն ցնա վասն նր՟։ *Եւ մա- 31
տուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նր՟.
և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։
*Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արե- 32
գականն, բերէին առ նա զամենայն հիւանդս
և զդիւահարս. *և էր ամ՟ քաղաքն ժո- 33
ղովեալ առ դրունսն։ *Եւ բժշկեաց բզ՟մ 34
Ղուկ. հիւանդս 'ի պէսպէս ախտից, ‖ և դևս բա-
4. 41. զումս եհան. և ոչ տայր խօսել դիւացն,
զի գիտէին զնա թէ Քս՟ն է։
*Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ 35
Բ Գ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր
յաղօթս. *Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ 36
և որ ը՟ նմայն էին։ *Եւ իբրև գտին զնա՝ 37
ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։
*Եւ ասէ ցն՟ս. եկայք երթիցուք և յայլ 38
մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քա-
րոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ *Եւ 39
քարոզէր 'ի ժողովուրդս նց՟ ընդ ամ՟ Գա-
Մատթ. լիլեացիս, և դևս հանէր։ *‖ Գայ առ նա 40
8. 2. բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ և ա-
Ղուկա. սէր. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս
5. 12. սրբել։ *Իսկ Յս՟ գթացեալ ձգեաց զձեռն, 41
մերձեցաւ 'ի նա՝ և ասէ ցնա. կամիմ սր-
բեա՛ց։ *Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի 42
գնաց 'ի նմանէ բորոտութիւն՝ և սրբեցաւ։
*Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս 43
վաղվաղակի, և ասէ։ *Զգո՛յշ լեր՝ մի ու- 44
մեք ինչ ասիցես. այլ երթ ցո՛յց զքեզ քա-
հանային. և մատո՛ վասն սրբութեն՟ քո պա-

տա-

տարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ՚ի վկայ- Ղեւտ.
45 ութի՛ ն՟ց։ *Եւ նա ելեալ սկսաւ քարո- 14. 2.
զել յոյժ՝ եւ հռչակ հարկանել զբանն, մինչ
ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ՚ի
քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ
տեղիս էր. եւ գային առ նա յամենայն
կողմանց։

## ԳԼ. Բ.

1 Եւ մտեալ դարձեալ ՚ի Կափառնաում Բ. Ե
2 յետ աւուրց. *լուր եղեւ եթէ ՚ի տան է. Մատթ.
եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ 9. 1.
լինել՝ եւ ոչ առ դրանն. եւ խօսէր ն՟ց զբանն։
3 *Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ Ղուկ.
4 մի բարձեալ ՚ի չորից։ *Եւ իբրեւ ոչ կա- 5. 18.
րէին մերձենալ առ նա յամբոխէ անտի,
քակեցին զյարկն՝ ուր էր Յ՟ս, եւ բացեալ
զառաստաղն՝ իջուցին զմահիճսն յորում
5 կայր անդամալոյծն։ *Եւ տեսեալ Յ՟սի
զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որ-
6 դեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ *Եւ
էին ոմանք ՚ի դպրաց անտի՝ որ անդ նստէին.
7 եւ խորհէին ՚ի սիրտս իւրեանց. *զի՞նչ է
այս՝ որ խօսի սա զհայհոյութիւս. ո՞վ կա- Եսայ.
8 րէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Ա՟ծ, *Եւ 43. 25.
գիտաց Յ՟ս հոգի իւր՝ թէ այնպէս խորհին
՚ի սիրտս իւրեանց, եւ ասէ. զի՞ խորհիք
9 զայդ ՚ի սիրտս ձեր։ *Զի՞նչ դիւրին է,
ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ

մեղք քո, եթէ ասել՝ արի առ զմահիճս քո
և երթ ՚ի տուն քո: *Այլ զի գիտասջիք 10
եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վր
երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն:
*Քեզ ասեմ, արի առ զմահիճս քո՝ և 11
երթ ՚ի տուն քո: *Եւ յարեաւ վաղվա- 12
ղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամե-
նեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և
փառաւոր առնել զԱծ՝ և ասել, թէ այս-
պիսի ինչ երբեք ոչ տեսաք:
Բ. Զ. *Եւ ել դարձեալ ՚ի ծովեզրն, և ամ ժողո- 13
վուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնս:
‖ Մատթ. *‖ Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂևի Ալ- 14
Թ. Թ. փեայ՝ զի նստէր ՚ի մաքսաւորութն. և ասէ
Ղուկ. ցնա, եկ զկնի իմ: Եւ յարուցեալ գնաց զկնի
Ե. 27. նր: *Եւ եղև ՚ի բազմելն նր ՚ի տան նր, 15
և բազում մաքսաւորք բազմեալ էին ընդ
Յսի՝ և ընդ աշակերտսն նորա. քանզի էին
բազումք՝ որ երթային զհետ նորա: *Իսկ 16
դպիրքն և փարիսեցիք իբրև տեսին՝ թէ
ուտէ ընդ մաքսաւորս՝ և ընդ մեղաւորս, ասեն
ցաշակերտսն նր. զի՞ է՝ զի ընդ մեղաւորս՝
և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք: *Իբրև 17
լուաւ Յս՝ ասէ ցնս. ոչինչ է պիտոյ բժիշկ
ողջոց՝ այլ հիւանդաց, և ոչ եկի կոչել զար-
‖ Ա. Տիմ. դարս՝ ‖ այլ զմեղաւորս: *Եւ էին աշա- 18
Ա. 15. կերտքն Յովհաննու՝ և փարիսեցիքն ՚ի պա-
հըս, գան և ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն
Յովհաննու՝ և փարիսեցիքն պահեն, և քո
աշակերտքդ ոչ պահեն: *Եւ ասէ ցնս Յս. 19
մի-

միթէ մարթ ի՞նչ իցէ որդւոց առագաստի
մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել. ցորքան
ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ
20 պահել: *‖ Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ ‖ Մատթ.
վերասցի ՚ի նոցանէ փեսայն, և ապա պա- 9. 15.
21 հեսցեն յաւուրն յայնմիկ: * Ոչ ոք կա- Ղուկ.
պերտ նոր անթափ արկանէ ՚ի վր հնացեալ 5. 33.
ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութիւն իւրով
նորն ՚ի հնոյ անտի, և չար ևս պատառումն
22 լինի: * Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին
զտիկսն, գինին հեղու, և տիկքն կորնչին.
այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է:
23 *‖ Եւ եղև նմա ՚ի շաբաթու անցանել ընդ Ի Ե
արտորայս, և աշակերտքն ՚ի գնալն իւր- ‖ Մատթ.
24 եանց՝ սկսան հասկ կորզել և ուտել: * Եւ 12. 1.
փարիսեցիքն ասեն ցնա. տե՛ս զի՞նչ գոր- Ղուկ.
ծեն աշակերտքն քո ՚ի շաբաթու՝ զոր չէ 6. 1.
25 արժան: * Եւ ասէ ցնոսա Յս. ‖ Ո՞չ եր- ‖ 1. Թագ.
բէք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դա- 21. 6.
ւիթ, յորժամ պիտոյն եղև՝ և քաղցեաւ
26 նա և որ ընդ նմայն էին: * Զիա՞րդ եմուտ
՚ի տունն Այ առ Աբիաթարաւ քահանայա-
պետիւ, և զհացսն զառաջաւորութեան
եկեր՝ և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին.
զոր ոչ էր օրէն ուտել, ‖ բայց միայն քա- ‖ Ղևտ.
27 հանայիցն: * Եւ ասէ ցնոսա. շաբաթ վս 24. 9.
մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վս շաբա-
28 թու: * Ապա ուրեմն՝ Տէր է որդի մարդոյ՝
և շաբաթու.

Գլ.

## ԳԼ. Գ.

Մատթ. Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն, 1
12. 9. եւ էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսա-
Ղուկ. ցեալ էր: *Եւ սպասէին նմա՝ եթէ բժշ- 2
6. 6. կիցէ զնա ՚ի շաբաթու՝ զի չարախօսես-
ցեն զնմանէ: *Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն 3
գօսացեալ էր. արի՛ անց ՚ի մէջ: *Եւ ասէ 4
ցնոսա. զի՞նչ արժան է ՚ի շաբաթու,
բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի
մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել. եւ
նոքա լռեցին: *Եւ հայեցեալ Յնի զնո- 5
քօք լի ցասմամբ, տրտմեալ վն կուրութե
սրտից նց՝ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո.
եւ նա ձգեաց. եւ ողջացաւ ձեռն նորա:
Գ. Կ *Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարի- 6
Մատթ. սեցիքն Հերովդիանոսօքն հանդերձ, խոր-
12. 14. հուրդ առնէին վն նորա՝ թէ զիա՞րդ կո-
րուսցեն զնա: *Իսկ Յն աշակերտօքն իւ- 7
րովք գնաց ՚ի ծովեզրն. եւ բազում ժողո-
վուրդ ՚ի Գալիլեացւոց երթային զհետ նր.
եւ ՚ի Հրէաստանէ, *եւ յԵրուսաղեմէ, եւ 8
յայնկոյս Յորդանանու, եւ որք ՚ի Տիւրոսէ
եւ ՚ի Սիդոնէ. բազում ժողովուրդ իբրեւ
լսէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա:
*Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի 9
պատրաստական կացցէ նմա վն ամբոխին՝ զի
մի նեղեսցեն զնա: *Քանզի զբազումս 10
բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի
մեր-

մերձեցցին առ նա, որք ունէին ախտս ինչ։
11 *Եւ այսք պղծք յորժամ տեսանէին զնա,
անկանէին առաջի նորա, աղաղակէին և
12 ասէին. *Թէ դու ես Որդին Այ. և նա յոյժ
սաստէր նց, զի մի յայտնի առնիցեն զնա։
13 *‖Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս Գ. Բ.
14 ինքն կամեցաւ, և չոքան առ նա։ *Եւ ա- ‖ Մատթ.
րար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի 10. 1.
15 առաքեսցէ զնոսա քարոզել. *և ունել Ղուկ.
իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ 6. 13.
16 զդևս։ *Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս.
17 *և Յակոբու Զեբեդեայ՝ և Յովհաննու
եղբօրն Յակոբայ, եդ նց անուանս Բա-
18 ներեգէս, որ է՝ որդիք որոտման, *և զԱնդ-
րէաս, և զՓիլիպպոս, և զԲարթուղի-
մէոս, և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹով-
մաս, և զՅակոբոս Ալփեայ, և զԹադէոս,
19 և զՍիմոն կանանացի. *և զՅուդա Իսկա-
րիովտացի, որ և մատնեացն զնա։
20 *Գան 'ի տուն, և գայ միւսանգամ ընդ Գ. Գ.
նոսա ժողովուրդն. մինչ զի և հաց ևս ոչ
21 ժամանել ուտել նոցա։ *Եւ իբրև լուան
որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համա-
22 րէին թէ մոլեգնեալ իցէ։ *Եւ դպիրքն՝
որ յԵրուսաղեմէ իջեալ էին, ասէին ‖ թէ ‖ Մատթ.
բէեղզեբուղ գոյ 'ի դմա, և իշխանաւ դի- 9. 34.
23 ւացն հանէ դա զդևս։ *Եւ կոչեցեալ զնս
առ ինքն, առակօք խօսէր ընդ նս. զիա՞րդ
24 կարէ սատանայ զսատանայ հանել. *Եւ
արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բա-

ժա-

ժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորութի՟ն
այն: *Եւ եթէ տուն յանձն իւր բաժա֊ 25
նեսցի, ոչ կարէ կալ տունն: *Եւ եթէ 26
սատանայ ՚ի վերայ անձին իւրոյ յարեաւ և
բաժանեալ է, ոչ կարէ կալ, այլ վախճա֊
նեալ է: *Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի 27
մտեալ ՚ի տուն նր՟ աւար հարկանել, եթէ
ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա զտուն
Մատթ. նր՟ աւար հարկանիցէ: *Ամէն ասեմ ձեզ, 28
12. 31. զի ամ՟ թողցի որդւոց մարդկան մեղք և
Ղուկ. հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյիցեն. *բայց 29
12. 10. որ հայհոյեսցէ զ՟ոգին ս՟բ, ոչ ունիցի թո֊
Ա. Յովհ. ղութիւն յաւիտեան. այլ պարտական լի֊
5. 16. ցի յաւիտենից մեղաց: *Զի ասէին՝ թէ 30
այս պիղծ գոյ ՚ի նմա:
Գ. Գ. *Գան եղբարքն և մայր նր՟, և արտաքոյ 31
Մատթ. կացեալ՝ յղեցին և կոչէին զնա: *Եւ անդ 32
12. 46. ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև
Ղուկ. ասացին ցնա, ահաւասիկ մայր քո և եղ֊
8. 19. բարք քո՝ կան արտաքոյ, և խնդրեն զքեզ:
*Պատասխանի ետ նց՟ և ասէ. Ո՞վ է իմ 33
մայր, կամ եղբարք: *Հայեցաւ շուրջ 34
զիւրև յաշակերտսն զի նստէին, և ասէ.
ահաւասիկ մայր իմ, և եղբարք իմ: *Զի 35
որ առնիցէ զկամս Այ՟, նա է իմ եղբայր
և քոյր և մայր:

## ԳԼ. Դ.

Գ. Ե. Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովե֊ 1
Մատթ. զերըն. և ժողովեցան զնովաւ ժողովուրդք
13. 1. բա֊

բազում, մինչեւ ՚ի նաւ մտանել նմա, եւ Ղուկաս.
նստել ՚ի ծովուն. եւ ամ ժողովուրդն ըն- 5. 4.
2 ծովեզերբն ցամաքն ունէին: *Եւ ուսու-
ցանէր զնոսա առակօք բազում ինչ. եւ ա-
սէր նոցա ՚ի վարդապետութեան իւրում:
3 *Լուարուք. ահա ել սերմանօղ սերմա-
4 նել: *Եւ եղեւ ՚ի սերմանելն, ոմն անկաւ
առ ճանապարհաւ, եւ եկին թռչունք եւ ե-
5 կեր զնա: *Եւ այլն անկաւ յապառաժի,
ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղվաղակի
բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին.
6 *Եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ, եւ զի
7 ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: *Եւ այլն
անկաւ ՚ի մէջ փշոց. ելին փուշքն եւ հեղ-
8 ձուցին զնա, եւ պտուղ ոչ ետ: *Եւ այլն
անկաւ յերկիր բարւոք. եւ ելեալ աճեցեալ
տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն՝
եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ միոյ հարիւր:
9 *Եւ ասէր. որ ունիցի ականջս լսելոյ՝
լուիցէ:
10 *Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հարցին ցնա, Գ.Օ.
որ զնովաւն էին աշակերտօքն հանդերձ՝
11 զառակսն: *Եւ ասէ ցնս. ձեզ տուեալ
է գիտել զխորհուրդս արքայութեանն Այ,
բայց նոցա որ արտաքինքն են՝ ամ ինչ ա-
12 ռակօք լինի. *‖Զի տեսանելով տեսցեն՝ ‖Եսայ.
եւ մի տեսցեն, եւ լսելով լուիցեն՝ եւ մի 6. 9.
իմասցին. զի մի երբէք դարձցին՝ եւ թողցի Մատթ.
13 նոցա: *Եւ ասէ ցնոսա. ոչ գիտէք զա- 13. 14.
ռակս զայս, եւ զիա՞րդ զամ առակսն գի- Յովհան.
տի- 12. 40.

Գործ. տիցէք: * Որ սերմանէն՝ զբանն սերմանէ: 14
28. 26. * Նոյն նոքա են որ առ ճանապարհաւն, ուր 15
բանն սերմանի. եւ յորժամ լսեն զնա, գայ
սատանայ՝ եւ հանէ զբանն սերմանեալ 'ի
սիրտս նոցա: * Նոյն նոքա են որ յապա- 16
ռաժին սերմանեցան. որք յորժամ լսիցեն
զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին.
* եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ 17
առ ժամանակ մի են. ապա 'ի հասանել
նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղ-
վաղակի գայթագղին: * Իսկ որ 'ի մէջ 18
փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ լսեն
Ա. Տիմ. զբանն լսեն, * Եւ հոգք աշխարհիս եւ պատ- 19
6. 17. րանք մեծութեան մտանեն, եւ հեղձուցանեն
զբանն՝ եւ անպտուղ լինի: * Նոյն նոքա են 20
որ յերկիրն բարիոք սերմանեցան, որք լսեն
զբանն՝ եւ ընդունին, եւ տան պտուղ՝ ընդ
միոյ երեսուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ
միոյ հարիւր:
Գ. Լ. * Նոյն ասէ ցնոսա. Միթէ գայ ճրագ, զի 21
Մատթ. ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք.
5. 15. ոչ ապաքէն 'ի վերայ աշտանակի դնիցի:
Ղուկ. * Զի չէ ինչ 'ի ծածուկ՝ որ թէ ոչ յայտ- 22
8. 16. նեսցի. եւ ոչ եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ
Մատթ. 'ի յայտ գայցէ: * Եթէ որ ունիցի ականջս 23
10. 26. լսելոյ, լուիցէ: * Նոյն ասէ ցնոսա. տեսէք 24
Ղուկ. զինչ լսէքդ, եւ յաւելցի ձեզ որոց լսէքդ:
8. 17. Որով չափով չափէք՝ նովին չափեսցի ձեզ:
Մատթ. * Որ դք ունիցի՝ տացի նմա. եւ որ ոչն 25
13. 12. ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ:
* Նոյ

26 * Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Ա՟յ. ԻԱ
որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յեր-
27 կիր, * և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցե-
րեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն,
28 և նա ոչ գիտէ՝ * թէ երկիրն ինքնին բերէ
զպտուղ. նախ զխոտն՝ և ապա զհասկն, ա-
29 պա զցորեանն ատոք 'ի հասկին: * Եւ
յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի ա-
ռաքէ մանգաղ. զի հասեալ են հունձք:
30 * Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայ-
ութիւնն Ա՟յ, կամ որո՞վ առակաւ առա-
31 կեսցուք զնա: * ‖ Որպէս հատն մանանխոյ՝ ‖ Մատթ.
որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն 13. 31.
32 է քան զա՟մ սերմանիս՝ որ են յերկրի. * Եւ Ղուկ.
յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ 13. 19.
քան զա՟մ բանջար, և արձակէ ոստս մե-
ծամեծս, մինչև բաւական լինել ը՟ հովա-
33 նեաւ նորա թռչնոց երկնից բնակել: * Եւ
այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն,
34 որպէս կարող լինէին լսել. * և առանց ա-
ռակի ոչինչ խօսէր ը՟ ն՟ս, բայց առանձինն
աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն:
35 * Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրև ը՟ ԻԲ
երեկս լինէր. եկա՛յք անցցո՛ւք յայն կողմն:
36 * ‖ Թողուն զժողովուրդն. և առնուն զնա ‖ Մատթ.
նաւաւն հանդերձ, և զայլ ևս նաւսն որ 8. 23.
37 էին ընդ նմա: * Եւ լինէր մրրիկ մեծ հող- Ղուկ.
մոյ, և զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրե- 8. 12.
38 թէ լի իսկ լինել: * Եւ ինքն ննջէր 'ի
խելս նաւին 'ի վերայ բարձի. զարթուցա-
նէին

նէին զնա և ասէին. վարդապետ՝ ոչինչ է
քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ: *Եւ 39
զարթուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն,
ասէ. դադարեա՛ կարկեա՛ց, և դադարեաց
հողմն՝ և եղև խաղաղութիւն մեծ: *Եւ ասէ 40
ցնոսա. ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք,
չև ևս ունիք հաւատս: Եւ երկեան եր-
կիւղ մեծ, և ասէին ցմիմեանս. ո՞ ոք ար-
դեօք իցէ սա, զի և հողմ և ծով հնա-
զանդին սմա:

## ԳԼ. Ե.

|| Մատթ. 8. 28. Ղուկ. 8. 26.

Եւ եկն || յայնկոյս ծովուն յաշխարհն 1
Գերգեսացւոց: *Եւ ընդ ելանելն նորա 'ի 2
նաւէ անտի, պատահեաց նմա այր մի 'ի
գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. *ո- 3
րոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր.
և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա.
*զի բազում անգամ ոտնակապօք և շղ- 4
թայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ զշղ-
թայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և
ոչ ոք կարէր պարտել զնա. *քանզի հա- 5
նապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և
'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր
քարամբք: *Իբրև ետես զՅս 'ի հեռաս- 6
տանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա:
*Աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և ասէ, զի՞ կայ 7
իմ և քո՝ Յս որդի Այ բարձրելոյ. երդմը-
նեցուցանեմ զքեզ յԱծ, մի տանջեր զիս:
*Քան-

8 *Քանզի ասէր ցնա. Ել այսդ պիղծ 'ի մարդ-
9 դոյ այդի: *Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ
անուն է քո. եւ ասէ ցնա. լեգէոն անուն
10 է իմ, քանզի բազումք եմք: *Եւ աղա-
չէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա
11 արտաքս քան զաշխարհն: *Եւ անդ էր
առ լերամբն երամակ մի խոզաց արօտական
12 մեծ: *Աղաչեցին զնա ամ դեւքն եւ ասեն,
առաքեա՛ զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նս:
13 *Եւ հրամայեաց նց. եւ իբրեւ ելին այսքն
պիղծք՝ մտին 'ի խոզսն, եւ դիմեաց երա-
մակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրեւ
երկու հազարք, եւ հեղձնուլին 'ի ծովուն:
14 *Եւ խոզարածքն փախեան, եւ պատմեցին
'ի քաղաքին եւ յագարակս, եւ ելին տեսա-
15 նել զինչ իցէ՝ որ գործեցաւն: *Գան առ
Յս, եւ տեսանեն զդիւահարն զի նստէր
զգեցեալ եւ զգաստացեալ, որ ունէր զլէ-
16 գէոնն, եւ զահի հարան: *Եւ պատմեցին
նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղեւ
17 այսահարին, եւ զինչ վս խոզիցն: *Եւ
սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նց:
18 *Եւ իբրեւ եմուտ նա 'ի նաւն, աղաչէր
19 զնա դիւահարն՝ զի ը նմա իցէ. *եւ Յս ոչ
ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. Երթ 'ի
տուն քո առ ընտանիս քո, եւ պատմեա՛ նց,
որ ինչ միանգամ Տր արար քեզ՝ եւ ողոր-
20 մեցաւ քեզ: *Եւ չոգաւ՝ եւ սկսաւ քա-
րոզել 'ի Դեկապոլին, զոր ինչ արար նմա
Յս. եւ ամենեքին զարմանային:

✥ *Եւ իբրեւ անց Յս միւսանգամ յայն կողմն 21
Դ.Գ. ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, եւ
‖Մատթ. էր առ ծովեզերբն ։ *‖Եւ ահա մի 'ի ժո- 22
9. 18. ղովրդապետացն գայր, որում անուն էր
Ղուկ. Յայրոս. եւ իբրեւ ետես զնա՝ անկաւ առ ոտս
8. 41. նորա. *աղաչէր զնա յոյժ եւ ասէր, թէ 23
դուստր նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ
դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի եւ
կեցցէ ։ *Եւ գնաց ը̃ նմա. երթայր եւ ժո- 24
ղովուրդ բազում զհետ նորա, եւ նեղէին
զնա ։ *Եւ կին մի էր 'ի տեռատեսութե̃ 25
արեան զերկոտասան ամ. *եւ յոյժ վշտա- 26
ցեալ 'ի բազում բժշկաց, եւ ծախեալ զինչս
իւր զա̃մ՝ եւ չէր ինչ օգտեալ, այլ եւս ա-
ռաւել զայրացեալ ։ *Իբրեւ լուաւ զՅսէ՝ 27
եկն 'ի մէջ ամբոխին յետոյ՝ եւ բուռն եհար
զհանդերձէ նորա. *քանզի խորհէր 'ի մտի, 28
թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նորա,
փրկեցայց ։ *Եւ վաղվաղակի ցամաքեցաւ 29
աղբիւր արեան նորա. եւ գիտաց 'ի մարմին
իւր թէ բժշկեցաւ 'ի տանջանացն ։ *Եւ 30
անդէն վաղվաղակի գիտաց Յս յանձն իւր
զզօրութիւն որ ել 'ի նմանէ, դարձաւ յամ-
բոխն եւ ասէ. ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս
իմ ։ *Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսա- 31
նե՞ս զի ամբոխդ նեղէ զքեզ, եւ ասես՝ թէ
ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ ։ *Եւ շուրջ 32
հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն արար ։ *Եւ 33
կինն զարհուրեալ եւ դողացեալ վասն որոյ
գաղտն արար. քանզի գիտէր զինչ եղեւ
նմա,

նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց
34 զամ իրսն ստուգութբ: *Եւ Յս ասէ ցնա.
‖դուստր՝ հաւատքը քո կեցուցին զքեզ. ‖ Ղուկ.
երթ 'ի խաղաղութի, և եղիջիր ողջ 'ի տան- 7. 50.
ջանաց քոց: 8. 48.
35 *Մինչ դեռ նա զայն խօսէր, գան ոմանք Դ.Դ.
'ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ
դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առ-
36 նես զվարդապետդ: *Իսկ Յս իբրև լուաւ
զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն.
37 մի երկնչիր, բայց միայն հաւատա: *Եւ
ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն
զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ զեղ-
38 բայրն Յակոբայ: *Գայ 'ի տուն ժողովր-
դապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լա-
39 լականս, և աղաղակ յոյժ: *Եւ մտեալ
'ի ներքս՝ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք
և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ
40 ննջէ: *Եւ ծաղր առնէին զնա. և նորա
հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ
իւր զհայր մանկանն և զմայր, և զնս որ ընդ
նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն:
41 *Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա.
տալիթա կումի, որ թարգմանի, աղջիկ դու՝
42 քեզ ասեմ արի: *Եւ վաղվաղակի յարեաւ
աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իբրև
երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմա-
43 նալեօք: *Եւ պատուիրէր տայր նց յոյժ, զի
մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա
ուտել:

## ԳԼ. Զ.

ԳԻԵ Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. եւ 1
Մատթ. երթային զհետ նորա աշակերտքն իւր: *Եւ 2
13. 54. եղեւ 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի
Ղուկ. ժողովրդեանն. եւ բազումք իբրեւ լսէին՝
4. 16. զարմանային ընդ վարդապետութիւն նորա.
եւ ասէին. ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ
է իմաստութիւնս որ տուեալ է սմա. զի զօ-
րութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին:
Յովհ. *Ո՞չ սա է մանուկ հիւսանն, եւ որդին 3
6. 42. Մարեմայ, եղբայր Յակոբայ եւ Յովսեայ եւ
Յուդայի եւ Սիմոնի, եւ չիցե՞ն քորք դորա
աստ առ մեզ. եւ գայթագղէին 'ի նա:
Մատթ. *Եւ ասէ ցնոսա. Ոչ է մարգարէ անարգ, 4
13. 57. բայց եթէ 'ի գաւառի իւրում եւ յազգա-
Ղուկ. տոհմի եւ 'ի տան իւրում: *Եւ ոչ կարէր անդ 5
4. 24. եւ ոչ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ
Յովհ. հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր զնոսա: *Եւ 6
4. 44. զարմանայր վասն անհաւատութեան նոցա:
ԳԻԶ Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, եւ ուսուցա-
Մատթ. նէր: *Եւ կոչեաց առ ինքն զերկոտասան- 7
10. 1. սն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս եր-
Ղուկ. կուս. եւ տայր նոցա իշխանութիւն 'ի վերայ
9. 1. այսոց պղծոց: *Եւ պատուիրեաց նոցա՝ զի 8
մի ինչ բարձցեն 'ի ճանապարհ, բայց միայն
գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ
Գործ. 'ի գօտիս: *Այլ ագանել հողաթափս, եւ 9
12. 8. մի զգենուցուք՝ աւելի երկուս պարեգօտս:

*Եւ

10 * Եւ ասէր ցն՟ս. յոր տուն մտանիցէք, ան-
դէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք ան-
11 տի: * Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ ‖ Մատթ.
լուիցեն ձեզ, ‖ յորժամ ելանիցէք անտի՝ 10. 14.
թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայ- Ղուկ.
12 ութի նոցա: * Եւ ելեալ քարոզէին զի ա- 9. 5.
13 պաշխարեսցեն: * Եւ դեւս բազումս հա-
նէին. ‖ եւ օծանէին իւղով զբազում հի- ‖ Յակոբ.
ւանդս՝ եւ բժշկէին զն՟ս: 5. 14.
14 * Եւ ‖ լուաւ արքայ Հերովդէս. քանզի Դ. Ե:
յայտնի եղեւ անուն ն՟ր. եւ ասէր, թէ Յով- ‖ Մատթ.
հաննէս մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց, եւ վ՟ն 14. 1.
15 այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: * Այլք Ղուկ.
ասէին թէ Եղիա է, իսկ այլքն՝ թէ մար- 9. 7.
գարէ է. կամ թէ իբրեւ զմի 'ի մարգարէից:
16 * Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես
զգլուխն հատի զՅովհաննու, սա է նա,
17 յարեաւ 'ի մեռելոց: * Զի ‖ ինքն Հերով- ‖ Ղուկ.
դէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, եւ կա- 3. 19.
պեաց զնա եւ եդ 'ի բանտի վ՟ն Հերովդիայ
կնոջ Փիլիպպոսի եղբօր ն՟ր, զի նա կին ա-
18 ռար զնա: * Քանզի ասէր Յովհաննէս
ցՀերովդէս՝ ‖ թէ ոչ է օրէն քեզ ունել ‖ Ղեւտ.
19 զկին եղբօր քո: * Եւ Հերովդիա ոխացեալ 18. 16.
էր ընդ նմա, եւ կամէր սպանանել զնա, եւ
20 ոչ կարէր: * Զի Հերովդէս երկնչէր 'ի
Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար
եւ ս՟ր. եւ սպասէր նմա. եւ լուեալ 'ի նմանէ՝
բազում ինչ առնէր, եւ քաղցրութ՟բ լսէր
21 նմա: * Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յոր-

ժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր
ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հա-
զարապետաց և մեծամեծաց Գալիլեացւոց.
* և ՚ի մտանել դստերն Հերովդիայ՝ և ՚ի 22
կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմակա-
նացն: * Ասէ թագաւորն ցաղջիկն. խնդ-
րեա յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ:
* Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ 23
զոր ինչ և խնդրեսցես դու յինէն, տաց
քեզ, մինչև ցկէս թագաւորութեան իմոյ:
* Նա ելեալ ասէ ցմայր իւր. զի՞նչ խնդ- 24
րեցից. և նա ասէ, զգլուխն Յովհաննու
մկրտչի: * Եւ մտեալ անդրէն փութանա- 25
կի առ թագաւորն՝ ասէ. կամիմ զի այժմ
տացես ինձ վաղվաղակի ՚ի վր̃ սկտեղ զգլ-
լուխն Յովհաննու մկրտչի: * Եւ տրտմեցաւ 26
յոյժ թագաւորն, այլ վս̃ երդմանցն և կոչ-
նականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա.
* և առաքեաց վաղվաղակի թագաւորն դա- 27
հիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա.
և չոգաւ գլխատեաց զնա ՚ի բանտին. * և 28
եբեր զգլուխն նորա սկտեղբ՝ և ետ ցաղ-
ջիկն. և աղջիկն տարաւ ետ մօր իւրում:
* Իբրև լուան աշակերտքն նր̃, եկին բար- 29
ՆԿ ձին զմարմինն՝ և եդին ՚ի գերեզմանի:
Ա Մատթ. * Ժողովեցան առաքեալքն առ Յս̃, և 30
14. 13. պատմեցին նմա զա̃մ ինչ զոր արարին և
Ղուկ. զոր ուսուցին: * Եւ ասէ ցնոսա Յս̃. եկայք 31
9. 10. դուք առանձինն յանապատ տեղի, և հան-
Յովհ. գիջիք սակաւ մի. զի էին բազումք որ եր-
6. 1.

թային և գային, և հաց անգամ չժամա-
32 նէին ուտել: *Եւ գնացին նաւու յանա-
33 պատ տեղի առանձինն: *Եւ տեսին զնս̃
զի երթային, և զգացին բազումք. և հետի
յամ քաղաքաց խուռն ընթանային անդր,
34 և մերձենային առ նոսա: *‖Եւ ելեալ ե- ‖Մատթ.
տես ամբոխ բազում, և գթացաւ 'ի նոսա, 9. 36.
զի էին իբրև ոչխարք՝ որոց ոչ իցէ հովիւ.
35 և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: *Եւ
իբրև բազում ժամ եղև, մատուցեալ ա-
շակերտքն ասէին. տեղիս անապատ է, մինչ
36 դեռ աւուր կայ, *արձակեա ‖զժողովուրդդ, ‖Ղուկ.
զի երթեալ շուրջ յագարակս և 'ի գեօղս՝ 9. 12.
գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ
37 ուտել ինչ ոչ ունին: *Նա պատասխանի
ետ և ասէ ցնոսա. դուք տուք դոցա ուտել.
ասեն ցնա՝ երթիցուք գնեսցուք երկերիւր
դահեկանի հաց, և տացուք դոցա ուտել:
38 *Ասէ ցնս̃. քանի՞ նկանակ ունիք՝ երթայք
տեսէք, իբրև գիտացին, ասեն ցնա՝ հինգ՝ և
39 երկուս ձկունս: *‖Եւ հրամայեաց նց̃ բազ- ‖Յովհ.
մել երախանս երախանս 'ի վր̃ դալար խոտոյ: 6. 10.
40 *Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր
41 և ուր յիսուն. *Եւ առեալ զհինգ նկա-
նակն և զերկուս ձկունսն, հայեցաւ յեր-
կինս, օրհնեաց՝ մանրեաց զնկանակսն՝ և
ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա, և
զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն:
42 *Կերան և յագեցան, *և բարձին զնշ-
43 խարսն երկոտասան սակառի լի, և 'ի ձը-

կանց անտի։ *Եւ էին որ կերանն՝ իբրեւ 44
արք հինգ հազար։
ՆԲ *Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն 45
մտանել 'ի նաւ, եւ յառաջագոյն քան զնա
երթալ յայնկոյս 'ի Բեթսայիդա, մինչ ինքն
զժողովուրդսն արձակիցէ։ *Եւ հրաժա- 46
րեալ 'ի նոցանէ՝ ել 'ի լեառն կալ յաղօթս։
*Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն 'ի մէջ 47
‖Մատթ. ծովուն, եւ ինքն 'ի ցամաքի։ *‖Եւ ետես 48
14. 25. զնոսա հողմակոծեալս 'ի վարելն, զի էր
հողմն ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու
գիշերոյն գայ առ նոսա գնալով 'ի վերայ
ծովուն. եւ կամէր զանց առնել առ նոքօք։
*Նոքա իբրեւ տեսին զի գնայր 'ի վերայ 49
ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ լի-
նիցի, եւ զաղաղակ բարձին։ *Քանզի ա- 50
մենեքեան տեսին զնա՝ եւ խռովեցան. եւ
նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ը̄ նոսա եւ
ասէ. քաջալերեցարո՛ւք, ես եմ՝ մի՛ երկն-
չիք։ *Եւ ել 'ի նաւն առ նս̄, եւ դադա- 51
րեաց հողմն։ Եւ առաւել եւս յիմարեալ
էին 'ի միտս իւրեանց, եւ զարմանային յոյժ.
✠ *Քանզի եւ 'ի վս̄ հացին ոչ իմացան, զի 52
‖Մատթ. էր սիրտ նոցա թմբրեալ։ *Եւ ‖իբրեւ ան- 53
14. 34. ցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ։
*Եւ իբրեւ ելին 'ի նաւէ անտի՝ իսկ եւ իսկ 54
ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. *Եւ 55
ընթացեալ շուրջ անդր ընդ ամ̄ գաւառն,
սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէ-
ին՝ թէ անդ իցէ։ *Եւ ուր եւ մտանէր 'ի 56
դեօղս

գեօղս կամ 'ի քաղաքս կամ յագարակս,
'ի հրապարակս դնէին զախտաժէտս, և ա-
ղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղանցս հանդեր-
ձից նորա մերձենայցեն. և որ միանգամ
մերձեցանն՝ փրկեցան:

## ԳԼ. Է.

1 Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և Եգ
ոմանք 'ի դպրացն՝ որ եկեալ էին յԵրու- Մատթ.
2 սաղեմէ: *Եւ տեսեալ զոմանս յաշակեր- 15. 2.
տացն նորա, զի խառնակ ձեռօք, այս ինքն
է՝ անլուա ուտէին հաց, բամբասեցին:
3 *Զի փարիսեցիքն և ամ հրէայք՝ եթէ ոչ
բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն.
4 քանզի ունին զաւանդութիւն ծերոցն. *և 'ի
հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտի-
ցին, ոչ ուտեն. և այլ ինչ բազում է՝
զոր ընկալան ունել, մկրտութիւնս բաժակաց
5 և ստոմանաց և պղնձեաց և մահճաց: *Ա-
պա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք՝
թէ ընդէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըստ
աւանդութեան ծերոցն. այլ խառնակ ձեռօք
6 հաց ուտեն: *Նա պատասխանի ետ և ասէ
ցնոսա՝ թէ բարւոք մարգարէացաւ Եսայի
վա ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. Ժո- Եսայ.
ղովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և 29. 13.
սիրտք նոցա հեռացեալ 'ի բացեայ են յի-
7 նէն: *Զուր պաշտեն զիս՝ ուսուցանեն
վարդապետութիւնս զմարդկան պատուիրանս:

*Թո-

* Թողեալ զպատուիրանն Այ, ունիք ըզ- 8
մարդկան աւանդութիւն. մկրտութիւս ստամա-
նաց և բաժակաց, և այլոց նմանեաց սոցին
առնէք բազում: * Եւ ասէ ցնոսա. բար- 9
ւոք խոտէք զպատուիրանն Այ, զի զձեր ա-
ւանդութիւն հաստատիցէք: * Զի Մովսէս 10
Ելից. ասէ. պատուեա զհայր քո, և զմայր, և
20. 12. որ չարախօսեսցէ զհօրէ, կամ զմօրէ, մա-
Ելից. հու վախճանեսցի: * Եւ դուք ասէք. եթէ 11
21. 17. ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝ կորբան, որ
Ղեւտ. է պատարագ, զոր յինէն օգտեսցիս. * և 12
20. 9. ոչ ևս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն,
Առակ. կամ մօր: * Եւ անարգէք զբանն Այ ձե- 13
20. 20. րով աւանդութեամբն, զոր աւանդեցիք. և
բազում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք:
Մատթ. * Եւ կոչեալ առ ինքն զամ ժողովուրդն, 14
15. 10. ասէ ցնոսա. լուարուք ինձ ամենեքեան՝ և
'ի միտ առէք: * Ոչ ինչ արտաքուստ 'ի 15
մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա,
այլ որ ելանէ 'ի նմանէ՝ այն է որ պղծէ
զմարդն: * Որ ունիցի ականջս լսելոյ՝ 16
լուիցէ:

ՆԴ * Եւ իբրև եմուտ 'ի տուն յամբոխէ ան- 17
տի, հարցանէին զնա աշակերտքն վս առա-
կին: * Եւ ասէ ցնոսա. այդպէս և դուք 18
անմիտ էք, ո՞չ իմանայք՝ եթէ ամ որ ար-
տաքուստ 'ի ներքս մտանէ 'ի մարդ, ոչ կա-
րէ զնա պղծել. * զի ոչ եթէ 'ի սիրտ նր 19
մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ.
և սրբէ զամ կերակուրսն: * Եւ ասէր, 20

թէ

թէ որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ
21 զմարդ: *‖Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդ- ‖Ծննդ.
կան խորհուրդք չարութեան ելանեն. շնու- 6. 5.
22 թիւնք, պոռնկութիւնք, *գողութիւնք, սպա- 8. 21.
նութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգու- Մատթ.
թիւնք, գիջութիւնք, չարակնութիւն, հայհոյ- 15. 19.
ութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն:
23 *Այս ամ չարիք 'ի ներքուստ ելանեն, և
պղծեն զմարդ:
24 *‖Եւ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս
Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ 'ի տուն՝ ոչ Ն Ե
ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծած- ‖Մատթ.
25 կել: *Զի լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր 16. 21.
իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ
26 առաջի նր: *Եւ կինն էր հեթանոս՝ փիւ-
նիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի
27 զդեւն հանցէ 'ի դստերէ նր: *Եւ Յս ասէ
ցնա. թո՛յլ տուր՝ նախ յագեսցին մանկունք.
զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց
28 և արկանել շանց: *Նա պատասխանի ետ
և ասէ. Տէ՛ր՝ և շունք 'ի փշրանաց սե-
29 ղանոյ մանկանցն կերակրին: *Եւ ասէ
ցնա. վն այդր բանի երթ, ել դեւն 'ի դըս-
30 տերէ քումմէ: *Գնաց 'ի տուն իւր, և
եգիտ ելեալ զդեւն. և զդուստրն, զի ան-
31 կեալ դնէր 'ի մահճս: *Եւ ելեալ միւս-
անգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի,
և եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահ-
32 մանացն 'ի Դեկապօլիս: *‖Եւ բերին ա- ‖Մատթ.
ռաջի նորա խուլ մի և համր. և աղաչէին՝ 9. 32.
զի

զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա : *Եւ առեալ 33
զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմա_
տունս իւր ը̄ ականջս նր՝ և եթուք անդր.
և կալաւ զլեզուէ նր. *Հայեցաւ յերկինս՝ 34
յոգւոց եհան՝ և ասէ. եփփաթայ՝ որ է
բացիր : *Եւ նոյնժամայն բացան լսելիք 35
նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և
խօսէր ուղիղ : *Եւ պատուիրեաց նոցա՝ 36
զի մի ումեք ասիցեն. և որչափ նա պատ_
ուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարո_
զէին. *և ևս քան զևս զարմանային և ա_ 37
Ծննդ. 1. 31. սէին. ‖ զամենայն ինչ բարւոք գործեաց սա,
զի խլից լսել տայ՝ և համերից խօսել :

## ԳԼ. Ը:

Ե. Օ. Յաւուրսն ‖ յայնոսիկ դարձեալ ժողովուրդ 1
‖ Մատթ. 15. 32. բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել. կո_
չեաց զաշակերտսն իւր՝ և ասէ ցնոսա:
*Գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ. զի 2
արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, և
ոչ ունին զինչ ուտիցեն: *Եւ եթէ ար_ 3
ձակեմ զդոսա նօթիս 'ի տունս իւրեանց՝
նքթիցեն 'ի ճանապարհի. զի ոմանք 'ի դո_
ցանէ 'ի հեռաստանէ եկեալ են: *Պ̃խի ե_ 4
տուն նմա աշակերտքն նորա. ուստի՞ կարես
յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի
աստ: *Եւ հարցանէր զնոսա. քանի՞ ն_ 5
կանակ հաց ունիք. և նոքա ասեն՝ եօթն:
*Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի 6
վերայ երկրի. և առեալ զեօթն նկանակն՝
զո_

գոհացաւ՝ եբեկ, և տայր աշակերտացն զի
արկցեն. և արկին առաջի ժողովրդեանն:
7 *Եւ ձկունս սակաւ ունէին. և զայն ևս
8 օրհնեաց, և հրամայեաց արկանել: *Կե-
րան և յագեցան, և բարձին զնշխարս կո-
9 տորոցն եօթն զամբիղ: *Եւ էին որ կե-
րանն՝ իբրև չորք հազարք. և արձակեաց
զնոսա:
10 *Եւ նոյն ժամայն մտեալ 'ի նաւ համդերձ Ե Ի:
աշակերտօքն՝ եկն 'ի կողմանս Դաղմանու-
11 նեայ: * ‖ Ելին փարիսեցիքն՝ և սկսան վի- ‖ Մատթ.
ճել ընդ նմա, և խնդրէին 'ի նմանէ նշան 16. 1.
12 յերկնից՝ փորձելով զնա: *Եւ զայրացաւ Ղուկ.
յոգի իւր՝ և ասէ. զի՞ է՝ զի ազգս այս 12. 54.
նշան խնդրէ. ամէն ասեմ՝ ձեզ, թէ տացի
13 նշան ազգիս այսմիկ: *Եթող զնս. դար-
ձեալ եմուտ 'ի նաւ՝ և գնաց յայնկոյս:
14 * ‖ Եւ մոռացան հաց բառնալ. բայց միայն ‖ Մատթ.
մի նկանակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին: 16. 5.
15 *Եւ պատուիրէր նոցա և ասէր. զգոյշ ե-
ղերուք 'ի խմորոյ անտի փարիսեցւոց՝ և 'ի
16 խմորոյ հերովդիանոսաց: *Եւ խորհէին
ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ
17 ունիմք: *Գիտաց Յս՝ և ասէ ցնս. զի՞ խոր-
հիք 'ի սիրտս ձեր թերահաւատք՝ թէ հաց
ոչ ունիք. տակաւին ո՞չ իմանայք և ո՞չ յիշէք.
18 ապշութի՞ ունի զսիրտս ձեր. *աչք գոն՝ և
ոչ տեսանէք, ականջք են՝ և ոչ լսէք, և ոչ ‖ Մար.
19 իմանայք տակաւին, ‖ և ոչ յիշէք: *Յոր- 6. 41.
ժամ զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և Յովհ.
քա- 6. 11.

քանի՞ սակառի լի բարձիք զկոտորոցն. և
ասեն, երկոտասան: *Եւ յորժամ՝ զեօթն 20
նկանակն ՚ի չորս հազարսն, քանի՞ զամբիղ
լի բարձիք զկոտորոցն. և նք ասեն, եօթն:
*Եւ ասէ ցնս. իսկ զիա՞րդ ոչ իմանայք: 21
*Գան ՚ի Բեթսայիդա. և ածեն առաջի նր 22
կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի ՚ի
նա: *Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան 23
արտաքոյ շինին, եթուք յաչս նր, և ձեռն
եդ ՚ի վր նորա. և հարցանէր ցնա՝ թէ տե-
սանիցէ ինչ: *Հայեցաւ՝ և ասէր. տեսա- 24
նեմ՝ զմարդիկս՝ զի շրջին իբրև զծառս:
*Դարձեալ եդ ձեռս ՚ի վր աչաց նորա՝ 25
երաց, և տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր
համարձակ զամ: *Արձակեաց զնա ՚ի տուն 26
իւր՝ և ասէ. ՚ի շէնդ մի մտանիցես, այլ
երթ ՚ի տուն քո. և յորժամ՝ ՚ի շէնն
մտանիցես՝ մի ումեք ասիցես ՚ի շինին:

Օ կ
*Եւ ել Յս աշակերտօքն հանդերձ ՚ի շէնս 27
Մատթ. կեսարեայ փիլիպպեայ. և ՚ի ճանապարհին
16. 13. հարցանէր ցաշակերտսն և ասէր. Զո՞ ուս-
Ղուկ. տեք ասեն զինէն մարդիկս՝ թէ իցեմ: *Նք 28
9. 18. ետուն պնի՝ և ասեն. զՅովհաննէս մկրտիչ,
և այլք զԵղիա, և այլք՝ զմի ոք ՚ի մար-
գարէից անտի: *Նա՝ ասէ ցնս. իսկ դուք զո՞ 29
ուստեք ասէք զինէն թէ իցեմ: Պատաս-
խանի ետ Պետրոս, և ասէ ցնա. դու ես
Քն: *Եւ սաստեաց ՚ի նոսա՝ զի մի ու- 30
Մտթ. մեք ասիցեն զնմանէ: *Եւ սկսաւ ուսու- 31
9. 30. ցանել զնս, թէ պարտ է որդւոյ մարդոյ
բա-

բազում չարչարանս ընդունել, և անար-
գել յերիցանց և ՚ի քահանայապետից և ՚ի
դպրաց, և մեռանել. և յերիր աւուր յառ-
32 նել: *Եւ համարձակ զբանն խօսէր: Եւ
առեալ զնա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաս-
33 տել նմա: *Եւ նա դարձաւ ետես զաշա-
կերտսն, սաստեաց Պետրոսի և ասէ. երթ
յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս դու
34 զաստուծոյսն՝ այլ զմարդկանն: *Եւ կոչե-
ցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն
համդերձ՝ ասէ ցնոսա. ‖ Եթէ որ կամի գալ ‖ Մատթ.
զկնի իմ՝ ուրասցի զանձն իւր, և բարձցէ 16. 24.
35 զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ: *‖ Զի որ Ղուկ.
կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուս- 9. 23.
ցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վն ա- ‖ Ղուկ.
36 ւետարանին, ապրեցուսցէ զնա: *Զի՞նչ 17. 33.
օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհս ա՟մ շա- Յովհ.
37 հեսցի, և զանձն իւր տուժեսցէ: *Բան- 12. 25.
զի զինչ տացէ մարդ՝ փոխանակ անձին
38 իւրոյ: *‖ Զի որ ոք ամօթ համարեսցի զիս ‖ Մատթ.
և զբանս իմ ՚ի շնացող և ՚ի մեղաւոր ազ- 10. 33.
գիս այսմիկ, և որդի մարդոյ յամօթ ա- Ղուկ.
րասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք ՟օր 9. 26.
39 իւրոյ և հրեշտակաց սրբոց: *Եւ ասէ ցնս. 12. 9.
‖ ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք ՚ի սոցա- ‖ Մատթ.
նէ որ աստ կան, որք մի ճաշակեսցեն զմահ՝ 16. 28.
մինչև տեսցեն զարքայութիւն Այ եկեալ Ղուկ.
զօրութեամբ: 9. 27.

## ԳԼ. Թ.

Մատթ. Եւ յետ վեց աւուր առնու ը̄ իւր Յն 1
17. 1. զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս,
Ղուկ. եւ հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առան֊
9. 28. ձինն. եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա։
*Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ 2
յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն
այնպէս սպիտակացուցանել։ *Եւ երեւեցաւ 3
նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին
ը̄ Յսի։ *Պատասխանի ետ Պետրոս եւ 4
ասէ ցՅս. Ռաբբի՛ բարւոք է մեզ աստ
լինել. եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի
քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի։ *Զի ոչ 5
գիտէր զի՞նչ խօսէր, զի զարհուր֊
եալ էին։ *Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի 6
վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյ անտի՝ եւ
ասէ. դա է որդի իմ սիրելի, դմա լուա֊
րուք։ *Եւ յանկարծակի հայեցեալ այսր 7
անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն
Մատթ. զՅս ը̄ իւրեանս։ *Եւ մինչդեռ իջանէին 8
17. 9. 'ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի
ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց յոր֊
ժամ որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ։
*Եւ նք զբանն 'ի միտ ունէին, եւ խնդ֊ 9
րէին ը̄ միմեանս՝ թէ զինչ իցէ 'ի մեռելոցն
Մաղաք. յառնել։ *Հարցին զնա եւ ասեն. Զի՞նչ 10
4. 5. է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի
պարտ է գալ։ *Նա պատասխանի ետ նց 11
եւ

և ասէ. Եղիա նախ եկեալ յարդարեսցէ
զամ. ‖ Իսկ զիա՞րդ գրեալ է զորդւոյ մար- ‖ Եսայ.
դոյ, զի բազում ինչ չարչարեսցի և ան- 53. 3.
12 գոսնեսցի: *‖ Այլ ես ասեմ ձեզ, եթէ ‖ Մատթ.
Եղիա եկն, և արարին ընդ նմա զինչ և կա- 17. 12.
մեցան. որպէս և գրեալ է վասն նորա:
13 *Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամ- ✠ Օր.
բոխ շուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին
14 ընդ նոսա: *Եւ վաղվաղակի ամ ժողո-
վուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան, և ընդ
15 առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: *Եւ
եհարց ցնս՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա:
16 *‖ Պխնի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն և ասէ. ‖ Ղուկ.
վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր 9. 38.
17 ունի այս համր. *Եւ ուր հասանէ՝ զարկու-
ցանէ զնա. և փրփրէ՝ և կրճտէ զատամունս
իւր՝ և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո
զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա:
18 *Պխնի ետ նոցա և ասէ. ո՜վ ազգ անհաւա-
տամ՝ մինչև յե՞րբ իցեմ առ ձեզ. մինչև
ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս:
19 *Եւ ածին զնա առ նա. իբրև ետես զնա
այսն, վաղվաղակի շարժլեաց զնա, և ան-
կեալ յերկիր թաւալէր և փրփրեայր:
20 *Եհարց ցհայր նր և ասէ. քանի՞ ժմկք են՝
յորմէհետէ այդ եղև դմա: Եւ նա ասէ. ՚ի
21 մանկութենէ, *բազում անգամ ՚ի հուր
արկանէ զդա և ՚ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝
եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ Տէր՝
22 գթացեալ ՚ի վր մեր: *Եւ Յս ասէ ցնա.

ասացեր՝ թէ կարող ես. ամենայն ինչ հնա-
րաւոր է այնմ, որ հաւատայն: *Եւ վաղ- 23
վաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ.
հաւատամ, օգնեա անհաւատութեան իմում:
*Իբրև ետես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն 24
'ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ.
համր և խուլ այս՝ ես տամ քեզ հրաման,
ել 'ի դմանէ, և այլ ևս մի մտանիցես 'ի
դա: *Եւ աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց 25
զնա, և ել. և եղև պատանեակն իբրև զմե-
ռեալ, մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ: 26
*Եւ Յիսուս կալեալ զձեռանէ նորա՝ յարոյց զնա,
և կանգնեցաւ: *Եւ իբրև եմուտ նա 'ի 27
տուն, աշակերտքն առանձինն հարցին զնա.
մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: *Եւ 28
ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ
ոչ պահովք և աղօթիւք:

ՂԳ *Եւ անտի ելեալ անցանէին առ Գալի- 29
լեաւ. և ոչ կամէր եթէ ոք գիտաս-
‖Մատթ. ցէ: *‖Զի ուսուցանէր զաշակերտսն 30
17. 21. իւր՝ և ասէր ցնոսա, թէ որդի մարդոյ մատ-
Ղուկ. նելոց է 'ի ձեռս մարդկան, և սպանցեն
9. 22. զնա. և իբրև սպանցի՝ յերիր աւուր յա- 31
րիցէ: *Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և
երկնչէին հարցանել զնա: *Եկին 'ի Կա- 32
փառնաում. և իբրև եմուտ 'ի տուն, հար-
ցանէր զնոսա. զի՞նչ վիճէիք զճանապար- 33
‖Մատթ. հայն ընդ միմեանս: *Եւ նոքա լուռ լի-
18. 1. նէին. քանզի ընդ միմեանս վիճէին 'ի ճա-
Ղուկ. նապարհին ‖ թէ ո՞վ մեծ իցէ: *Եւ իբրև 34
9. 46. նստաւ՝

նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն և ասէ ցն͞ս.
եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամե-
նեցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշտօնեայ։
35 *Եւ առեալ մանուկ մի կացոյց ՚ի մէջ ն͞ց.
և ընկալեալ զնա ՚ի գիրկս իւր, ասէ ցն͞ս։
36 *Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալ-
ցի յանուն իմ, զիս ընդունի. և որ զիս
ընդունիցի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն որ
37 առաքեացն զիս։ *‖Պատասխանի ետ նմա ‖Ղուկ.
Յովհաննէս և ասէ. վարդապետ՝ տեսաք 9. 49.
զոմն, զի յանուն քո դևս հանէր՝ և զմեր
38 կնի ոչ շրջէր, և արգելաք զնա։ *Եւ նա
ասէ. մի արգելուք զնա. ‖զի ոչոք է՝ որ ‖1. Կորնթ.
առնէ զօրութիւն յանուն իմ, և կարիցէ 12. 3.
39 հայհոյել զիս։ *Զի որ ոչն է ընդ մեզ
40 հակառակ, ՚ի մեր կոյս է։ *‖Եւ որ ոք ար- ‖Մատթ.
բուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանուանս յայս, 10. 42.
թէ դուք Ք͞ի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի
41 կորուսցէ զվարձս իւր։ *‖Եւ որ ոք գայ- ‖Մատթ.
թագղեցուսցէ զմի ՚ի փոքրկանցս՝ որ հաւա- 18. 6.
տան յիս, լաւ էր նմա առաւել՝ եթէ ար- Ղուկ.
կեալ էր զ պարանոց նորա երկան իշոյ, և 17. 1.
42 ընկեցեալ ՚ի ծով։ *Եւ‖ եթէ գայթագ- ‖Մատթ.
ղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝ ընկեա ՚ի 5. 30.
քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ՚ի 18. 8.
կեանսն յաւիտենից, քան երկուս ձեռս
ունել՝ և երթալ ՚ի գեհեն ՚ի հուրն անշէջ։
43 *‖Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ ‖Եսայ.
44 շիջանի։ *Եւ եթէ ոտն քո գայթագղեցուս- 66. 24.
ցէ զքեզ, հատ՝ ընկեա զնա ՚ի քէն. լաւ

իցէ քեզ կաղ մտանել 'ի կեանսն յաւի-
տենից, քան երկուս ոտս ունել՝ և անկա-
նել 'ի գեհեն 'ի հուրն անշէջ : * Ուր որդն 45
նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի:
* Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ զքեզ, 46
հան զնա 'ի բաց. լաւ իցէ քեզ միով ա-
կամբ մտանել յարքայութիւն Այ, քան եր-
կուս աչս ունել՝ և անկանել 'ի գեհեն:
* Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ 47
‖ Ղեւտ. շիջանի: * ‖ Զի ամ ինչ հրով յաղեսցի, և 48
2. 13. ամ ողջակէզ աղիւ յաղեսցի: * ‖ Բարւոք 49
‖ Մատթ. է աղ. և եթէ աղն անհամեսցի, իւ հա-
5. 13. մեմեսցի. արդ՝ դուք կալարուք յանձինս ձեր
Ղուկ. զաղն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս:
14. 34.

## ԳԼ. Ժ.

ԵՒ ‖ անտի յարուցեալ գայ 'ի սահմանս 1
‖ Մատթ. Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և
19. 1. երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ
նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ ու-
սուցանէր զնա: * Իսկ փարիսեցիքն մատու- 2
ցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին,
եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել:
* Նա պատասխանի ետ նոցա և ասէ. զի՞նչ 3
պատուիրեաց ձեզ Մովսէս: * Եւ նք ասեն. 4
‖ 2. Օրէն. ‖ Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել,
24. 1. և արձակել: * Պատասխանի ետ Յս՝ և ասէ 5
ցնս. վն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ
զպատուիրանն զայն: * Այլ 'ի սկզբանէ ա- 6

րա-

արարածոց, ‖արու և էգ արար զնս Ած, և ‖Ծննդ.
7 ասէ: *‖Վասն այսորիկ թողցէ այր զհայր 1. 27.
իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: ‖Ծննդ.
8 *Եւ եղիցին երկոքեան 'ի մարմին մի. և 2. 24.
այնուհետև ոչ են երկու՝ այլ մարմին մի: Մատթ.
9 *Արդ՝ զոր Ած զուգեաց, մարդ մի մեկ- 19. 5.
10 նեսցէ: *Եւ 'ի տան դարձեալ աշակերտքն 1. Կորն.
11 զնոյն հարցին ցնա. *Եւ ասէ ցնս. եթէ 7. 10.
այր արձակեսցէ զկին իւր՝ և առնասցէ այլ,
12 շնայ: *Եւ կին եթէ ելցէ յառնէ՝ իւրմէ՝
և եղիցի առն այլում, շնայ:
13 *Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ՕԵ
ձեռն դիցէ նց. իսկ աշակերտքն սաստէին
14 այնոցիկ՝ որ մատուցանէինն: *Իբրև ետես
Յս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ.
թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի
արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է ար-
15 քայութիւն Այ: *Ամէն ասեմ ձեզ. որ ոչ
ընկալցի զարքայութիւն Այ իբրև զմանուկ՝ ոչ
16 մտցէ 'ի նա: *Եւ առեալ զնոսա 'ի գիրկս
17 ձեռն եդ 'ի վր՝ և օրհնեաց զնս: *Եւ ընդ
ելանելն նր անտի 'ի ճանապարհ, ահաւա-
սիկ ոմն մեծատուն ընթացեալ 'ի ծունր ի-
ջանէր, հարցանէր ցնա՝ և ասէր. ‖Վարդա- ‖Մատթ.
պետ բարի՝ զի՞նչ արարից՝ զի զկեանսն յա- 19. 16.
18 ւիտենականս ժառանգեցից: *Եւ Յս ասէ Ղուկ.
ցնա. զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի 18. 18.
19 բայց մի Ած: ‖*Զպատուիրանս գիտես. մի ‖Ելից.
շնար, մի սպանաներ, մի գողանար, մի սուտ 20. 13.
վկայեր. պատուեա զհայր քո և զմայր,

* Նա պատասխանի ետ և ասէ ցնա. վար- 20
դապետ՝ զայդ ամ արարի 'ի մանկութենէ իմ-
մէ, արդ՝ զի՞նչ ևս պակաս իցեմ: * Եւ 21
Յս հայեցեալ 'ի նա՝ սիրեաց զնա, և ասէ
ցնա. մի ինչ պակաս է 'ի քէն. եթէ կա-
միս կատարեալ լինել, երթ զոր ինչ ունիս
վաճառեա՛ և տուր աղքատաց, և ունիցիս
գանձս յերկինս, և առ զխաչն՝ և եկ զկնի
իմ: * Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց 22
տրտում. զի ունէր ինչս բազումս: * Եւ 23
հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յս, ասէ ցա-
շակերտսն. զիա՞րդ դժուարին է՝ որ զինչսդ
ունին, մտանել յարքայութիւն Այ: * Եւ 24
աշակերտքն զարմացեալ էին 'ի վերայ բա-
նիցն նր: Իսկ Յս դարձեալ պատասխանի
ետ նց և ասէ. որդեակք՝ ո՞րչափ դժուա-
րին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքայ-
ութին Այ: * Դիւրին է մալխոյ ընդ ծակ 25
ասղան անցանել՝ քան մեծատան յարքայ-
ութիւն Այ մտանել: * Եւ նոքա առաւել 26
ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. իսկ
ո՞ կարասցէ ապրել: * Հայեցեալ ընդ նոսա 27
Յս՝ ասէ. առ 'ի մարդկանէ այդ անհնարին
է, այլ ոչ առ 'ի յԱյ:
Օ. Օ. * ‖ Սկսաւ ասել ցնա Պետրոս. ահաւասիկ 28
‖ Մարկ. մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո:
19. 27. * Պատասխանի ետ Յս և ասէ. ամէն ա- 29
Ղուկ. սեմ ձեզ՝ ոչ ոք է որ եթող զտուն կամ
18. 28. զեղբարս կամ զքորս՝ կամ զհայր կամ զմայր
կամ զորդիս՝ կամ զագարակս՝ վն իմ կամ

վն

30 վն աւետարանին. * եթէ ոչ առնուցու հա-
րիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս
և եղբարս և քորս և մարս և որդիս՝ և
ագարակս հալածանօք հանդերձ, և յաշ-
խարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենա-
31 կանս: * ‖ Զի բազումք եղիցին առաջինք ‖ Մատթ.
32 յետինք՝ և յետինք առաջինք: * Եւ էին 19. 30.
'ի ճանապարհի մինչդեռ ելանէին յԵրու- Ղուկ.
սաղէմ. և երթայր Յս առաջի քան զնս, 13. 30.
և զարմացեալ էին որ զհետն երթային՝ և
երկնչէին:
‖ Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն Զ Ն
առանձինն, սկսաւ ասել նց զինչ անցք ան- ‖ Մատթ.
33 ցանելոց իցեն ընդ նա: * Թէ ահաւասիկ 20. 17.
ելանեմք յԵրուսաղէմ. և որդի մարդոյ Ղուկ.
մատնեսցի քահանայապետիցն և դպրաց. և 18. 31.
դատեսցեն զնա 'ի մահ, և մատնեսցեն զնա
34 հեթանոսաց. * և կատակեսցեն զնովաւ, և
հարկանիցեն զնա, և թքանիցեն 'ի նա, և
35 սպանցեն. և յետ երից աւուր յարիցէ: * ‖ Եւ ‖ Մատթ.
երթային առ նովաւ Յակովբոս և Յովհան- 20. 20.
նէս՝ որդիքն Զեբեդեայ. և ասեն ցնա.
վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրես-
36 ցուք 'ի քէն՝ արասցես մեզ: * Եւ նա ասէ
ցնոսա. զինչ կամիք յինէն՝ զի արարից
37 ձեզ: * Եւ նոքա ասեն ցնա. տուր մեզ՝
զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յա-
38 հեկէ՝ 'ի փառսն քում: * Պատասխանի ետ
Յս և ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խնդ-
րէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես

ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտիլ՝
զոր ես մկրտելոցն եմ։ *Եւ նոքա ասեն 39
ցնա, կարեմք։ Եւ Յս ասէ ցնոսա. զբա-
ժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, եւ
զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտի-
ջիք. *այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ եւ 40
ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատ-
րաստեալ իցէ։ *Եւ լուեալ զայն տա- 41
սանցն, սկսան բարկանալ Յակոբայ եւ Յով-
հաննու։ *Եւ Յս կոչեաց զնս առ ինքն, եւ 42
‖ Ղուկ. ասէ ցնս ‖ գիտէք՝ զի որ յաճախեալ իշխանքն
22. 25. են հեթանոսաց, տիրեն նց. եւ մեծամեծքն նց,
իշխեն նոցա։ *Ոչ նոյնպէս իցէ եւ ՚ի ձե- 43
րում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ
լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. *եւ որ կա- 44
միցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենե-
ցուն ծառայ։ *Վասնզի եւ որդի մարդոյ ոչ 45
եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, եւ տալ
զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։
✠ *‖Եւ գան յԵրիքով. եւ ՚ի ելանելն նր 46
Ի Ա յԵրիքովէ աշակերտօքն՝ եւ բազում ժողո-
‖ Մատթ. վրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նըս-
20. 29. տէր մուրացիկ յանցս ճանապարհի։ *Իբ- 47
Ղուկ. րեւ լուաւ՝ թէ Յս Նազովրեցի է, սկսաւ
18. 35. աղաղակել եւ ասել. որդի Դաւթի Յս՝
ողորմեա՛ց ինձ։ *Եւ սաստէին նմա բա- 48
զումք՝ զի լռեսցէ. եւ նա առաւել եւս ա-
ղաղակէր. որդի՛ Դաւթի ողորմեա՛ց ինձ։
*Կացեալ առ Յս՝ եւ հրամայեաց կոչել զնա։ 49
Կոչեն զկոյրն՝ եւ ասեն ցնա. քաջալերեաց

ա-

50 արի՛ կոչէ զքեզ։ *Եւ նր ընկեցեալ ըզ-
51 ձորձս իւր, յարեաւ և եկն առ Յս։ *Պա-
տասխանի ետ նմա Յս և ասէ. զի՞նչ կա-
միս՝ թէ արարից քեզ։ Նա ասէ ցնա կոյրն.
52 ռաբբունի՛ զի բացայց։ *Եւ Յս ասէ ցնա.
երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղ-
վաղակի բացաւ, և երթայր զհետ նորա 'ի
ճանապարհին։

## Գլ. ԺԱ.

1 Եւ ‖ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ‖Մատթ.
'ի Բեթփագէ և 'ի Բեթանիա մօտ 'ի լե- 21. 1.
առն Ձիթենեաց, առաքէ երկուս յաշա- Ղուկ.
2 կերտաց անտի. *և ասէ ցնոսա. երթա՛յք 19. 29.
դուք 'ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և
նոյնժամայն իբրև մտանի՛ք 'ի նա, գտանէք
յաւանակ մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք
'ի մարդկանէ նստաւ, լուծէ՛ք զնա՝ և ածէ՛ք։
3 *Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ զի՞ լու-
ծանէք զյաւանակդ, ասասջի՛ք՝ եթէ տեառն
խնդրում պիտոյ է. և վաղվաղակի առաքես-
4 ցէ զնա այսր։ *Չոգան, և գտին զյաւա-
նակն կապեալ առ դուրս արտաքոյ 'ի փո-
5 ղոցի անդ, և լուծին զնա։ *Եւ ոմանք
յորոց անդն կային, ասեն ցնոսա. զի՞ գոր-
6 ծէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։ *Եւ նք
ասեն ցնոսա որպէս ասաց Յս. և թոյլ ե-
7 տուն նց։ *‖Ածեն զյաւանակն առ Յս. և ‖Յովհ.
ար- 12. 14.

արկանեն ՚ի վերայ նորա հանդերձս, եւ նստաւ
՚ի վերայ նորա։ *Եւ բազումք զհանդերձս իւ- 8
րեանց տարածանէին ՚ի վերայ ճանապարհին,
եւ այլք ոստս ՚ի ծառոց հատանէին՝ եւ ար-
կանէին զճանապարհաւն։ *Եւ որ առաջին 9
եւ զկնի երթային, աղաղակէին, եւ ասէին.
‖Սաղմ. ովսաննայ բարձրելոյն։ *‖Օրհնեալ որ 10
117. 26. գայ յանուն Տն. օրհնեալ թագաւորու-
Մատթ. թիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղա-
21. 9. ղութիւն յերկինս՝ եւ փառք ՚ի բարձունս։
Ղուկ. *Եւ եմուտ Յս յԵրուսաղէմ ՚ի տաճարն, 11
19. 38. եւ հայեցաւ շուրջ զամենեքումբք. եւ զի էր
երեկոյացեալ ժամն, ել ՚ի Բեթանիա եր-
կոտասանիւքն հանդերձ։

Ի Բ *Եւ ՚ի վաղիւն անդր մինչ դեռ ելանէին ՚ի 12
‖Մատթ. Բեթանիայ, քաղցեաւ։ *‖Եւ տեսեալ թզ- 13
21. 19 զենի մի ՚ի բացուստ տերեւալից. եւ եկն՝
թէ գտանիցէ ինչ ՚ի նմա. եւ իբրեւ եկն ՚ի
նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ. զի
ոչ եւս էր ժամանակ թզոյ։ *Պատասխա- 14
նի եւ ասէ ցնա. մի եւս ոք յաւիտեան
՚ի քէն պտուղ կերիցէ. եւ լսէին աշակերտքն
‖Մատթ. նորա։ *Գան յԵրուսաղէմ. ‖Եւ մտեալ 15
21. 12. ՚ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն
եւ զգնօղս՝ որ էին ՚ի տաճարին. եւ զսեղանս
հատավաճառացն շրջեաց, եւ զաթոռս ա-
ղաւնեվաճառացն կործանեաց. *Եւ ոչ թո- 16
‖Եսայ. ղոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տա-
56. 7. ճարն։ *Եւ ուսուցանէր եւ ասէր ցնս. գրեալ 17
Երեմ. է. ‖Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամ
7. 11. հե-

հեթանոսաց, և դուք արարիք զդա այր
18 աւազակաց : *Լուան քահանայապետքն և
դպիրք . և խնդրէին՝ թէ որպէս կորուսցեն
զնա, բայց երկնչէին 'ի նմանէ . զի ամ ժո-
ղովուրդն զարմացեալ էր 'ի ուսումն նորա :
19 *Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան
20 զքաղաքն ելանէին : *Եւ մինչդեռ այգուցն
առ նովաւ անցանէին, տեսին զթզենին չա-
21 մաքեալ յարմատոց : *Յիշեաց Պետրոս՝
և ասէ ցնա . ռաբբի՝ ահաւասիկ թզենին
22 զոր անիծեր, ցամաքեցաւ : *Պատասխանի
ետ Յս և ասէ ցնոսա . ‖ եթէ ունիցիք զհա- ‖ Մատթ.
23 ւատսն Այ, *ամէն ասեմ ձեզ . որք ա- 21. 21.
սիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և անկիր 'ի
ծով, և ոչ երկմտիցէ 'ի սրտի իւրում,
այլ հաւատայցէ՝ թէ զոր ասէն լինի, եղի-
24 ցի նմա զոր ինչ և ասիցէ : *Վն այսորիկ
ասեմ ձեզ . զամ ինչ վասն որոյ աղօթս
արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ
25 առնուցուք, եղիցի ձեզ : *‖ Եւ յորժամ ‖ Մատթ.
յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ ունի- 6. 14.
ցիք ինչ զումեքէ . զի և հայրն ձեր՝ որ յեր- 18. 35.
26 կինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր : *Ապ
եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ հայրն ձեր
որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր :
27 *‖ Գան միւսանգամ յԵրուսաղէմ . և մինչ Լ. Գ.
դեռ 'ի տաճարի անդ զգնայր, գան առ նա ‖ Ղուկ.
28 քահանայապետքն և դպիրք և ծերք, *և 20. 1.
ասեն ցնա . որով իշխանութեամբ առնես զայդ,
29 և ո՛վ ետ քեզ իշխանութիւն զայդ : *Պա-

տաս-

տասխանի ետ Յս և ասէ ցնոսա. Հարցից
և ես զձեզ բան մի, տուք ինձ պատաս-
խանի. և ես ասացից ձեզ՝ որով իշխանու-
թեամբ առնեմ զայս: *Մկրտութիւն Յով- 30
հաննու յերկնի՞ց էր՝ եթէ 'ի մարդկանէ,
տուք ինձ պատասխանի: *Խորհէին ընդ մի- 31
մեանս՝ և ասէին. եթէ ասեմք եթէ յերկ-
նից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւա-
տացէք նմա: *Այլ եթէ ասեմք՝ 'ի մարդ- 32
կանէ, երկնչէին 'ի ժողովրդենէն. զի ա-
մենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մար-
գարէ էր: *Պատասխանի ետուն և ասեն 33
ցՅն. չգիտեմք: Եւ Յս ետ նոցա պնի և
ասէ. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշխա-
նութբ առնեմ զայս:

## ԳԼ. ԺԲ.

Մատթ. Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և 1
21. 33. ասել. Այր մի տնկեաց այգի, և ած շուրջ
Ղուկ. զնովաւ ցանգ, և գուբ հնձան փորեաց, և
20. 9. շինեաց աշտարակ. և ետ զնա ցմշակս, և
Եսայ. գնաց 'ի տար աշխարհ: *Եւ առաքեաց առ 2
5. 1. մշակսն 'ի ժամանակի ծառայ մի, զի 'ի մշա-
Երեմ. կաց անտի առցէ 'ի պտղոյ այգւոյն: *Եւ 3
2. 21. նոցա կալեալ՝ գան հարին զնա, և արձա-
կեցին ունայն: *Դարձեալ առաքեաց առ 4
նոսա այլ ծառայ, և զնա կառափնատեցին՝
և արձակեցին անարգեալ: *Եւ դարձեալ 5
այլ առաքեաց, և զնա սպանին. և զբա-

զումն այլ՝ զոմանս հարկանէին և զոմանս
6 սպանանէին: *Արդ որդի մի էր իւր սի-
րելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և
ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի
7 իմմէ: *Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ
գայ՝ ասեն ցմիմեանս. սա է ժառանգն, ե-
կայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառան-
8 գութիւնն: *Եւ կալեալ զնա սպանին, և
9 հանին արտաքոյ այգւոյն: *Արդ՝ զի՞նչ ա-
րասցէ տէր այգւոյն. եկեսցէ և կորուսցէ
զմշակսն, և տացէ զայգին ՚ի ձեռս այլոց:
10 *Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր,
թէ ‖ զվէմն զոր անարգեցին շինողքն, նա ‖ Սաղմ.
11 եղև գլուխ անկեան: *՚Ի Տեառնէ եղև 117. 22.
12 այս, և է սքանչելի յաչս մեր: *Եւ խնդ- ‖ Եսայ.
րէին զնա ունել, և երկեան ՚ի ժողովր- 28. 16.
դենէ անտի, զի գիտացին թէ առ նոսա
ասաց զառակն. և թողին զնա և գնացին:
13 *‖ Եւ առաքեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց ‖ Մատթ.
անտի՝ և ՚ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն 22. 15.
14 բանիւ: *Եւ նոքա եկեալ հարցանէին զնա Ղուկ.
նենգութբ՝ և ասէին. վարդապետ՝ գիտեմք 20. 20.
զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ
զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան,
այլ ճշմարտութբ զճանապարհն Այ ուսու-
ցանես. արդ՝ ասա մեզ, արժա՞ն է հարկս
տալ կայսեր՝ թէ ոչ. տացո՞ւք՝ եթէ ոչ
15 տացուք: *Եւ Յս գիտաց զկեղծաւորութի
նոցա, ասէ ցնոսա. զի՞ փորձէք զիս կեղ-
ծաւորք. բերէք ինձ դահեկան մի՝ զի տե-

սից: *Եւ նոքա բերին: Եւ ասէ ցնոսա, 16
ո՞յր է պատկերս այս՝ կամ գիր: Եւ նք ա-
սեն ցնա. կայսեր: *Պատասխանի ետ Յս, 17
Հռովմ. եւ ասէ ցնոսա. ‖Երթայք տուք զկայսերն՝
13. 7. կայսեր, եւ զԱյն՝ Այ: Եւ զարմացան ը
նա:

ԼԴ *‖Գան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ 18
‖Մատթ. չիք յարութի. հարցանէին ցնա եւ ասէին:
22. 23. *Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ, ‖եթէ 19
Ղուկ. ուրուք եղբայր մեռանիցի եւ թողուցու կին՝
20. 27. եւ որդի ոչ թողուցու. զի առցէ եղբայր նո-
‖Բ. Օրէ. րա զկին նորա, եւ յարուսցէ զաւակ եղբօր
25. 5. իւրում: *Արդ՝ եղբարք եօթն էին առ 20
մեզ. առաջինն առ կին՝ եւ մեռաւ, եւ ոչ
եթող զաւակ: *Եւ երկրորդն առ զնոյնն՝ 21
եւ մեռաւ, եւ ոչ նա եթող զաւակ. նոյն-
պէս եւ երրորդն առ զնոյն: *Եւ եօթնե- 22
քեան իսկ. եւ ոչ թողին զաւակ, յետ ա-
մենեցուն մեռաւ եւ կինն: *Արդ՝ 'ի յարու- 23
թեանն յորժամ յառնիցեն, ո՞յր 'ի նոցա-
նէ լինիցի կինն. զի եօթնեքեան կալան զնա
կին: *Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնոսա. 24
ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ
գիտէք զգիրս՝ եւ ոչ զզօրութին Այ: *Զի 25
յորժամ 'ի մեռելոց յարիցեն, ոչ արք կա-
նայս առնեն, եւ ոչ կանայք արանց լինին.
այլ իբրեւ զհրեշտակս իցեն՝ որ յերկինս
են: *Այլ վասն յարութեան մեռելոց զի 26
յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր 'ի գիրսն
Մովսէսի 'ի մորենւոջն. որպէս ասաց ցնա

Ած.

Ա՟ծ. Ես եմ ասէ՝ Ա՟ծ Աբրահամու, Ա՟ծ Ելից.
27 Իսահակայ, և Ա՟ծ Յակովբայ: *Եւ ոչ է 3. 6.
Ա՟ծ մեռելոց՝ այլ կենդանեաց: Եւ արդ՝ դուք
28 յոյժ մոլորեալ էք: *Եւ մատուցեալ մի Մատթ.
ոմն 'ի դպրացն՝ լսէր նոցա մինչ վիճէին. 22. 35.
իբրև ետես եթէ բարւոք ետ նոցա պա-
տասխանին, եհարց ցնա և ասէ. ո՞ր պատ-
29 ուիրան է առաջին: *Եւ Յս ասէ ցնա.
առաջին քան զամ՝ Լուր Իսրայէլ՝ Տր Ա՟ծ 2.Օրէն.
30 մեր՝ Տէր մի է. *և սիրեսցես զՏէր Ա՟ծ 6. 4.
քո յամ սրտէ քումմէ, և յամ անձնէ
քումմէ, և յամ մտաց քոց, և յամ զօ-
րութէ քումմէ. այս է առաջին պատուիրան:
31 *Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես զըն- Ղևտ.
կեր քո՝ իբրև զանձն քո: Մեծ քան զսո 19. 18.
32 այլ պատուիրան ոչ գոյ: *Եւ ասէ ցնա Հռով.
դպիրն. բարւոք է վարդապետ. ճշմար- 13. 9.
տութբ ասացեր՝ թէ մի է Ա՟ծ, և ոչ գոյ Գաղատ.
33 այլ բաց 'ի նմանէ: *Եւ սիրելն զնա յամ 5. 14.
սրտէ և յամ զօրութէ և յամ մտաց, և Յակով.
սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել է 2. 8.
34 քան զողջակէզս և զզոհս: *Եւ տեսեալ
Յսի թէ իմաստութբ ետ զպատասխանին՝
ասէ ցնա. չես հեռի յարքայութէ Ա՟յ: Եւ
ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա: Ի Ն
35 *Պատասխանի ետ Յս և ասէ, մինչ ուսու- Մատթ.
ցանէր 'ի տաճարին. Զիա՞րդ ասեն դպիրքն, 22. 42.
36 եթէ Քսն որդի Դաւթի է: *Եւ ինքն Ղուկ.
Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. Ասաց Տէր 20. 41.
ցՏէր իմ, նիստ ը աջմէ իմմէ՝ մինչև եդից Սաղմ.
զթըշ- 109. 1.

զԹշնամիս քո պատուանդան ոտից քոց:
*Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր 37
կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նր: Եւ բազում
ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ: *Եւ ա- 38
սէր ուսուցանելով 'ի վարդապետութեան իւ-
Մատթ. րում. ‖զգո՛յշ լերուք 'ի դպրաց անտի, որ
23. 5. կամին 'ի հանդերձս երկայնս շրջել, զողջու-
Ղուկ. ոյնս խնդրել 'ի հրապարակս, *և զնախ- 39
20. 46. աթոռս 'ի ժողովուրդս, և զգահաւորակս
Մատթ. յընթրիս: *‖Որ ուտեն զտունս այրեաց, 40
23. 14. պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի ա-
Ղուկ. ւելի ևս դատաստանս ընկալցին: *‖Կայր 41
21. 1. Յս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ
զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գան-
ձանակն. և բազում մեծատունք արկին բա-
զում ինչ: *Եկն այրի մի՝ և արկ երկուս 42
լումայս, որ է նաքարակիտ մի. *Եւ կոչե- 43
ցեալ առ ինքն զաշակերտսն, ասէ ցնոսա.
ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառապեալ
շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի
գանձանակն: *Վասնզի ամենեքին յաւե- 44
լորդաց իւրեանց արկին. այլ նա 'ի չքաւո-
րութենէ իւրմէ՝ զամ ինչ զոր ունէր՝ արկ
գոյն չափ զկեանս իւր:

## ԳԼ. ԺԳ.

Ե. Օ. Եւ ‖յելանելն նր 'ի տաճարէ անտի, ա- 1
Մատթ. սէ ցնա մի յաշակերտացն նորա. վարդա-
24. 1. պետ, տե՛ս ո՞րպիսի են քարինքս, և ո՞րպիսի
շին-

2 շինուածք : * Պատասխանի ետ նմա Յս եւ
ասէ . տեսանե՞ս զայդ ամ շինուածս , ա-
մէն ասեմ ձեզ՝ ‖ եթէ ոչ թողցի այդր քար ‖ Ղուկ.
3 ՚ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի : * Եւ 19. 44.
մինչ նստէր նա ՚ի լերինն ձիթենեաց յան- 21. 6.
դիման տաճարին , հարցանէին ցնա առան-
ձինն՝ Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս
4 եւ Անդրէաս : * Ասա՛ մեզ՝ ե՞րբ լինիցի այդ .
եւ զի՞նչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ
5 այդ ամ : * Պատասխանի ետ Յս , եւ ասէ
ցնոսա . ‖ զգո՛յշ կացէք , մի՛ ոք զձեզ խա- ‖ Եփեսա.
6 բեսցէ : * Զի բազումք եկեսցեն յանուն 5. 6.
իմ , եւ ասիցեն՝ թէ ես եմ Քն . եւ զբա- 2. Թեսա.
7 զումս մոլորեցուսցեն . * Այլ յորժամ լսի- 2. 3.
ցէք պատերազմունս եւ համբաւս պատե-
րազմաց՝ մի՛ խռովիցիք , զի պարտ է լի-
8 նել . բայց չեւ է կատարածն : * Զի յա-
րիցէ ազգ յազգի վերայ , եւ թագաւորութի
՚ի թագաւորութե վերայ . եւ եղիցին շարժ-
մունք ՚ի տեղիս տեղիս , սովք եւ սրածութիք
եւ խռովութիք . այլ այն ամ սկիզբն է եր-
9 կանց : * Եւ զձեզ իսկ մատնեսցեն յա-
տեանս , եւ ՚ի ժողովուրդս տանջիցիք , եւ
առաջի դատաւորաց եւ թագաւորաց կայ-
10 ցէք վասն իմ ՚ի վկայութի նոցա , * եւ ամ
հեթանոսաց . բայց նախ պարտ է աւետա-
11 րանիս քարոզել : * ‖ Այլ յորժամ տանի- ‖ Մատթ.
ցին զձեզ մատնել , մի՛ յառաջագոյն հո- 10. 19.
գայցէք , եւ մի՛ զմտաւ ածիցէք՝ թէ զի՞նչ Ղուկաս.
խօսիցիք . այլ որ ինչ տացի ձեզ ՚ի ժամուն 12. 11.

յայնմիկ զայն խօսիջիք. զի ոչ դուք էք
որ խօսիցիքն՝ այլ Հոգին սր: *Մատնեսցէ 12
եղբայր զեղբայր 'ի մահ՝ եւ հայր զորդի. եւ
յարիցեն որդիք 'ի վերայ հարց, եւ սպա-
նանիցեն զնոսա: *Եւ եղիջիք ատեցեալք 13
յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ
Դան. համբերեսցէն իսպառ՝ նա կեցցէ: *‖Եւ 14
9. 27. յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերա-
Մատթ. ծին, զի կայցէ 'ի տեղւոջ ուր չիցէ ար-
24. 15. ժան, որ ընթեռնուն 'ի միտ առցէ: Յայն-
Ղուկ. ժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի
21. 20. լերինս. *Եւ որ 'ի վերայ տանեացն իցէ՝ մի 15
իջցէ 'ի տուն, եւ մի մտցէ բառնալ ինչ 'ի
տանէ իւրմէ. *Եւ որ յագարակին իցէ՝ մի 16
դարձցի յետս առնուլ զհանդերձ իւր: *Բայց 17
վայ իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն
յայնոսիկ: *Յաղօթս կացէք՝ զի մի ձմե- 18
րանի լինիցի այն: *Եղիցին աւուրքն այնո- 19
քիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբէք
այնպիսիք 'ի սկզբանէ արարածոց մինչեւ
ցայժմ, եւ մի այլ լիցի: *Եւ եթէ ոչ էր 20
կարճեալ Տր զաւուրսն զայնոսիկ վս ընտ-
րելոց իւրոց, ոչ ապրէր ամ մարմին. այլ
վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց
Մատթ. զաւուրսն զայնոսիկ: *‖Յայնժամ եթէ 21
24. 23. ոք ասիցէ ձեզ, եթէ ահաւասիկ է Քս՝
Ղուկ. կամ անդանօր, մի հաւատայցէք: *Զի 22
17. 23. յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգա-
րէք, եւ տացեն նշանս եւ արուեստս առ 'ի
մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ եւ

զընտ-

23 զընտրեալսն: * Բայց դուք զգո՛յշ լերուք՝
ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զա-
24 մենայն: * ‖ Այլ յաւուրսն յայնոսիկ յետ ‖ Եսայ.
նեղութեանն այնորիկ արեգակն խաւարեսցի, 13. 10.
25 և լուսինն ոչ տացէ զլոյս իւր: * Եւ աստեղք Եզեկ.
յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք յեր- 32. 7.
26 կինս շարժեսցին: * Եւ յայնժամ տեսցեն Յովէլ.
զորդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ 2. 10.
27 և փառօք բազմօք: * ‖ Եւ յայնժամ ա- ‖ Մատթ.
ռաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ 24. 31.
զընտրեալս իւր 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց
28 երկրի մինչև 'ի ծագս երկնից: * Բայց դուք
'ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ
տակաւ ոստքն նորա կակղանայցեն և տե-
րև արձակիցի 'ի նմա, գիտէք թէ մերձ է
29 ամառն. * Նոյնպէս և դուք՝ յորժամ տե-
սանիցէք զայս ա̃մ եղեալ, գիտասջիք թէ
30 մերձ է առ դուրս: * Ամէն ասեմ ձեզ, թէ
ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ա̃մ եղիցի:
31 * Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ
32 անցանիցեն: * Այլ վ̃ն աւուրն այնորիկ և
ժամու՝ ոչոք գիտէ՝ ոչ հրեշտակք յերկինս՝
33 և ոչ որդի, բայց Հայր միայն: * ‖ Զգո՛յշ ‖ Մատթ.
եղերուք. սկեցէք և կացէք յաղօթս. զի ոչ 24. 42.
34 գիտէք երբ ժամանակն իցէ: * Որպէս այր
մի գնացեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու
զտունն իւր. և տայցէ ծառայից իւրոց իշ-
խանութիւն, և իւրաքանչիւր զգործս իւր. և
դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն
35 լինիցի: * Արդ՝ արթուն կացէք, զի ոչ

գիտէք ե՞րբ տէր տանն գայցէ՝ յերեկորեայ՞
եթէ 'ի մէջ գիշերի՝ եթէ 'ի հաւախօսի՝
եթէ ը͞ առաւօտս: * Գուցէ եկեալ յան- 36
կարծակի՝ գտանիցէ զձեզ 'ի քուն: * Բայց 37
զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝
արթուն կացէք:

## ԳԼ. ԺԴ:

Ե. Ե. ԵՒ էր զատիկն և բաղարջակերք յետ 1
Մատթ. երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն
26. 2. և դպիրք՝ եթէ զիա՞րդ զնա նենգաւ կալեալ
Ղուկ. սպանանիցեն: * Բայց ասէին՝ թէ մի՛ 'ի 2
22. 1. տօնի աստ, զի մի՛ խռովութի լինիցի 'ի ժո-
Մատթ. ղովրդեանն: * Եւ մինչ էր 'ի Բեթանիա՝ 3
26. 6. 'ի տան Սիմովնի բորոտի բազմեալ, եկն կին
Յովհան. մի՝ որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի
12. 1. մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ 'ի վե͞
գլխոյ նորա: * Եւ աշակերտքն զչարէին և 4
ասէին. ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այ-
դորիկ: * Մարթ էր զայդ իւղ վաճառել ա- 5
ւելի քան երեք հարիւր դահեկանի, և տալ
աղքատաց. և զայրանային նմա յոյժ: * Եւ 6
Յ͞ս ասէ ց͞նս. թո՛յլ տուք դմա՝ զի՞ աշխատ
առնէք, զի գործ մի բարի գործեաց դա
յիս: * Յա͞մ ժամ զաղքատս ը͞ ձեզ ու- 7
նիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել
ն͞ց բարիս. այլ զիս ոչ յա͞մ ժամ ը͞ ձեզ
ունիք: * Դա զոր ունէրդ՝ արար. յառա- 8
ջագոյն խնկեաց զմարմին իմ 'ի նշան պա-

տա.

9 տանսցէ ։ * Ամէն ասեմ ձեզ . ուր և քա-
րոզեսցի աւետարանս այս ընդ ամ աշխարհ ,
և զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատա-
10 կի դորին ։ * ‖ Եւ Յուդա սկարիովտացի մի ‖ Մատթ.
յերկոտասանից անտի , գնաց առ քահանայ- 26. 14.
11 ապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա ։ * Նոքա
իբրև լուան՝ խնդացին , և խոստացան տալ
նմա արծաթ ։ Եւ խնդրէր՝ թէ զիարդ պա-
րապով մատնեսցէ զնա ։
12 * ‖ Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ ‖ Մատթ.
յորժամ զզատիկն զենուին , ասեն ցնա ա- 26. 17.
շակերտքն . ուր կամիս՝ երթիցուք պատրաս- Ղուկ.
13 տեսցուք՝ զի կերիցես զզատիկն ։ * Եւ ա- 22. 7.
ռաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ
ցնոսա . երթայք ՚ի քաղաք , և իբրև մտա-
նիցէք ՚ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի
որ սափոր ջրոյ յուսոյ ունիցի , երթայք զհետ
14 նորա ։ * Եւ յոր տուն մտանիցէ , ասասջիք
ցտանուտէրն . վարդապետն ասէ՝ ուր են ի-
ջավանքն , ուր աշակերտօքս ուտիցեմ զզա-
15 տիկն ։ * Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի
մեծ զարդարեալ՝ անդ պատրաստեսջիք մեզ ։
16 * Եւ գնացին պատրաստել աշակերտքն նր .
եկին ՚ի քաղաքն՝ և գտին որպէս ասացն նց .
17 և պատրաստեցին զզատիկն ։ * ‖ Եւ իբրև ‖ Մատթ.
երեկոյ եղև՝ գայ երկոտասանիւքն հանդերձ ։ 26. 20.
18 * Եւ իբրև բազմեցան և դեռ ուտէին , ասէ Ղուկ.
Յս . ամէն ասեմ ձեզ՝ ‖ զի մի ոմն ՚ի ձէնջ 22. 14.
19 մատնելոց է զիս , որ ուտէ իսկ ընդ իս ։ * Եւ ‖ Յովհ.
նք սկսան տրտմել և ասել մի ըստ միոջէ . 13. 21.

մի՞թէ ես իցեմ, և միւսն՝ մի՞թէ ես իցեմ։
*Նա պ՟խի ետ և ասէ ցն՟ս. մի յերկոտասանից 20
այտի, որ մխեաց ը՟ իս 'ի սկաւառակդ։ *Այլ 21
‖Սաղմ. որդի մարդոյ երթայ՝ ‖որպէս և գրեալ է
10. 40. վ՟ն նորա. բայց վա՜յ իցէ մարդոյն այնմիկ՝
Գործ. յոյր ձեռս որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր
1. Կորն. նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն այն։ *‖Եւ 22
‖1. 16. մինչդեռ ուտէին, առեալ Յ՟ի հաց՝ օրհ-
11. 24. նեաց և եբեկ՝ ետ ն՟ց, և ասէ. առէք՝ այդ
է մարմին իմ։ *Եւ առեալ բաժակ՝ գոհա- 23
ցաւ և ետ նոցա, և արբին 'ի նմանէ ամե-
նեքեան։ *Եւ ասէ ցնոսա. այս է արիւն 24
իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց
հեղանի։ *Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս 25
յաւելից ըմպել 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն
ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայու-
թեան Ա՟յ։ *Եւ գոհացեալ՝ ելին 'ի լեառն 26
Մ.Ե.Ի.Զ. ձիթենեաց։
‖Յովհ. *Եւ ասէ ցնոսա Յ՟ս. ‖ամենեքին գայ- 27
16. 32. թագղեցլոց էք յինէն յայսմ գիշերի. զի
‖Զաքար. գրեալ է, թէ ‖հարից զհովիւն՝ և ոչխարքն
13. 7. ցրուեսցին։ *Այլ յետ յարութեան իմոյ՝ 28
յառաջագոյն երթայց քան զձեզ 'ի Գալի-
լեա։ *Պատասխանի ետ Պետրոս և ասէ 29
ցնա. թէպէտ և ամենեքին գայթագղես-
ցին, այլ ես ոչ։ *Եւ ասէ ցնա Յ՟ս. ա- 30
մէն ասեմ քեզ. թէ դու իսկ յայսմ գի-
շերի մինչչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս ու-
րասցիս զիս։ *Իսկ Պետրոս առաւել ևս 31
պնդէր և ասէր. եթէ մեռանել ևս հասա-
նիցէ

նիցէ ինձ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց. նոյն-
32 պէս և ամենեքեան ասէին: *Գան 'ի գեօղն՝ Մատթ.
որում անուն էր Գեթսեմանի. և ասէ ցա- 26. 36.
շակերտսն. Նստարո՛ւք աստ՝ մինչև ես յա- Ղուկ.
33 ղօթս կացից: *Եւ առնու ընդ իւր զՊետրոս 22. 40.
և զՅակովբոս և զՅովհաննէս, և սկսաւ
34 տխրել և հոգալ: *Յայնժամ ասէ ցնոսա.
տրտում է անձն իմ մինչև 'ի մահ, մնա-
35 ցէք աստ՝ և արթո՛ւն կացէք: *Եւ մատու-
ցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ 'ի վր
երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս,
զի եթէ հնար ինչ է՝ անցցէ 'ի նմանէ ժամն:
36 *Եւ ասէ. Աբբա՛ Հայր՝ ամ ինչ քեզ հնա-
րաւոր է, անցո՛ զբաժակս զայս յինէն. բայց
ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու կա-
37 միս: *Եւ գայ՝ գտանէ զնոսա զի ննջէին,
և ասէ ցՊետրոս. Սիմո՞ն ննջես. ո՞չ կա-
38 րացեր ժամ մի արթուն կալ: *Արթո՛ւն
կացէք և յաղօ՛թս կացէք, զի մի՛ մտջիք 'ի
փորձութի. ոգիս յօժար է՝ բայց մարմինս
39 տկար: *Եւ դարձեալ չոգաւ եկաց յա-
40 ղօթս, և զնոյն բանս ասաց: *Դարձաւ
միւսանգամ անդրէն, և եգիտ զնոսա 'ի քուն.
քանզի էին աչք նոցա ծանրացեալ, և ոչ
41 գիտէին թէ զինչ պխի տայցեն նմա: *Գայ
երրորդ անգամ, և ասէ ցնոսա. Ննջեցէք այսու-
հետև և հանգերո՛ւք, զի հասեալ է վախ-
ճան, եկն ժամ՝ և ահա մատնի որդի մար-
42 դոյ 'ի ձեռս մեղաւորաց: *Ո՛ն արի՛ք գը-
նասցուք. զի ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատ-

նելոցն է զիս ։ * Եւ մինչդեռ նա զայն խօ- 43
սէր՝ գայ Յուդա սկարիովտացի մի յերկո-
‖ Մատթ. տասանից անտի, ‖ և ը̅ նմա ամբոխ սուսե-
26. 47. րօք և բրօք՝ 'ի քահանայապետից և 'ի
Ղուկ. դպրաց և 'ի ծերոց ։ * Տուեալ էր նշան 44
22. 47. մատնչին՝ և ասէր . ը̅ որում ես համբու-
Յովհ. րեցից՝ նա է . կալջիք զնա՝ և տարջիք ըզ-
18. 3. գուշութը̅ ։ * Եւ մատուցեալ վաղվաղակի՝ 45
ասէ ցնա . Ռաբբի՛ Ռաբբի . և համբու-
րեաց զնա ։ * Եւ նոքա արկին 'ի նա ձեռս՝ 46
և կալան զնա ։ * Եւ մի ոմն յայնցանէ՝ որ 47
զնովաւն կային՝ ձգեաց սուր , և եհար զծա-
ռայ քահանայապետին , և 'ի բաց եհան
զունկն նորա ։ * Պատասխանի ետ Յս̅ և ա- 48
սէ ցնոսա . Իբրև 'ի վերայ աւազակի ելիք
սուսերօք և բրօք ունել զիս ։ * Հանապազ 49
առ ձեզ էի՝ և ուսուցանէի 'ի տաճարին , և
ոչ կալայք զիս . այլ զի լցցին գիրք մար-
‖ Մատթ. գարէից ։ * ‖ Յայնժամ թողին զնա աշա- 50
26. 56. կերտքն ամենեքին՝ և փախեան ։ * Եւ ոմն 51
երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ
զիւրև կտաւ մի 'ի մերկուց . ունէին զնա
երիտասարդքն ։ * Եւ նա թողեալ զկտաւն՝ 52
‖ Մատթ. փախեաւ մերկ 'ի նոցանէ ։ * ‖ Եւ տարան 53
26. 57. զՅս̅ առ քահանայապետն Կայիափա . և
Ղուկ. գային ը̅ նմա ամ̅ քահանայապետքն՝ և դը-
22. 54. պիրք և ծերք ։ * Եւ Պետրոս երթայր 'ի 54
Յովհ. հեռաստանէ զհետ նորա մինչև 'ի ներքս
18. 13. իսկ 'ի գաւիթ քահանայապետին , և նստէր
ընդ սպասաւորսն՝ և ջեռնոյր առ լուսովն ։

* ‖ Իսկ

55 *Իսկ քահանայապետքն՝ և ամենայն ա- Մատթ.
տեանն խնդրէին հակառակ Յսի վկայութիւն 26. 59.
ինչ, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին:
56 *Զի բազումք սուտ վկայութիւն վկայէին
զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայու-
57 թիւնքն: *Այլք յարուցեալ վկայէին սուտ
58 զնմանէ, և ասէին: *Թէ մեք լուաք 'ի
դմանէ՝ զի ասէր. Ես քակեցից զտաճարդ Յովհ.
զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից 2. 19.
59 այլ՝ առանց ձեռագործի: *Սակայն և այն-
60 պէս չէր նման վկայութիւն նոցա: *Ապա
յարուցեալ քահանայապետն 'ի մէջ հար-
ցանէր զՅսն, և ասէր. ոչի՞նչ տաս պխի,
61 զինչ դոքա զքէն վկայեն: *Եւ նա լռեալ
կայր՝ և չտայր ինչ պխի: Դար-
ձեալ քահանայապետն հարցանէր զնա կրկ-
կին անգամ և ասէր. դո՞ւ ես Քն որդի
62 Այ օրհնելոյն: *Պատասխանի ետ Յն և
ասէ ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. Բայց Մատթ.
տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ 24. 30.
զօրութեանն, և եկեալ ընդ ամպս երկնից: 26. 64.
63 *Եւ քահանայապետն պատառեաց վաղ-
վաղակի զպատմուճանս իւր՝ և ասէ. զի՞նչ
64 ևս պիտոյ են մեզ վկայք: *Ահա՛ լուայք
ամենեքին զհայհոյութիւն 'ի բերանոյ դորա,
զիա՞րդ թուի ձեզ: Եւ ամենեքեան դատա-
65 պարտեցին զնա՝ թէ մահապարտ է: *Եւ
ոմանք սկսան թքանել 'ի երեսս նր. ձորձ
զգլխով արկանել՝ կափել և ասել, մար-
գարէաց մեզ Քնդ՝ ո՞վ է այն որ եհարն
զքեզ.

զքեզ. և սպասաւորքն ապտակս հանէին
Մատթ. նմա: *Եւ Պետրոս մինչդեռ էր ի խո- 66
26. 69. նարհ ի գաւթին, գայ աղախին մի քահա-
Ղուկ. նայապետին, *և տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. 67
22. 56. հայեցաւ ընդ նա՝ և ասէ. և դու ընդ Յիսուսի
Յովհ. Նազովրեցւոյ էիր: *Նա ուրացաւ և ասէ. 68
18. 17. ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դուդ ա-
սես: Եւ ել նա յարտաքին գաւիթն, և
հաւ խօսեցաւ: *Դարձեալ տեսեալ զնա ա- 69
ղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն
կային, թէ և սա ի նոցանէ է: *Եւ նա 70
դարձեալ ուրացաւ: Եւ յետ սակաւ միոյ՝
դարձեալ որ շուրջն կային, ասեն ցՊետրոս.
արդարև և դու ի նոցանէ ես, քանզի գա-
լիլեացի ես՝ և խօսք քո նման են:
*Եւ նա սկսաւ նզովել՝ երդնուլ և ասել, 71
թէ ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ ասէք:
*Եւ նոյն ժամայն կրկին հաւ խօսեցաւ: 72
Վեր. Եւ յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա
14. 30. Յիսուս, թէ չև իցէ հաւու երկիցս խօսեալ՝
Յովհան. զի դու երիցս ուրասցիս զիս. և սկսաւ լալ:
13. 38.

## ԳԼ. ԺԵ.

Մատթ. Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ 1
27. 1. արարեալ քահանայապետիցն հանդերձ ծե-
Ղուկ. րովքն և դպրօքն՝ և ամ ատենաւն, կապե-
23. 3. ցին զՅիսուս՝ և տարան մատնեցին Պիղատոսի:
Յովհ. *Եհարց զնա Պիղատոս և ասէ. դու ես 2
18. 28. թագաւորն հրէից: Նա պատասխանի ետ

նմա

3 նմա և ասէ՝ դու ասես: *‖Եւ չարախօսէին ‖Մատթ.
զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ոչ 27. 12.
4 ինչ տայր պատասխանի: *Իսկ Պիղատոս
դարձեալ հարցանէր զնա. ոչի՞նչ տաս
պատասխանի, տե՛ս քանի՞ ամբաստանեն
5 զքեզ: *Եւ Յս այնուհետև ոչինչ ետ
պատասխանի, մինչև զարմանալ յոյժ Պի-
6 ղատոսի: *Բայց ըստ տօնի արձակէր նոցա
զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին:
7 *Եւ էր որում անուն էր Բարաբբա՝ կա-
պեալ ընդ խռովիչսն, որոց 'ի խռովին՝
8 այր մի սպանեալ էր: *'Ի ձայն բարձր
սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ ոպ
սովոր էր, զի արձակեսցէ նոցա զԲարաբ-
9 բայն: *Պատասխանի ետ Պիղատոս և ասէ
ցնոսա. կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ զար-
10 քայն Հրէից: *Քանզի գիտէր թէ առ նա-
խանձու մատնեցին զնա քահանայապետքն:
11 *Այլ և զամբոխն հաւանեցուցին՝ զի ար-
12 ձակեսցէ նց զԲարաբբայն: *‖Դարձեալ ‖Մատթ.
պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. 27. 22.
իսկ զի՞նչ կամիք թէ արարից զարքայն Ղուկ.
13 Հրէից: *‖Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ 23. 14.
յուղեալք 'ի քահանայապետացն, 'ի խաչ ‖Յովհ.
14 հան զդա: *Ասէ ցնոսա Պիղատոս. զի՞նչ 18. 40.
ինչ չար արարեալ իցէ դորա: Եւ նք ա-
ռաւել ևս աղաղակէին և ասէին, 'ի խաչ
15 հան զդա: *Իսկ Պիղատոս իբրև զմիտս
կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նց
զԲարաբբայն. և զՅս գան հարեալ ետ 'ի
ձեռս,

Մատթ. ձեռս, զի ՚ի խաչ հանիցէ: * Եւ զին- 16
27. 27. ուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝
Յովհ. ուր հրապարակն էր. եւ կոչեն միանգամայն
19. 2. զամ զօրսն, * եւ զգեցուցանեն նմա քղա- 17
միդ կարմիր եւ ծիրանիս, եւ եդին ՚ի գլուխ
նր պսակ արարեալ ՚ի փշոց: * Եւ սկսան 18
ողջոյն տալ նմա՝ եւ ասել. ողջ եր ար-
քայդ հրէից: * Եւ ծեծէին զգլուխն եղե- 19
գամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ ՚ի ծունր
իջեալ երկրպագանէին նմա: * Եւ իբրեւ 20
կատակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն
եւ զծիրանիս, եւ զգեցուցին նմա զիւր հան-
դերձն, եւ ածին արտաքս զի ՚ի խաչ հան-
Մատթ. ցեն զնա: * Եւ ունէին պահակ զՍիմոն 21
27. 32. կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ
Ղուկ. յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռու-
23. 26. փայ. զի բարձցէ զխաչափայտն նր: * Եւ 22
ածեն զնա ՚ի Գողգոթա՝ տեղի մի, որ
թարգմանի՝ տեղի կառափելոյ: * Եւ տային 23
նմա գինի զմռսեալ, եւ նա ոչ առ. եւ հա-
Մատթ. նին զնա ՚ի խաչ: * Եւ բաժանեցին զհան- 24
27. 33. դերձս նորա, արկեալ վիճակս ՚ի վր՝ թէ
Ղուկ. ո զինչ առնուցու: * Էր ժամ երրորդ՝ եւ 25
23. 34. հանին զնա ՚ի խաչ: * Եւ էր գիր վնասու 26
Յովհ. նորա գրեալ՝ թէ թագաւոր է հրէից. * Եւ 27
19. 23. ընդ նմա հանին ՚ի խաչ երկուս աւազակս.
Եսայ. մի ընդ աջմէ, եւ մի ընդ ահեկէ նորա: * Եւ 28
53. 12. լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս հա-
մարեցաւ: * Եւ որք անցանէինն՝ հայհոյ- 29
էին զնա, շարժեալ զգլուխս իւրեանց եւ

ասէին. Վա՜հ որ քակէիր զտաճարն՝ եւ զե- Յովհ.
30 րիս աւուրս շինէիր. *ապրեցո զանձն քո 2. 19.
31 եւ էջ ՚ի խաչէդ: *Նոյնպէս եւ քահանայ-
ապետքն այպն արարեալ ընդ միմեանս հան-
դերձ դպրօքն՝ ասէին. զայլս ապրեցոյց՝
32 զանձն ոչ կարէ ապրեցուցանել: *Քրիստոս
արքայդ Իսրայէլի, իջցէ այժմ ՚ի խաչէ
այտի, զի տեսցուք եւ հաւատասցուք դմա.
Եւ որ ընդ նմա ՚ի խաչին ելեալ էին՝ նախա-
33 տէին զնա: *Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝
խաւար կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն ժամ:
34 *Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս
՚ի ձայն մեծ, եւ ասէ. Էլի Էլի լամա Սաղմ.
սաբաքթանի. որ թարգմանի. Աստուած իմ Աստուած 21. 2.
35 իմ՝ ընդէ՞ր թողեր զիս: *Եւ ոմանք ՚ի նո- Մատթ.
ցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբրեւ լուան, 27. 46.
36 ասէին թէ զԵղիա կարդայ: *Եւ ընթա-
ցեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով,
եւ հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, եւ
ասէ. թոյլ տուք տեսցուք՝ գայ Եղիա ի-
37 ջուցանել զդա: *Եւ Յիսուս արձակեաց ձայն
38 մեծ՝ եւ եհան զոգի: *Եւ վարագոյր տա-
ճարին պատառեցաւ յերկուս՝ ՚ի վերուստ
39. մինչեւ ՚ի խոնարհ: *Եւ տեսեալ հարիւ-
րապետին որ կայր անդ՝ եթէ աղաղակեաց
եւ եհան զոգի, ասէ. արդարեւ այրս այս
40 որդի Աստուծոյ էր: *Էին եւ կանայք՝ որ հայէին Մատթ.
՚ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագ- 27. 55.
դաղենացի, եւ Մարիամ Յակոբու փոքր-
կան, եւ Յովսեայ մայրն, եւ Սողոմէ.

*որք

‖ Ղուկ. * որք յորժամ էին 'ի Գալիլեա՝ ‖ զհետ 41
8. 2. շրջէին նորա եւ պաշտէին զնա. եւ այլ բա–
զում կանայք՝ որ ընդ նմա իսկ ելեալ էին
յԵրուսաղէմ:
‖ Մատթ. * ‖ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ 42
27. 57. էր՝ որ 'ի շաբաթն մտանէր, * ‖ եկեալ 43
Ղուկ. Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պար–
23. 50. կեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակնունէր
‖ Յովհ. արքայութեանն Այ. համարձակեցաւ եմուտ
19. 38. առ Պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յի:
* Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ 44
մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրա–
պետն, եհարց զնա եւ ասէ՝ թէ արդարեւ
այնչափ վաղ մեռաւ: * Եւ իբրեւ ստուգեաց 45
'ի հարիւրապետէն անտի, շնորհեաց զմար–
մինն Յովսեփայ: * Եւ Յովսէփ գնեաց 46
կտաւ՝ եւ իջուցեալ զնա պատեաց կտաւովն,
եւ եդ 'ի գերեզմանի, զոր էր փորեալ 'ի
վիմէ. եւ թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն
գերեզմանին: * Իսկ Մարիամ Մագդաղե– 47
նացի եւ Մարիամ Յակովբայ՝ եւ Յովսեայ,
տեսին զտեղին ուր եդաւ:

## ԳԼ. ԺԶ.

‖ Մատթ. Եւ ‖ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մագ– 1
28. 1. դաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Սա–
Ղուկ. ղոմէ՝ չոքան պատրաստեցին խունկս, զի
21. 4. եկեսցեն օծցեն զնա: * Եւ ընդ առաւօտս 2
Յովհան. միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ ա–
20. 1. րեւու

3 րեւագալն, *եւ ասէին ցմիմեանս, ո՞վ թա-
ւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանէ գերեզմա-
4 նին: *Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալե-
ցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն. քանզի
5 էր մեծ յոյժ: *Եւ մտեալ 'ի ներքս 'ի գե-
րեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր
ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան
6 սպիտակ, եւ զարհուրեցան: *Եւ նա ասէ
ցն̃ս. մի երկնչիք, զՅ̃ս խնդրէք զնազով-
րեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ա-
7 հաւասիկ տեղին՝ ուր եդին զնա: *Այլ եր-
թայք ասացէք ցաշակերտսն իւր՝ եւ ցՊետ-
րոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան
զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝
8 ‖որպէս ասացն ձեզ: *Եւ իբրեւ լուան՝ ‖Մար.
ելին եւ փախեան 'ի գերեզմանէն, քանզի 14. 28.
զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ա-
սացին, զի երկնչէին:

9 *Յարուցեալ Յ̃ս առաւօտուն առաջինն
միաշաբաթուն՝ ‖երեւեցաւ Մարիամու Մագ- ‖Ղուկ.
դաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դեւս: 8. 2.
10 *Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ որ ը̃ Յովհան.
նմայն էին, մինչդեռ սգային եւ լային: 20. 16.
11 *Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է՝ եւ
12 երեւեցաւ նմա, ոչ հաւատացին: *‖Յետոյ ‖Ղուկ.
երեւեցաւ այլում կերպարանաւ՝ որք երթային 24. 13.
13 յանդաստան: *Նոքա չոգան պատմեցին
14 այլոց, եւ ոչ նոցա հաւատացին: *Յետոյ
մինչդեռ բազմեալ էին մետասանքն երեւեցաւ
նց̃, եւ թշնամանեաց զանհաւատութիւն նց̃,
եւ

եւ զխստասրտութիւն. զի որ երեւեցաւ նոցա
յարուցեալ ՚ի մեռելոց՝ եւ նոցա ոչ հաւա-
տացին: * Եւ ասէ ցնոսա, երթայք յաշ- 15
խարհ ամ, եւ քարոզեցէք զաւետարանն ա-
մենայն արարածոց: * Որ հաւատայ եւ մկր- 16
տեսցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դա-
տապարտեսցի: * Նշանք այսոքիկ՝ որ հա- 17
‖ Գործ. ւատանն, երթիցեն զհետ այնոցիկ. ‖ յա-
16. 18. նուն իմ դեւս հանիցեն, ‖ լեզուս խօսեսցին,
‖ 2. 4. * ՚ի ձեռս իւրեանց ‖ օձս բարձցեն, եւ եթէ 18
10. 46. մահացու ինչ դեղ արբցեն նոցա ինչ ոչ
‖ 28. 5. վնասեսցէ. ‖ ՚ի վերայ հիւանդաց ձեռս դի-
‖ 28. 8. ցեն՝ եւ բժշկեսցին: * Եւ իսկն Տր Յս 19
‖ Ղուկ. յետ խօսելոյն ը նոսա՝ ‖ համբարձաւ յեր-
24. 51. կինս, եւ նստաւ ընդ աջմէ հօր: * Եւ նք 20
Գործ. ելեալ քարոզէին ը ամ երկիր՝ Տն գոր-
1. 9. ծակցութբ. եւ զբանն հաստատէին ամ նշա-
նօք՝ որ երթայր զհետ նոցա:

ՆԱ-

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ:

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է. Նոյն ինքն Ղուկաս աշակերտ էր Պետրոսի, և յետ անդր երեցաւ ընկերակցէր Պօղոսի, և շրջա-լեցաւ 'ի նմանէ. սա գրեաց զաւետարանս զայս: Սկիզբն առնէ 'ի ծննդենէն Յովհաննու, և զոր ըստ նմին. պատմէ և զմարմնանալ Փրկչին. ազգաբանէ առնէ՝ և ելանէ 'ի Յովսեփայ 'ի Դաւիթ, և 'ի Դաւթայ մինչև յԱդամ: Պատմէ սա և զմկրտութիւն Յովհաննու, և զինելով 'ի լեառն փորձելոյ 'ի սատանայէ. և զընտրութիւն աշակերտացն, և այլ եօթանասունսն. Եւ յայց նշանս և սքանչելիս բազումս եցեալը. և զերկնաւոր մարդանալն, և զչարչարանսն՝ որ մատնեցաւ Պիղատոսի դատաւորաց, և խաչեցաւ մարմնով. և զյարուցեալն թաղմանեցին զհանդերձեալն նր. և որ խաչեցան յերկուց աւազակացն՝ մին աղաչեաց խոստովանութեամբ: Նա և զի մարմնով երթայ 'ի գերեզմանն, և յարեաւ յերրորդ աւուր. և յետ աւուրց համբարձաւ յերկինս փառաւորեալ հրեշտակօքն:

Ղուկաս առաքեալն Քրիստոսի գրեաց. սա աշակերտեցաւ Փրկչին. և համարեալ կոչեցաւ 'ի Քրիստոնէութեան: Իսկ յետոյ աշակերտեցաւ Պօղոսի. վասն որոյ ասէ՝ գովութիւն սորա յա-

աւետարանէն ։ Աս հրամանաւ Պօղոսի Գրեաց զաւետարանն իւր յԱնտիոք քաղաքի ՚ի լեզու Ասորբէ՝ զկնի ԺԵ ամի համբառնալոյ փրկչին․ Ղուկաս՝ յարուցեալն ։

ՍԻՒՕՐԻՆ

# ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

## Աւետարանին որ ըստ Ղուկայ։


| | Գլ. | Համ. |
|---|---|---|
| Վասն աշխարհագրին. | Բ. | 1. |
| Վս̃ բացօթեւայ հովուացն. | Բ. | 8. |
| Վասն Սիմէովնի. | Բ. | 25. |
| Վասն մարգարէին Աննայի. | Բ. | 36. |
| Վասն լինելոյ բանին Այ առ Յովհաննէս. | Գ. | 2. |
| Վասն՝ որոց հարցանէինն զՅովհաննէս. | Գ. | 10. |
| Վասն փորձութեանց փրկչին. | Դ. | 2. |
| Վասն՝ որ ունէր զհոգին դիւական. | Դ. | 33. |
| Վասն զոքանչին Պետրոսի. | Դ. | 38. |
| Վասն՝ որոց բժշկէին ՚ի զանազան հիւանդութեանց. | Դ. | 40. |
| Վասն որսոյ ձկանցն. | Ե. | 4. |
| Վասն բորոտին. | Ե. | 12. |
| Վասն անդամալուծին. | Ե. | 15. |
| Վասն Ղեւեայ մաքսաւորին. | Ե. | 27. |
| Վասն գօսացեալ ձեռինն. | Զ. | 6. |
| Վասն առաքելոցն համարոյ. | Զ. | 13. |
| Վասն երանութեանցն. | Զ. | 20. |
| Վասն հարիւրապետին. | Է. | 2. |
| Վասն որդւոյ այրւոյն. | Է. | 12. |
| Վասն՝ որոց առաքեցանն ՚ի Յովհաննէ | Է. | 19. |
| Վասն օծանելոյ զՏէրն իւղովն. | Է. | 38. |
| Վասն առակի սերմանողացն. | Ը. | 5. |
| Վասն սաստելոյ ջուրցն. | Ը. | 24. |


 Վասն

Վասն՝ որ ունէր զլէգէոնն. Ը. 27.
Վասն դստեր ժողովրդապետին. Ը. 41.
Վասն արեանհոսի կնոջն. Ը. 43.
Վասն առաքելոյ զերկոտասանսն. Թ. 2.
Վասն հինգ հացիցն, եւ երկուց ձկանցն. Թ. 13.
Վասն աշակերտացն հարցանելոյ. Թ. 18.
Վասն այլակերպութեանն Յիսուսի. Թ. 29.
Վասն լուսնոտահարին. Թ. 39.
Վասն խորհելոյն՝ թէ ով մեծ իցէ. Թ. 46.
Վասն չթողլոյն հրաման պէտք երթալ. Թ. 57.
Վասն երեւեցուցանելոյ զեօթանա-
սանսն. Ժ. 1.
Վասն հարցանելոյ օրինականին. Ժ. 25.
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց. Ժ. 30.
Վասն Մարթայի եւ Մարիամայ. Ժ. 38.
Վասն յաղօթս կոչելոյն. ԺԱ. 1.
Վասն խուլ դիւին. ԺԱ. 14.
Վասն՝ որ կինն ձայն եբարձ ի ժողո-
վրդեանն. ԺԱ. 27.
Վասն նշան խնդրելոյն. ԺԱ. 29.
Վասն՝ որ փարիսեցին կոչեաց զՅիսուս. ԺԱ. 37.
Վասն վայ տալոյ օրինականացն. ԺԱ. 46.
Վասն խմորոյ փարիսեցւոցն. ԺԲ. 1.
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղ-
բօրն. ԺԲ. 13.
Վասն արդիւնաւորելոյ անդոյ մեծա-
տանն. ԺԲ. 16.
Վասն Գալիլեացւոցն՝ եւ որոց ի Սի-
լովամ. եւ վասն Պիղատոսին. ԺԳ. 1.
Վասն կորացելոյ կնոջն [illegible]. ԺԳ. 11.

Վասն

| | | |
|---|---|---|
| Վասն մանանխոյն. | ժգ. | 19. |
| Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն. | ժգ. | 23. |
| Վասն՝ որք ասացին ցՅս՛ [illegible]. | ժգ. | 31. |
| Վասն՝ որ ջրգողեալ էր. | ժդ. | 2. |
| Վասն՝ որք ընտրէին զնախագահս. | ժդ. | 7. |
| Վասն կոչելոյն յընթրիսն. | ժդ. | 12. |
| Վասն շինելոյ աշտարակին. | ժդ. | 28. |
| Վասն հարիւր ոչխարացն. | ժե. | 4. |
| Վասն անառակ որդւոյն. | ժե. | 11. |
| Վասն անիրաւ տնտեսին. | ժզ. | 1. |
| Վասն մեծատանն, և Ղազարու. | ժզ. | 19. |
| Վասն տասն բորոտացն. | ժէ. | 12. |
| Վասն անիրաւ դատաւորին. | ժը. | 2. |
| Վասն փարիսեցւոյն, և մաքսաւորին. | ժը. | 10. |
| Վասն հարցանելոյ մեծատանն զՅս. | ժը. | 18. |
| Վասն կուրին. | ժը. | 35. |
| Վասն Զաքէոսի. | ժթ. | 2. |
| Վասն գնալոյ ազնուականին առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ. | ժթ. | 12. |
| Վասն տասնից դահեկան մնասն. | ժթ. | 13. |
| Վասն յաւանակին. | ժթ. | 30. |
| Վասն հարցանելոյ քահանայիցն զՅս. | ի. | 1. |
| Վասն [illegible] այգւոյն. | ի. | 9. |
| Վասն դահեկանին. | ի. | 23. |
| Վասն սադուկեցւոցն. | ի. | 27. |
| Վասն՝ թէ զիա՛րդ է որդի Դաւթի Քս. | ի. | 41. |
| Վասն երկու լումայէ այրւոյն. | իա. | 2. |
| Վասն հարցման կատարածին. | իա. | 7. |
| Վասն զատկին. | իբ. | 1. |

Վասն գերելոյն՝ ընդ ամ ազգս. Իա. 24.
Վասն խնդրելոյն սատանայի փորձել զՍիմոն. Իբ. 31.
Վասն նախատանաց Հերովդէի. Իգ. 11.
Վասն կոծելոյ կանանցն. Իգ. 27.
Վասն ապաշխարելոյ աւազակին. Իգ. 40.
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն. Իգ. 52.
Վասն իւղաբեր կանանցն. Իդ. 1.
Վասն կղէովպեանցն. Իդ. 13.
Վասն համբառնալոյն Տն. Իդ. 51.

# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ։
## ԳԼ. Ա.

1 ՔԱՆԶԻ ԲԱ-
զումք յօժարեցին
վերստին կարգել
զպատմութիւն վասն
2 իրացն հաստատելոց ՚ի մեզ. * որպէս ա-
ւանդեցին մեզ՝ որ ՚ի սկզբանէ ականատեսք
3 և սպասաւորք եղեն բանին։ * Կամ եղև
և ինձ, որ ՚ի սկզբանէ զհետ երթեալ էի
ամի՝ ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝
4 քաջդ Թէոփիլէ. * զի ծանիցես զբանիցն
5 որոց աշակերտեցար, զճշմարտութիւն։ * Եղև
եղև յաւուրս Հերովդի արքայի Հրէաստա-
նի,

1. Մնաց. նի, քահանայ ոմն անուն Զաքարիա ‖ ՚ի
24. 10. դասակարգէ Աբիայ. և կին նր ՚ի դստե-
րաց Ահարոնի, և անուն նր Եղիսաբեթ։
* Եւ էին արդարք երկոքին առաջի Այ, 6
գնային յամ պատուիրանս և յիրաւունս
Տն անարատք։ * Եւ ոչ գոյր նոցա որդեակ, 7
քանզի Եղիսաբեթ ամուլ էր. և երկոքեան
անցեալ էին զաւուրբք իւրեանց։ * Եւ եղև 8
՚ի քահանայանալն նորա ըստ կարգի աւուրցն
հասանելոյ առաջի Այ, * ըստ օրինի քա- 9
հանայութեանն՝ եհաս նմա խունկ արկանել
Ելից. մտեալ ՚ի տաճարն Տն. * ‖ և ամ բազմու- 10
30. 8. թիւն ժողովրդեանն կային յաղօթս արտա-
Ղևտ. քոյ՝ ՚ի ժամ խնկոցն։ * Եւ երևեցաւ նմա 11
16. 17. հրեշտակ Տն. զի կայր ընդ աջմէ սեղանոյ
խնկոցն։ * Եւ խռովեցաւ Զաքարիա՝ իբրև 12
ետես, և անկաւ ահ ՚ի վերայ նորա։ * Ասէ 13
ցնա հրեշտակն Տն. մի երկնչիր Զաքարիա՝
զի լսելի եղեն աղօթք քո, և կին քո Ե-
ղիսաբեթ ծնցի քեզ որդի և կոչեսցես
զանուն նր Յովհաննէս։ * Եւ եղիցի քեզ 14
ուրախութի և ցնծութի. և բազումք ՚ի
ծննդեան նորա խնդասցեն. * զի եղիցի մեծ 15
առաջի Տն. և գինի և օղի մի արբցէ. և
Հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ մօր
իւրոյ։ * Եւ զբազումս յորդւոցն Իղի դար- 16
ձուսցէ ՚ի Տէր Ած իւրեանց։ * Եւ ինքն 17
Մաղաք. եկեսցէ առաջի նորա Հոգւով զօրութեամբ
4. 6. Եղիայի, ‖ դարձուցանել զսիրտս հարց յոր-
Մատթ. դիս, և զանհաւանս յիմաստութիւն արդա-
11. 14. րոց.

րոց . պատրաստել Տն ժողովուրդ կազմեալ ։
18 *Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն . ի՞ւ
գիտացից զայդ . զի ես ծեր եմ, եւ կին իմ
19 անցեալ զաւուրբք իւրովք ։ *Պատասխանի
ետ հրեշտակն եւ ասէ ցնա . ես եմ Գաբ-
րիէլ՝ որ կամ առաջի Այ, եւ առաքեցայ
խօսել ընդ քեզ՝ եւ աւետարանել քեզ զայդ ։
20 *Եւ ահա լինիցիս համր, եւ մի կարասցես
խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի .
փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝
21 որք լցցին 'ի ժամանակի իւրեանց ։ *Եւ
ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ, եւ
զարմանային ընդ յամելն նորա 'ի տաճարին ։
22 *Եւ իբրեւ ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա .
եւ իմացան թէ տեսիլ ետես 'ի տաճարին ։
Եւ նա նշանացի խօսէր ընդ նս, եւ կայր
23 պապանձեալ ։ *Եւ եղեւ իբրեւ լցան ա-
ւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր .
24 *Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղի-
սաբեթ կին նորա, եւ թաքուցանէր զանձն
25 ամիսս հինգ, եւ ասէր ։ *Զի՞նչ գործ
գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայ-
եցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդ-
կանէ ։
26 *Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ
Գաբրիէլ հրեշտակ յԱյ 'ի քաղաք մի
գալիլեացւոց, որում անուն էր Նազարէթ .
27 *առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր
Յովսէփ՝ 'ի տանէ Դաւթի . եւ անուն կու-
28 սին Մարիամ ։ *Եւ եկեալ առ նա՝ ասէ .

ու-

ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ ։
* Եւ նա ի բանին խռովեցաւ, և խորհէր 29
ի միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս ։
* Եւ ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Մա- 30
|| Եսայ. րիամ, զի գտեր շնորհս յԱՅ ։ * || Եւ ա- 31
7. 14. հա յղասջիր՝ և ծնցես որդի. || և կոչեսցես
|| Մատ. զանուն նորա ՅՍ ։ * Նա եղիցի մեծ, և 32
2. 21. որդի բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա ՏՐ
|| Դան. ԱԾ զաթոռն Դաւթի հօր նորա. || և թա-
7. 14. գաւորեսցէ 'ի վր տանն Յակոբայ՝ 'ի յա-
և 27. ւիտեանս. * և թագաւորութեանն նորա վախ- 33
Միք. ճան մի լիցի ։ * Եւ ասէ Մարիամ ցհրեշ- 34
4. 7. տակն. զիարդ լինիցի ինձ այդ, քանզի
զայր ոչ գիտեմ ։ * Պատասխանի ետ հրեշ- 35
տակն և ասէ ցնա. Հոգի Սբ եկեսցէ 'ի քեզ,
և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վր
քո. քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն՝ Սբ
է, և որդի ԱՅ կոչեսցի ։ * Եւ ահա Եղի- 36
սաբեթ ազգական քո՝ և նա յղի է 'ի
ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս
է նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր. * զի ոչ 37
տկարասցի առ յԱՅ ամենայն բան ։ * Եւ 38
ասէ Մարիամ. ահաւասիկ կամ աղախին
ՏՆ, եղիցի ինձ ըստ բանի քում. և գնաց
'ի նմանէ հրեշտակն ։
* Յարուցեալ Մարիամ յաւուրս յայնո- 39
սիկ, գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի
քաղաքն Յուդայ ։ * Եւ եմուտ 'ի տուն 40
Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի ։ * Եւ- 41
եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղի-

սա-

սաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա.
42 և լցաւ Եղիսաբեթ Հոգւով սրբով. * և
'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. օրհնեա՛լ
ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ
43 որովայնի քո: *Եւ ուստի՞ է ինձ այս,
44 զի եկեսցէ մայր Տն իմոյ առ իս: *Զի ահա-
ւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս
իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի
45 իմում: *Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ
եղիցի կատարումն ասացելոցս նմա 'ի Տնէ:
46 *Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն
47 իմ զՏր. *և ցնծացաւ հոգի իմ յԱծ փրկիչ
48 իմ: *Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն ա-
ղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երա-
49 նեսցեն ինձ ամ ազգք: *Զի արար ինձ
մեծամեծս հզօրն, և սբ է անուն նորա:
50 *Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս եր- ‖Եսայ.
51 կիւղածաց իւրոց: *‖Արար զօրութիւն բազ- 51. 9.
կաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք Սաղմ.
52 սրտից իւրեանց: *Քակեաց զհզօրս յաթո- 32. 10.
53 ռոց, և բարձրացոյց զխոնարհս: *‖Զքաղ- ‖ 1. Թագ.
ցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս ար- 2. 5.
54 ձակեաց ունայնս: *Պաշտպանեաց Իսրայ- Սաղմ.
էլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւն: 33. 11.
55 *Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ ‖Աբրա- ‖Ծննդ.
56 համու և զաւակի նորա յաւիտեան: *Եկաց 17. 9.
Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս, և 22. 16.
դարձաւ 'ի տուն իւր: Սաղմ.
57 *Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնա- 131. 11.
58 նելոյ, և ծնաւ որդի: *Եւ լուան որ շուրջ Եսայ.
զնո- 41. 8.

զնովաւ էին՝ և ազգատոհմ նորա, զի մեծ
արար Տէր ողորմութիւն իւր ընդ նմա. և
խնդային ը՟ նմա: *Եւ եղև յաւուրն ու- 59
թերորդի՝ եկին թլփատել զմանուկն, և
կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա:
*Պատասխանի ետ մայր նորա և ասէ. ոչ՝ 60
այլ կոչեսցի Յովհաննէս: *Եւ ասեն ցնա. 61
քանզի ոչոք է յազգի քում, որոյ կոչի ա-
նուն Յովհաննէս: *Ակնարկէին հօրն նր՝ 62
թէ զի՞նչ կամիցի կոչել զնա: *Եւ խնդ- 63
‖Վեր. րեաց տախտակ, գրեաց ‖ և ասէ. Յով-
Ա. 13. հաննէս է անուն դորա. և զարմացան ա-
մենեքին: *Եւ բացաւ բերան նորա վաղ- 64
վաղակի՝ և լեզու նորա. և խօսէր՝ և օրհ-
նէր զԱծ: *Եւ եղև ահ ՚ի վերայ ամենե- 65
ցուն որ լսէին զայս, և որ շուրջ բնակեալ
էին զնոքօք. և ը՟ ամ լեռնակողմն Հրէա-
ստանի պատմէին ամ բանքս այսոքիկ: *Եւ 66
եդին ամենեքեան որ լսէին՝ ՚ի սիրտս իւր-
եանց, և ասէին. զի՞նչ լինիցի մանուկս
այս. և ձեռն Տն էր ընդ նմա: *Եւ Զա- 67
քարիա հայր նր լցաւ Հոգւով սրբով, մար-
‖Սաղմ. գարէացաւ և ասէ: *‖Օրհնեալ Տէր Ած 68
73. 12. Իսրայէլի, զի յայց ել մեզ, և արար փրր-
‖Սաղմ. կութիւն ժողովրդեան իւրում: *‖Եւ յա- 69
131. 17. րոյց եղջիւր փրկութեան մեզ ՚ի տանէ Դաւ-
‖Երեմ. թի ծառայի իւրոյ: *‖Որպէս խօսեցաւ 70
30. 10. բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն
նորա էին: *փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, 71
և ՚ի ձեռաց ամ ատելեաց մերոց: *Առնել 72
ողոր-

ողորմութիւն ընդ հարս մեր, և յիշել զուխտն
73 իւր սուրբ։ *Զերդումն զոր երդուաւ Աբ– || Ծննդ.
74 րահամու հօր մերում՝ տալ մեզ, *առանց 22. 16.
երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց մերոց փր– Երեմ.
75 կեալս. Պաշտել զնա *սրբութեամբ և արդա– 31. 33.
րութեամբ առաջի նորա զամ աւուրս կենաց Եբրայ.
76 մերոց։ *Եւ դու մանուկ մարգարէ բարձ– 6. 13.
րելոյ կոչեսցիս. զի երթիցես առաջի երե–
սաց Տն պատրաստել զճանապարհս նորա։
77 *Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան || Մար.
78 նորա, ՚ի թողութիւն մեղաց նոցա։ *Վասն 1. 17.
գթութեանց ողորմութեան Այ մերոյ, որովք
այց արասցէ մեզ Արեգակն ՚ի բարձանց։ || Զաքար.
79 *Երեւել որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս 3. 8.
մահու նստէին. ուղղել զոտս մեր ՚ի ճա– 6. 12.
80 նապարհս խաղաղութեան։ *Եւ մանուկն ա– Մաղաք.
ճէր՝ և զօրանայր Հոգւով. և էր յանա– 4. 2.
պատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայէլի։

## ԳԼ. Բ.

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել
հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր
2 առնել ընդ ամ տիեզերս։ *Այս առա–
ջին աշխարհագիր եղև ՚ի դատաւորութեան
3 Ասորւոց Կիւրենեայ։ *Եւ երթային ամե–
նեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքան–
4 չիւր քաղաքի։ *Ել և Յովսէփ ՚ի Գալի– || Միքէ.
լեէ ՚ի քաղաքէ Նազարեթէ ՚ի Հրէաստան 5. 2.
՚ի քաղաք Դաւթի, || որ կոչի Բեթղեհէմ. Մատթ.
վասն 2. 6.

վասն լինելոյ նր̄ 'ի տանէ եւ յազգէ Դաւթի,
*մտանել յաշխարհագիր Մարեմաւ հան- 5
դերձ՝ զոր խօսեալն էր նմա, եւ էր յղի։
*Եւ եղեւ 'ի հասանելն նոցա անդր, լցան 6
աւուրք ծնանելոյ նր̄։ *Եւ ծնաւ զորդին 7
իւր զանդրանիկ, եւ պատեաց 'ի խանձա-
րուրս՝ եւ եդ զնա 'ի մսուր. զի ոչ գոյր
նոցա տեղի յիջեւանին։
*Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բաց- 8
օթեայք, որ պահէին զպահպանութիւնս
գիշերոյ հօտից իւրեանց։ *Եւ հրեշտակ 9
Տն̄ երեւեցաւ նոցա, եւ փառք Տն̄ ծագեցին
առ նոսա. եւ երկեան երկիւղ մեծ։ *Եւ 10
ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք՝ զի ա-
հաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութի̄
մեծ, որ եղիցի ամ̄ ժողովրդեանն. *զի 11
ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տր̄
'ի քաղաքի Դաւթի։ *Եւ այս նշանակ ձեզ. 12
գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձա-
րուրս, եւ եդեալ 'ի մսուր։ *Եւ յանկար- 13
ծակի եղեւ ը̄ հրեշտակին ընդ այնմիկ բազ-
մութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին
զԱծ̄՝ եւ ասէին։ *Փառք 'ի բարձունս Այ̄, 14
եւ յերկիր խաղաղութի̄, 'ի մարդիկ հա-
ճութի̄։ *Եւ եղեւ իբրեւ վերացան 'ի նո- 15
ցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմի-
մեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչեւ
ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զինչ է բանս
այս որ եղեւ. զոր Տէր եցոյց մեզ. *Եւ 16
եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ
զՅով-

զՅովսէփ և զմանուկն եդեալ 'ի մսուր։
17 * Եւ ծանեան վ՟ն բանին՝ որ ասացաւ նոցա
18 զմանկանէն։ * Եւ ամենեքեան որ լսէին,
զարմանային վ՟ն բանիցն՝ զոր խօսեցան ընդ
19 նոսա հովիւքն։ * Եւ Մարիամ զամ՟ զբանս
զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր 'ի
20 սրտի իւրում։ * Եւ դարձան հովիւքն, փա-
ռաւոր առնէին և օրհնէին զԱ՟Ծ վ՟ն ամ՟՝
զոր լուան և տեսին. որպ պատմեցաւ նոցա։
21 * ‖ Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատել ‖ Ծննդ.
զնա, և կոչեցաւ անուն նորա ‖ Յ՟Ս՝ որ կո- 17. 12.
չեցեալն էր 'ի հրեշտակէն, մինչչև յղա- Ղեւտ.
ցեալ էր զնա յորովայնի։ 12. 3.
22 * Եւ իբրև լցան աւուրք սրբութե՟ն ն՟ր ‖ ըստ ‖ Վեր.
օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսա- 1. 31.
23 ղէմ յանդիման առնել Տ՟Ն. * որպէս և ‖ Ղեւտ.
գրեալ է յօրէնս Տ՟Ն, ‖ թէ ամ՟ արու որ 12. 6.
24 բանայ զարգանդ՝ սուրբ Տ՟Ն կոչեսցի. * Եւ ‖ Ելից.
տալ պատարագ՝ ըստ ասացելոյն ‖ յօրէնս 13. 2.
Տ՟Ն, զոյգ տատրակաց, կամ երկուս ձագս Թուոց.
25 աղաւնեաց։ * Եւ ահա այր մի էր յԵրու- 8. 16.
սաղէմ, որոյ անուն էր Սիմէոն. և էր այրն ‖ Ղեւտ.
այն արդար և երկիւղած, և ակն ունէր 12. 8.
մխիթարութե՟ն Իսրայելի, և Հոգի Ս՟Բ էր
26 'ի նմա։ * Եւ էր ն՟ր հրաման առեալ 'ի Հոգ-
ւոյն Ս՟Յ՝ մի՛ տեսանել զմահ, մինչև տեսցէ
27 զՕծեալն Տ՟Ն։ * Եւ եկն հոգւովն 'ի տաճարն.
և իբրև ածին ծնօղքն զմանուկն Յ՟Ս՝ առ-
նել նոցա ը՟ս սովորութե՟ն օրինացն 'ի վերայ
28 ն՟ր. * և նա ընկալաւ զնա 'ի գիրկս իւր,
և

և օրհնեաց զԱծ, և ասէ. *Արդ՝ արձա- 29
կես զծառայս քո Տէր ըստ բանի քում ՚ի
խաղաղութիւն. *զի տեսին աչք իմ զփրկու- 30
թիւն քո. *զոր պատրաստեցեր առաջի 31
ամ ժողովրդոց. *Լոյս ՚ի յայտնութիւն հե- 32
թանոսաց, և փառս ժողովրդեան քում
Իսրայէլի։ *Եւ էին հայրն և մայրն նորա 33
զարմացեալ ՚ի վերայ բանիցն, որ խօսէին
զնմանէ։ *Եւ օրհնեաց զնոսա Սիմէովն, 34
Եսայ. և ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա սա
8. 14. կայ ՚ի գլորումն և ՚ի կանգնումն բազմաց ՚ի
Հռոմ. մէջ Իսրայէլի, և ՚ի նշան հակառակութեն.
9. 33. *Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. զի 35
1. Պետ. յայտնեսցին ՚ի բազում սրտից խորհուրդք։
2. 7. *Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փա- 36
նուէլի յազգէ Ասերայ. սա ինքն անցեալ
էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ընդ առն ամս
եօթն ՚ի կուսութենէ իւրմէ։ *Եւ էր այրի 37
ամաց իբրև ութսուն և չորից. որ ոչ մեկ-
նէր ՚ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք
պաշտէր զցայգ և զցերեկ։ *Եւ սա ՚ի 38
նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏէ,
և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակնու-
նէին փրկութեան Երուսաղէմի։ *Եւ իբրև 39
կատարեցին զամ ըստ օրինացն Տն, դար-
ձան անդրէն ՚ի Գալիլեա ՚ի քաղաքն իւր-
Ելից. եանց Նազարէթ։ *Եւ մանուկն աճէր և 40
23. 15. զօրանայր լի իմաստութեամբ. և շնորհք Այ
34. 18. էին ՚ի վերայ նորա։ *Եւ երթային ծնողք նր 41
2.Օրին. ամի ամի յԵրուսաղէմ ՚ի տօն զատկին։
16. 1.
*Եւ

42 * Եւ իբրեւ եղեն նր ամք երկոտասան, յե-
լանել նց յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօ-
43 նին, * Եւ կատարել զաւուրսն՝ եւ դառնալ
անդրէն, մնաց Յս մանուկն յԵրուսաղէմ.
44 եւ ոչ գիտացին ծնօղքն նորա։ * Կարծէին
զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ
աւուր միոյ ճանապարհ՝ եւ խնդրէին զնա ընդ
45 դրացիսն եւ ընդ ծանօթս։ * Եւ իբրեւ ոչ
գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդ-
46 րել զնա։ * Եւ եղեւ յետ երից աւուրց՝
գտին զնա 'ի տաճարին, զի նստէր ընդ վար-
դապետսն. լսէր 'ի նոցանէ, եւ հարցանէր
47 զնոսա։ * Զարմանային ամենեքեան՝ որ լսէին
'ի նմանէ՝ ընդ իմաստութիւն եւ ընդ պատասխա-
48 նիս նր։ * Եւ իբրեւ տեսին զնա՝ սքանչա-
ցան. եւ ասէ ցնա մայրն իւր. որդեակ՝ զի՞նչ
գործ գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ
հայր քո եւ ես տառապեալք՝ խնդրեաք ըզ-
49 քեզ։ * Եւ ասէ ցնս. զի խնդրէիք զիս,
ոչ գիտէիք եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է
50 ինձ լինել։ * Եւ նոքա ոչ իմացան զբանն՝
51 զոր խօսեցաւ ընդ նոսա։ * Եւ էջ ընդ նս,
եւ գնաց 'ի Նազարեթ. եւ էր նոցա հնա-
զանդ. եւ մայր նորա պահէր զամ զբանսն
52 'ի սրտի իւրում։ * Եւ Յս զարգանայր ի-
մաստութբ եւ հասակաւ, եւ շնորհօք յԱծ
եւ 'ի մարդկանէ։

## ԳԼ. Գ.

Ի հնգետասաներորդի ամի տէրութեն 1
Տիբերեայ կայսեր, 'ի դատաւորութեան
Հրէաստանի Պիղատոսի պոնտացւոյ, և 'ի
չորրորդապետութեն Գալիլեացւոց Հերովդի,
և 'ի Փիլիպպոսի եղբօր նր չորրորդապետու-
թեան Իտուրացւոց և Տրաքոնացւոց աշ-
խարհին, և 'ի չորրորդապետութեն Լիւսանեայ
Գործ. աբիլենացւոյ, * || և 'ի քահանայապետու- 2
4. 6. թեան Աննայի և Կայիափայ. եղև բան Այ
'ի վր Յովհաննու որդւոյ Զաքարեայ՝ յա-
Մատթ. նապատի անդ: * || Եւ եկն յամ կողմն Յոր- 3
3. 1. դանանու քարոզել մկրտութիւն ապաշխա-
Մարկ. րութեան 'ի թողութիւն մեղաց. * որպէս 4
1. 4. և գրեալ է 'ի գիրս պատգամաց Եսայեայ
Եսայ. մարգարէի. || Ձայն բարբառոյ յանապատի.
40. 3. պատրաստ արարէք զճանապարհ Տն, ուղիղ
Յովհան. արարէք զշաւիղս նորա: * Ամենայն ձորք 5
1. 23. լցցին, և ամ լերինք և բլուրք խոնարհեսցին.
և եղիցին դժուարինքն 'ի դիւրինս, և ա-
ռապարքն 'ի հարթ ճանապարհս. * և տեսցէ 6
ամ մարմին զփրկութի Այ: * Եւ ասէ ցժո- 7
Մատթ. ղովուրդսն ելեալս մկրտիլ 'ի նմանէ. || Ծը-
3. 7. նունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի բար-
կութենէն՝ որ գալոց է: * Արարէք այսուհե- 8
տև պտուղս արժանի ապաշխարութն. և
մի՛ սկսանիցիք ասել՝ եթէ ունիմք հայր զԱբ-
րահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կարող է

Ած

Աստ ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որ-
9 դիս Աբրահամու: *Բայց ահաւասիկ տա-
պար առ արմին ծառոց կայ. ամենայն ծառ՝
որ ոչ առնէ զպտուղ բարւոք, հատանի և
10 ՚ի հուր արկանի: *Հարցանէին զնա ժողո-
վուրդքն և ասէին. իսկ արդ՝ զի՞նչ գոր-
11 ծեսցուք: *Պատասխանի ետ և ասէ ցնոսա.
‖Որ իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին ‖ Յակոբ.
այնմ որ ոչն գուցէ. և որ կայցէ կերա- 2. 15.
12 կուր՝ նոյնպէս արասցէ: *Եկին և մաքսա- 1. Յովհ.
ւորք մկրտել, և ասեն ցնա. վարդապետ՝ 3. 17.
13 զի՞նչ գործեսցուք: *Եւ նա ասէ ցնոսա.
մի ինչ աւելի քան զհրամայեալն ձեզ առ-
14 նիցէք: *Հարցանէին զնա և զինուորքն և
ասէին, և մեք զի՞նչ գործեսցուք: Ասէ ցնս.
մի զոք խռուիցէք՝ և մի զոք զրպարտիցէք,
15 շատ լիցին ձեզ թոշակքն ձեր: *Մինչ ակն
ունէր ժողովուրդն՝ և խորհէին ամենեքեան ‖ Մատթ.
՚ի միտս իւրեանց վն Յովհաննու՝ միթէ սա 3. 11.
16 իցէ Քսն: *Պատասխանի ետ ամենեցուն Մարկ.
և ասէ. ‖ես մկրտեմ զձեզ ջրով. բայց 1. 8.
գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւա- Յովհան.
կան բառնալ զկօշիկս. ‖նա մկրտեսցէ զձեզ 1. 26.
17 Հոգւով սրբով և հրով: *‖Որոյ հեծանոցն ‖ Գործ.
՚ի ձեռին իւրում սրբել զկալ իւր՝ և ժո- 1. 5.
ղովել զցորեանն ՚ի շտեմարանս իւր, և ‖ Մատթ.
18 զյարդն այրեսցէ անշէջ հրով: *Բազում 3. 12.
և այլ ինչ մխիթարութբ աւետարանէր ժո- ‖ Մատթ.
19 ղովրդեանն: *‖Բայց Հերովդէս չորրոր- 14. 4.
դապետ յանդիմանեալ ՚ի նմանէ վասն Հե- Մարկ.

բովդիայ կնոջ եղբօր իւրոյ՝ եւ վն ամ չա֊
րեացն զոր գործեաց Հերովդէս. * յաւել եւ 20
զայն եւս ՚ի վր ամի. եւ եդ ՚ի բանտի զՅով֊
Մատթ. հաննէս: * Եւ եղեւ ՚ի մկրտել ամ ժողո֊ 21
3. 13. վրդեանն, եւ ընդ Յսի մկրտելն՝ եւ կալ յա֊
Մարկ. ղօթս, բանալ երկնից, * եւ իջանել Հոգւոյն 22
1. 9. սրբյ մարմնաւոր տեսլեամբ իբրեւ զաղաւնի ՚ի
Յովհան. վր նր. եւ գալ ձայն յերկնից՝ որ ասէր. դու
1. 32. ես որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ:
* Եւ ինքն Յս էր ամաց իբրեւ երեսնից՝ ըս֊ 23
կսեալ՝ որպէս կարծէր որդի Յովսեփայ.
Որ Յակովբայ. որ Հեղեայ. որ Մատա֊
թեայ: * Որ Ղեւեայ. որ Մելքեայ. որ 24
Յաննեայ. որ Յովսեփայ: * Որ Մատա֊ 25
թեայ. որ Ամովսայ. որ Նաւումայ. որ
Եսղեայ. որ Նանգեայ: * Որ Մահաթայ. 26
որ Մատաթայ. որ Սեմեայ. որ Յովսե֊
քեայ. որ Յովդայ: * Որ Յովնանայ. 27
որ Ռեսայ. որ Զօրաբաբելին. որ Սաղա֊
թիէլին. որ Ներեայ: * Որ Մելքեայ. 28
որ Ադդեայ. որ Կովսամայ. որ Եղմով֊
դադայ. որ Էրայ: * Որ Յեսուեայ. որ 29
Եղիազարայ. որ Յովրամայ. որ Մատ֊
թայն. որ Ղեւեայ: * Որ Սիմէօնին. որ 30
Յուդային. որ Յովսեփայ. որ Յովնանայ.
որ Եղեակիմայ: * Որ Մեղեայ. որ Մեն֊ 31
նայ. որ Մատաթայ. որ Նաթանայ.
որ Դաւթին: * Որ Յեսսեայ. որ Ովբե֊ 32
դայ. որ Բոոսայ. որ Սաղմոնայ. որ
Նաասոնին: * Որ Ամինադաբայ. որ Ա֊ 33

րա֊

դամայն. որ Ադմեայն. որ Առնեայն. որ
Եսրոմայն. որ Փարեսին. որ Յուդային ։
34 * Որ Յակովբայն. որ Իսահակայն. որ Աբ-
րահամուն. որ Թարային. որ Նաքովրայն.
35 * Որ Սերուքայն. որ Ռագաւայն. որ Փա-
36 ղեկայն. որ Եբերայն. որ Սաղային ։ * Որ
Կայնանայն. որ Արփաքսադայն. որ Սեմայն.
37 որ Նոյին. որ Ղամեքայն ։ * Որ Մաթուսա-
ղային. որ Ենովքայն. որ Յարեդին. որ
38 Մաղաղէելին. որ Կայնանայն ։ * Որ Ենով-
սայն. որ Սեթայն. որ Ադամայն. որ Այն ։

## ԳԼ. Դ.

1 Եւ ‖ Յս լի Հոգւով սրբով դարձաւ 'ի ‖ Մատթ.
Յորդանանէ. և վարէր Հոգւովն յանապատ, 4. 1.
2 * յաւուրս քառասուն փորձել 'ի սատա- Մարկ.
նայէ. և ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայ- 1. 12.
նոսիկ. և 'ի կատարելն նոցա՝ քաղցեաւ ։
3 * Եւ ասէ ցնա սատանայ. եթէ որդի ես
Այ, ասա՛ քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի ։
4 * Պատասխանի ետ նմա Յս և ասէ. գրեալ
է, ‖ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, ‖ 2. Օրին.
5 այլ ամ բանիւ Այ ։ * Եւ հանեալ զնա 'ի 8. 3.
լեառն մի բարձր՝ եցոյց նմա զամ թագաւո-
րութիւնս աշխարհի 'ի վայրկեան ժամանակի ։
6 * Եւ ասէ ցնա սատանայ. քեզ տաց զայս
ամ իշխանութիւն և զփառս սոցա, զի ինձ
7 տուեալ է՝ և ում կամիմ՝ տամ զսա ։ * Արդ
դու եթէ անկեալ երկիրպագանիցես առա-

ջի իմ, քեզ եղիցի ամ: *Պատասխանի ետ 8
‖2.Օրէն. նմա Յս և ասէ. գրեալ է, ‖Երկիրպագա-
6. 13. ցես Տն Այ քում, և զնա միայն պաշտես-
10. 20. ցես: *Եւ ած զնա յԵրուսաղէմ, և կա- 9
ցոյց ՚ի վր աշտարակի տաճարին, և ասէ ցնա.
եթէ որդի ես Այ, արկ զքեզ աստի ՚ի վայր:
‖Սաղմ. *‖Զի գրեալ է՝ եթէ հրեշտակաց իւրոց 10
90. 11. պատուիրեալ է վս քո՝ պահել զքեզ: *Զի 11
՚ի վր ձեռաց բարձցեն զքեզ, մի երբեք
հարցես զքարի զոտն քո: *Պատասխանի 12
‖2.Օրէն. ետ նմա Յս և ասէ. ասացեալ է, ‖Թէ ոչ
6. 16. փորձեսցես զՏր Ած քո: *Եւ կատարեալ 13
զամ փորձութիւն սատանայի, ՚ի բաց եկաց
՚ի նմանէ առ ժամանակ մի:
Ի Կ *‖Եւ դարձաւ Յս զօրութբ Հոգւոյն ՚ի Գա- 14
‖Մատթ. լիլեա. և ել համբաւ զնմանէ ընդ ամ կող-
4. 14. մանս գաւառին: *Եւ նա ուսուցանէր ՚ի 15
Մարկ. ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենե-
1. 14. ցունց: *Եւ եկն ՚ի Նազարէթ ուր սնեալն 16
էր. և եմուտ ըստ սովորութեան իւրում յա-
ւուրն շաբաթուց ՚ի ժողովուրդն: *Եւ ե- 17
տուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, և յա-
րեաւ ընթեռնուլ. և իբրև եբաց զգիրսն՝
եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն էր:
‖Եսայ. *‖Հոգի Տն ՚ի վերայ իմ, վս որոյ և օծ իսկ 18
61. 1. զիս. աւետարանել աղքատաց առաքեաց
զիս, բժշկել զբեկեալս սրտիւք. *քարոզել 19
գերեաց զթողութի, և կուրաց տեսանել.
արձակել զվիրաւորս ՚ի թողութի. քարո-
զել զտարեկան Տն ընդունելի: *Եւ խփեալ 20
զգիրսն՝

զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, և նստաւ. և
ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք՝ 'ի
21 նա հայէին: *Եւ սկսաւ ասել ցնս. այսօր
22 լցան գիրքս այս յականջս ձեր: *Եւ ամե-
նեքին վկայէին նմա, և զարմանային ընդ
բանս շնորհացն՝ որ ելանէին 'ի բերանոյ նր.
և ասէին, ‖ Ոչ սա է որդին Յովսեփայ: ‖ Յովհ.
23 *Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս 6. 42.
զառակս զայս. բժիշկ՝ բժշկեա զանձն քո.
որչափ լուաք զոր արարեր 'ի Կափառնաում,
24 արա և աստ 'ի քում գաւառի: *Եւ ասէ.
ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդու-
25 նելի 'ի քաղաքի իւրում: *Արդարև ասեմ
ձեզ. զի բազում այրիք էին յաւուրս Ե-
ղիայի 'ի մէջ Իսրայելի՝ յորժամ փակե-
ցանն երկինք զերիս ամս և զվեց ամիս. և
26 եղև սով մեծ ընդ ամ երկիր: *‖ Եւ ոչ առ ‖ 3. Թագ.
մի 'ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն 17. 9.
'ի Սարեփթայ Սիդոնացւոց՝ առ կին մի այ-
27 րի: *‖ Եւ բազում բորոտք էին յԻսրայե- ‖ 4. Թագ.
լի առ Եղիսէիւ մարգարէիւ. և ոչոք 'ի նո- 5. 14.
ցանէ սրբեցաւ, բայց միայն Նեեման Ասորի:
28 *Եւ լցան ամենեքին բարկութբ 'ի ժողո-
29 վրդեանն՝ իբրև լուէին զայս: *Եւ յարու-
ցեալ հանէին զնա արտաքոյ քաղաքին, և
ածին զնա մինչև յարտևան լերինն՝ յորոյ
վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ
30 առնել զնա: *Եւ նա անցեալ ընդ մէջ
նոցա՝ գնայր: ⁂
31 *Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գա- Ի Ի

լիլեացւոց, եւ ուսուցանէր զնոսա 'ի շա-
‖ Մարկ. 1. 21. բաթուն: *‖Եւ զարմանային ընդ վարդա- 32
պետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան
նորա: *Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, 33
զոր ունէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց
'ի ձայն մեծ, *ասէ. թուլացո՛ զի՞ կայ մեր 34
եւ քո՛ Յս՟ Նազովրեցի, եկիր կորուսանել
զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբ Այ՟:
*Սաստեաց 'ի նա Յս՟ եւ ասէ. պապանձեա՛ց 35
եւ ե՛լ 'ի դմանէ: Զգետնեաց զնա դեւն 'ի մի-
ջի անդ՝ եւ ել 'ի նմանէ, եւ ինչ ոչ վնա-
սեաց նմա: *Եւ եղեն զարմանալիք 'ի վ՟ր 36
ամենեցուն, խօսէին ընդ միմեանս եւ ասէին.
զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ եւ զօ-
րութեամբ սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն: *Եւ 37
երթայր հռչակ զնմանէ ընդ ամ՟ տեղիս շուրջ
զգաւառաւն: *Եւ յարուցեալ 'ի ժողովր- 38
‖ Մատթ. 8. 14. դենէ անտի, եմուտ 'ի տուն Սիմովնի: *‖Զո- 39
քանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ,
Մարկ. 1. 30. եւ աղաչեցին զնա վն՟ նր՟: *Եկաց առ նմա՝ 40
սաստեաց ջերմանն, եւ եթող զնա. եւ վաղ-
վաղակի յարեաւ՝ եւ պաշտէր զնոսա: *Եւ 41
ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին
հիւանդք 'ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա
առ նա: Եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի նո-
‖ Մարկ. 1. 34. ցանէ դնէր ձեռս՝ եւ բժշկէր զն՟ս: *‖Ելա- 42
նէին դեւք 'ի բազմաց, աղաղակէին եւ ասէ-
ին. եթէ դու ես որդի Այ՟. եւ նա սաստէր՝
եւ ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին
զնա թէ Քն՟ է:

*Եւ

43 *Եւ իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ Բ. Գ.
տեղի. և ժողովուրդքն խնդրէին զնա. ե-
կին մինչև առ նա՝ և արգելուին զնա, զի մի
44 գնասցէ 'ի նոցանէ: *Եւ նա ասէ ցնոսա.
և այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարա-
նել զարքայութիւնն Այ, զի յայն իսկ առա-
45 քեցայ. *Եւ քարոզէր 'ի ժողովուրդսն Գա-
լիլեացւոց:

## ԳԼ. Ե.

1 Եւ եղև 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն
և լսել զբանն Այ, և ինքն կայր առ ծովա-
2 կին Գեննեսարեթայ: *‖Եւ ետես երկուս ‖Մատթ.
նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորսքն 4. 18.
3 ելեալ 'ի նոցանէ՝ լուանային զգործիսն: *Եւ Մարկ.
նա 'ի մի նաւուցն՝ որ էր Սիմոնի, և աղա- 1. 16.
չեաց զնա սակաւիկ մի տանել 'ի ներքս 'ի
ցամաքէն. նստաւ՝ և ուսուցանէր 'ի նաւէ
4 անտի զժողովուրդսն: *Եւ իբրև լռեաց 'ի
խօսիցն, ասէ ցՍիմոն. խաղացո 'ի խորն,
5 և արկէք զգործիս ձեր յորս: *Պատասխա-
նի ետ Սիմոն և ասէ ցնա. վարդապետ՝
զամենայն գիշերս աշխատ եղեաք՝ և ոչինչ
կալաք, բայց վս քո բանիդ արկցուք զգոր-
6 ծիս: *Զայս իբրև արարին՝ փակեցին 'ի
ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչև պատ-
7 առէին ուռկանք նոցա: *Եւ ակնարկէին
որսակցացն 'ի միւս նաւուն՝ գալ օգնել նց. և
եկին և լցին երկոքին նաւքն՝ մինչև մերձ

լին-

յընկղմել նց։ *Իբրեւ ետես Սիմովն Պետ- 8
րոս՝ անկաւ առ ծունկս Յսի եւ ասէ. 'ի
բաց գնա յինէն Տր, զի այր մեղաւոր եմ
ես։ *Քանզի ահ պատեաց զնա եւ զամենե- 9
սեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն
զորս ըմբռնեցին. *Նոյնպէս եւ զՅակովբոս 10
եւ զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ
էին որսակիցք Սիմովնի։ Եւ ասէ ցՍիմովն
Յս. մի երկնչիր՝ յայսմ հետէ զմարդիկ որ-
սայցես 'ի կեանս։ *Եւ հանեալ զնաւն 'ի 11
ցամաք, թողին զամ, եւ գնացին զհետ նր։
ԻԳ *Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի քաղա- 12
Մատթ. քացն, ահա այր մի լի բորոտութմբ իբրեւ
8. 2. ետես զՅս՝ անկեալ 'ի վը երեսաց աղա-
Մարկ. չեաց զնա՝ եւ ասէ. Տէր՝ եթէ կամիս, կա-
1. 40. րօղ ես զիս սրբել։ *Ձգեաց զձեռն իւր՝ 13
հասոյց 'ի նա՝ եւ ասէ. կամիմ՝ սրբեաց. եւ
վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութին։
*Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, 14
այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային.
Ղեւտ. եւ մատո պատարագ վն սրբութեն քո՝ ‖ որպ
14. 4. է հրամայեաց Մովսէս, 'ի վկայութի նոցա։
*Եւ յորդէր առաւել բանն զնմանէ. եւ 15
ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ եւ
բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց։ *Եւ 16
նա խոյս տայր յանապատ տեղիս, եւ կայր
յաղօթս։
ԻԴ *Եւ եղեւ 'ի միում աւուրց՝ եւ ինքն ուսու- 17
ցանէր, եւ փարիսեցիքն եւ օրինացն վարդա-
պետք նստէին. որ ժողովեալ էին յամ քա-

ղա-

գիւղից Գալիլեացւոց՝ և Հրէաստանի և Երու-
սաղեմի. և զօրութիւն Տն էր ՚ի բժշկել
18 զնոսա: *Եւ ահա արք բերէին մահճօք Մատթ.
զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին 9. 2.
զնա մուծանել ՚ի ներքս՝ և դնել առաջի նր: Մարկ.
19 *Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մու- 2. 3.
ծանիցեն զնա ՚ի ներքս վն ամբոխին, ելին
՚ի տանիս և ՚ի ցռոցն կախեցին զնա, և
իջուցին մահճօքն հանդերձ ՚ի մէջ առաջի
20 Յսի: *Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ
ցնա. այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք
21 քո: *Սկսան խորհել դպիրքն և փարիսե-
ցիքն, և ասեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյ-
ութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց
22 միայն Այ: *Իբրև գիտաց Յս զխորհուրդս
նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞
23 խորհիք ՚ի սիրտս ձեր: *Զի՞նչ դիւրագոյն
է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, ե-
24 թէ ասել՝ արի և գնա՛: *Այլ զի գիտաս-
ջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն,
քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ
25 ՚ի տուն քո: *Եւ առժամայն յարուցեալ
առաջի ամենեցուն՝ առ զիւրև յորոյ վերայ
անկեալ դնէր, գնաց ՚ի տուն իւր, և փա-
26 ռաւոր առնէր զԱծ: *Զարմանք կալան զա-
մենեսեան, և փառաւոր առնէին զԱծ. լի
եղեն ահիւ, և ասեն, եթէ տեսաք այսօր
նոր նշանս:

27 *Եւ յետ այնորիկ ել անտի՝ և ետես մաք- Ի.Օ.

սա-

Մատթ. սաւոր մի՝ որում անուն էր Ղեւի, զի նստէր
9. 9. 'ի մաքսաւորութեան. եւ ասէ ցնա, եկ զկնի
Մարկ. իմ: *Եւ թողեալ զա՛մ՝ յարեաւ գնաց զկնի 28
2. 14. նորա: *Եւ արար ընդունելութիւն մեծ նմա 29
Ղեւի 'ի տան իւրում. եւ էր ժողովուրդ բա-
զում մաքսաւորաց եւ այլոց՝ որ էին բազ-
Մարկ. մեալ ընդ նոսա: *Եւ տրտնջէին փարի- 30
2. 16. սեցիքն եւ դպիրքն նոցա զնմանէ առ աշա-
կերտսն նորա՝ եւ ասէին. ընդէ՞ր ընդ մաք-
սաւորս եւ ընդ մեղաւորս ուտէք եւ ըմպէք:
*Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնոսա, ոչ- 31
ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւան-
դաց: *Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ 32
զմեղաւորս յապաշխարութիւն: *Եւ նոքա 33
Մարկ. ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհան-
2. 18. նու պահեն ստէպ՝ եւ խնդրուածս առնեն,
նոյնպէս եւ փարիսեցւոցն. եւ քոյդ ուտեն եւ
ըմպեն: *Եւ նա ասէ ցնոսա. միթէ կա- 34
րօղ էք մանկանց առագաստի, մինչ փե-
սայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել:
*Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նո- 35
ցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն
յայնոսիկ: *Ասաց եւ առակ մի առ նոսա, 36
թէ ոչոք արկանէ 'ի նոր հանդերձէ 'ի վերայ
հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ եւ զնորն
պատառէ. եւ ընդ հնոյն չմիաբանի կապերտն
որ 'ի նորոյն: *Եւ ոչոք արկանէ գինի նոր 37
'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ
գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու, եւ
տիկքն կորնչին: *Այլ գինի նոր 'ի տիկս 38

նորս

39 նորս արկանելի է, և երկոքին պահին: *Եւ
ոչոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն. քան-
զի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է:

## Գլ. Զ:

1 Եւ ‖ եղև 'ի շաբաթու յերկրորդում ա- Բ. Ա.
ռաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. և ‖ Մատթ.
աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շփէին ըն̃ 12. 1.
2 ափ, և ուտէին: *Եւ ոմանք 'ի փարիսեց- Մարկ.
ւոցն ասեն ցնոսա. զինչ գործէք՝ զոր չէ 2. 23.
3 օրէն 'ի շաբաթու: *Պատասխանի ետ նոցա
Յս և ասէ. չիցէ ընթերցեալ ձեր՝ զոր ա-
րարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն
4 և որ ընդ նմայն էին: *‖Որպէս եմուտ նա ‖ 1. Թագաւ.
'ի տունն Այ, և զհացն առաջաւորութեան 21. 6.
եկեր՝ և ետ այնոցիկ որ ըն̃ նմայն էին. զոր
ոչ էր օրէն ումեք ուտել, ‖ բայց միայն քա- ‖ Ելից.
5 հանայապետին: *Եւ ասէ ցնոսա. տէր է 29. 32.
6 որդի մարդոյ և շաբաթու: *Եւ եղև 'ի Ղեւտ.
միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժողո- 24. 9.
վուրդն՝ և ուսուցանել. ‖ և էր անդ այր մի ‖ Մատթ.
7 և ձեռն իւր աջ գօսացեալ էր: *Եւ սպա- 12. 10.
սէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ 'ի շա- Մարկ.
բաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարա- 3. 1.
8 խօսութիւն զնմանէ: *Եւ նա գիտէր զխոր-
հուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօ-
սացեալ էր. արի անց 'ի մէջ. Եւ նա յա-
9 րուցեալ եկաց: *Ասէ ցնոսա Յս. հարցից
ինչ զձեզ. զինչ արժան է 'ի շաբաթու,

բա-

բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի՞
մի ապրեցուցանել թէ կորուսանել: * Եւ 10
հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝
ասէ ցնա. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց,
և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն:
* Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ 11
միմեանս՝ թէ զի՞նչ առնիցեն Յսի:
Գ. Կ * Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի 12
լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն 'ի
‖ Մատթ. գլուխ յաղօթսն Այ: * ‖ Եւ իբրև այգ ե- 13
10. 1. ղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց
Մարկ. 'ի նոցանէ երկոտասանս. զորս և առաքեալս
3. 13. անուանեաց. * զՍիմովն՝ զոր և Պետրոս 14
անուանեաց, և զԱնդրէաս զեղբայր նորին,
և զՅակովբոս և զՅովհաննէս, և զՓիլիպ-
պոս և զԲարթողիմէոս, * և զՄատթէոս 15
և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և
զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյզ, * և 16
զՅուդա Յակովբեայ, և զՅուդա Իսկարիով-
տացի՝ որ եղև իսկ մատնիչ: * Եւ իջեալ նո- 17
քօք հանդերձ 'ի տեղի մի տափարակ. և
ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն
յոյժ ժողովրդեանն, յամ Հրէաստանէ և
յԵրուսաղէմէ՝ և յայնմ կողմանէ՝ և 'ի ծո-
վեզերէն Տիւրոսի և Սիդովնի. * որ եկին 18
լսել 'ի նմանէ՝ և բժշկել 'ի հիւանդութեն
իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բը-
ժշկէին: * Եւ ամ ժողովուրդն խնդրէր մեր- 19
ձենալ 'ի նա, զի զօրութի բայում ելանէր
‖ Մատթ. 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսեան: * ‖ Եւ նա 20
5. 2. ամ-

ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր՝ և ասէ.
Երանի աղքատաց հոգւով, զի ձեր է ար-
21 քայութիւն Այ։ *Երանի՝ որ քաղցեալ են
այժմ, զի յագեսջիք. Երանի՝ որ լան այժմ,
22 զի ծիծաղեսջիք։ *‖Երանի է ձեզ յորժամ ‖Մատթ.
նախատիցեն զձեզ մարդիկ, և յորժամ ո- 5. 11.
րոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն
անուն չար զձէնջ վասն որդւոյ մարդոյ։
23 *Ուրախ լերուք յաւուր յայնմիկ և ցնծա-
ջիք, զի ահա վարձք ձեր բազում են յեր-
կինս. ըստ դմին օրինակի առնէին մարգա-
24 րէիցն հարք իւրեանց։ *Բայց վա՜յ ձեզ մե-
ծատանցդ՝ զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։
25 *‖Վա՜յ ձեզ որ յագեալդ էք այժմ՝ զի քաղ- ‖Եսայ.
ցիջիք. վա՜յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի 65. 13.
26 սգայջիք և լայջիք։ *Վա՜յ ձեզ՝ յորժամ
բարի ասիցեն զձէնջ ամ մարդիկ, զի այդ-
պէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա։
27 *Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. ‖սիրեցէք ըզ- ‖Մատթ.
թշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձե- 5. 44.
28 րոց։ *Օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս
29 արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց։ *‖Որ ‖Մատթ.
հարկանէ զծնօտ քո՝ մատո՛ նմա և զմիւսն. և 5. 39.
որ հանէ ՚ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր ՚ի
30 նմանէ և զշապիկս։ *Ամենայնի՝ որ խնդրէ ՚ի
քէն՝ տուր, և զոր ինչ հանէ ոք ՚ի քէն՝ ‖Տոբիթ.
31 մի պահանջեր։ *‖Եւ որպէս կամիք թէ ա- 4. 16.
րասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և Մատթ.
32 դուք նոցա։ *‖Եւ եթէ սիրէք դուք զսի- 7. 12.
րելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր, զի և մեղա- ‖Մատթ.
ւորք 5. 46.

ւոյք սիրեն զսիրելիս իւրեանց : *Եւ եթէ 33
բարի առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ
Օրէ. է ձեր, զի և մեղաւորք զնոյն գործեն : *Եւ 34
15. 8. եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունի-
Մատթ. ցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր . քանզի և մե-
5. 42. ղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն
անդրէն զկշիռն : *Բայց սիրեցէք զթշնա- 35
միս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց.
և տո՛ւք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առ-
նուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և ե-
ղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր է ՚ի
վերայ չարաց և ապաշնորհաց : *Եղերո՛ւք 36
գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է :
Մատթ. *Մի՛ դատէք՝ և ոչ դատիցիք . մի՛ պատ- 37
7. 1. ժէք՝ և ոչ պատժիցիք, արձակեցէք և ար-
ձակիցիք : *Տո՛ւք՝ և տացի ձեզ . չափ բա- 38
ւոք՝ թաթաղուն շարժուն զեղուն՝ տացեն ՚ի
Մարկ. գոգս ձեր . Նովին չափով որով չափէք՝
4. 24. չափեսցի ձեզ : *Ասաց և առակ մի առ նս. 39
միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ
ապաքէն երկոքին ՚ի խորխորատ անկանիցին.
Մատթ. *Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ 40
10. 24. իւր. ամ կատարեալն եղիցի իբրև զվարդապետ
Մատթ. իւր : *Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր 41
7. 3. քո, և ՚ի քում ական զգերանդ ոչ նշմա-
րես : *Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր 42
քո. եղբայր՝ թո՛ղ հանից զշիւղդ յականէ
քումմէ, և դու ՚ի քում ական զգերանդ ոչ
տեսանես. կեղծաւոր՝ հա՛ն նախ զգերանդ
յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել

զշիւղ

43 պտուղ յականէ եղբօր քո։ *Զի ոչ է ծառ բարի որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի. | Մատթ. 7. 18. 12. 33.
44 *զի իւրաքանչիւր ծառ 'ի պտղոյ իւրմէ ճա-
նաչի։ Զի ոչ եթէ 'ի փշոց քաղեն թուզ,
45 և ոչ 'ի մորենւոյ կթեն խաղող։ *Մարդ-
բարի 'ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ
զբարի, և մարդ չար 'ի չարէն բղխէ զչար,
քանզի 'ի յաւելուածոյ սրտին խօսի բերան
46 նորա։ *Զի կոչէք զիս՝ Տէր Տէր, և զոր Մատթ.
47 ասեմ ոչ առնէք։ *Ամենայն որ գայ առ 7. 21.
իս, և լսէ զբանս իմ և առնէ զնոսա, ցու- Հռովմ.
48 ցից ձեզ ում նման է։ *Նման է առն, 2. 13.
որ շինիցէ տուն. որ փորեաց և խորեաց, և Յակով.
եդ հիմն 'ի վերայ վիմի. 'ի յառնել հեղե- 1. 22.
ղաց՝ բաղխեաց գետ զտունն, և ոչ կարաց
շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն 'ի
49 վերայ վիմի։ *Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ
առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն 'ի վե՛ր
հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ,
և վաղվաղակի անկաւ. և եղև կործանումն
տանն այնորիկ մեծ։

## ԳԼ. Է։

1 Եւ իբրև կատարեաց զամ զբանս իւր 'ի ✠
լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառ- Գ. Ի.
2 նաում։ *Հարիւրապետի ուրումն ծառայ Մատթ.
չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախ- 8. 5.
3 ճանել, որ էր նմա պատուական։ *Իբրև

լուեալ զՅսէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից,
աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծա֊
ռայն նորա։ *Եւ նոքա եկեալ առ Յս՝ ա֊ 4
ղաչէին զնաստէպ՝ և ասէին, թէ արժանի
է՝ որում զշնորհս զայս առնես։ *Զի սի֊ 5
րէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շի֊
նեաց մեզ. *Եւ Յս գնաց ընդ նոսա. իբ֊ 6
րև ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց
առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ
‖ Մատթ. ցնա. ‖ Տէ՛ր՝ մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ
8. 8. բաւական եթէ ը̄ յարկաւ իմով մտանիցես։
*Վն որոյ և ոչ զանձն համարեցայ արժա֊ 7
նի՝ առ քեզ գալոյ. այլ ասա՛ բանի՛ւ և
բժշկեսցի մանուկս իմ. *Քանզի և ես այր 8
մի եմ կարգեալ ը̄ իշխանութ̄բ. ունիմ ընդ
ինև զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և եր֊
թայ. և այլում թէ եկ, և գայ. և ծա֊
ռայի իմում թէ արա՛ զայս, և առնէ։ *Եւ 9
իբրև լուաւ զայս Յս՝ զարմացաւ, դարձաւ
առ ժողովուրդն որ երթային զհետ նորա՝ և
ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յԻսրայ֊
ելի այսչափ հաւատս գտի։ *Եւ դարձան 10
անդրէն պատգամաւորքն 'ի տուն, և գտին
զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
*Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, 11
Գ. Գ. որում անուն էր Նային. երթային ը̄ նմա և
աշակերտք նորա և ժողովուրդ բազում։
*Իբրև մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և 12
ահա հանէին մեռեալ մի՝ որդի միամօր մօր
իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում

քա֊

13 քաղաքին էր ընդ նմա: *Իբրև ետես զնա
14 Տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ. մի լար: *Եւ
մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և որք
բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ,
15 պատանի դու՝ քեզ ասեմ՝ արի: *Կանգնե-
ցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և
16 ետ զնա ցմայր իւր: *Եւ աՀ կալաւ զամե-
նեսին, և փառաւոր առնէին զԱ՟ծ՝ և ասէին,
թէ ‖մարգարէ մեծ յարուցեալ է 'ի միջի ‖Մատթ.
մերում, և թէ այց արար Ա՟ծ ժողովրդեան 24. 19.
17 իւրում 'ի բարութիւն: *Եւ ել զրոյցս այս ընդ Յովհ.
ամ՟ Հրէաստան վ՟ն ն՟ր. և ընդ ամ՟ կողմանս աշ- 4. 19.
18 խարհին: *Եւ պատմեցին Յովհաննու աշա-
19 կերտքն իւր վ՟ն ամենայնի այսորիկ: *‖Եւ ‖Մատթ.
կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակեր- 11. 2.
տացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց առ
Տէր և ասէ. դու ես որ գալոցն ես, եթէ
20 այլում ակն կալցուք: *Եւ եկեալ արքն առ
նա՝ ասեն, Յովհաննէս մկրտիչ առաքեաց
զմեզ առ քեզ՝ և ասէ, դու ես որ գալոցն
21 ես՝ եթէ այլում ակն կալցուք: *Եւ 'ի նմին
ժամու բժշկեաց զբազումս 'ի Հիւանդութեանց
և 'ի Հարուածոց և յայսոց չարաց, և կու-
22 րաց բազմաց շնորհեաց տեսանել: *Պա-
տասխանի ետ նոցա և ասէ. երթայք պատ-
մեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լուայք.
‖զի կոյրք տեսանեն, և կաղք գնան; բո- ‖Եսայ.
րոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, 35. 5.
23 աղքատք աւետարանին. *և երանի իցէ՝ որ
24 ոչ գայթագղեսցի յիս: *Եւ իբրև գնացին

N 2 Հրեշ-

հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ
ժողովրդեան վասն Յովհաննու. զի՞ ելէք
յանապատն տեսանել, եղէգն շարժուն 'ի
հողմոյ: * Այլ զի՞նչ ելէք տեսանել, այր 25
'ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ա-
հաւանիկ որ 'ի հանդերձս երեւելիս եւ 'ի
փափկութեան են՝ յարքունիս են: * Այլ զի՞նչ 26
ելէք տեսանել, մարգարէ՞. այո, ասեմ ձեզ՝
Մաղաք. առաւել եւս քան զմարգարէ: * Զի սա է՝ 27
3. 1. վասն որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ
զհրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ
զճանապարհս քո առաջի քո: * Ամէն ասեմ 28
ձեզ. մեծ 'ի ծնունդս կանանց մարգարէ քան
զՅովհաննէս ոչ ոք է. բայց փոքրիկն յար-
քայութեան Այ մեծ է քան զնա: * Եւ ամ 29
ժողովուրդն իբրեւ լուաւ՝ եւ մաքսաւորքն,
արդարացուցին զԱծ. զի մկրտեցան 'ի մկրտ-
ութեանն Յովհաննու: * Իսկ փարիսեցիքն եւ 30
օրինականք զխորհուրդն Այ անարգեցին յան-
ձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան 'ի նմանէ:
Մատթ. * Արդ՝ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս 31
11. 16. այսորիկ. եւ ո՞ւմ իցեն նմանօղք: * Նման 32
են մանկտւոյ՝ որ 'ի հրապարակս նստիցին,
կարդայցեն զմիմեանս եւ ասիցեն. փողս հա-
րաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք՝ եւ
Մատթ. ոչ լացէք: * Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ 33
3. 4. ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէք. դեւ գոյ 'ի
Մարկ. նմա: * Եկն որդի մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ, 34
1. 6. եւ ասէք. ահա այր կերօղ եւ արբեցօղ՝ բա-
րեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց: * Եւ 35
արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց.

36 *Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոցն՝ զի կե- Գ. Գ.
րիցէ ճաշ ը̄ նմա. և մտեալ 'ի տուն փարի-
37 սեցւոյն՝ բազմեցաւ: *‖Եւ կին մի էր 'ի ‖Մատթ.
քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազ- 26. 7.
մեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ Մարկ.
38 մի իւղոյ ազնուի. *կայր յետոյ առ ոտս 41. 3.
նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ Յովհան.
զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և 12. 3.
համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն:
39 *Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա,
ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք
էր, ապա գիտէր թէ ով և որպիսի ոք կին
40 մերձենայ 'ի սա. զի մեղաւոր է: *Պատաս-
խանի ետ Յ̄ն և ասէ ցնա, Սիմովն՝ ունիմ
ինչ ասել քեզ. և նա ասէ, ասա վարդա-
41 պետ. և ասէ: *Երկու պարտապանք էին
ուրումն փոխատուի. մինն պարտէր հինգ
42 հարիւր դահեկան, և միւսն յիսուն: *Եւ
իբրև ոչ գոյր նոցա հատուցանել, երկո-
ցունցն շնորհեաց. արդ ասա՝, ո՞վ առաւել
43 սիրեսցէ զնա: *Ասէ Սիմովն. ինձ այսպէս
թուի եթէ որում զբազումն շնորհեաց: Եւ
44 նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: *Եւ դար-
ձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. տեսա-
նե՞ս զայս կին, մտի 'ի տուն քո՝ ջուր ոտից
իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք
եթաց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց:
45 *Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա աւա-
սիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց
46 'ի համբուրելոյ զոտս իմ: *Իւղով զգլուխ

իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ: *Վա՛ն 47
որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք
իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում
շատ թողուցու՝ շատ սիրէ, և որում սակաւ՝
սակաւ: *Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ 48
մեղք քո: *Եւ սկսան՝ որ բազմեալն էին 49
ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝
որ զմեղս թողու: *Եւ նա ասէ ցկինն. 50
հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խա-
ղաղութիւն:

## ԳԼ. Ը.

Գ. Ն Եւ եղև յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ 1
քաղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւե-
տարանէր զարքայութիւն Այ. և երկոտա-
սանքն ընդ նմա. *և կանայք ոմանք՝ որ բը- 2
ժշկեալ էին յայսոց չարաց և 'ի հիւանդու-
‖Մարկ. 16. 9. թեանց. ‖Մարիամ՝ որ կոչէր Մագդաղե-
նացի, յորմէ եօթն դևն ելեալ էր. *և 3
Յովհաննա կին Քուզայ՝ հազարապետին Հե-
րովդի, և Շուշան՝ և այլք բազումք. որք
պաշտէին զնա յընչից իւրեանց: *Եւ 'ի 4
ժողովել բազում ժողովրդոց, և ըստ քա-
ղաքաց քաղաքաց եկելոց առ նա, ասէ ա-
‖Մատթ. 13. 4. ռակաւ: *‖Ել սերմանացան սերմանել 5
զսերմանիս իւր. և 'ի սերմանելն իւրում՝
Մարկ. 4. 3. էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղև կո-
խան, և թռչունք երկնից կերան զնա: *Եւ 6
այլն անկաւ յապառաժի, և ընդ բուսանելն

չո-

7 չորացաւ, առ 'ի չգոյէ հիւթոյ: * Եւ այլն
անկաւ 'ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ
8 փշոցն՝ հեղձուցին զնա: * Եւ այլն անկաւ
յերկիր բարի և պարարտ, և բուսեալ՝ արար
պտուղ հարիւրապատիկ: Զայս իբրև խօսե-
ցաւ, ասէ. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուի-
9 ցէ: * Հարցանէին զնա աշակերտքն, թէ
10 զի՞նչ իցէ առակն: * Եւ նա ասէ. ձեզ
տուեալ է գիտել զխորհուրդս արքայութե̄
Ա՟յ, բայց այլոցն առակօք. ‖ Զի տեսցեն՝ և ‖ Եսայ.
մի՛ տեսցեն, և լուիցեն՝ և մի՛ իմասցին: 6. 9.
11 * Բայց առակն այս ինչ է. սերմն բանն
12 Ա՟յ է: * Եւ որք առ ճանապարհաւն, այնո-
քիկ են որ լսենն. և ապա գայ սատանայ՝
հանէ զբանն 'ի սրտից նոցա, զի մի՛ հաւա-
13 տասցեն՝ և ապրեսցին: * Եւ որք յապա-
ռաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութբ̄
ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին.
որք առ ժամանակ մի հաւատան, և 'ի ժա-
14 մանակի փորձութե̄ հեռանան: * Իսկ որ 'ի
մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսեն
զբանն՝ և 'ի հոգս և 'ի մեծութի̄ և 'ի ցան- ‖ Մատթ.
կութի̄ աշխարհիս զբաղեալ հեղձնուն՝ և 5. 15.
15 անպտուղ լինին: * Իսկ որ յերկիրն պա- Մարկ.
րարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ 4. 21.
լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ ‖ Մատթ.
16 համբերութբ̄: * ‖ Ոչ ոք լուցանէ ճրագ և 10. 26.
թաքուցանէ ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ Մարկ.
մահճօք. այլ 'ի վերայ աշտանակի դնէ, զի 4. 22.
17 որ մտանենն՝ զլոյս տեսցեն: * ‖ Զի ոչ ինչ ծա- Ղուկ.

ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ
ոչ ծանիցի, և եկեսցէ 'ի յայտ: * Տեսէք 18
‖Մատթ. այսուհետև զիարդ լսէք. ‖զի ոյր գուցէ՝
13. 12. տացի նմա, և ոյր ոչն գուցէ՝ և զոր կար-
‖Մատթ. ծէն թէ ունիցի՝ բարձցի 'ի նմանէ: * ‖Ե- 19
12. 46. կին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ
Մարկ. կարէին հասանել 'ի նա վն բազմութեանն:
3. 32. * Ազդ եղև նմա և ասեն. մայր քո և եղ- 20
բարք քո կան արտաքոյ՝ և կամին զքեզ տես-
անել: * Եւ ասէ ցնոսա. մայր իմ և եղ- 21
բարք իմ սոքա են, որ զբանն Այ լսեն և
առնեն:

❉ * ‖Եւ եղև 'ի միում աւուրց ինքն ել 'ի 22
Գ. Օ. նաւ՝ և աշակերտքն իւր, և ասէ ցնս. եկայք
‖Մատթ. անցցուք յայնկոյս ծովակիս. և գնացին:
8. 23. * Եւ մինչ դեռ նաւէին՝ 'ի քուն եմուտ. 23
Մարկ. և էջ մրրիկ հողմոյ 'ի ծովակն՝ և ուռնոյր,
4. 36. և տագնապէին: * Մատուցեալ զարթուցին 24
զնա և ասեն. վարդապետ վարդապետ՝ կորն-
չիմք աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց
հողմոյն և խռովութեան ջուրցն՝ և հանդար-
տեցին, և եղև խաղաղութիւն: * Ասէ ցնոսա. 25
ո՞ւր են հաւատք ձեր. և զահի հարեալ զար-
մացան, և ասէին ցմիմեանս. ո՞վ արդեօք
իցէ սա՝ զի և հողմոց և ջրոց հրաման տայ,
և հնազանդին սմա: * Եւ նաւեցին իջին 26
յաշխարհն Գերգեսացւոց. որ է յայնկոյս
հանդէպ Գալիլեայ: * Եւ ընդ ելանելն նր 27
'ի ցամաք, պատահեաց այր մի 'ի քաղա-
քէն՝ յորում էին դևք. և բազում ժաման-

նակս

նակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան
28 բնակեալ, այլ 'ի գերեզմանս: *Եւ տե-
սեալ զՅս, աղաղակեաց և անկաւ առաջի
նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և
քո Յս որդի Այ բարձրելոյ, աղաչեմ զքեզ
29 մի՛ տանջեր զիս: *Քանզի հրաման տայր
այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. զի
բազում ժամանակս յափշտակեալ էր զնա,
և կապէր 'ի շղթայս, և պահէր յերկաթս,
և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն յա-
30 նապատս: *Եհարց զնա Յս և ասէ. զի՞նչ
անուն է քեզ. և նա ասէ, լեգէոն. զի
31 դևք բազումք մտեալ էին 'ի նա: *Եւ ա-
ղաչէին զնա՝ զի մի հրաման տացէ նոցա
32 երթալ յանդունդս: *Եւ էր անդ երա-
մակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն.
և աղաչեցին զնա զի հրաման տացէ նոցա
33 մտանել 'ի նոսա. և հրամայեաց նց: *Եւ
ելեալ դևքն յառնէն՝ մտին 'ի խոզսն. և
դիմեաց երամակն 'ի դահէ անտի 'ի ծովակն՝
34 և հեղձաւ: *Իբրև տեսին խոզարածքն
զեղեալն որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի
35 քաղաքին և յագարակսն: *Եւ իբրև ելին
տեսանել զգործն, եկին առ Յս, և գտին
զայրն՝ ուստի դևքն ելեալ էին, զգեցեալ
և զգաստացեալ նստէր առ ոտս Յսի, և
36 երկեան: *Պատմեցին նոցա որոց տեսեալն
37 էր՝ թէ զիարդ փրկեցաւ դիւահարն: *Եւ
աղաչէր զնա ամ բազմութիւն շուրջ զկող-
մամբքն Գերգեսացւոց՝ գնալ 'ի նոցանէ

նո-

նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին.
եւ նա մտեալ ՚ի նաւ՝ դարձաւ անդրէն:
*Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ էին՝ 38
շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ եւ ասէ.
*դարձ ՚ի տուն քո, եւ պատմեա՝ զոր մի- 39
անգամ արար քեզ Ած. գնաց ՚ի քաղաքն՝
եւ քարոզէր զոր ինչ արար նմա Յս: *Եւ 40
իբրեւ դարձաւ անդրէն Յս, ընկալաւ զնա
ժողովուրդն. քանզի ամենեքեան ակնունէին
‖ Մատթ. նմա: *‖ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն 41
9. 18. էր Յայրոս, եւ նա էր իշխան ժողովրդեանն.
Մարկ. անկեալ առ ոտս Յսի՝ աղաչէր զնա մտա-
5. 22. նել ՚ի տուն նորա. *զի դուստր միամօր էր 42
նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից, եւ էր մերձ
՚ի մահ. եւ ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն
‖ Մատթ. նեղէին զնա: *‖ Եւ կին մի էր ՚ի տեռատե- 43
9. 20. սութեան արեան ամաց երկոտասանից, որ ՚ի
Մարկ. բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր. որում
5. 25. ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել: *Մա- 44
տուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի քղանցս հան-
դերձի նորա. եւ նոյն ժամայն եկաց բղխումն
արեան նորա: *Եւ ասէ Յս. ո՞վ է՝ որ 45
մերձեցաւն յիս: Իբրեւ ամենեքեան ուրա-
նային, ասէ Պետրոս՝ եւ որ ընդ նմա էին.
վարդապետ՝ ժողովուրդք պնդեն եւ նեղեն
զքեզ: *Եւ ասէ Յս. ոմն մերձեցաւ յիս, 46
քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն:
*Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ՚ի 47
նմանէ, եկն դողալով՝ եւ անկաւ առաջի նր,
թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ՚ի նա՝ պատ-
մեաց

մեաց առաջի ամ ժողովրդեանն. և թէ որ-
48 պէս բժշկեցաւ առժամայն: * Եւ ասէ.
քաջալերեա՛ց դուստր՝ հաւատք քո կեցու-
49 ցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն: * Եւ
մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ
ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստ-
րն քո, մի ինչ աշխատ առներ զդա:
50 * Իսկ Յս իբրև լուաւ, պատասխանի ետ
նմա՝ և ասէ. մի երկնչիր, միայն հաւատա՛
51 և կեցցէ: * Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ ումեք
եթող մտանել, բայց միայն զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր ման-
52 կանն և զմայր նորա: * Լային ամենեքեան՝
և կոծէին զնա: Եւ նա ասէ. մի լայք՝ զի չէ
53 մեռեալ՝ այլ ննջէ: * Եւ նոքա ծաղր առ-
54 նէին զնա, զի գիտէին թէ մեռաւ: * Եւ
55 նորա հանեալ զամենեսին արտաքս, * կալեալ
զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ. արի
56 կա՛ց մանուկ դու: * Եւ դարձաւ ոգի նորա,
և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց
57 տալ նմա ուտել: * Եւ զարմացան ծնօղքն
նր: Եւ նա պատուիրէր մի ումեք ասել՝ որ
ինչ եղեն:

## Գլ. Թ.

Գ. Ե.

1 Եւ ‖ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն,
ետ նոցա զօրութի և իշխանութի 'ի վերայ ‖ Մատթ.
ամ դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս: 10. 1.
2 * Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայ- Մարկ.
ութին 3. 13.

ութիւնն Այ, եւ բժշկել զախտաժետս:
Մատթ. *Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք 'ի 3
10. 9. ճանապարհ, մի գաւազան եւ մի մախաղ,
Մարկ. մի հաց եւ մի արծաթ, մի երկուս հանդերձս
6. 8. ունիցիք: *Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ 4
ագջիք, եւ անտի գնայցէք: *Եւ որք ոչ 5
Գործ. ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք 'ի
13. 51. քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց
թօթափեսջիք 'ի վկայութիւն նոցա: *Եւ 6
ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝
աւետարանէին, եւ բժշկէին ընդ ամ տեղիս:
Մատթ. *Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն 7
14. 1. ամ. եւ զարմանայր վասն ասելոյն յոմանց,
Մարկ. *թէ Յովհաննէս յարեաւ 'ի մեռելոց, եւ 8
6. 14. յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց՝
թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ:
*Ասէ Հերովդէս. զՅովհաննէս ես գլխա- 9
տեցի. իսկ սա ով իցէ՝ զորմէ զայսպիսի իրս
լսեմ. եւ խնդրէր տեսանել զնա: *Դար- 10
ձան առաքեալքն, եւ պատմեցին նմա զամ
զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խուսեաց
առանձինն 'ի տեղի անապատ քաղաքի միոյ,
որում անուն էր Բեթսայիդա: *Եւ ժո- 11
ղովուրդքն իբրեւ գիտացին, գնացին զհետ
նորա. եւ ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նս
վասն արքայութեան Այ, եւ որոց պէտք էին
բժշկութեան՝ բժշկէր: *Եւ օրն սկսաւ տարա- 12
Մատթ. ժամել. մատեան երկոտասանքն եւ ասեն
14. 15. ցնա. արձակեա զժողովուրդդ, զի եր-
Մարկ. թեալ շուրջ 'ի գիւղսն եւ յագարակս՝ հան-
6. 36.

գի-

գիւղս, և գտցեն կերակուր. զի աստ յա-
13 նապատ տեղւոջ եմք։ *Ասէ ցնոսա. դուք
տուք դոցա ուտել։ Եւ նք ասեն. ‖Ոչ գոյ ‖Յովհ.
մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս 6. 9.
ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք
14 բաւական ժողովրդեանդ կերակուր. *Քան-
զի էին այր իբրև հինգ հազար։ Ասէ ցա-
շակերտսն. բազմեցուցէք զդոսա դասս դասս՝
15 յիսուն յիսուն։ *Եւ արարին այնպէս, և
16 բազմեցուցին զամենեսեան։ *Եւ առեալ
զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայե-
ցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ՝ և տայր
17 ցաշակերտսն արկանել ժողովրդեանն։ *Կե-
րան և յագեցան ամենեքեան. և բարձին
զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակառի։
18 *‖Եւ եղև 'ի կալն նորա յաղօթս առան- Գ Կ
ձինն, էին ընդ նմա և աշակերտքն նորա. ‖Մատթ.
եհարց զնոսա և ասէ. զո՞ ասեն զին- 16. 13.
19 նէն ժողովուրդքն՝ թէ իցեմ։ *Եւ նոցա Մարկ.
պատասխանի տուեալ ասեն. զՅովհաննէս 8. 27.
մկրտիչ, և այլք զԵղիա, իսկ այլք թէ
20 մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։ *Ասէ
ցնոսա. դուք զո՞վ ոք ասէք զինէն, թէ ի-
ցեմ. պատասխանի ետ Պետրոս և ասէ.
21 զՔՆ ԱՅ։ *Նա սաստեաց 'ի նոսա, և
22 պատուիրեաց մի ումեք ասել զայն. *և ա-
սէ, ‖թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում ‖Մատթ.
չարչարիլ և անարգիլ 'ի քահանայապետից 17. 21.
և 'ի ծերոց և 'ի դպրաց, և սպանանիլ՝ և Մարկ.
23 յերրորդ աւուր յառնել։ *Եւ ասէր առ ամե- 8. 31.
նեսեան.

‖ Մատթ. նեսին. ‖ Եթէ որ կամի զկնի իմ գալ, ու-
10. 38. րասցի զանձն՝ եւ առցէ զխաչ իւր հանա-
Ներք. պազ՝ եւ եկեսցէ զհետ իմ։ *‖ Զի որ կա- 24
14. 27. միցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա,
‖ Ներք. եւ որ կորուսցէ զանձն իւր վն իմ՝ կեցուսցէ
17. 33. զնա։ *Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշ- 25
Յովհան. խարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ
12. 25. տուժեսցի։ *‖ Զի որ ամօթ համարեսցի զիս 26
‖ Մատթ. եւ զբանս իմ, զնա եւ որդի մարդոյ յամօթ ա-
10. 33. րասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ եւ հօր՝
‖ Մատթ. եւ հրեշտակաց սրբոց։ *‖ Բայց արդարեւ ա- 27
16. 28. սեմ ձեզ, եթէ են ոմանք ՚ի դոցանէ որ այդր
Մարկ. կան՝ որք մի ճաշակեսցեն զմահ, մինչեւ տես-
8. 39. ցեն զարքայութիւն Այ։ *‖ Եւ եղեւ յետ այսց 28
‖ Մատթ. բանից իբրեւ աւուրք ութ, առեալ զՊետրոս
17. 1. եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝ ել ՚ի լեառն
Մարկ. կալ յաղօթս։ *Եւ ՚ի կալ նմա յաղօթս՝ 29
9. 1. եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ. եւ փո-
խեցաւ հանդերձ նր՝ եւ եղեւ սպիտակ փայ-
լուն։ *Եւ ահա արք երկու խօսէին ընդ 30
նմա. որ էին Մովսէս եւ Եղիա, *երեւեալ 31
փառօք. եւ ասէին զելիցն նորա՝ զոր կատա-
րելոց էր յԵրուսաղէմ։ *Իսկ Պետրոս՝ եւ 32
որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ՚ի քնոյ՝
զարթեան, տեսին զփառսն նորա՝ եւ զերկուս
արսն որ կային առ նմա։ *Եւ եղեւ ՚ի մեկ- 33
նելն նոցա ՚ի նմանէ, ասէ Պետրոս ցՅս.
վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, եւ
արասցուք երիս տաղաւարս, մի քեզ՝ եւ մի
Մովսեսի՝ եւ մի Եղիայի. եւ ոչ գիտէր զինչ
խօ-

34 խօսէր: * Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ
եւ հովանի եղեւ 'ի վերայ նոցա. եւ երկեան
35 'ի մտանելն նոցա ընդ ամպովն: * Ձայն ե֊
ղեւ յամպոյն եւ ասէ. ‖ դա է որդի իմ ընտ֊ ‖ 2. Պետ.
36 րեալ, դմա լուարուք: * Եւ 'ի լինել բար֊ 1. 17.
բառոյն՝ գտաւ Յս միայն. եւ նոքեանք լռե֊
ցին, եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնո֊
սիկ եւ ոչինչ՝ յորոց տեսինն:
37 * Եւ եղեւ 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա ❈
'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժո֊ Գ. Ի.
38 ղովուրդ բազում: * ‖ Եւ ահա այր մի 'ի ‖ Մատթ.
ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ. 17. 14.
վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի Մարկ.
39 իմ, զի միամօր է ինձ. * Եւ ահա այս հար֊ 9. 16.
կանի 'ի նմա, եւ յանկարծ գոչէ՝ եւ զարկու֊
ցանէ զնա եւ թաւալեցուցանէ եւ փրփրե֊
ցուցանէ, եւ հազիւ մեկնի 'ի նմանէ խոր֊
40 տակեալ զնա. * եւ աղաչեցի զաշակերտսն
41 քո զի հանցեն զնա, եւ ոչ կարացին: * Պնի
ետ Յս եւ ասէ. ո՜վ ազգ անհաւատ եւ թիւր,
մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ եւ անսայցեմ
42 ձեզ. մատո՛ այսր զորդին քո: * Եւ մինչդեռ
մատչէր, զարկոյց զնա դեւն՝ եւ շարժլեաց:
43 * Սաստեաց Յս այսոյն պղծոյ, եւ բժշկեաց
44 զմանուկն. եւ ետ զնա ցհայր իւր: * Եւ
զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծամե֊
ծացն ԱՅ: Եւ 'ի զարմանալն ամենեցուն 'ի
վերայ ամի զոր առնէր, ասէ ցաշակերտսն
իւր. դիք դուք 'ի լսելիս ձեր զբանս զայսո֊
սիկ. զի որդի մարդոյ մատնելոց է 'ի ձեռս

մարդ֊

մարդկան ։ *Եւ նոքա ոչ գիտէին զբանն, 45
և էր ծածկեալ 'ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն ·
և երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնո֊
Մատթ. րիկ ։ *Եմուտ խորհուրդ 'ի նոսա՝ թէ ո՞ 46
18. 1. արդեօք մեծ իցէ 'ի նոցանէ ։ *Յիսուս իբրև ծա֊ 47
Մարկ. նեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ
9. 33. մի՛ կացոյց 'ի մէջ նոցա առ իւր, *և ասէ 48
ցնոսա · որոք ընկալցի զմանուկս զայս յա֊
նուն իմ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի֊
ցի՝ ընդունի զառաքիչն իմ · զի որ փոքրիկն
է յամենեսին 'ի ձեզ՝ նա եղիցի մեծ ։ *Պա֊ 49
տասխանի ետ Յովհաննէս և ասէ · վարդա֊
պետ՝ տեսաք զոմն որ յանուն քո դևս հա֊
նէր՝ և արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ ։
*Ասէ ցնոսա Յս · մի՛ արգելուք, զի որ ոչն 50
է ձեր թշնամի՝ 'ի ձեր կողմն է ։
Դ.Գ. *Եւ եղև 'ի կատարել աւուրց վերանալոյ 51
նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ
յԵրուսաղէմ ։ *Եւ առաքեաց հրեշտակս ա֊ 52
ռաջի երեսաց իւրոց · և իբրև չոգան՝ մտին
'ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ
նմա ։ *Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ ե֊ 53
դեալ էր նր երթալ յԵրուսաղէմ ։ *Իբ֊ 54
րև տեսին աշակերտքն Յակոբոս և Յով֊
հաննէս, ասեն · Տէր՝ կամի՞ս զի ասասցուք,
և իջցէ հուր յերկնից՝ և սատակեսցէ զնա ։
*Դարձաւ սաստեաց 'ի նոսա՝ և ասէ · ոչ 55
Յովհ. գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք ։ *Զի որդի 56
3. 17. մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝
այլ կեցուցանել ։ Եւ գնացին յայլ գիւղ ։

*Եւ

57 *Եւ մինչդեռ երթային նոքա 'ի ճանապար-
հի, ասէ ոմն ցնա. եկից զկնի քո՛ յոր վայր
58 և երթիցես: *Ասէ ցնա Յս. ‖ Աղուեսուց ‖ Մատթ.
որջք գոն, և թռչնոց երկնից դադարք. և 8. 20.
որդւոյ մարդոյ ոչ գոյ՛ ուր դիցէ զգլուխ:
59 *Ասէ ցմիւսն. եկ զկնի իմ: Եւ նա ասէ.
Տէր՛ հրամանն տուր ինձ՛ երթալ նախ թա-
60 ղել զհայր իմ: *Ասէ ցնա Յս. թո՛ղ զմե-
ռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու
61 երթ պատմեա՛ զարքայութիւն Այ: *Ասէ և
այլ ոմն. եկից զկնի քո Տէր, բայց նախ
հրամանն տուր ինձ հրաժարել 'ի տանէ իմ-
62 մէ: *Ասէ ցնա Յս. ոչ որ արկանէ ձեռն
զմաճով և հայիցի յետս, եթէ յաջողեալ
իցէ արքայութեան Այ:

## Գլ. Ժ.

1 Յետ այսորիկ երևեցոյց Տր և այլ ևս եօ- Դ.Գ.
թանասուն և երկուս. և առաքեաց զնոսա
երկուս երկուս առաջի իւր յամ քաղաքս և
2 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր: *Եւ
ասէ ցնոսա. ‖ հունձք բազում են՛ և մշակք ‖ Մատթ.
սակաւ. արդ՛ աղաչեցէք զտէր հնձոց, զի 9. 37.
3 հանիցէ մշակս 'ի հունձս իւր: *Երթայք,
‖ ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ ‖ Մատթ.
4 գայլոց: *‖ Մի բառնայք քսակ մի մախաղ 10. 16.
մի կօշիկս, և 'ի ճանապարհի ումեք ողջոյն ‖ Մարկ.
5 մի տայցէք: *Յոր տուն մտանիցէք՛ նախ 6. 8.
6 ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. *Եւ ե-

թէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ 'ի վր
նր ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ 'ի ձեզ դարձ-
ցի: *Եւ 'ի նմին տան ագանիջիք, ուտիջիք 7
Մատթ. եւ ըմպիջիք 'ի նոցանէ. Զի արժանի է մը-
10. 10. շակն վարձու իւրոյ: Մի՛ փոխիցիք տանէ 'ի
1. Տիմ. տուն: *Յոր քաղաք մտանիցէք՝ եւ ընդու- 8
5. 18. նիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն
ձեր. *եւ բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք 9
իցեն. եւ ասասջիք նոցա, մերձեալ է 'ի վր
ձեր արքայութիւն Այ: *Իսկ յոր քաղաք 10
մտանիցէք՝ եւ ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ
ելանիցէք 'ի հրապարակս նորա, ասասջիք:
Գործ. *Եւ զփոշին որ կածեալ է 'ի քաղաքէ 11
13. 51. ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք 'ի ձեզ.
բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է ար-
քայութիւն Այ: *Ասեմ ձեզ, զի Սոդոմաց- 12
ւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝
Մատթ. քան քաղաքին այնմիկ: *Վա՜յ քեզ Քորա- 13
11. 21. զին. վա՜յ քեզ Բեթսայիդա. զի եթէ 'ի
Տիւրոս եւ 'ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝
որ եղեն 'ի ձեզ, վաղուց եւս արդեօք 'ի խորգ
եւ 'ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր: *Բայց 14
Տիւրոսի եւ Սիդոնի ընդարձակագոյն լիցի 'ի
դատաստանի՝ քան ձեզ: *Եւ դու Կափառ- 15
նաում, որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես,
Մատթ. մինչեւ 'ի դժոխս իջցես: *Որ ձեզ լսէ՝ ինձ 16
10. 40. լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս
Յովհան. անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ
13. 20. լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց: *Դար- 17
ձան եօթանասուն եւ երկուքն խնդութբ եւ
ասեն.

ասեն. Տէր՝ և դևք հնազանդին մեզ յանուն
18 քո: *Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատա-
19 նայ անկեալ յերկնից իբրև զփայլակն: *Ա-
հա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և
զկարիճս և զամ զօրութիւն թշնամւոյն, և ձեզ
20 ոչինչ մեղանչիցեն: *Բայց ընդ այն մի
խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ
խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յեր-
21 կինս: *‖Ի նմին ժամու ցնծացաւ Յս Հոգ- ‖Մատթ.
ւովն սրբով և ասէ. գոհանամ զքէն Հայր՝ 11. 25.
Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս
յիմաստնոց և ՚ի գիտնոց՝ և յայտնեցեր զայս
տղայոց. այո Հայր, զի այսպէս հաճոյ եղև
22 առաջի քո: *Ամենայն ինչ տուեալ ինձ ՚ի
Հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ թէ ո՞վ է Որդի,
եթէ ոչ Հայր, և ո՞ է Հայր՝ եթէ ոչ Որդի,
23 և ում կամիցի Որդին յայտնել: *Եւ դարձեալ
առանձինն առ աշակերտսն ասէ. ‖Երանի ա- ‖Մատթ.
24 չաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէքդ: *Ասեմ 13. 16.
ձեզ. զի բազում մարգարէք և թագաւորք
կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք, և
ոչ տեսին. և լսել զոր լսէքդ, և ոչ լուան:
25 *‖Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փոր- Դ. Ե.
ձէր զնա և ասէր. վարդապետ՝ զի՞նչ գոր- ‖Մատթ.
ծեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառան- 22. 35.
26 գեցից: *Եւ նա ասէ ցնա. յօրէնս զինչ Մարկ.
27 գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս: *Նա պխի 12. 28.
ետ և ասէ. ‖Սիրեսցես զՏէր Ած քո յամ ‖2. Օրէն.
սրտէ քումմէ, և յամ անձնէ քումմէ, և 6. 5.
յամ զօրութենէ քումմէ, և յամ մտաց քոց.

եւ զընկեր քո իբրեւ զանձն քո: *Եւ ասէ 28
ցնա. ուղիղ ետուր զպատասխանին, զայդ
արա՛ եւ կեցցես: *Եւ նա իբրեւ կամեցաւ 29
զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅս. եւ ո՞վ
է իմ ընկեր: *Գնի նա Յս եւ ասէ. այր 30
մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով, եւ ան-
կաւ 'ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին
զնա՝ եւ վէրս 'ի վ՟ի եդին, թողին կիսամահ
եւ գնացին: *Դէպ եղեւ քահանայի միոջ 31
իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ
զնա՝ զանց արար: *Նոյնպէս եւ ղեւտացի 32
մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես եւ զանց ա-
րար: *Սամարացի ոմն ճանապարհորդեալ 33
եկն ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ զնա՝
գթացաւ. *Եւ մատուցեալ պատեաց ըզ- 34
վէրս նորա, արկեալ 'ի վերայ ձէթ եւ գինի.
եւ եդեալ 'ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա
'ի պանդոկի մի, եւ դարմանեաց զնա: *Եւ 35
'ի վաղիւն անդր իբրեւ ելանէր անտի, հա-
նեալ ետ ցպանդոկապետն երկուս դահե-
կանս՝ եւ ասէ. դարմա՛ն տար դմա, եւ զոր
ինչ ծախեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ դալս-
տեան իմում հատուցից քեզ: *Արդ՝ ո՞ յե- 36
րեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր
լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց: *Եւ 37
նա ասէ. որ արար զողորմութիւն 'ի վերայ
նորա: Ասէ ցնա Յս. Երթ եւ դու արա՛
նոյնպէս: *Եւ եղեւ 'ի գնալն նոցա, եւ ինքն 38
եմուտ 'ի գեօղ մի. եւ կին ոմն անուն Մար-
թա ընկալաւ զնա 'ի տան իւրում: *Եւ 39
նորա

նորա էր քոյր մի, որում անուն էր Մա-
րիամ. որ և եկն նստաւ առ ոտսն Տն, և
40 լսէր զբանս նորա: *Իսկ Մարթա զբաղեալ
էր 'ի բազում սպասու. եկն եկաց առ նմա
և ասէ. Տէր՝ ոչինչ է փոյթ քեզ, զի
քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. արդ՝
41 ասա դմա զի օգնեսցէ ինձ: *Պատասխանի
ետ Յն և ասէ. Մարթա Մարթա՝ դու հո-
42 գաս և զբազում ինչս զբաղեալ ես. *բայց
աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն
բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ:

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. Գ. Օ.
և իբրև դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշա-
կերտացն իւրոց. Տէ՞ր՝ ուսո մեզ յաղօթս
կալ, որպէս և Յովհաննէս ուսոյց աշա-
2 կերտաց իւրոց: *Ասէ ցնոսա, յորժամ կայ-
ցէք յաղօթս, ասասջիք. ‖Հայր մեր՝ սբ ‖Մատթ.
եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո: 6. 9.
3 *Զհաց մեր հանապազորդ տուր մեզ զօր-
4 ըստօրէն: *Եւ թող մեզ զմեղս մեր, զի և
մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ.
5 և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն: *Եւ ա-
սէ ցնոսա. Ո՞վ է 'ի ձէնջ՝ որոյ իցէ բարե-
կամ, և երթիցէ առ նա 'ի մէջ գիշերի,
և ասիցէ ցնա. բարեկամ՝ տուր ինձ փոխ
6 երիս նկանակս. *զի բարեկամ իմ եկն առ
իս յուղւոյ, և ոչինչ ունիմ դնել առաջի

նորա ։ *Եւ նա 'ի ներքուստ տայցէ պ̃խի 7
և ասիցէ . մի՛ աշխատ առներ զիս , զի դուռ-
քըդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև
կան յանկողնի . ոչ կարեմ յառնել և տալ
քեզ ։ *Ասեմ ձեզ , եթէ ոչ յարուցեալ 8
տայցէ նմա վասն բարեկամութե̃ն, սակայն
վասն ժտութեանն յարուցեալ տայցէ նմա՝
‖Մատթ. զինչ և պիտոյ իցէ ։ *‖Եւ ես ասեմ ձեզ, 9
7. 7. խնդրեցէք՝ և տացի ձեզ , հայցեցէք՝ և
Յովհան. գտջիք , բախեցէք՝ և բացցի ձեզ ։ *Զի 10
14 13. ա̃մ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ ,
Յակով. և որ բախէ՝ բացցի նմա ։ *‖Ո՞ ոք 'ի ձէնջ 11
1. 5. հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փո-
‖Մատթ. խանակ ձկանն օ̃ձ տայցէ նմա ։ *Եւ կամ 12
7. 9. խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա ։
*Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պար- 13
գևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս
առաւել հայր ձեր յերկնից տացէ բարիս
այնոցիկ , որ խնդրենն 'ի նմանէ ։

Դ Ե
*‖Եւ հանէր դև մի համր . և եղև յելա- 14
նել դևին՝ խօսեցաւ համրն , և զարմացան
‖Մատթ. ա̃մ ժողովուրդքն ։ *Եւ ոմանք 'ի նոցանէ 15
9. 32. ասեն . ‖Բէեղզեբուղաւ իշխանաւն դևաց
12. 22. հանէ դա զդևս ։ *Եւ այլք փորձէին՝ և 16
‖Մարկ. նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ ։ *Իսկ 17
3. 22. նորա գիտացեալ զխորհուրդս նոցա , ասէ
ցնոսա . ա̃մ թագաւորութի̃ բաժանեալ յանձն՝
աւերի , և տուն բաժանեալ յանձն՝ կործա-
նի ։ *Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ 18
յանձնէ , զիա՞րդ կայցէ թագաւորութի̃ ն̃ր .

զի

զի ասէք զինէն եթէ բէեղզեբուղաւ իշխա-
19 նաւն դիւաց հանէ դա զդեւս: *Եթէ ես
բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր
իւ՞ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին
20 ձեր դատաւորք: *Իսկ եթէ մատամբ Այ
հանեմ զդեւս, ապա հասեալ է 'ի վերայ
21 ձեր արքայութիւն Այ: *Յորժամ հզօր վա-
ռեալ՝ պահիցէ զտուն իւր, 'ի խաղաղութեան
22 են ինչք նորա: *Բայց եթէ հզօրագոյն
քան զնա 'ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա,
զսպառազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ
23 էր, եւ զաւար նորա բաշխեսցէ: *Որ ոչ է
ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ
24 ընդ իս, ցրուէ: *Յորժամ Այսն ելանի-
ցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, Մատթ.
խնդրէ հանգիստ. եւ իբրեւ ոչ գտանէ, ասէ. 12. 43.
դարձայց անդրէն 'ի տուն իմ ուստի ելի:
25 *Եւ գայ գտանէ մաքրեալ եւ յարդարեալ:
26 *Յայնժամ երթայ եւ առնու եօթն այլ
այսս չար եւս քան զինքն՝ եւ մտանէ բնակէ
անդ, եւ լինի յետինն մարդոյն այնորիկ չար
27 քան զառաջինն: *Եւ եղեւ մինչդեռ խօսէր
զայս, ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ
անտի եւ ասէ. երանի՜ է որովայնին՝ որ կը-
րեաց զքեզ, եւ ստեանցն՝ որ դիեցուցին
28 զքեզ: *Եւ նա ասէ. Նա՛ երանի այնոցիկ
29 է, որ լսեն զբանն Այ, եւ առնեն: *Եւ 'ի
դիզանել 'ի վերայ նր ժողովրդոցն՝ սկսաւ Մատթ.
ասել. Ազգս այս ազգ չար է. նշան խնդրէ, 12. 39.
եւ նշան յերկնից ոչ տացի սմա՝ բայց նշանն 1. Կորն.

 1. 22.

Յովնան. Յովնանու։ *Զի որպէս եղեւ Յովնան նշան 30
2. 1. Նինուէացւոց, այնպէս եղիցի եւ Որդի մար-
Գ Թագ. դոյ ազգիս այսմիկ։ *Դշխոյն հարաւոյ 31
10. 1. յարիցէ ՚ի դատաստանի ընդ արս ազգիս
այսորիկ՝ եւ դատապարտեսցէ զնոսա, զի եկն
՚ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողո-
մոնի. եւ ահա աւելի քան զՍողոմոն է աստ։
*Արք Նինուէացիք յարիցեն ՚ի դատաստանի 32
ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցեն
Յովնան. զսա, զի ապաշխարեցին ՚ի քարոզութեան
3. 5. Յովնանու. եւ ահա աւելի քան զՅովնան
է աստ։

Ե Կ *Ոչ ոք լուցեալ ճրագ դնէ ՚ի թաքս- 33
Մատթ. տեան, եւ ոչ ընդ գրուանաւ. այլ ՚ի վերայ
5. 15. աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանի-
Մատթ. ցեն։ *Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ 34
6. 22. ակնդ առատ է, ա̃մ մարմինդ լուսաւոր եղի-
ցի. եւ երբ ակն չար է, եւ մարմինդ խաւա-
րին եղիցի։ *Արդ զգոյշ լեր՝ գուցէ լոյսդ 35
որ ՚ի քեզ է՝ խաւար իցէ։ *Եթէ մարմինդ 36
քո ա̃մ լուսաւոր է՝ եւ չունիցի մասն ինչ խա-
ւարին, եղիցի լուսաւոր ա̃մ. որպէս յոր-
ժամ ճրագդ նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ։
*Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա 37
ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա։
Եւ նա մտեալ բազմեցաւ։ *Իբրեւ եւտես փա- 38
րիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ
Մատթ. յառաջ քան զճաշ։ *Ասէ ցնա Տէր. Այժմ 39
23. 25. դուք փարիսեցիք զարտաքին բաժակին եւ
զպնակին սրբէք. եւ ներքինն ձեր լի է յա-

փշտա-

40 փշտակութեամբ և չարութեամբ: *Անմիտք՝ ոչ
ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն
41 նոյն արար: *Բայց այդէ զարժանն խառն տուք
42 ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր: *Այլ
վայ ձեզ փարիսեցւոց. զի տասանորդէք Մատթ.
զանանուխ և զփեգենայ և զամենայն բան- 23. 23.
ջար, և անցանէք զիրաւամբք և զսիրով
Աստուծոյ. զայս արժան էր առնել՝ և զայնս ոչ
43 անցանել: *Վայ ձեզ փարիսեցւոց. զի Մատթ.
սիրէք զառաջնագահս ի ժողովուրդս, և 23. 6.
44 զողջոյնս ի հրապարակս: *Վայ ձեզ՝ Մարկ.
զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և 12. 39.
45 մարդիկ գնան ի վերայ՝ և ոչ գիտեն: *Պա- Ղուկ.
տասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ 20. 46.
ցնա. վարդապետ՝ զայս բանս ասելով և ըզ-
46 մեզ թշնամանես: *Եւ նա ասէ. և ձեզ
վայ օրինականացդ. զի բառնայք մարդկան Մատթ.
բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ 23. 4.
47 միով ի բեռինսն ոչ մերձենայք: *Վայ ձեզ՝
զի շինէք զշիրիմս մարգարէիցն. և հարքն
48 ձեր սպանին զնոսա: *Ապա ուրեմն վկայէք՝
եթէ կամակից էք գործոց հարցն ձերոց. զի
նոքա կոտորեցին զնոսա, և դուք զգերեզ-
49 մանս նոցա շինէք: *Վասն այնորիկ իմաս-
տութիւն Աստուծոյ ասաց. առաքեցից ի նոսա
մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ սպա-
50 նանիցեն և հալածիցեն: *Զի խնդրեսցի
արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ ի սկզբա- Ծննդ.
51 նէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ, *յարե- 4. 8.
նէն Աբելի մինչև յարիւնն Զաքարիայ կո- 2. Մնաց.
րու- 24. 22.

րուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն. այո՛
ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ:
*Վա՜յ ձեզ օրինականացդ. զի թաքուցա- 52
նէք զփականս գիտութեան. դուք ոչ մտա-
նէք, և որ մտանելոցն են՝ արգելուք: *Եւ 53
'ի խօսելն զայս ա՟մ առ նոսա առաջի ա՟մ
ժողովրդեանն, զամօթի հարկանէին. և
սկսան դպիրքն և փարիսեցիք զչարս՝ և
գրգռել ընդ նմա վասն բազում իրաց. *և 54
սպասել որսալ ինչ բանս 'ի բերանոյ նորա,
զի չարախօսեսցեն զնմանէ:

## ԳԼ. ԺԲ:

Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողովր- 1
դեանն՝ մինչև կոխել զմիմեանս, սկսաւ ա-
‖Մատթ. սել ցաշակերտսն իւր. ‖Նախ՝ զգո՛յշ լերուք
16. 6. անձանց 'ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղ-
Մարկ. ծաւորութի՟: *‖Զի ոչինչ է 'ի ծածուկ՝ 2
8. 15. որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծա-
‖Ղուկ. նիցի: *Վ՟ս զի զոր ինչ ասիցէք 'ի խաւա- 3
8. 17. րի, լուեալ լիցի 'ի լոյս. և զոր յունկանէն
խօսեցարուք 'ի շտեմարանս, քարոզեսցի 'ի
վերայ տանեաց: *Բայց ձեզ ասեմ սիրե- 4
լեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ՝ որ
սպանանեն զմարմին, և յետ այնորիկ ա-
ւելի ինչ ոչ ունիցին առնել: *Այլ ցու- 5
ցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկնչիջիք յայն-
մանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութի՟
արկանել 'ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ՝ յայն-
մանէ

6 մանէ երկնչիցիք: *Ո՞չ ապաքէն հինգ ճագ
երկուց դանգաց վաճառի, և մի 'ի նոցանէ
7 ոչ է մոռացեալ առաջի Այ: *Այլ ձեր և
ամ խիկ հեր գլխոյ թուեալ է. մի երկնչիք՝
զի քան զբազում ճագս լաւ էք դուք:
8 *Ասեմ ձեզ. զի ամ որ խոստովանեսցի յիս Մատթ.
առաջի մարդկան, և որդի մարդոյ խոստովա- 10. 32.
9 նեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Այ: *Եւ Մարկ.
որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ 8. 38.
10 լիցի առաջի հրեշտակաց Այ: *Եւ ամ որ 2. Տիմ.
ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց 2. 12.
որ զՀոգին Սբ հայհոյիցէ, մի թողցի նմա: Մատթ.
11 *Այլ յորժամ տանիցին զձեզ 'ի ժողո- 12. 32.
վուրդս և 'ի պետութիւնս և յիշխանութիւնս, Մարկ.
մի հոգայցէք՝ ոյք թէ զինչ պատասխանի 3. 29.
12 տայցէք. կամ զինչ ասիցէք: *Զի Հոգին
Սբ ուսուսցէ ձեզ 'ի նմին ժամու՝ զինչ պարտ
իցէ խօսել:
13 *Ասէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա. վարդա- ԵԲ
պետ՝ ասա՛ ցեղբայր իմ բաժանել ընդ իս
14 զժառանգութիւն: *Եւ նա ասէ ցնա. այր
դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանա-
15 րար 'ի վերայ ձեր: *Եւ ասէ ցնոսա. տե-
սէք և զգո՛յշ լերուք յամ ագահութենէ, զի
ոչ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն
16 կեանք նորա: *Խօսեցաւ առ նոսա առակ
մի՝ և ասէ. առն ուրումն մեծատան եառուն
17 անդք առհմականս. *և խորհէր 'ի միտս իւր՝
և ասէր. զի՞ գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր
18 ժողովեցից զարդիւնս իմ: *Եւ ասէ. զի-
տեմ

տեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս-
իմ, եւ ես մեծամեծս շինեցից. եւ անդր ժո-
ղովեցից զցորեանն եւ զա՟մ բարութիւնս իմ.
* Եւ ասացից ցանձն իմ. անձն՝ ունիս բա- 19
զում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց.
հանգիր՝ կեր արբ՝ եւ ուրախ լեր: * Ասէ ցնա 20
Ա՟Ծ. անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ ’ի քէն
’ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստե-
ցերն՝ ո՞ւմ լինիցի: * Այնպէս եւ որ գանձէ 21
անձին, եւ ոչ յԱ՟Ծ մեծանայցէ: * Ասէ ցա- 22
‖ Սաղմ. շակերտսն իւր. վ՟ն այդորիկ ասեմ ձեզ. ‖ մի
54. 23. հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, եւ
Մատթ. մի ը՟ն մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք: * Զի 23
6. 25. ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ մարմին
Ա. Պետ. քան զհանդերձ: * Հայեցարո՛ւք ընդ ագ- 24
5. 7. ռաւս, զի ոչ սերմանեն եւ ոչ հնձեն, որոց
ոչ գոն շտեմարանք՝ եւ ոչ համբարանոցք,
եւ Ա՟Ծ կերակրէ զնոսա. ո՞րչափ եւս առաւել
զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս: * Ո՞վ ’ի 25
ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ’ի հա-
սակ իւր կանգուն մի: * Իսկ արդ՝ եթէ ’ի 26
փոքուն չէք բաւական՝ վ՟ն այլոցն զի՞ հոգայ-
ցէք: * Հայեցարո՛ւք ընդ շուշանն՝ ո՞րպէս 27
աճէ, ոչ ջանայ՝ եւ ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝
եւ ոչ Սողոմոն յա՟մ ’ի փառսն իւր՝ զգե-
ցաւ իբրեւ զմի ’ի նոցանէ: * Իսկ եթէ զխոտն՝ 28
որ այսօր ’ի բացի է՝ եւ վաղիւ ’ի հնոց ար-
կանելի, Ա՟Ծ այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ
եւս առաւել զձեզ թերահաւատք: * Եւ 29
դուք մի խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ
ըմ-

30 ըմպիցէք, և մի՛ զբաղնուք. *զի զայն ամ
հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր
31 գիտէ՝ զի պիտոյ է այն ամ։ *Բայց խնդրե-
ցէք զարքայութիւն Այ. և այն ամ յաւելցի ձեզ։
32 *Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ
33 Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ *‖Վա- Ե Գ
ճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութիւն. ‖Մատթ.
և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, 19. 21.
‖գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող ‖Մատթ.
34 մերձենայ, և ոչ ցեց ապականէ։ *Զի ուր 6. 20.
գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։
35 *Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս՝ և
36 ճրագունք լուցեալք։ *Եւ դուք նմանողք
մարդկան՝ որ ակն ունիցին տն իւրեանց՝ թէ
երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ
գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն
37 նմա։ *Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝
զորս եկեալ տն գտցէ արթունս. ամէն ա-
սեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազ-
մեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնս։
38 *Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու
եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծա-
39 ռայքն այնոքիկ։ *‖Բայց զայն գիտասջիք, ‖Մատթ.
եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու 24. 43.
գող գայ՝ հսկէր, և չտայր թողուլ ական հա-
40 տանել 'ի տուն իւրում։ *Եւ դուք եղե-
րուք պատրաստք՝ ‖զի յորում ժամու ոչ ‖Յայտ.
41 կարծիցէք, գայ որդի մարդոյ։ *Եւ ասէ Պետ- 16. 15.
րոս. Տէ՛ր՝ առ մեզ ասացեր զառակդ զայդ՝
42 եթէ առ ամենեսեան։ *Եւ ասէ Տէր. ո՞վ

իցէ

իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր
կացոյց տէր իւր ՚ի վ̃ր գերդաստանի իւրոյ
տալ ՚ի ժամու զկերակուրս: *Երանի իցէ 43
ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտա-
նիցէ արարեալ այնպէս: *Ճշմարիտ ասեմ 44
ձեզ՝ զի ՚ի վերայ ամ̃ ընչից իւրոց կացուս-
ցէ զնա: *Ապա եթէ ասիցէ ծառայն այն 45
՚ի սրտի իւրում. յամէ տէր իմ ՚ի գալ. և
սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախ-
նայս, ուտել և ըմպել և արբենալ: *Եկես- 46
ցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում
ակն ոչ ունիցի, և ՚ի ժամու յորում ոչ գի-
տիցէ. ՚ի մէջ կտրեսցէ զնա, և զմասն նր̃ ը̃
անհաւատս դիցէ: *Եւ ծառայ՝ որ գիտիցէ 47
զկամս տն̃ իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ
կամաց նորա, արբցէ գան բազում: *Եւ 48
որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գոր-
ծիցէ, արբցէ գան սակաւ: Ամենայնի որում
շատ տուաւ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ. և
որում բազում աւանդեցաւ, առաւել ևս
պահանջեսցեն ՚ի նմանէ:

Ծ Գ
*Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ 49
կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր: *Եւ 50
մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զիա՞րդ
‖ Մատթ. փութամ մինչև կատարեսցի: *‖Համարիք 51
10. 34. եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր, ո՞չ
ասեմ ձեզ, այլ բաժինս: *Զի եղիցին 52
յայսմ հետէ հինգ ՚ի տան միում բաժա-
նեալք, երեքն յերկուց, և երկուքն յերից:
*Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և որդի ՚ի հօ- 53
րէ,

րէ, մայր 'ի դստերէ՝ և դուստր 'ի մօրէ,
սկեսուր 'ի հարսնէ՝ և հարսն 'ի սկեսրէ իւր-
54 մէ: *Ասաց և ժողովրդեանն. յորժամ Մատթ.
տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից, իս- 16. 2.
կոյն ասէք՝ թէ անձրև գայ, և լինի այնպէս.
55 *և յորժամ հարաւ շնչեալ, ասէք՝ թէ
56 խորշակ լինի, և լինի այնպէս: *Կեղծա-
ւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փոր-
ձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փոր-
57 ձէք: *Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք
58 զարժանն: *Յորժամ երթայցես ընդ ոսոխի Մատթ.
քում առ իշխան, 'ի ճանապարհի տուր 5. 25.
զհաշիւն զերծանել 'ի նմանէ. գուցէ
քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատա-
ւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկա-
59 նիցէ 'ի բանտ: *Ասեմ քեզ, ոչ ելանի-
ցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին
լումայն:

## ԳԼ. ԺԳ.

1 Եկին ոմանք 'ի նմին ժամանակի, և պատ-
մեցին նմա զԳալիլեացւոցն, որոց զարիւնն
2 Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա: *Պատասխանի
ետ և ասէ ցնս. համարի՞ք եթէ այն Գա-
լիլեացիք եղեն մեղաւոր քան զամ Գալիլեա-
3 ցիս, զի զայնպիսի անցս կրեցին: *Ոչ, ա-
սեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ա-
4 մենեքին նոյնպէս կորնչիջիք: *Կամ նոքա
ութուտասանքն, յորոց վերայ աշտարակն
ան-

անկաւ 'ի Սիլովամ, և սպան զնոսա. հա-
մարի՞ք եթէ նոքա պարտապանք եղեն քան
զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յԵրու-
սաղէմ։ *Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ 5
ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորն-
չիջիք։ *Ասաց և զառակս զայս։ Թզենի մի 6
էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և
եկն խնդրել պտուղ 'ի նմանէ՝ և ոչ եգիտ։
*Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝ 7
յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզեն-
ւոջդ՝ և ոչ գտանեմ. արդ՝ կոտրեա՛ զդա,
ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։ *Նա պա- 8
տասխանի ետ և ասէ. տէ՛ր՝ թո՛ղ զդա յայս
ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից՝ և
արկից աղբ. *թերևս արասցէ պտուղ. ապա 9
թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա։
✠ *Եւ ուսուցանէր 'ի միում 'ի ժողովրդանո- 10
ՆՆ ցացն 'ի շաբաթու։ *Եւ ահա կին մի՝ զոր 11
ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն.
և էր կորակամեալ, և ոչ կարէր ամենևին 'ի
վեր հայել։ *Եւ տեսեալ զնա Յ՟Ս՝ կո- 12
չեաց առ ինքն՝ և ասէ ցնա. կին դու՝ ար-
ձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ *Եւ 13
եդ 'ի վե՟ նորա ձեռն, և առժամայն ուղ-
ղեցաւ, և փառաւոր առնէր զԱ՟Ծ։ *Պատաս- 14
խանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէ՞ր
'ի շաբաթու բժշկեաց Յ՟Ս, և ասէ ցժողո-
վուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել,
յայնս եկա՛յք բժշկեցարո՛ւք, և մի՛ յաւուր
շաբաթու։ *Պատասխանի ետ նմա Տէր՝ և ասէ. 15
կեղ-

կեղծաւորք` իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ ՚ի շա-
բաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ՚ի
16 մսրոյ` եւ տանի տայ ջուր: *Իսկ այս` դուս-
տրն Աբրահամու էր. զոր կապեաց սատա-
նայ աճաւասիկ ութուտասն ամ, ո՞չ էր
արժան արձակել ՚ի կապանաց անտի ՚ի շա-
17 բաթու: *Եւ զայս իբրեւ ասէր, յամօթ
լինէին ամենեքին որ հակառակն կային նմա.
եւ ամ ժողովուրդն ուրախ լինէր ՚ի վերայ
ամ փառաւորութեանցն` որ գործէին ՚ի նմա-
18 նէ: *Եւ ասէր. Ո՞ւմ նման է արքայութի ծ
Այ, եւ ընդ ո՞ւմ նմանութեն նմանեցուցից զնա:
19 *‖Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ ‖Մատթ.
մարդոյ` արկ ՚ի պարտէզ իւր, աճեաց եւ 13. 31.
եղեւ ծառ, եւ թռչունք երկնից բնակեալ Մարկ.
20 էին յոստս նորա: *Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ 4. 31.
21 նմանեցուցից զարքայութիւն Այ. *‖Նման է ‖Մատթ.
խմորոյ` զոր առեալ կնոջ` թաքոյց յալեր ե- 13. 33.
րից գրուոց` մինչեւ խմորեցաւ ամ:
22 *Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս` ու- Ե.Օ.
սուցանէր. եւ ճանապարհ արարեալ յԵր-
23 րուսաղէմ, *ասէ ոմն ցնա. Տէր` եթէ սա-
կաւք իցեն, որ ապրելոց իցեն: Եւ նա ասէ
24 ցնոսա: *‖Ջանացարուք մտանել ընդ դուռն ‖Մատթ.
նեղ. զի ասեմ ձեզ` զի բազումք խնդրեսցեն 7. 13.
25 մտանել` եւ ոչ կարասցեն: *‖Յորմէ հետէ ‖Մատթ.
մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն, եւ 25. 10.
սկսանիցիք կալ արտաքոյ` եւ բախել զդուռնն,
եւ ասել. Տէր Տէր` բաց մեզ. եւ պատաս-
խանի տուեալ ասիցէ ձեզ. ոչ գիտեմ զձեզ

 ուս-

ուստի էք: * Յայնժամ սկսանիցիք ասել. 26
կերաք առաջի քո եւ արբաք, եւ 'ի հրա-
պարակս մեր ուսուցեր: * Եւ ասիցէ. ա- 27
Մատթ. սեմ ձեզ, Ոչ գիտեմ զձեզ ուստի էք.
7. 23. 'ի բաց կացէք յինէն ամ̃ մշակք անիրա-
Սաղմ. ւութեան: * Անդ եղիցի լալ եւ կրճել ատա- 28
6. 9. մանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ եւ
Մատթ. զԻսահակ եւ զՅակոբ՝ եւ զամ̃ մարգարէս
25. 41. յարքայութեան Այ, եւ զձեզ հանեալ ար-
տաքս: * Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւ- 29
մտից եւ 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ, եւ բազ-
Մատթ. մեսցին յարքայութեան Այ: * Եւ ահա իցեն 30
19. 30. յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն ա-
Մարկ. ռաջինք՝ որ լինիցին յետինք: * 'Ի նմին ա- 31
10. 31. ւուր մատեան ոմանք փարիսեցիք, եւ ասեն
ցնա. Ել եւ գնա աստի, զի Հերովդէս կա-
մի սպանանել զքեզ: * Եւ ասէ ցնոսա. Եր- 32
թայք՝ ասացէք աղուեսուն այնմիկ. ահա-
ւասիկ հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կատա-
րեմ այսօր եւ վաղիւ, եւ յերիր աւուր կա-
տարիմ: * Բայց պարտ է այսօր եւ վաղիւ եւ 33
'ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ
մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ:
Մատթ. * Երուսաղէմ Երուսաղէմ՝ որ կոտորէիր զմարգարէս, եւ 34
23. 37. քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ.
քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս
քո, ոպ̃ հաւ զձագս իւր ը̃ թեւովք, եւ ոչ
կամեցարուք: * Ահա թողեալ լիցի ձեզ տուն 35
ձեր: Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ եւս տեսա-
նիցէք զիս, մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալն
յանուն Տն: ԳԼ.

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն ուրուք ԵԱ
իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել
2 հաց, եւ նոքա սպասէին նմա: *Եւ ահա
այր ոմն էր առնդ ջրգողեալ առաջի նորա:
3 *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցօրինականսն
եւ ցփարիսեցիսն. եթէ արժա՞ն իցէ 'ի շա-
4 բաթու բժշկել: *Եւ նոքա լուռ եղեն: Եւ
բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ
5 արձակեաց: *Եւ ասէ ցնոսա. ո՞յր ուրուք
'ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր,
եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շա-
6 բաթու: *Եւ ոչ կարացին տալ նմա պա-
7 տասխանի առ այն: *Ասաց եւ առ կոչնա-
կանսն առակ մի, հայեցեալ թէ զիա՛րդ բարձ-
8 րնտիր լինէին, ասէ ցնոսա: *Յորժամ կո-
չիցէ ոք զքեզ 'ի հարսանիս՝ կամ 'ի կոչունս,
մի բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատ-
ուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ
9 'ի նմանէ. *եւ եկեալ՝ որ զքեզն եւ զնա կո-
չեաց՝ ասիցէ ցքեզ. տուր սմա տեղի. եւ ա-
պա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ու-
10 նել: *Այլ յորժամ կոչիցիս, երթիցես՝
բազմեսջիր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ ‖Առակ.
գայցէ՝ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. 25. 7.
‖բարեկամ 'ի վեր մատիր. յայնժամ եղի- ‖Մատթ.
ցին քեզ փառք առաջի բազմակցացն քոց: 23. 12.
11 *‖Զի ամ որ բարձրացուցանէ զանձն, խո- Անդ.
 նար- 18. 14.

նարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն,
բարձրասցի: *Ասէ և ցկոչնատէրն. յոր- 12
ժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի կո-
չեր զբարեկամս քո, և մի զեղբարս քո, և
մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և
մի զմեծամեծս. գուցէ և նոքա փոխարէն կո-
չեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն:
Տոբ. *Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, 13
4. 7. կոչեա զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս:
Առակ. *Եւ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխա- 14
3. 9. րէն հատուցանել քեզ. և հատուսցի քեզ
փոխարէն 'ի յարութեան արդարոց: *Իբրև 15
լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝ ասէ ցնա.
երանի՜ որ կերիցէ ճաշ յարքայութեան Այ:
Մատթ. *Եւ նա ասէ. Այր ոմն գործեաց ընթրիս, 16
22. 2. և հրաւիրեաց զբազումս: *Եւ առաքեաց 17
Յայտ. զծառայ իւր 'ի ժամու ընթրեացն կոչել զհ-
19. 9 րաւիրեալսն՝ թէ եկա՛յք, զի ահաւասիկ
պատրաստ է ամ՛ ինչ: *Եւ սկսան մի ըստ 18
միոջէ ամենեքեան հրաժարել: Առաջինն ասէ.
ագարակ գնեցի, և հարկ է ելանել տեսա-
նել զնա, աղաչեմ զքեզ՝ կա՛լ զիս հրաժա-
րեալ: *Եւ միւսն ասէ. լուծս հինգ եզանց 19
գնեցի, և երթամ փորձել զնս, աղաչեմ
զքեզ՝ կա՛լ զիս հրաժարեալ: *Եւ միւսն 20
ասէ. կին առի, և վասն այնորիկ ոչ կարեմ
գալ: *Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն 21
տն՛ իւրում: Յայնժամ բարկացեալ տանու-
տէրն՝ ասէ ցծառայն իւր. ել վաղվաղա-
կի 'ի հրապարակս և 'ի փողոցս քաղաքին,

և

և զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս
22 մոյծ այսր: *Եւ ասէ ծառայն. տէր՝ եղև
23 զոր հրամայեցերն, և կայ ևս տեղի: *Եւ
ասէ տէրն ցծառայն, ել 'ի ճանապարհս և 'ի
ցանգս, և արա ստիպեալ մտանել, զի լցցի
24 տուն իմ: *Ասեմ ձեզ, զի ոչոք յայնց
կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց:
25 *Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բա- Օ̃Ի
26 զումք. դարձաւ և ասէ ցնոսա: *Եթէ Մատթ.
ոք գայ առ իս՝ և ոչ ատեայ զհայր իւր և 10. 37.
զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զք-
յորս, նա և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ
27 աշակերտ լինել: *Եւ որ ոչ բառնայ զխ- Մատթ.
աչ իւր՝ և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ ա- 16. 24.
28 շակերտ լինել: *Ո՞վ ոք 'ի ձէնջ կամիցի Մարկ.
շինել աշտարակ, և ոչ նախ նստեալ հա- 8. 34.
մարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական 'ի
29 կատարումն: *Զի գուցէ իբրև արկանիցէ
հիմն՝ և ոչ կարիցէ կատարել, ամենեքին
որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել
30 զնա, *և ասել. թէ այս այր սկսաւ շինել,
31 և ոչ կարաց կատարել: *Կամ ո՞ր թագա-
ւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այ-
լում թագաւորի. և ոչ նստեալ նախ խոր-
հիցի, եթէ կարող իցէ տասն հազարաւ
զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ 'ի վերայ
32 նորա քսան հազարաւ: *Ապա թէ ոչ՝ մինչ
դեռ հեռագոյն իցէ, հրեշտակութի առա-
33 քեալ աղաչեսցէ 'ի խաղաղութիւն: *Արդ՝
այսպէս ամ ոք 'ի ձէնջ՝ որ ոչ հրաժարես-

ցէ յամ ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշա-
‖Մատթ. կերտ լինել: *‖Բարւոք է աղ. ապա թէ 34
5. 13. աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի: *Ոչ յեր- 35
Մարկ. կիր՝ և ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկե-
9. 49. նուլ զնա արտաքս. որ ունիցի ականջս լսե-
լոյ՝ լուիցէ:

## ԳԼ. ԺԵ.

Եւ էին մերձ առ նա ամ մաքսաւորք և 1
մեղաւորք՝ լսել 'ի նմանէ: *Տրտնջէին փա- 2
րիսեցիքն և դպիրք՝ և ասէին. ընդէ՞ր սա
զմեղաւորս ընդունի՝ և ուտէ ը̃ նոսա: *Ա- 3
‖Մատթ. սաց առ նոսա զառակս զայս: *‖Ո՞վ որ 4
18. 12. իցէ 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար,
և կորուսանիցէ մի 'ի նոցանէ. ո՞չ թողու-
ցու զիննսուն և զինն յանապատի, և եր-
թայցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ
զնա: *Եւ իբրև գտանէ, դնէ զնա 'ի վ̃ի 5
ուսոց իւրոց խնդալով, *և երթայ 'ի տուն. 6
կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ ցն̃ս.
ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս
իմ զկորուսեալ: *Ասեմ ձեզ. զի այսպէս 7
է ուրախութի̃ յերկինս վ̃ն միոյ մեղաւորի
որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն և ինն
արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութի̃:
*Կամ ո՞ր կին իցէ, որոյ իցեն դրամք տասն. 8
և եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցա-
նիցէ ճրագ, և ածիցէ աւել 'ի տուն և
խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ: *Եւ իբրև 9
գտա-

փառանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս՝ և
ասէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն
10 իմ զոր կորուսի: *Նոյնպէս՝ ասեմ ձեզ,
ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Այ
'ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ:
11 *Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք.
12 *ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. հա՛յր՝
տուր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ. և
13 նա բաժանեաց նոցա զկեանսն: *Եւ յետ
ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զա՟մ կրտսեր
որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի. և անդ վատ-
նեաց զինչս իւր, զի կեայր անառակութ՟բ:
14 *Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով
սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն
15 չքաւորել: *Եւ գնացեալ յարեցաւ 'ի միում
'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղ-
եաց զնա յագարակ իւր արածել խոզս:
16 *Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն
զոր խոզքն ուտէին, և ոչոք տայր նմա:
17 *Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. քանի՞ վարձ-
կանք իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք, և
18 ես աստ սովամահ կորնչիմ: *Յարուցեալ
գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. հա՛յր՝
19 մեղայ յերկինս՝ և առաջի քո, *և ոչ ես
եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրև
20 զմի 'ի վարձկանաց քոց: *Եւ յարուցեալ
եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն
էր, ետես զնա հայրն՝ և գթացաւ, յարեաւ
և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն
21 նորա, և համբուրեաց զնա: *Եւ ասէ ցնա

որդին. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո,
ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: *Ասէ 22
հայրն ցծառայս իւր. վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին, եւ ագուցէք նմա,
եւ տուք զմատանին 'ի ձեռն նորա եւ կօշիկս
յոտս նորա. *եւ ածէք զեզն պարարակ զենէք, 23
կերիցուք եւ ուրախ լիցուք. *զի այս որդի 24
իմ մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝ եւ
գտաւ. եւ սկսան ուրախ լինել: *Եւ էր ե- 25
րէց որդին նորա յագարակի. եւ մինչդեռ
գայր՝ եւ մերձ եղեւ 'ի տունն, լուաւ զձայն
երգոց եւ զպարուց. *եւ կոչեցեալ առ ինքն զմի 26
'ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն:
*Եւ նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ 27
է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ, զի
ողջամբ ընկալաւ զնա: *Բարկացաւ՝ եւ ոչ 28
կամէր մտանել: Եւ հայրն ելեալ արտաքս՝
աղաչէր զնա: *Պատասխանի ետ եւ ասէ ցհայրն. այս 29
քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ, եւ եր-
բէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի
երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ
բարեկամս իմ, *Յորժամ եկն որդիդ քո այդ՝ 30
որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ
դմա զեզն պարարակ: *Եւ ասէ ցնա. որ- 31
դեակ՝ դու հանապազ ընդ իս ես, եւ ամ որ
ինչ իմ է՝ քո է. *այլ ուրախ լինել եւ 32
խնդալ պարտ էր, զի եղբայրդ քո այս մե-
ռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝
եւ գտաւ:

ԳԼ.

## ԳԼ. ԺԶ:

1 Եւ ասէր առ աշակերտսն. այր մի էր մե- ՕԲ.
ծատուն, որոյ էր տնտես. և եղև զնմանէ
ամբաստանութիւն իբր թէ վատնիցէ զինչս նր:
2 *Կոչեաց, և ասէ ցնա. զի՞նչ է այս զոր
լսեմս զքէն. տո՛ւր զհամար տնտեսութեան
3 քո. զի ոչ ևս կարես լինել տնտես: *Ասէ
ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից,
զի տէր իմ՝ հանէ զտնտեսութիւս. գործել
4 ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ: *Գիտեմ
զինչ արարից. զի յորժամ ՚ի բաց լինիցիմ
՚ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ՚ի տունս
5 իւրեանց: *Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ
միոջէ ՚ի պարտապանաց տն իւրոյ, ասէ ցա-
ռաջինն. քանի՞ ինչ պարտիս տն իմում:
6 *Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ: Ասէ
ցնա. կա՛ զգիր քո, և նիստ գրեա՛ վաղվա-
7 ղակի յիսուն: *Դարձեալ ասէ ցմիւսն.
դու քանի՞ ինչ պարտիս: Եւ նա ասէ. հա-
րիւր քոռ ցորենոյ: Եւ ասէ ցնա. կա՛ զգիր
8 քո՝ և նիստ գրեա՛ ութսուն: *Եւ գովեաց
տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաս-
տութեա՛ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ
իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս
9 իւրեանց: *Եւ ես ձեզ ասեմ. արարէք
ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութեն.
զի յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ
10 ՚ի յարկսն յաւիտենականս: *Որ ՚ի փոքուն
հա-

հաւատարիմ է, և 'ի բազմին հաւատարիմ
է. և որ 'ի փոքրում անիրաւ է, և 'ի բազմին
անիրաւ է: *Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մա- 11
մոնային չեղէք հաւատարիմք, զճշմարիտն
ձեզ ո՞ հաւատասցէ: *Եւ եթէ յօտարին 12
չեղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ:
Մատթ. *Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծա- 13
6. 24. ռայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սի-
րիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն ար-
համարհիցէ. ոչ կարէք Այ ծառայել և մա-
մոնայի: *Իբրև լսէին զայս ամ փարիսե- 14
ցիքն՝ քանզի արծաթասէրք էին, և անգոս-
նէին զնա: *Եւ ասէ ցնոսա. դուք էք՝ որ 15
արդարացուցանէք զանձինս առաջի մարդ-
կան, սակայն Այ գիտէ զսիրտս ձեր. զի որ
առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի
Մատթ. Այ: *Օրէնքն և մարգարէք մինչև ցՅով- 16
11. 12. հաննէս. յայնմ հետէ արքայութիւն Այ ա-
ւետարանի, և ամ ոք զնա բռնաբարէ:
Մատթ. *Դիւրին էցէ երկնից և երկրի անցանել, 17
5. 18. քան յօրինացն միոյ նշանախեցի անկանել:
Մատթ. *Ամենայն որ արձակէ զկին իւր՝ և առնէ 18
5. 32. այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ:
Մարկ. *Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բե- 19
10. 11. հեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանա-
պազ առատապէս: *Եւ աղքատ ոմն ա- 20
նուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան նր
վիրաւորեալ. *և ցանկայր յագել 'ի փշրա- 21
նացն՝ որ անկանէին 'ի սեղանոյ մեծատանն.
այլ և շունք եկ գային, և լեզուին զվէրս
նո-

22 Նորա։ *Եւ եղեւ մեռանել աղքատին, եւ
տանել հրեշտակաց զնա 'ի գոգն Աբրահա-
մու. մեռաւ եւ մեծատունն՝ եւ թաղեցաւ։
23 *Եւ 'ի դժոխս ամբարձ զաչս իւր մինչ 'ի
տանջանսն էր. ետես զԱբրահամ 'ի հե-
ռաստանէ, եւ զՂազարոս 'ի գոգ նորա հան-
24 գուցեալ։ *Եւ նա աղաղակեաց եւ ասէ.
հայր Աբրահամ՝ ողորմեաց ինձ, եւ առա-
քեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին
իւրոյ 'ի ջուր, եւ զովացուսցէ զլեզու իմ.
25 զի պապակիմ 'ի տապոյ աստի։ *Եւ ասէ
ցնա Աբրահամ. որդեակ՝ յիշեա զի ընկա-
լար անդէն զբարիս քո 'ի կեանսն քում, եւ
Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ՝ սա
աստ մխիթարի, եւ դու այդր պապակիս։
26 *Եւ 'ի վերայ այսր ամի՝ վիհ մեծ է ընդ
մեզ եւ ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ
ձեզ անցանել՝ ոչ կարեն, եւ ոչ այտի ոք
27 առ մեզ անցանել։ *Եւ ասէ. արդ աղա-
չեմ զքեզ հայր, զի առաքեսցես զդա 'ի
28 տուն հօր իմոյ. *Են իմ անդ եղբարք հինգ.
որպէս զի տացէ նոցա վկայութիւն. զի մի եւ
29 նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ *Եւ
ասէ Աբրահամ. ունին զՄովսէս եւ զՄար-
30 գարէս, նոցա լուիցեն։ *Եւ նա ասէ. ոչ՝
հայր Աբրահամ, բայց եթէ 'ի մեռելոց ոք
31 երթիցէ առ նոսա, եւ ապաշխարեսցեն։ *Եւ
ասէ ցնա. եթէ Մովսիսի եւ մարգարէիցն ոչ
լսեն, եւ ոչ թէ 'ի մեռելոց ոք յառնիցէ՝ հա-
ւատասցեն։

## ԳԼ. ԺԷ.

Օ. Գ. Ասաց ‖ և առ աշակերտսն իւր. ոչ է մարթ 1
‖Մատթ. չգալ գայթակղութեան. բայց վա՛յ այնմիկ է՝
18. 7. յորոյ ձեռն գայցէ։ *Լաւ էր նմա՝ թէ վէմ 2
Մարկ. երկանաքար կախէր զպարանոցէ նր՝ և ան֊
9. 41. կանէր ՚ի ծով, քան թէ գայթակղեցուցա֊
նէ զմի ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ։ *Զգոյշ 3
‖Ղևտ. կացէք անձանց. ‖ Եթէ մեղիցէ եղբայր քո,
19. 17. սաստեա՛ նմա. և եթէ ապաշխարիցէ, թո՛ղ
Մատթ. նմա։ *Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, 4
18. 15. և եօթն անգամ դարձցի ՚ի քեզ՝ և ասիցէ,
Յակոբ. ապաշխարեմ, թողցես նմա։ *Եւ ասեն 5
5. 19. առաքեալքն ցՏր. յաւե՛լ մեզ հաւատս։
‖Մատթ. *‖Եւ ասէ Տր. եթէ ունիցիք հաւատս քան 6
17. 19. զհատ մանանխոյ, և ասիցէք թթենւոյս այս֊
միկ. խլեա՛ց և տնկեա՛ց ՚ի ծովու, և հնա֊
զանդեսցի ձեզ։ *Իսկ ո՞վ ոք ՚ի ձէնջ, որ 7
ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ
իբրև մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղ֊
վաղակի. թէ անց բազմեա՛ց։ *Այլ ոչ ա֊ 8
սիցէ ցնա. թէ պատրաստեա՛ զինչ ընթրե֊
լոց իցեմ, և զօտի ածեալ պաշտեա՛ զիս՝
մինչև կերայց և արբից; և ապա կերիցես
և արբցես դու։ *Միթէ շնորհ ինչ ունի֊ 9
ցի ծառային այնմիկ, զի արար զամենայն
հրամանսն։ *Այնպէս և դուք՝ յորժամ 10
առնիցէք զամ հրամայեալսն ձեզ, ասաս֊
ջի՛ք՝ թէ ծառայք անպիտանք եմք, զոր

պար֊

11 պարտէաքն առնել, արարաք ։ *Եւ եղեւ
մինչ երթայր նա յԵրուսաղէմ, եւ ինքն
անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլեաց-
12 ւոց ։ *Եւ մինչդեռ մտանէր ՚ի դեօղ ու-
րեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝
13 որք կացին ՚ի հեռաստանէ, *բարձին զձայն՝
եւ ասեն. Յիսուս վարդապետ՝ ողորմեաց մեզ ։
14 *Եւ իբրեւ ետես զնոսա, ասէ ցնոսա. Եր- Ղեւտ.
թայք ցուցէք զանձինս քահանայիցն. եւ 14. 2.
եղեւ իբրեւ գնացին, առժամայն սրբեցան ։
15 *Մի ոմն ՚ի նոցանէ իբրեւ ետես՝ եթէ
բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ
16 փառաւոր առնէր զԱծ. *անկաւ ՚ի վերայ
երեսաց իւրոց առ ոտս նորա, եւ գոհանայր
17 զնմանէ. եւ ինքն էր Սամարացի ։ *Պի ետ
Յս եւ ասէ. ոչ տասն սուրբ սրբեցան, իսկ
18 արդ՝ ինունքն ուր են ։ *Ոչ ոք գտան
դառնալ տալ փառս Այ, բայց միայն այլ-
19 ազգիս այս ։ *Եւ ասէ ցնա. արի գնա. զի
հաւատք քո կեցուցին զքեզ ։
20 *Իբրեւ հարցաւ ՚ի փարիսեցւոցն՝ թէ երբ Օ. Պա
գայցէ արքայութիւն Այ. պատասխանի ետ
նց եւ ասէ. ոչ գայ արքայութիւն Այ խորա-
21 նօք. *եւ ոչ ասիցեն, թէ ահաւասիկ աստ է՝
կամ անդ. զի ահա արքայութիւն Այ ՚ի
22 ներքս ՚ի ձեզ է ։ *Ասաց եւ առ աշա-
կերտսն. եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ
մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել՝ եւ ոչ Մատթ.
23 տեսանիցէք ։ *Եւ ասիցեն ձեզ՝ ե- 24. 23.
թէ ահաւասիկ է՝ կամ անդ, մի երթայցէք Մարկ.
զհետ ։ 13. 21.

զհետ ։ Զի որպէս փայլակն փայլատա- 24
կեալ 'ի ներքոյ երկնից՝ ընդ երկնիւք ծա-
գիցէ, նոյնպէս և որդի մարդոյ յաւուրն
իւրում ։ Բայց նախ պարտ է նմա բազում 25
չարչարիլ՝ և խոտիլ յազգէս յայսմանէ ։
Ծննդ. Եւ որպէս եղև յաւուրսն Նոյի, նոյնպէս 26
7. 7. եղիցի և յաւուրս որդւոյ մարդոյ ։ Ու- 27
Մատթ. տէին՝ ըմպէին՝ կանայս առնէին՝ և արանց
24. 37. լինէին՝ մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ 'ի
տապանն, և եկն ջրհեղեղն՝ և կորոյս զա-
Ծննդ. մենեսին ։ Նոյնպէս՝ և որպէս յաւուրսն 28
19. 25. Ղովտայ եղև, ուտէին ըմպէին գնէին վա-
ճառէին, տնկէին շինէին . և յորում ա- 29
ւուր ել Ղովտ 'ի Սոդոմայ, տեղաց հուր և
ծծումբ յերկնից՝ և կորոյս զամենեսին . ըստ 30
նմին օրինակի եղիցի և յաւուրն, յորում
որդի մարդոյ յայտնելոց է ։ Յայնմ ա- 31
ւուր որ կայցէ 'ի տանիս՝ և կարասի իւր 'ի
տան, մի իջցէ առնուլ զայն . և որ յանդի
իցէ, նոյնպէս մի դարձցի յետս ։ Յիշեցէք 32
Մատթ. զկինն Ղովտայ ։ Որ խնդրեսցէ զանձն իւր 33
10. 39. ապրեցուցանել, կորուսցէ զնա . և որ կո-
Մարկ. րուսցէ, ապրեցուսցէ զնա ։ Ասեմ ձեզ . 34
8. 35. յայնմ գիշերի թէ եղիցին երկու 'ի մի մա-
Ղուկ. հիճս, մին առցի՝ և միւսն թողցի . և ե- 35
9. 24. թէ եղիցին երկու աղալ 'ի միասին, մին
Մատթ. առցի և միւսն թողցի . և եթէ իցեն երկու
24. 40. յանդի, մին առցի՝ և միւսն թողցի ։ Պատի 36
ետուն և ասեն ցնա . յո՞ Տէր ։ Եւ նա ասէ 37
ցնոսա . ուր մարմին է, անդր և արծուիք
ժողովեսցին ։ ԳԼ.

## ԳԼ. ԺԸ:

1 Ասաց ‖ և առակ մի նոցա առ այն, թէ ՕԱ
պարտ է յամ ժամ կալ նոցա յաղօթս և Սիրաք.
2 մի ձանձրանալ. * ասէ. դատաւոր մի էր 'ի 18. 22.
քաղաքի ուրեմն, յԱյ ոչ երկնչէր՝ և 'ի 1. Թեսաղ.
3 մարդկանէ ոչ ամաչէր. * Եւ այրի մի էր 5. 17.
'ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր.
4 դատ արա ինձ յոսոխէ իմմէ: * Եւ ոչ կա-
մէր 'ի բազում ժամանակս: Յետ այնորիկ
ասէ 'ի միտս իւրում, եթէ և յԱյ ոչ երկն-
5 չիմ, և 'ի մարդկանէ ոչ ամաչեմ, * գոնէ
վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից
նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձի-
6 ցէ զիս: * Եւ ասէ Տր. լուարուք զինչ դա-
7 տաւորն անիրաւութեն ասէր: * Իսկ Այ ոչ
առնիցէ վրէժխնդրութի ծառայից իւրոց, որ
աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի. և
8 երկայնամիտ միայն լինիցի առ նոսա: * Այո
ասեմ ձեզ. զի արասցէ վրէժխնդրութիւն
նոցա վաղվաղակի: Իսկ որդի մարդոյ եկեալ
9 գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի: * Ա-
սաց և առ ոմանս պանծացեալս յանձինս,
թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զբազումս,
10 զառակս զայս: * Արք երկու ելին 'ի տա-
ճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և միւսն
11 մաքսաւոր: * փարիսեցին կայր մեկուսի, և
զայս առանձինն աղօթս մատուցանէր. Այ
իմ՝ գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրև զայլս
'ի

'ի մարդկանէ, զյափշտակօղս՝ և զանիրաւս՝
և զշնացողս, կամ իբրև զայս մաքսաւոր.
*Այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և տամ 12
տասանորդս յամ ստացուածոց իմոց: *Եւ 13
մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և
ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կո-
ծէր զկուրծս իւր՝ և ասէր. Ած քաւեա զիս
Մատթ. զմեղաւորս: *Ասեմ ձեզ. էջ սա արդարա- 14
23. 12. ցեալ 'ի տուն իւր քան զնա. Զի ամ որ
Առակ. բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի.
14. 11. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի:
Օ Օ *Մատուցանէին առ նա և մանկտի՝ զի 15
Մատթ. մերձենայցէ 'ի նոսա. իբրև տեսին աշա-
19. 13. կերտքն՝ սաստէին նոցա: *Իսկ Յս կոչե- 16
Մարկ. ցեալ զնոսա առ ինքն՝ ասէ. թոյլ տուք
10. 13. մանկտւոյդ գալ առ իս, և մի արգելուք
զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Այ:
*Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընդունիցի զար- 17
քայութիւն Այ իբրև զմանուկ, ոչ մտցէ 'ի
Մատթ. նա: *Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. 18
19. 16. վարդապետ բարի՝ զի՞նչ գործեցից, զի
զկեանսն յաւիտենականս ժառանգեցից:
*Ասէ ցնա Յս. զի՞ ասես զիս բարի. չիք 19
որ բարի՝ բայց մի Ած: *Զպատուիրանս 20
Ելից. գիտես. Մի շնար, մի սպանաներ, մի գո-
20. 13. ղանար, մի սուտ վկայեր, պատուեա զհայր
քո և զմայր: *Եւ նա ասէ. զայդ ամ պա- 21
հեցի 'ի մանկութենէ իմմէ: *Իբրև լուաւ 22
զայն Յս՝ ասէ ցնա. միւս ևս պակաս է քեզ.
զամ ինչ զոր ունիս, վաճառեա և տուր աղ-

քա-

քատայ, և ունիցիս գանձ յերկինս. և եկ
23 զկնի իմ: *Նա իբրև լուաւ զայս՝ տրտմե-
24 ցաւ. քանզի էր մեծատուն յոյժ: *Իբրև
ետես զնա Յս տրտմեալ, ասէ. ո՞րպ դժուա-
րաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութի
25 Այ: *Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ա-
ղան անցանել, քան մեծատան յարքայութիւ
26 Այ մտանել: *Ասեն որ լուանն՝ ասէին. և
27 ո՞ կարիցէ ապրել: *Եւ նա ասէ. անհնա-
րինք առ՚ի մարդկանէ, հնարաւորք են յԱյ.
28 *Եւ ասէ Պետրոս. ահաւասիկ մեք թողաք
29 զամ ինչ զմեր, և եկաք զկնի քո: *Եւ նա
ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ. եթէ ոչոք է՝
որ եթող զտուն կամ զծնօղս կամ զեղբարս
կամ զկին կամ զորդիս՝ վս արքայութեն Այ.
30 *եթէ ոչ առնուցու բազմապատիկ 'ի ժամի
յայսմիկ. և յաշխարհին որ գալոցն է՝ ըզ-
31 կեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: *‖Առ- ‖Մատթ.
եալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնս. 20. 17.
ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. և կա- Մարկ.
տարեսցին ամ գրեալքն մարգարէիւք վասն 10. 32.
32 որդւոյ մարդոյ: *Զի մատնեսցի հեթանո-
33 սաց և կատակեսցի. *և հարկանիցեն և
սպանանիցեն զնա, և յերրորդ աւուր յարիցէ:
34 *Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ
էր բանն ծածկեալ 'ի նոցանէ, և ոչ գի-
տէին զասացեալսն: Ծ Ա
35 *‖Եւ եղև 'ի մօտենալն նր յԵրիքով, կոյր ‖Մատթ.
ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: 20. 29.
36 *Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հար- Մարկ.
10. 46.

ցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն: * Եւ պատմե- 37
ցին նմա, թէ Յս Նազովրեցի անցանէ: 38
* Աղաղակեաց և ասէ. Յս որդի Դաւթի
ողորմեաց ինձ: * Եւ որ առաջին երթային՝ 39
սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առա-
ւել աղաղակէր, որդի Դաւթի ողորմեաց
ինձ. * Զտեղի առ Յս, և հրամայեաց ա- 40
ծել զնա առ ինք. և իբրև մերձ եղև առ
նա, եհարց զնա և ասէ. * զի՞նչ կամիս 41
դու՝ զի արարից քեզ. և նա ասէ. Տէր՝ զի
բացցին աչք իմ՝ և տեսից: * Եւ Յս ասէ 42
ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ:
* Եւ առժամայն ետես, երթայր զհետ նր՝ 43
և փառաւորէր զԱծ. և ամ ժողովր-
դեանն տեսեալ, տային օրհնութիւն Այ:

## ԳԼ. ԺԹ.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: * Եւ 1
ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, և 2
նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն. * և 3
խնդրէր տեսանել՝ եթէ ո՞վ իցէ Յս, և ոչ
կարէր 'ի բազմութենէն, զի կարճ էր հասա-
կաւ: * Եւ ընթացեալ յառաջս, ել 'ի 4
ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի
ընդ այն իսկ անցանելոց էր: * Իբրև եկն 'ի 5
տեղին, հայեցաւ 'ի վեր Յս՝ և ասէ ցնա.
Զակքէ՝ փութա՛ էջ այտի, զի այսօր 'ի տան
քում արժան է ինձ ագանել: * փութա- 6
ցաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ:

* Իբ-

7 *Իբրեւ տեսին ամենեքին, տրտնջէին եւ ա-
սէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծա-
8 նել: *Եկն՝ եկաց Զակքէոս՝ եւ ասէ ցՏր.
Տէ՛ր՝ ահա զկէս ընչից իմոց տաց աղքա-
տաց. եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չո-
9 րեքկին: *Եւ ասէ ցնա Յս. այսօր եղեւ
փրկութիւն տանս այսմիկ. քանզի եւ սա որ-
10 դի Աբրահամու է: *Զի եկն որդի մար- Մատթ.
դոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն: 18. 11.
11 *Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել
առակ մի եւ ասէ, վասն մերձենալոյ նորա
յԵրուսաղէմ, եւ համարելոյ նոցա եթէ
առժամայն յայտնելոց է արքայութիւն Այ.
12 *Ասէ. Այր ոմն ազնուական գնաց յաշ- Մատթ.
խարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն, 25. 14.
13 եւ դառնալ: *Եւ կոչեցեալ զծառայս իւր՝
ետ նց տասն մնաս, եւ ասէ ցնս. յարդե-
14 ցէք զայդ՝ մինչեւ եկից: *Եւ քաղաքացիքն
նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս
զկնի նորա եւ ասեն, թէ ոչ կամիմք թա-
15 գաւորել դմա 'ի վր մեր: *Եւ եղեւ դառ-
նալ նմա՝ առեալ զթագաւորութիւն, եւ կո-
չել զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն,
16 զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահեցաւ: *Եկն
առաջինն եւ ասէ. տէր մնասն քո՝ տասն
17 մնաս արար: *Եւ ասէ ցնա. ազնիւ ծառայ
եւ բարի, զի 'ի փոքու հաւատարիմ եղեր,
լիջիր իշխանութիւն ունել 'ի վր տասն քաղա-
18 քի: *Եկն երկրորդն եւ ասէ. մնասն քո
19 արար հինգ մնաս: *Ասէ եւ ցնա. եւ դու

լինիջիր 'ի վերայ հինգ քաղաքաց։ * Եկն միւսն 20
եւ ասէ. Տէր՝ ահա մնասն քո՝ զոր ունէի
ծրարեալ 'ի վարշամակի. * Երկնչէի 'ի քէն, 21
զի այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ ե-
դիր, եւ հնձես՝ զոր ոչ սերմանեցեր։ * Եւ 22
ասէ ցնա. 'ի բերանոյ քումմէ դատեցայց
զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ ե-
դի, եւ հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։ * Եւ 23
ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ 'ի սեղա-
նաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի։
* Եւ ասէ ցսպասաւորսն. առէք 'ի դմանէ 24
զմնասն, եւ տարայք տուք այնմ՝ որ ունիցի
զտասն մնասն։ * Եւ ասեն ցնա. Տէր՝ ունի 25
|| Մատթ. տասն մնաս։ * || Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ 26
25. 29. ունիցի, տացի. եւ յայնմանէ որ ոչն ունիցի,
Մարկ. եւ զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։ * Բայց 27
4. 25. զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս
Ղուկ. թագաւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր եւ
8. 18. սպանէք առաջի իմ։ * Եւ իբրեւ զայս ա- 28
սաց, գնաց յառաջ ելանել յԵրուսաղէմ։
Ի։ Կ * Եւ եղեւ || իբրեւ մերձեցաւ 'ի Բեթփագէ 29
|| Մատթ. եւ 'ի Բեթանիա մօտ 'ի լեառն որ կոչի Ձի-
21. 1. թենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն
Մարկ. իւրոց՝ եւ ասէ. * Երթայք դուք 'ի գեօղն՝ 30
11. 1. որ հանդէպ մեր կայ, յոր իբրեւ մտանէք՝
գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք
'ի մարդկանէ երբեք ոչ նստաւ. լուծէք զնա
եւ ածէք։ * Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ 31
թէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասասջիք

ցնա,

32 ցնա, Թէ Տն իւրում պիտոյ է. *Իբրեւ չո-
գան որ առաքեցանն, գտին որպէս ասացն
33 ցնո, կայր յաւանակն: *Եւ մինչդեռ լու-
ծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա
34 ցնո. զի՞ լուծանէք զյաւանակդ: *Եւ նո-
35 քա ասեն. Տն իւրում պիտոյ է: ‖*Եւ ա- ‖Յովհ. 12. 14.
ծին զնա առ Յս. եւ արկին զնովաւ հան-
36 դերձս, եւ հեծուցին զՅս: *Եւ մինչդեռ
երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին
37 զճանապարհաւն: *Եւ իբրեւ այն ինչ մերձ
եղեւ 'ի զառ 'ի վայր լերինն Ձիթենեաց, ըս-
կսաւ ամ բազմութի աշակերտացն ուրա-
խութբ օրհնել զԱծ 'ի ձայն մեծ վս ամ ե-
38 ղելոց զօրութեանցն՝ զոր տեսին. *եւ ասէին.
օրհնեալ որ գայ Թագաւորդ յանուն Տն.
խաղաղութի յերկինս, եւ փառք 'ի բար-
39 ձունս: *Եւ ոմանք 'ի փարիսեցւոցն յամ-
բոխէ անտի ասեն զնա. վարդապետ՝ սաս-
40 տեա աշակերտացդ քոց: *Պատասխանի
ետ եւ ասէ. ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռես-
41 ցեն, քարինքդ աղաղակեսցեն: *Եւ իբրեւ
մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վս
42 նորա, եւ ասէ: *Եթէ գիտէիր դու գոնէ
յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո. բայց
43 այժմ ծածկեցաւ յերեսաց քոց: *Զի ե-
կեսցեն աւուրք 'ի վերայ քո, եւ պատեսցեն
զքեւ թշնամիք քո պատնէշ. եւ պաշարեսցեն
զքեզ, եւ նեղեսցեն զքեզ յամ կողմանց.
44 *Եւ յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո 'ի քեզ.
‖Եւ ոչ թողուցուն քար 'ի քարի վս յամի ‖Մատ. 21. 6.

'ի քեզ . փոխանակ զի ոչ ծաներ զժա-
Մատթ. մանակ այցելութեան քո : * Եւ մտեալ 'ի 45
21. 12. տաճարն սկսաւ հանել զաղաւնէվաճառսն ,
Մարկ. և զգնօղս . և զսեղանս հատավաճառացն 46
11. 15. ցրուեաց : * Եւ ասէ ցնս . գրեալ է՝ Եւ ե-
Եսայ. ղիցի տուն իմ տուն աղօթից , և դուք արա-
56. 7. րիք զդա այրս աւազակաց : * Եւ ուսուցանէր 47
Երեմ. զնոսա հանապազ 'ի տաճարին . իսկ քա-
7. 11. հանայապետքն և դպիրք՝ և գլխաւորք ժո-
ղովրդեանն խնդրէին զնա կորուսանել , * և 48
ոչ գտանէին՝ թէ զինչ արասցեն . զի ժո-
ղովուրդն ամ կախեալ կային զնմանէ 'ի լսել :

## ԳԼ. Ի:

Ի. Բ. Եւ եղեւ 'ի միում աւուրցն յայնցանէ , 1
Մատթ. մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն 'ի տա-
21. 23. ճարի անդ՝ և աւետարանէր , հասին 'ի վր
Մարկ. քահանայապետքն և դպիրք ծերովքն հան-
11. 27. դերձ , * և ասեն ցնա . ասա մեզ՝ որով իշ- 2
խանութբ գործես դու զայդ , կամ ով է՝
որ ետ քեզ զայդ իշխանութի : * Պատաս- 3
խանի ետ և ասէ ցնս . հարցից և ես զձեզ
բան մի , և ասացէք ինձ : * Մկրտութիւն 4
Յովհաննու յերկնից էր՝ եթէ 'ի մարդկա-
նէ : * Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց 5
և ասեն . * Եթէ ասեմք յերկնից , ասէ . իսկ 6
ընդէր ոչ հաւատացէք նմա . և եթէ ա-
սեմք 'ի մարդկանէ , ամ ժողովուրդն քար-
կոծ առնեն զմեզ . զի հաստատեալ է 'ի

միտս

7 միտս զՅովհաննէ, թէ մարգարէ է։ *Եւ
պատասխանի ետուն չգիտել թէ ուստի իցէ։
8 *Եւ Յն ասէ ցնոսա. և ոչ ես ասեմ ձեզ,
որով իշխանութեամբ առնեմ զայս։
9 *Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառակս Ե Գ.
զայս. Այր ոմն տնկեաց այգի, *և ետ զնա Եսայ.
մշակաց. և ինքն գնաց 'ի ճանապարհ ժա- 5. 1.
10 մանակս բազումս։ *Եւ 'ի ժամու՝ առա- Երեմ.
քեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգ- 2. 21.
ւոյն տացեն նմա. և մշակքն գան հարին Մատթ.
11 զնա, և արձակեցին ունայն։ *Եւ յաւել 21. 33.
միւս ևս ծառայ յղել. նոքա և զնա ևս գան Մարկ.
հարին՝ անարգեցին, և առաքեցին ունայն։ 12. 1.
12 *Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և
13 զնա վիրաւորեցին, և հանին արտաքս։ *Ա-
սէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքե-
ցից զորդի իմ սիրելի, թերևս 'ի սմանէ
14 պատկառեսցեն։ *Իբրև տեսին զնա մշակքն,
խորհեցան ընդ միմեանս և ասեն. սա է ժա-
ռանգն. սպանցուք զսա, զի մեր լինիցի ժա-
15 ռանգութիւնն։ *Եւ հանին զնա արտաքս
քան զայգին և սպանին. արդ՝ զի՞նչ ա-
16 րասցէ ընդ նոսա տէր այգւոյն. *Ո՛չ ապա-
քէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնո-
սիկ, և տացէ զայգին այլոց։ Իբրև լուան՝
17 ասեն. քաւ՝ մի՛ լիցի։ *Եւ նա հայեցեալ
ընդ նոսա՝ ասէ. իսկ զի՞նչ իցէ այն՝ որ
գրեալն է. թէ զվէմն զոր անարգեցին շի- Սաղմ.
18 նողքն, նա եղև գլուխ անկեան։ *Ամենայն՝ 117. 22.
որ ընդհարցի ընդ վէմն ընդ այն՝ խորտա- Եսայ.
Q 4 կեսցի. 28. 16.

կեսցէ, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։
* Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք 19
արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու, և եր-
կեան ՚ի ժողովրդենէն. զի գիտացին՝ թէ
Մատթ. առ նոսա ասաց զառակն զայն։ * Եւ ապա 20
22. 15. սպասեցին, և առաքեցին դաւաճանս կեղ-
Մարկ. ծաւորեալս զանձինս առ արդարս ունել.
12. 13. զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ ՚ի մատ-
նել զնա պետութեան և իշխանութեան դատա-
ւորին։ * Հարցին զնա և ասեն. վարդա- 21
պետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսու-
ցանես, և ոչ առնուս ակն՝ այլ ճշմարտու-
թեամբ զճանապարհն Այ ուսուցանես։
* Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ։ 22
* Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ 23
ասէ ցնոսա. * ցուցէք ինձ զդահեկանն. և 24
նոքա ցուցին. և ասէ. զո՞յր պատկեր և
զգիր ունի. պատասխանի ետուն և ասեն՝
Հռովմ. զկայսեր։ * Եւ նա ասէ ցնոսա. Արդ եր- 25
13. 7. թայք տուք զկայսերն կայսեր, և զԱյն Այ։
* Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք 26
առաջի ժողովրդեանն. և զարմացեալ ընդ
պատասխանին նորա՝ լռեցին։
Ի. Գ * Մատուցեալ ոմանք ՚ի սադուկեցւոցն, 27
Մատթ. որք հակառակէին չլինել յարութեան, հար-
22. 23. ցին զնա՝ * և ասեն. վարդապետ՝ Մովսէս 28
Մարկ. գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռա-
12. 18. նիցի, որոյ իցէ կին և անորդի իցէ, զի առ-
Բ. Օրէն. նուցու եղբայր նորա զկինն, և յարուսցէ զա-
25. 5. ւակ եղբօր իւրում։ * Արդ՝ եօթն եղբարք 29
էին.

էին. եւ առաջինն առեալ կին՝ մեռաւ ա-
30 նորդի: *Առ զնա եւ երկրորդն, մեռաւ եւ
31 նա անորդի: *Առ զնա եւ երրորդն. նոյն-
պէս եւ եօթանեքին. եւ ոչ թողին որդիս:
32 *Մեռաւ եւ կինն: *Արդ՝ ՚ի յարութեան ում
33 ՚ի նոցանէ լինիցի կին. զի եօթանեքին կա-
34 լան զնա կին: *Պատասխանի ետ նոցա Յս
եւ ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս
35 առնեն՝ եւ արանց լինին: *Իսկ որ արժանի
լինիցին այնմ աշխարհի հասանել՝ եւ յարու-
թեան որ ՚ի մեռելոց, ոչ կանայս առնեն, եւ
36 ոչ արանց լինին: *Քանզի եւ ոչ մեռանել
եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ եւ
որդիք Այ. քանզի յարութեան որդիք են:
37 *Եւ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս
գուշակեաց ՚ի մորենւոջն, Որպէս ասէ զՏր Ելից.
Այ Աբրահամու եւ զԱյ Իսահակայ եւ զԱյ 3. 6.
38 Յակովբայ: *Եւ Այ չէ մեռելոց՝ այլ կեն-
դանեաց, զի ամենեքին նմա կենդանի են: ԻԵ
39 *Պատասխանի ետուն ոմանք ՚ի դպրացն եւ Սաղմ.
40 ասեն. վարդապետ՝ բարւոք ասացեր: *Եւ 109. 1.
ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա՝ եւ ոչինչ: Մատթ.
41 *Ասէ եւ առ նոսա. զիա՞րդ ասեն զՔս՝ թէ 22. 44.
42 որդի է Դաւթի. *զի ինքն Դաւիթ ասէ ՚ի Մարկ.
դիրս սաղմոսաց. Ասաց Տր ցՏր իմ, նիստ 12. 36.
43 ը աջմէ իմմէ, *մինչեւ եդից զթշնամիս քո Մատթ.
44 պատուանդան ոտից քոց: *Իսկ արդ՝ եթէ 23. 6.
Դաւիթ զնա Տր կոչէ, զիա՞րդ որդի նորա Մարկ.
45 իցէ: *Եւ լսելով ամ ժողովրդեանն ասէ 12. 38.
46 ցաշակերտսն: *Զգոյշ լերուք ՚ի դպրացն, Վեր.
որ 11. 43.

որ կամին պատմուճանօք շրջել, եւ սիրեն
ողջոյնս 'ի հրապարակս եւ զնախաթոռս 'ի
ժողովուրդս եւ զգահերէցս յընթրիս ։ * Որ 47
ուտեն զտունս այրեաց, եւ պատճառանօք
յերկարեն զաղօթս. Նոքա ընկալցին աւելի
դատաստանս ։

## ԳԼ. ԻԱ.

Մարկ. Եւ Հայեցեալ ետես զմեծատունսն՝ որ 1
12. 41. արկանէին զտուրս իւրեանց 'ի գանձանակն ։
*Ետես եւ զկին մի այրի աղքատ, որ արկ 2
անդր երկուս լումայս ։ *Եւ ասէ. արդա- 3
րեւ ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝ ա-
ւելի արկ քան զամենեսին ։ *Ամենեքին նք 4
'ի մթերից իւրեանց արկին յընծայսն Այ.
բայց նա 'ի կարօտութենէ իւրմէ զամ զկեանս
իւր զոր ունէր՝ արկ ։
ԻՕ. *Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գե- 5
ղեցիկ վիմօք եւ աշտարակօք զարդարեալ է,
Մատթ. ասէ. *Զայդ ամ զոր տեսանէք, Եկեսցեն 6
24. 2. աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար 'ի
Մարկ. քարի վր, որ ոչ քակտեսցի ։ *Հարցին 7
13. 2. զնա եւ ասեն. վարդապետ՝ երբ լինիցի այդ,
Վեր. եւ զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց
19. 44. իցէ ։ *Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի խա- 8
բիցիք. զի բազումք գայցեն յանուն իմ եւ
ասիցեն՝ թէ ես եմ. եւ մերձեցաւ ժամա-
նակ, մի երթայցէք զկնի նոցա ։ *Եւ յոր- 9
ժամ լսիցէք պատերազմունս եւ խռովութիւնս՝
մի

մի՛ զարհուրիցիք, զի պարտ է նախ այնմ լի-
10 նել. այլ ոչ առժամայն կատարած: *Յայն-
ժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ յազգի վերայ,
և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ:
11 *Եւ շարժմունք մեծամեծք. և ՚ի տեղիս
տեղիս սովք և սրածութիւնք, եղիցին ահա-
12 ւորք և նշանք մեծամեծք յերկնից: *Բայց
յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս
իւրեանց ՚ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնես-
ցեն ՚ի ժողովուրդս և ՚ի բանտս, և տանի-
ցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն
13 անուան իմոյ. *և լինիցի ձեզ այն ՚ի վկայ-
14 ութիւն: *Արդ՝ դիք ՚ի սիրտս ձեր՝ մի յա-
15 ռաջագոյն կրթել տալոյ պատասխանի: *Զի
ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում
ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պա-
16 տասխանի ամենայն հակառակորդքն ձեր: *Մատ-
նեսջիք և ՚ի ծնողաց և յեղբարց և յազգա-
կանաց և ՚ի բարեկամաց, և սպանանիցեն ՚ի
17 ձէնջ. *և եղիջիք ատեցեալք յամենեցունց
18 վասն անուան իմոյ. *և մազ մի ՚ի գլխոյ
19 ձերմէ ոչ կորիցէ. *և համբերութեամբ ձերով
20 ստասջիք զոգիս ձեր: *‖ Եւ յորժամ տե- ‖ Դան.
սանիցէք շուրջ պատեալ զօրօք զԵրուսաղէմ, 9. 27.
յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւերն նորա:
21 *Յայնժամ որ ՚ի Հրէաստանի իցեն՝ փա-
խիցեն ՚ի լերինս, և որ ՚ի մէջ նորա իցեն՝
խուսեսցեն, և որ ՚ի գաւառսն իցեն՝ մի՛
22 մտցեն ՚ի նա. *զի աւուրք վրէժխնդրութեան
են այնոքիկ՝ առ ՚ի կատարելոյ ամենայն գրելոց:
*Բայց

* Բայց վայ իցէ յղեաց եւ սնուցանողաց յա- 23
ւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ
'ի վերայ երկրի, եւ բարկութիւն ժողովր-
դեանն այսմիկ: * Եւ անկցին 'ի սուր սու- 24
սերի, եւ գերեսցին յամ հեթանոսս. եւ Երուսաղէմ
եղիցի կոխան յազգաց՝ մինչեւ կատարեսցին
‖ Եսայ. ժամանակք հեթանոսաց. * Եւ եղիցին ‖ նշ- 25
13. 10. շանք յարեգական եւ 'ի լուսին եւ յաստեղս.
Եզեկ. եւ յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ
32. 7. բարբառոյ ծովու եւ խռովութենէ, * յե- 26
Յովէլ. լանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ եւ 'ի կար-
3. 15. ծեաց եկելոց 'ի վր տիեզերաց. զի զօրութիւնք
երկնից շարժեսցին. * Եւ յայնժամ տես- 27
ցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք զօրու-
թեամբ եւ փառօք բազմօք. * Եւ յորժամ 28
սկսանիցի այս լինել, ամբարձջիք եւ բարձ-
‖ Հռովմ. րացուցջիք զգլուխս ձեր. ‖ զի մերձ է փրր-
8. 23. կութիւն ձեր: * Եւ ասաց առակ մի նոցա. 29
տեսէք զթզենին եւ զամ ծառս. * յորժամ 30
ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝
եւ 'ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն:
* Այնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք 31
զայս ամ եղեալ՝ գիտասջիք թէ մերձ է ար-
քայութիւնն Այ: * Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ 32
անցցէ ազգս այս, մինչեւ այս ամ լինիցի:
* Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ 33
անցանիցեն: * Զգոյշ լերուք անձանց, գու- 34
ցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութբ
եւ արբեցութբ՝ եւ հոգովք աշխարհականօք,
եւ յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն
այն.

35 այն. * զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ
ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս
36 երկրի: * Արթուն կացէք այսուհետև, յամենայն
ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք
զերծանել յայնմ յամէ որ լինելոց է, և
37 կալ առաջի որդւոյ մարդոյ: * Եւ 'ի տուէ
'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ
ագանէր 'ի լերինն' որ կոչէր Ձիթենեաց:
38 * Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ ա-
ռաւօտս առ նա 'ի տաճարն լսել 'ի նմանէ.

## Գլ. ԻԲ.

1 Մերձեցաւ || տօն բաղարջակերացն' որ կո- Ի. Ի.
2 չէր պասքա. * և խնդրէին քահանայապետքն || Մատթ.
և դպիրք' թէ որպէս սպանանիցեն զնա. 26. 2.
3 բայց երկնչէին 'ի ժողովրդենէ անտի. * || Մտ- Մարկ.
ւա եմուտ սատանայ 'ի Յուդա 'ի կոչեցեալն 14. 1.
Իսկարիովտացի, որ էր 'ի թուոյ երկոտասա- || Մատթ.
4 նիցն: * Չոգաւ ետ բանս ընդ քահանայա- 26. 14.
պետսն' և ընդ դպիրս' և ընդ իշխանս ժո- Մարկ.
5 ղովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա: * Եւ 14. 10.
խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ.
6 * Եւ յանձն առ, և խնդրէր պարապ մատ-
7 նել զնա նոցա' մեկուսի յամբոխէն: * Եկն
օր բաղարջակերացն, յորում օրէն էր զե-
8 նուլ զպասեքն: * Եւ առաքեաց զՊետրոս,
և զՅովհաննէս' և ասէ. երթայք պատրաս-
տեսջիք մեզ զպասեքն' զի կերիցուք: * Եւ
9 նոքա ասեն. ուր կամիս զի պատրաստես-
ցուք:

ցուք: *Եւ ասէ ցնոսա. ահա իբրեւ մտա- 10
նիցէք 'ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր
մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ
նորա 'ի տունն, յոր մտանիցէ. *Եւ ասաս- 11
ջիք ցտանուտէր տանն. վարդապետ ասէ
քեզ. ուր են վանքն իմ, յորում զպասեքն
ուտիցեմ աշակերտօքս հանդերձ: *Եւ նա 12
ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ,
և անդ պատրաստեսջիք: *Եւ գնացեալ 13
գտին որպէս և ասացն նոցա, և պատրաս-
‖ Մատթ. տեցին զպասեքն: *‖Եւ իբրեւ ժամ եղեւ՝ 14
26. 20. բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ
Մարկ. նմա: *Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցան- 15
14. 17. կացայ զայս պասեքս ուտել ընդ ձեզ՝ մինչեւ
չարչարեալ իցեմ: *Բայց ասեմ՝ ձեզ, 16
թէ ոչ ևս կերայց 'ի սմանէ՝ մինչեւ լցցի
յարքայութեան Այ: *Եւ ընկալեալ բաժակ՝ 17
գոհացաւ և ասէ. առէք զայդ և բաժա-
նեցէք 'ի ձեզ: *Ասեմ ձեզ՝ թէ յայսմ 18
հետէ ոչ արբից 'ի բերոյ որթոյ՝ մինչեւ ե-
‖ 1. Կորն. կեսցէ արքայութիւն Այ: *‖Եւ առեալ հաց 19
11. 24. գոհացաւ՝ եբեկ և ետ նոցա՝ և ասէ. այս է
մարմին իմ, որ վն ձեր տուեալ. զայս
արասջիք առ իմոյ յիշատակի: *Նոյնպէս 20
և զբաժակն յետ ընթրեացն առ՝ և ասէ,
այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վն
‖ Յովհ. ձեր հեղլոյ: *‖Բայց ահաւասիկ ձեռն մատնչի 21
13. 18. իմոյ ընդ իս 'ի սեղանս: *Եւ որդի մարդոյ 22
‖ Սաղմ. ‖ըստ սահմանելոյն երթայ, բայց վայ մար-
40. 9. դոյն այնմիկ յոյր ձեռն մատնիցի: *Եւ նք 23

սկսան

սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է 'ի
24 նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ: *Եւ եղեւ
հակառակութիւն 'ի մէջ նոցա, թէ ո՛ 'ի նո-
25 ցանէ համարիցի մեծ: *Եւ նա ասէ ցնոսա.
‖Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշ- ‖Մատթ.
26 խեն նոցա՝ բարերարք կոչին. *այլ դուք 20. 25.
ոչ այնպէս. այլ որ մեծն է 'ի ձեզ՝ եղիցի Մարկ.
իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև զսպա- 10. 42.
27 սաւորն: *Ո՞վ է մեծ, բազմեալն՝ եթէ
սպասաւորն. ո՞չ ապաքէն բազմեալն. բայց
ես եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր:
28 *Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս 'ի
29 փորձութիւնս իմ. *և ես ուխտեմ ձեզ՝ որպէս
և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն.
30 *զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղանի իմ յար-
քայութեան իմում, և նստիցէք յերկոտասան
աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայէլի: ՎԺԲ.
31 *Եւ ասէ Տր. Սիմոն Սիմոն՝ ահա սատա-
նայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցո-
32 րեան. *այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի
պակասեսցեն հաւատք քո. և դու երբեմն
դարձցիս՝ և հաստատեսցես զեղբարս քո:
33 *Եւ նա ասէ ցնա. Տէր՝ ընդ քեզ պատ-
րաստ եմ և 'ի բանտ և 'ի մահ երթալ:
34 *‖Եւ նա ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ, ‖Մատթ.
չիցէ այսօր հաւու խօսել՝ մինչև երիցս 26. 34.
35 ուրասցիս զիս չգիտել: *Եւ ասէ ցնոսա. Մարկ.
յորժամ ‖առաքեցի զձեզ առանց քսակի և 14. 30.
մախաղի և կօշկաց, միթէ կարօտացարո՞ք ի- ‖Ղուկ.
36 միք: *Եւ նոքա ասեն. և ոչ իմիք: Ապա 9. 3.
ասէ.

ասէ. այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ,
նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունիցի, վա-
ճառեսցէ զձորձս իւր՝ և գնեսցէ իւր սուսեր:
*Ասեմ ձեզ. զի այս ևս որ գրեալ 37
‖Եսայ. է՝ պարտ է զի կատարեսցի յիս, ‖Եթէ ընդ
53. 12. անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ
է՝ վճարեալ է: *Եւ նոքա ասեն. Տէ՛ր ա- 38
հաւասիկ են աստ երկու սուրք: Եւ նա ա-
‖Յովհ. սէ ցնոսա. բաւական են: *‖Եւ ելեալ 39
18. 1. գնաց ըստ սովորութեան 'ի լեառն Ձիթենեաց.
գնացին զհետ նորա և աշակերտքն: *Իբրև 40
եհաս 'ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօթս կա-
‖Մատթ. ցէք չմտանել 'ի փորձութիւն: *‖Եւ ինքն մեկ- 41
26. 39. նեցաւ 'ի նոցանէ իբրև քարընկէց մի, եդ
Մարկ. ծունր՝ կայր յաղօթս, *և ասէր. Հայր՝ ե- 42
14. 35. թէ կամիս՝ անցո՛ զբաժակս զայս յինէն.
բայց ոչ իմ կամք՝ այլ քո լիցին: *Եւ 43
երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրա-
ցուցանէր զնա. և էր 'ի տագնապի, և մտա-
դիւրութիւն ևս կայր յաղօթս: *Եւ հոսէին 44
'ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝
ոլոռն ոլոռն, հեղեալ յերկիր: *Եւ յա- 45
րուցեալ յաղօթիցն՝ եկն առ աշակերտսն,
եգիտ զնոսա 'ի քուն 'ի տրտմութենէն. *և 46
ասէ ցնոսա. զի՞ ննջէք, արիք կացէք յա-
‖Մատթ. ղօթս՝ զի մի մտանիցէք 'ի փորձութիւն:
26. 47. *‖Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ. 47
Մարկ. և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն՝
14. 43. առաջնորդէր նոցա: Իբրև մերձեցաւ առ
Յովհ. Յս՝ համբուրել զնա, քանզի զայն նշան
18. 3.

տուեալ

տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համ-
48 բուրեցից, նա է՝ զնա ունիջիք: *Ասէ ցնա
Յն. Յուդա՝ համբուրելով մատնես զոր-
49 դի մարդոյ: *Իբրև տեսին որ զնովաւն էին՝
որ ինչ եղևն, ասեն ցնա. Տէր՝ հարցուք
50 զսրով: *Եւ եհար մի ոմն 'ի նոցանէ ըզ-
քահանայապետին ծառայ, և 'ի բաց եհան
51 զաջոյ ունկն նր: *Պատասխանի ետ Յն և
ասէ. Թոյլ տուք մինչև ցայդ վայր. և մա-
52 տուցեալ յունկնն՝ բժշկեաց զնա: *Եւ ա-
սէ ցեկեալսն 'ի վր նր՝ ցքահանայապետսն և
ցիշխանս տաճարին և ցծերս. իբրև 'ի վր
53 աւազակի ելէք սուսերօք և բրօք: *Հա-
նապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին, և ոչ ձգե-
ցիք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, և իշ-
54 խանութիւն խաւարի: *‖ Եւ կալեալ զնա՝ ‖ Մատթ.
ածին և մուծին 'ի տուն քահանայապետին. 26. 57.
և Պետրոս երթայր զկնի նորա հեռագոյն: Մարկ.
55 *Իբրև լուցին կրակ 'ի մէջ գաւթին՝ և 14. 53.
նստան շուրջ, նստաւ և Պետրոս 'ի մէջ նո- Յովհան.
56 ցա: *‖ Ետես զնա աղախին ոմն՝ զի նստէր 18. 13.
առ լոյսն. հայեցաւ ընդ նա և ասէ. և սա ընդ ‖ Մատթ.
57 նմա էր՝ որ ընդ նմայն էին: *Իսկ Պետրոս ու- 29. 69.
րացաւ և ասէ. ոչ գիտեմ զնա կին դու: Մարկ.
58 *Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա, 14. 66.
և ասէ. և դու 'ի նոցանէ ես: Եւ Պետրոս Յովհան.
59 ասէ. այր դու՝ չեմ 'ի նոցանէ: *Եւ իբ- 18. 25.
րև ժամ մի անց 'ի վր, այլ ոմն վիճէր և ասէր.
ստոյգ և սա ընդ նմա էր, քանզի Գալիլեացի
60 է: *Ասէ Պետրոս. այր դու՝ չգիտեմ

զինչ խօսիս. և առժամայն մինչդեռ նա
զայն ասէր, խօսեցաւ հաւ: * Դարձաւ Տր̃՝ 61
և հայեցաւ 'ի Պետրոս. և յիշեաց Պետրոս
‖ Մատթ. զբանն Տն̃՝ զոր ասաց ցնա. ‖ մինչչև հաւու
26. 34. խօսեալ իցէ, երիցս ուրասցիս՝ չգիտել
Մարկ. զիս: * Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ- 62
14. 30. նապէս: * Եւ արքն, որ պահէին զնա, 63
Յովհան. այպն առնէին զնովաւ, և հարկանէին:
13. 38. * Ծածկէին զերեսս նորա և տանջէին. և 64
հարցանէին ցնա և ասէին. մարգարէացս՝ ով
է որ եհարն զքեզ: * Եւ այլ բազում ինչ 65
հայհոյութի՛ խօսէին 'ի նա:
‖ Մատթ. * ‖ Եւ իբրև այգ եղև, ժողովեցաւ ծերա- 66
27. 1. կոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն և դպ-
Մարկ. պիրք, և հանին ածին զնա յատեանն իւ-
15. 1. րեանց՝ և ասեն, եթէ դու ես Քն̃, ասա
Յովհան. մեզ: * Ասէ ցնոսա. եթէ ասացից ձեզ, 67
18. 28. սակայն ոչ հաւատայք. * և եթէ հարցից 68
ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի՝ կմ̃ ար-
ձակիցէք: * Բայց յայսմհետէ նստցի որդի 69
մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Այ̃: * Եւ ա- 70
սեն ամենեքեան. ապա դու ես որդին Այ̃:
Եւ նա ասէ ցնոսա. դուք ասէք, թէ ես եմ:
* Եւ նք̃ ասեն. զինչ ևս պիտոյ է մեզ 71
վկայութի՛, զի մեզէն իսկ լուաք 'ի բերա-
նոյ դորա:

## ԳԼ. ԻԳ.

1 Եւ յարուցեալ ամ՟ բազմութիւն նց՟, ածին
2 զնա առ Պիղատոս։ * Եւ սկսան չարախօս
լինել զնմանէ եւ ասել. գտաք զսա՝ զի
թիւրէր զազգս մեր, ‖ եւ արգելոյր ՚ի տալոյ ‖ Վեր.
հարկս կայսեր, եւ ասէր զանձնէ՝ եթէ Քն՟ 20. 22.
3 իցէ թագաւոր։ * ‖ Իսկ Պիղատոս եհարց ‖ Մտթ.
զնա եւ ասէ. դո՞ւ ես թագաւորն Հրէից։ 27. 11.
Նա պատասխանի ետ նմ՟ եւ ասէ. դու ասա- Մրկ.
4 ցեր։ * Ասէ Պիղատոս ցքահանայապետսն 15. 2.
եւ ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս յառ- Յովհ.
5 նըս յայսմիկ։ * Եւ նոքա պնդէին եւ ասէին, 18. 33.
եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ը՟
ամ՟ Հրէաստան՝ սկսեալ ՚ի Գալիլեէ մինչեւ
6 ցայսր. * Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳա-
լիլեէ, եհարց եթէ Գալիլեացի իցէ այրն։
7 * Եւ իբրեւ գիտաց թէ յիշխանութենէ Հե-
րովդի է, ետ տանել զնա առ Հերովդէս.
քանզի եւ նա յԵ՟մ էր յաւուրսն յայնոսիկ։
8 * Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅս՟, ուրախ
եղեւ յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամա-
նակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում
անգամ զնմանէ, եւ ակնունէր նշան ինչ
9 լեալ՝ տեսանել ՚ի նմանէ։ * Հարցանէր ըզ-
նա բանիւք բազմօք. եւ նա ոչինչ ետ նմա
10 պատասխանի։ * Կային քահանայապետքն եւ
դպիրք՝ եւ պնդագոյնս չարախօսէին զնը-
11 մանէ։ * Արհամարհեաց զնա եւ Հերովդէս

հանդերձ իւրովք զօրականօքն. և այսպէս ա-
բարեալ, արկ զնովաւ հանդերձս սպիտակս,
և ետ տանել անդրէն առ Պիղատոս։ *Եւ 12
եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յա-
ւուր յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք
էին միմեանց։ *Կոչեաց Պիղատոս զքա- 13
հանայապետսն և զիշխանս և զժողովուրդն,
*և ասէ ցնա. ածիք մատուցիք ինձ զայր 14
զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն.
‖ Յովհ. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, ‖ և
18. 38. վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորս
19. 4. դուք չարախօսէքդ զդմանէ։ *Այլ և ոչ 15
Հերովդէս, քանզի ետու տանել զդա առ
նա. և արդ՝ ոչինչ մահու արժանի է գոր-
ծեալ դորա. *խրատեցից զդա, և արձա- 16
կեցից։ *Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել 17
նց̃։ *Եւ նոքա աղաղակէին ամ̃ բաղմութիւն՝ 18
և ասէին. բարձ զդա՝ և արձակեա մեզ զ-
Բարաբբա. *որ էր վն̃ խռովութեն իրիք եղելոյ 19
՚ի քաղաքին և սպանութեն մտեալ ՚ի բանտ։
*Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել. քանզի 20
կամէր արձակել զՅս̃։ *Եւ նոքա անդրէն 21
աղաղակէին և ասէին. ՚ի խաչ հան զդա։
‖ Մատթ. *Եւ նա երիցս ասէ ցնա. ‖ զինչ չար 22
27. 23. արար սա. ոչինչ վնաս մահու գտի ՚ի սմա.
Մարկ. խրատեցից զսա և արձակեցից։ *Եւ նք̃ 23
15. 14. տռփէին մեծաձայն՝ և խնդրէին զնա ՚ի
խաչ հանել. և զօրանային բարբառք նց̃
և քահանայապետից։ *Եւ Պիղատոս հա- 24
ւանեցաւ առնել զհայցուածս նց̃։ *Արձա- 25

կեաց

կեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վասն խռովութեան և
սպանութեան արկեալ էր ՚ի բանտ, զոր և խնդ-
րէինն իսկ. և զՅիսուս մատնեաց կամաց նոցա.
26 * Եւ իբրև տարան զնա, ըմբռնեցին Մատթ.
զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. և ե- 27. 32.
27 դին ՚ի վերայ նորա զխաչն բերել զհետ Յիսուսի. * Եւ Մարկ.
երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, 15. 21.
և կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա.
28 * Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. դստերք Երուսաղէմի՝
մի լայք ՚ի վերայ իմ, այլ լացէք ՚ի վերայ անձանց
29 և ՚ի վերայ որդւոց ձերոց. * Զի եկեսցեն ա-
ւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի՛ ամլոց և
որովայնից՝ որ ոչ ծնան, և ստեանց՝ որ ոչ
30 դիեցուցին. * Յայնժամ սկսանիցին ասել
լերանց՝ թէ անկերուք ՚ի վերայ մեր, և բլրոց՝ Եսայ.
31 թէ ծածկեցէք զմեզ. * Զի եթէ ընդ փայտ 2. 19.
դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի. Յայտ.
32 * Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանա- 6. 16.
33 նել ընդ նմա. * Եւ իբրև չոգան ՚ի տեղին՝ կո- Յովհ.
չեցեալ գագաթն, անդ հանին զնա ՚ի խաչ. 19. 17.
և զչարագործսն զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ
34 ձախմէ խաչեցին. * Եւ Յիսուս ասէ. Հա՛յր՝ թող
դոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն. Եւ ՚ի
բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս.
35 * Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոս-
նէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ա-
սէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և
զանձն՝ եթէ դա է Քրիստոս որդի Աստուծոյ ընտրեալն.
36 * Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ
37 առաջի՝ մատուցանէին նմա քացախ. * և ա-

 սէ-

սէին. եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փր-
Յովհ. կեա զանձն քո։ *Եւ էր գիր գրեալ ի 38
19. 20. վերայ նր՝ յունարէն եւ դաղմատարէն եւ եբ-
րայեցերէն գրով, թէ սա է արքայն Հր-
րէից։ *Իսկ մի ոմն ի կախելոց չարագոր- 39
ծացն հայհոյէր զնա, եւ ասէր. ոչ դու ես
Քսն՝ փրկեա զանձն քո եւ զմեզ։ *Պատաս- 40
խանի ետ ընկերն սաստելով նմա եւ ասէ.
չերկնչի՞ս դու յԱյ՝ զի ի նմին պատժի կաս։
*Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գոր- 41
ծեցաքն՝ առնումք զհատուցումն. եւ սա ա-
պիրատ ինչ ոչ գործեաց։ *Եւ ասէ ցՅսն. 42
յիշեա զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութբ
քով։ *Եւ ասէ ցնա Յս. ամէն ասեմ քեզ. 43
այսօր ընդ իս իցես ի դրախտին։ *Եւ էր 44
իբրեւ վեցերորդ ժամ. եւ խաւար եղեւ ի վր
ամ երկրի մինչեւ ցիններորդ ժամ. խաւա-
րեցաւ արեգակն։ *Եւ հերձաւ վարագոյր 45
տաճարին ընդ մէջ։ *Եւ կարդաց Յս ի ձայն 46
Սաղմ. մեծ՝ եւ ասէ. Հայր՝ ի ձեռս քո աւանդեմ
30. 6. զհոգի իմ։ Զայս իբրեւ ասաց, եհան զոգի։
*Եւ տեսեալ հարիւրապետին՝ զորինչ ե- 47
ղեն, փառաւոր արար զԱծ՝ եւ ասէ. արդա-
րեւ այրս այս արդար էր։ *Եւ ամ ժողո- 48
Մատթ. վուրդքն որ եկեալ էին, եւ տեսանէին զտե-
27. 57. սիլն զայն՝ եւ զգործ, բախէին զկուրծս՝ եւ
Մարկ. դառնային։ *Կային եւ ամ ծանօթքն նր ի 49
15. 43. հեռաստանէ. եւ կանայք որ եկեալ էին ընդ-
Յովհան. հետ նր ի Գալիլեէ՝ տեսանէին զայն։
19. 38. *Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր 50
նա-

51 Նախարար՝ այր բարեգործ և արդար. * սա
չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս
նոցա. յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ և
52 ինքն իսկ ակնունէր արքայութեան Աստուծոյ: * Սա
մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմար-
53 մինն Յիսուսի. * և իջուցեալ զնա՝ պատեաց
պաստառակալաւ, և եդ 'ի կուածոյ գերեզ-
54 մանին. ուր չէր բնաւ զոք եդեալ: * Եւ
օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր.
55 * Եւ երթային զհետ նորա կանայքն՝ որ եկեալ
էին ընդ նմա 'ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն,
56 և որպէս եդաւ մարմին նորա: * Դարձան, և պատ-
րաստեցին խունկս և իւղս. և 'ի շաբաթուն
հանդարտեցին վասն պատուիրանին.

## ԳԼ. ԻԴ.

1 Բայց 'ի միաշաբաթուն վաղքաջ ընդ ա- Մատթ.
ռաւօտն եկին 'ի գերեզմանն. բերին ըզ- 28. 1.
խունկսն զոր պատրաստեցին. և այլ կա- Մարկ.
2 նայք ընդ նոսա. * և գտին զվէմն թաւալե- 16. 2.
3 ցուցեալ 'ի գերեզմանէ անտի: * Եւ մտ- Յովհան.
եալ 'ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի: 20. 1.
4 * Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և
ահա այր երկու հասին առ նոսա 'ի հանդերձս
5 լուսաւորս. * Եւ իբրև զահի հարան. և խո-
նարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ա-
սեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մե-
6 ռեալս. * Չէ աստ՝ այլ յարեաւ. յիշեցէք՝
որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գալիլեա,

Ղուկ. * և ասէր՝ Թէ պարտ է որդւոյ մարդոյ մատ- 7
Թ. 22. նիլ 'ի ձեռս մարդկան մեղաւորաց, և 'ի խաչ
ելանել՝ և յերրորդ աւուր յառնել: * Եւ 8
յիշեցին զբանս նորա: * Եւ դարձան 9
պատմեցին զայս ամ մետասանիցն, և այ-
լոցն ամենեցուն: * Եւ էին Մարիամ Մագ- 10
դաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակոբ-
բայ, և այլք ընդ նոսա՝ որ պատմէին զայս ա-
ռաքելոցն: * Եւ երևեցան առաջի նոցա շաղ- 11
փաղփուածի բանքն նոցա՝ և չհաւատային նոցա:
* Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի 12
գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւ-
ոն լոկ՝ զի կային. և գնաց ընդ միտս զարմա-
ցեալ, թէ զինչ եղև:
Մարկ. * Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթային 'ի 13
16. 12. նմին աւուր 'ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ
հարիւր և վաթսուն ասպարիսաւ. և էր ա-
նուն նր Էմմաւուս: * Եւ նք խօսէին ընդ 14
միմեանս վս ամ անցիցն անցելոց: * Եւ ե- 15
ղև 'ի խօսելն նց և 'ի վիճելն՝ և ինքն իսկ Յս
մերձեցաւ՝ և երթայր ընդ նս: * և նց աչք կա- 16
լեալ էին առ 'ի չճանաչելոյ զնա: * Եւ ա- 17
սէ ցնս. զի՞նչ են բանքդ՝ զոր վիճիքդ
ընդ միմեանս՝ մինչդեռ գնայքդ, և տրտմեալ
էք: * Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ՝ 18
որում անուն էր Կղէոփաս, և ասէ ցնա.
դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ
գործեցաւ 'ի նմա յաւուրս յայսոսիկ: * Եւ 19
ասէ ցնս. զի՞նչ: Եւ նոքա ասեն. զՅսէ Նա-
զովրեցւոյ, որ եղև այր մարգարէ՝ հզօր ար-

դեամբք

գործովք և բանիւք առաջի Այ, և ամ ժո-
20 ղովրդեանն: * Որպէս մատնեցին զնա քա-
հանայապետքն և իշխանքն մեր 'ի դատաս-
21 տան մահու՝ և հանին զնա 'ի խաչ: * Եւ մեք
ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոցն իցէ զԻս-
րայէլ. այլև հանդերձ այսու ամենայնիւ,
այս երրորդ օր է՝ յորմէհետէ այն գործե-
22 ցաւ: * Այլև կանայք ոմանք 'ի մէնջ զար-
մացուցին զմեզ. որք կանխեալ էին առաւօտ
23 չոգան 'ի գերեզմանն, * և ոչ գտին զմար-
մինն նր. եկին և ասեն, թէ և տեսիլ ևս
հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ
24 կենդանի է: * Եւ գնացին ոմանք 'ի մէնջ
'ի գերեզմանն, և գտին նոյնպէս ոպ և կա-
25 նայքն ասացին. բայց զնա ոչ տեսին: * Եւ
նա ասէ ցնս. ո՜վ անմիտք և հեղգամիտք 'ի
հաւատալ յամ, զոր խօսեցան մարգարէքն:
26 * Ոչ զնոյն պարտ էր չարչարել Քի, և մտ
27 տանել 'ի փառս իւր: * Եւ սկսեալ 'ի Մով-
սեսէ՝ և յամ մարգարէից, մեկնէր նոցա՝ որ
28 ինչ յամ գիրս գրեալ է զնմանէ: * Իբրև
մերձեցան 'ի գեօղն յոր երթային, և նա
պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ:
29 * Եւ բռնադատեցին զնա՝ և ասեն. առ մեզ
ագիր, զի ը երեկս է՝ և տարաժամեալ է
30 օրս. և եմուտ ագանել ընդ նս: * Եւ
եղև 'ի բազմելն նր ընդ նոսա, առեալ ըզ-
31 հացն՝ օրհնեաց, եբեկ և ետ նց: * Եւ նց
բացան աչք՝ և ծանեան զնա. և նա եղև 'ի
32 նոցանէ աներևոյթ: * Եւ ասեն ցմիմեանս.
Ոչ

ոչ իսկ և սիրտք մեր ճմլէին 'ի մեզ՝ մինչ
խօսէրն ընդ մեզ զճանապարհային. և որպէս
բանայր մեզ զգիրս: * Եւ յարուցեալ նոյն- 33
ժամայն՝ դարձան յԵրուսաղէմ, և գտին
ժողովեալ զմետասանսն՝ և զորս ընդ նոսայն
էին: * Եւ ասէին՝ թէ արդարև յարեաւ 34
Տէր՝ և երևեցաւ Սիմովնի: * Եւ նոքա պատ- 35
մէին զայն որ զճանապարհայինն, և թէ զիարդ
ետ ծանօթս նոցա 'ի բեկանել հացին:
Մարկ. * Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յս 36
16. 14. եկաց 'ի մէջ նոցա՝ և ասէ ցնոսա. խաղա-
Յովհ. ղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի երկնչիք: * Եւ 37
20. 19. զահի հարեալ երկնչէին. և համարէին ոգի
ինչ տեսանել: * Եւ ասէ ցնոսա. զի՞ խռո- 38
վեալ էք՝ և ընդէ՞ր խորհուրդք ելանեն 'ի
սիրտս ձեր: * Տեսէք զձեռս իմ և զոտս, զի 39
ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք. զի
ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս
տեսանէք զի ունիմ: * Եւ զայս ասացեալ՝ 40
եցոյց նց զձեռսն և զոտսն:
* Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի 41
խնդութենէն՝ և զարմացեալ էին, ասէ ցնո-
սա. ունի՞ք ինչ կերակուր աստ: * Եւ նոքա 42
ետուն նմա ձկան խորովելոյ մասն, և խո-
րիսխ մեղու: * Եւ առ՝ եկեր առաջի նո- 43
ցա, և զմնացորդսն ետ նոցա: * Եւ ասէ 44
ցնոսա. այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ,
մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամե-
նայն գրելոցն յօրէնսն Մովսէսի և 'ի մար-
գարէս և 'ի սաղմոսսն վասն իմ: * Յայն- 45

ժամ

ժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս։
46 Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր
չարչարիլ Քրի, և յառնել ՚ի մեռելոց յա-
47 ւուր երրորդի. Եւ քարոզել յանուն նորա
ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամե-
48 նայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ։ Եւ Գործ.
49 դուք էք վկայք այսոցիկ։ Եւ ահա ես ա- 1. 8.
ռաքեմ զաւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ. և դուք Յովհ.
նստարուք ՚ի քաղաքիս յԵրուսաղէմ, մինչև 14. 26.
50 զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց։ Եհան
զնոսա մինչև ՚ի Բեթանիա, և ամբարձեալ
51 զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա. Եւ եղև Մարկ.
յօրհնելն նորա զնս, մեկնեցաւ ՚ի նոցանէ, 16. 19.
52 և վերանայր յերկինս։ Եւ նոքա երկիր- Գործ.
պագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրա- 1. 9.
53 խութեամբ մեծաւ։ Եւ էին հանապազ ՚ի
տաճարին, գովէին և օրհնէին զԱծ։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆ-ՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ:

Յովհաննու Աւետարանն գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակոբայ Զեբեդեայ. որ անկեալ ի կրծս լանջացն Տն. նոյն սա գըրեաց զաւետարանս զայս: Եւ զինքն աւանդէ յաշակերտն քանզի. և զայս մարմնոյ ծննդեանն միշտապահէ յաւէտ, և քանն մարմին եղև: Եւ միշտապահէ զաստուածութիւն Յովհաննու և զաւետարանն աշակերտացն. այլ և զնշանս և զսքանչելիս որ եղեն. և զխորհուրդն, որ մարգարէացաւ Պետրոսի առաքելոյ, և խաչելոյն քահանայ և զխորհուրդն քաղաքացն զհանդերձեալն, և ի մեջ արարածոց նոյն մեծի սրբոյն. և մարմին նորա եղաւ ի գերեզմանի, և յարեալ է երեք աւուր. եւ եղեւ աշակերտացն իւրոց:

Յովհաննէս որ և սրբէ արարածս, զմեծութիւն աստուածութեան: Ա զինչ ծէ, ամենայն մեծութեան Փրկչին գրեաց զաւետարանս իւր յետ Քրիստոսի համբարձման, ի խորհրդոց եկեղեցւոյն Աստուծոյ ի լուսոյ յայտ:

Յովհաննէս հետևող է:

# ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

## Աւետարանին որ ըստ Յովհաննու ։

| | Գլ. | Համ. |
|---|---|---|
| Վասն՝ որ անսկզբնելն է Բանն Քս. | Ա. | 1. |
| Վն Յովհաննու վկայելոյն Բանին Քսի. | Ա. | 15. |
| Վասն գալոյն առ նա գառինն Քսի. | Ա. | 29. |
| Վն աշակերտացն առ Յն առաջնորդելոյն. | Ա. | 39. |
| Վասն գտանելոյն զՆաթանայէլն. | Ա. | 41. |
| Վասն ՚ի Կանայ հարսանեացն. | Բ. | 1. |
| Վասն արտաքսման վաճառելոց ՚ի տաճարէն. | Բ. | 15. |
| Վասն Նիկոդեմոսի. | Գ. | 1. |
| Վասն ՚ի Յովհաննու մկրտելոյն. | Գ. | 23. |
| Վասն խնդրելոյ լինելոյ ընդ սրբութեանն. | Գ. | 25. |
| Վասն կնոջն Սամարացւոյ. | Դ. | 7. |
| Վասն թագաւորազնին. | Դ. | 46. |
| Վասն երեսնամեան և ութամեայ հիւանդացելին. | Ե. | 5. |
| Վասն՝ որ ոչ առնէ ինչ զՀայրն. | Ե. | 20. |
| Վասն հինգ հացին, և երկուց ձկանց. | Զ. | 9. |
| Վասն գնալոյն ՚ի վերայ ծովուն. | Զ. | 19. |
| Վասն [illegible] | Զ. | 41. |
| Վասն շրջելոյն Յսի ՚ի Գալիլեա, և խռովութեան եղբարցն. | Է. | 1. |
| Վասն խնդրելոյն [illegible] | Է. | 30. |
| Վասն ՚ի ծնէ կուրին. | Թ. | 1. |
| Վասն տալոյն Յսի զանձն ՚ի վեր ոչխարացն. | Ժ. | 15. |
| Վասն նաւակատեացն ձմեռն. | Ժ. | 22. |

Վասն

Վասն Ղազարու յարութեանն. ժա. 1.
Վասն օծանելոյն զՏէրն. ժբ. 3.
Վասն՝ որ ասաց Յուդա աղքատացն. ժբ. 5.
Վասն յաւանակին. ժբ. 14.
Վասն Ելլենացւոց հեթանոսացն առ Տէր. ժբ. 21.
Վասն հատոյն ցորենոյ. ժբ. 24.
Վասն Յսի լոյս գալոյն յաշխարհ. ժբ. 46.
Վասն ընթրեացն. եւ լուանալոյ զոտս
աշակերտացն. ժգ. 11.
Վասն չարչարանաց Տն, եւ սփոփելոյ
զաշակերտսն. ժդ. 15.
Վասն գալոյ Հոգւոյն՝ եւ մխիթարելոյ
զաշակերտսն. ժդ. 26.
Վասն մատնութեանն Յսի. ժը. 5.
Վասն ուրացութեանն Պետրոսի, եւ
հատանման խօսելոյ. ժը. 25.
Վասն ածելոյն զՅսն ՚ի ժողովն Կայ-
իափայ. ժը. 28.
Վասն տանելոյն զՅսն ՚ի Գողգոթա. ժթ. 17.
Վասն աւանդելոյն Յսի զհոգին. ժթ. 30.
Վասն խնդրելոյն զտէրունական մար-
մինն. ժթ. 38.
Վասն բերելոյն ՙՆիկոդեմոսի զմուռսն. ժթ. 39.
Վասն գալոյ կանանցն ՚ի գերեզմանն. ի. 1.
Վասն դրօքն փակելովք մտանելոյն
Յսի առ աշակերտսն. ի. 19.
Վասն զԹովմաս հաստատելոյ Տն. ի. 27.
Վասն ճաշելոյն ընդ նմա, եւ հար-
ցանելոյն զՊետրոս. իա. 15.
Վասն վկայելոյ աշակերտին, եւ գր-
ելոյ զաւետարանն. իա. 24.

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ։

### ԳԼ. Ա.

1 ԻՍԿԶԲԱՆԷՆԷՐԲԱՆՆ Ի Կ
և Բանն էր առ Ա՟Ծ. և Ա՟Ծ
2 էր Բանն։ * Սա էր ՚ի սկզբա-
3 նէ առ Ա՟Ծ։ * Ամենայն
ինչ նովաւ եղև, և առանց
նորա եղև և ոչինչ՝ որ ինչ
4 եղեն։ * Նովաւ կեանք էր, և կեանքն էր
5 լոյս մարդկան. * և լոյսն ՚ի խաւարի անդ
լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու։
6 * Եղև այր մի առաքեալ յԱ՟Յ. անուն նմա Մատթ.
7 Յովհաննէս։ * Սա եկն ՚ի վկայութիւն՝ զի 3. 1.
վկայեսցէ վ՟ն լուսոյն. զի ամենեքին հաւա-
8 տասցեն նովաւ։ * Ոչ էր նա լոյսն. այլ
9 զի վկայեսցէ վ՟ն լուսոյն։ * Էր լոյսն ճշմա- Վայր.
րիտ, որ լուսաւոր առնէ զամ մարդ՝ որ 3. 19.
10 գալոց է յաշխարհ։ * Յաշխարհի էր, և
աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ
ծա-

ծանեաւ. * Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ 11
ընկալան: * Իսկ որք ընկալանն զնա, ետ 12
նց իշխանութիւն որդիս ԱՅ լինել՝ որոց հա-
ւատասցեն յանուն նր. * Որք ոչ յարենէ 13
եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց
Մատթ. առն, այլ յԱյ ծնան: * Եւ բանն մարմին 14
1. 16. եղեւ՝ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս
Ղուկ. նր՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի
2. 7. շնորհօք եւ ճշմարտութեամբ. * Յովհաննէս 15
վկայէ վս նր, աղաղակեաց եւ ասէ. սա է՝
զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր՝ ա-
ռաջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր. * Զի 16
ի լրութենէ նր՝ մեք ամենեքին առաք
շնորհս փոխանակ շնորհաց: * Զի օրէնքն 17
ի ձեռն Մովսէսի տուան. շնորհքն եւ ճշմար-
տութիւն ի ձեռն ՅԻ ՔԻ եղեն.
Ի. Ի * ԶԱԾ ոչ ոք ետես երբեք, բայց միա- 18
Ա. Տիմ. ծինն որդի որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց:
6. 16. * Եւ այս է վկայութիւն Յովհաննու, յորժամ 19
Ա. Յովհ. առաքեցին առ նա Հրեայքն յԵրմէ քահա-
4. 12. նայս եւ ղեւտացիս, զի հարցցեն զնա՝ թէ դու
ո՞ ես: * Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրա- 20
Եսայ. ցաւ. խոստովան եղեւ, եթէ ես ոչ եմ ՔՍն:
40. 3. * Եւ հարցին զնա. իսկ զի՞նչ ես դու, Եղիա՞ 21
Մաղաք. ես. եւ ասէ. ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու.
3. 3. պատասխանի ետ՝ թէ ոչ: * Իսկ ասեն ցնա՝ 22
Մարկ. դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք որոց
1. 3. առաքեցինն զմեզ. զի՞ ասես վս քո: * Ա- 23
Ղուկ. սէ. Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ու-
3. 4. ղիղ արարէք զճանապարհս Տն, որպ ասաց
Ես-

24 Եսայի մարգարէ: * Եւ որք առաքեցանն՝ 'ի
25 փարիսեցւոց անտի էին: * Հարցին զնա՝ եւ
ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քս,
26 եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն: * Պատասխա- Մատթէ.
խանի ետ նց Յովհաննէս՝ եւ ասէ. Ես մկրտե- 3. 11.
մեմ զձեզ ջրով. 'ի միջի ձերում կայ, զոր Մարկ.
27 դուք ոչ գիտէք: * Նա զկնի իմ գալոց է, 1. 8.
որում չեմ արժանի՝ եթէ լուծից զխրացս Մարկ.
28 կօշկաց նր: * Այս 'ի Բեթաբարայ եղեւ յայն- 1. 7.
կոյս Յորդանանու, ուր էր Յովհաննէս՝ եւ Ղուկաս
մկրտէր: 3. 16.
29 * 'Ի վաղիւն անդր տեսանէ զՅս՝ զի գայր առ ԲԳ
նա, եւ ասէ. ահաւասիկ գառնն Այ՝ որ բառ-
30 նայ զմեղս աշխարհի: * Սա է՝ վն որոյ եսն
ասէի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ ե-
31 ղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս: * Եւ ես
ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լիցի Իս-
րայէլի, վն այնորիկ եկի ես ջրով մկրտել:
32 * Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, Թէ տե- Մատթէ.
սանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի 3. 16.
33 յերկնից, եւ հանգչէր 'ի վր նր: * Եւ ես Մարկ.
ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկր- 1. 10.
տել ջրով՝ նա ասաց ցիս. յորմէ վր տեսանի- Ղուկաս
ցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի 'ի 3. 22.
վերայ նր, նա է՝ որ մկրտէ Հոգւովն սրբով:
34 * Եւ ես տեսի եւ վկայեցի՝ եթէ սա է որ-
դին Այ:
35 * 'Ի վաղիւն անդր կայր Յովհաննէս, եւ յա- ԲԳ
36 շակերտաց անտի նր երկու: * Եւ նայեցեալ
ընդ Յսի՝ զի գնայր, ասէ. ահաւասիկ Գառն

գառն Այ ։ * Լուան 'ի նմանէ երկու աշա- 37
կերտքն՝ զի խօսէր, և գնացին զհետ Յնի ։
* Իբրև դարձաւ Յս՝ և ետես զնոսա՝ զի եր- 38
թային զհետ նր, ասէ ցնս. զի՞նչ խնդրէք ։
՚Նք ասեն ցնա. ռաբբի, որ թարգմանեալ
կոչի վարդապետ, ո՞ւր են օթեվանք քո ։
* Ասէ ցնս. եկայք և տեսէք ։ Եկին և տե- 39
սին՝ ուր էին օթեվանք նր. և առ նմա ագան
այն օր, զի ժամ էր իբրև տասներորդ ։
* Էր Անդրեաս եղբայր Սիմովնի վիմի, մի 40
յերկուց անտի, որ լուեալն 'ի Յովհաննէ՝ և
գնացին զկնի նր ։ * Գտանէ սա նախ զեղ- 41
բայր իւր զՍիմոն, և ասէ ցնա. գտաք զՄ-
Մեսիայ՝ որ թարգմանի Քս ։ * Եւ ած զնա 42
առ Յս. հայեցեալ ընդ նա Յսի ասէ. դու ես
Սիմոն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կե-
փաս, որ թարգմանի Պետրոս ։

ԻՆ

* 'Ի վաղիւն անդր կամեցաւ ելանել 'ի Գա- 43
լիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յս.
եկ զկնի իմ ։ * Էր Փիլիպպոս 'ի Բեթ- 44
սայիդայ, 'ի քաղաքէ Անդրեայ և Պետրո-
սի ։ * Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, 45
և ասէ ցնա. զորմէ գրեաց Մովսէս յօրէն-
սն՝ և մարգարէքն. գտաք զՅս զորդի Յով-
սեփայ 'ի Նազարեթէ ։ * Ասէ ցնա Նաթա- 46
նայէլ, թէ 'ի Նազարեթէ մարթ ի՞նչ իցէ
բարւոյ ինչ լինել ։ Ասէ ցնա Փիլիպպոս.
եկ և տես ։ * Իբրև ետես Յս զՆաթանայէլ 47
զի գայր առ նա, ասէ վս նր. ահա արդարև
Իսրայելացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ ։ * Ա- 48
սէ

Ծննդ. 49. 10.
Օրին. 18. 18.
Եսայ. 40. 10.
Եզեկ. 34. 23.
Դանիէ. 9. 24. 25.

սէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս։
Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնա. մինչչեւ էր
Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր 'ի ներ-
49 քոյ թզենւոյ, տեսի զքեզ։ * Պատասխա-
նի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. ռաբբի՝ դու
ես որդի Այ, դու ես թագաւորն Իսրայէլի.
50 * Պատասխանի ետ նմա Յս եւ ասէ. փոխա-
նակ զի ասացի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզե-
նւոյն, հաւատաս, մեծամեծս եւս քան
51 զայս տեսցես։ * Եւ ասէ ցնա. ամէն ամէն
ասեմ ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ՝
եւ զհրեշտակս Այ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն
'ի վերայ որդւոյ մարդոյ.

## Գլ. Բ.

Բ. Օ.

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի
Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յսի.
2 * Կոչեցաւ եւ Յս եւ աշակերտքն նորա 'ի
3 հարսանիսն։ * Եւ 'ի պակասել գինւոյն,
4 ասէ մայրն ցՅս. գինի ոչ ունին. * Եւ ասէ
ցնա Յս. զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չեւ է
5 հասեալ ժամանակ իմ։ * Ասէ մայրն նորա
ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ՝ արա-
6 ջիք. * Անդ էին թակուկք կճեայք վեց՝ ըստ
սրբութեան Հրէից. տանէին մի մի 'ի նոցանէ
7 մարս երկուս կամ երիս. * Ասէ ցնոսա Յս.
լցէք զթակուկսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ 'ի
8 վեր. * Եւ ասէ ցնս. արդ՝ հանէք եւ բերէք
9 տաճարապետին. եւ նոքա բերին։ * Եւ իբ-

րև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի
եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ. բայց սպա-
սաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն. խօսի
զփեսայն տաճարապետն, * և ասէ. ամ 10
մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ.
և յորժամ արբենան, յայնժամ զյոռին.
դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ:
* Զայս արար սկիզբն նշանաց Յս 'ի Կանա 11
Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. և
հաւատացին 'ի նա աշակերտքն նորա:
ԲԷ * Յետ այսորիկ էջ Յս 'ի Կափառնաում, 12
ինքն և մայր իւր և եղբարք իւր. և անդ լի-
նէր ոչ բազում ինչ աւուրս: * Եւ էր մերձ զա- 13
տիկն Հրէից, և ել Յս յԵրսղմ. * և եգիտ 'ի 14
տաճարին՝ զի վաճառէին զարջառս և զոչ-
խարս և զաղաւնիս, և զլումայափոխսն՝ որ
նստէին: * Եւ արար խարազան չուանեայ, 15
և եհան զամենեսին 'ի տաճարէն, զոչխար-
սն և զարջառս, և զպղինձս հատավաճա-
ռացն ցրուեաց, և զսեղանսն կործանեաց:
* Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնս. 16
Առէք զայդ աստի, և մի առնէք զտուն Հօր
իմոյ՝ տուն վաճառի: * Յայնժամ յիշեցին աշա- 17
‖ Սաղ. կերտքն նր, թէ գրեալ է. ‖Նախանձ տան
68. 10. քո կերիցէ զիս: * Պատասխանի ետուն 18
‖ Մատ. Հրէայքն և ասեն ցնա. զի՞նչ նշան ցուցանես
26. 61. դու մեզ՝ զի զայդ առնես: * Պատասխանի 19
27. 40. ետ Յս՝ և ասէ ցնս. ‖Քակեցէք զտաճարդ
Մրկ. զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա:
14. 58. * Ասեն ցնա Հրէայքն. քառասուն և բղ- 20
15. 29.

վեց

վեց ամ շինեցաւ տաճարս, և դու զերիս ա-
21 ւուրս կանգնեցե՞ս զսա։ * Բայց նա ասէր վն
32 տաճարի մարմնոյն իւրոյ։ * Իսկ յորժամ
յարեաւն 'ի մեռելոց, յիշեցին աշակերտքն
նր, թէ այս է՛ զոր ասացն. և հաւատացին
գրոյն, և բանին զոր ասաց Յս։
23 * Եւ իբրև էր յԵղէմ 'ի զատկին 'ի տօնի,
բազումք հաւատացին յանուն նր. զի տեսանէին Գ. Կ
24 զնշանսն՝ զոր առնէր։ * Բայց ինքն Յս ոչ
հաւատայր զանձն նց. քանզի ինքն գիտէր
25 զամ. * և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայես-
ցէ վն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ
կրէր 'ի մարդն։

## ԳԼ. Գ։

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անտի՝ Նիկո-
2 դեմոս անուն նորա՝ իշխան Հրէից։ * Սա
եկն առ նա գիշերի՝ և ասէ ցնա. ռաբբի՝
գիտեմք եթէ յԱյ եկեալ ես վարդապետ.
զի ոչոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դուդ
3 առնես, եթէ ոչ Ած իցէ ընդ նմա։ * Պա-
տասխանի ետ Յս և ասէ ցնա. ամէն ամէն
ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ
4 կարէ տեսանել զարքայութիւն Այ։ * Ասէ
ցնա Նիկոդեմոս. զիարդ կարէ մարդ ծնա-
նել՝ որ ծեր իցէ. միթէ մարթ ինչ իցէ
անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել՝
5 և ծնանել։ * Պատասխանի ետ Յս և ասէ.
ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի

ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայ-
ութիւն Ա՛յ։ * Զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մար- 6
մին է, և ծնեալն 'ի Հոգւոյ՝ հոգի է։ * Դու 7
մի՛ զարմանար, զի ասացի քեզ՝ պարտ է
ձեզ ծնանել վերստին։ * Զի հողմ ուր կա- 8
‖ Սաղմ. մի՝ շնչէ. և զձայն նորա լսես. ‖ Այլ ոչ գիտես՝
134. 7. ուստի գայ, կամ յո՛ երթայ. սոյնպէս և
ամ ծնեալն 'ի Հոգւոյն։ * Պատասխանի ետ 9
Նիկոդեմոս և ասէ ցնա. զիա՞րդ մարթի
այդմ լինել։ * Պատասխանի ետ Յս և ասէ 10
ցնա. դու ես վարդապետն Իէլի՝ և զայդ ո՞չ
գիտես։ * Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր 11
ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկա-
յեմք. և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։
* Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ 12
և ոչ հաւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւոր-
սն ասացից՝ հաւատայցէք։
Գ. Բ. * Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն 13
յերկնից՝ որդին մարդոյ, որ էն յերկինս։
‖ Թուոց. * ‖ Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանա- 14
21. 9. պատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդ-
ւոյ մարդոյ։ * Զի ամ որ հաւատայ 'ի նա՝ 15
մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտե-
‖ 1. Յովհ. նականս։ * ‖ Զի այնպէս սիրեաց Ա՛ծ զաշ- 16
4. 9. խարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի
ամ որ հաւատայ 'ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ըն-
կալցի զկեանսն յաւիտենականս։ * Զի ոչ 17
‖ Անդ. առաքեաց Ա՛ծ զորդի իւր յաշխարհ՝ ‖ թէ
12. 47. դատեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցի աշ-
խարհ նովաւ։ * Որ հաւատայ 'ի նա, ոչ 18

դա-

դատապարտեսցի . և որ ոչ հաւատայ 'ի նա՝
արդէն իսկ դատապարտեալ է . զի ոչ հա-
19 ւատաց յանուն միածնի որդւոյն Այ . * Եւ- Մ Եբ.
այս իսկ է դատաստան . զի լոյս եկն յաշ- 1. 9.
խարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առա-
ւել քան զլոյս . զի էին գործք իւրեանց չա-
20 րութեան . * Զի ամ որ զչար գործէ՝ ատեայ
զլոյս . և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմա-
21 նեսցին գործք նր . * Իսկ որ առնէ զճշմար-
տութի՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին
գործք նր, թէ Աստուծով գործեցան .
22 * Յետ այսորիկ եկն Յս և աշակերտքն նորա Գ. Գ.
յերկիրն Հրէաստանի . և անդ շրջէր նոքօք
23 հանդերձ | և մկրտէր . * Մկրտէր և Յով- Մ այբ.
հաննէս 'ի Յայենովն մերձ առ Սաղիմ, զի 4. 1.
ջուրք բազում էին անդ . և գային՝ և մկրտէին :
24 * Զի չև ևս էր արկեալ Յովհաննէս 'ի բանտ .
25 * Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհան-
26 նու ընդ Հրէից վասն սրբութեան . * Եկին առ
Յովհաննէս և ասեն ցնա . ռաբբի՝ որ էրն
ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, | որում դուն Մ Եբ.
վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ և ամե- 1. 19.
27 նեքին գան առ նա : * Պատասխանի ետ
Յովհաննէս՝ և ասէ . ոչ կարէ մարդ առնուլ
յանձնէ և ոչինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա
28 յերկնից 'ի վերուստ : * Դուք ձեզէն վը-
կայէք ինձ, | զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Մ Եբ.
Քսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա . 1. 20.
29 * Որ ունի հարսն՝ նա է փեսայ . իսկ բարե-
կամ փեսային՝ որ կայ և լսէ նմա, ուրախու-

թեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ՝
այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է։ * Նմա 30
պարտ է աճել, և ինձ մեղմանալ։ * Որ 'ի 31
վերուստ գայ՝ 'ի վերոյ է քան զամ. որ
յերկրէ աստի է, յերկրէ է՝ և յերկրէ խօ-
սի։ * Որ յերկնից գայ, զորինչ տեսս և 32
զոր լուաւ՝ վկայէ. և զվկայութիւն նորա ոչոք
ընդունի։ * Որ ընդունի զվկայութիւն նորա՝ 33
‖ Հռովմ. կնքեաց, թէ ‖ Ած ճշմարիտ է։ * Զի զոր 34
3. 4. Ածն առաքեաց՝ զբանս Այ խօսի. զի ոչ եթէ
չափով տայ Ած զՀոգին։ * Հայր սիրէ զոր- 35
‖ Ա. Յովհ. դի, և զամ ինչ ետ 'ի ձեռս նր։ ‖ * Որ հա- 36
5. 10. ւատայ յորդի, ընդունի զկեանսն յաւիտե-
նականս. և որ ոչ հնազանդի որդւոյ, ոչ
տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Այ մնայ 'ի
վերայ նորա։

## ԳԼ. Դ.

Գ. Դ. Իբրև գիտաց Յս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ 1
‖ Վեր. եթէ Յս բազում աշակերտս առնէ ‖ և մկըր-
3. 22. տէ քան զՅովհաննէս. * քանզի ոչ եթէ 2
Յս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա,
* եթող զՀրէաստան երկիր. և եկն մի- 3
անգամ 'ի Գալիլեա։ * Եւ էր նմա անցա- 4
նել ընդ Սամարիա։ * Գայ նա 'ի քաղաք 5
մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար.
‖ Ծննդ. մերձ 'ի գեօղն ‖ զոր ետ Յակովբ որդւոյ իւ-
33. 19. րում Յովսեփայ։ * Եւ անդ էր աղբիւր մի 6
Յեսու. Յակոբայ. և Յս վաստակեալ 'ի ճանապար-
24. 32. հէն.

հէն, նստէր 'ի վերայ աղբերն. և էր ժամ իբ-
7 րև վեցերորդ: *Գայ կին մի 'ի Սամարիայ
հանել ջուր. ասէ ցնա Յս. տուր ինձ ըմ-
8 պել: *Զի աշակերտքն նր երթեալ էին 'ի
9 քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցեն: *Ա-
սէ ցնա կինն Սամարացի. դու՝ որ Հրեայդ
ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես 'ի կնոջէ
Սամարացւոյ. զի ոչ երբէք խառնակին
10 Հրեայք ընդ Սամարացիս: *Պատասխանի
ետ նմա Յս և ասէ. եթէ գիտէիր դու ըզ-
պարգևն Այ, և ո՞վ է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ
տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի
11 նմանէ՝ և տայր քեզ ջուր կենդանի: *Ասէ
ցնա կինն. Տէր՝ դու քանզի և դոյլ իսկ ոչ
ունիս, և ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի
12 ունիցիս զջուրն կենդանի: *Միթէ դու մեծ
ինչ ո՞ք իցես՝ քան զհայրն մեր Յակովբ՝
որ զայս ջրհոր ետ մեզ. և ինքն աստի արբ՝
13 և որդիք նր, և խաշինք նր: *Պատասխա-
նի ետ նմա Յս և ասէ. ամ որ ըմպէ 'ի ջրոյ
յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ
ըմպէ 'ի ջրոյն, զոր ես տաց նմա՝ մի ծարա-
14 ւեսցէ յաւիտեան: *Այլ ջուրն զոր ես
տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ
15 'ի կեանսն յաւիտենականս: *Ասէ ցնա
կինն. Տէր՝ տուր ինձ զջուրն զայն, զի մի
ծարաւեցից. և մի եկից այսր՝ հանել ջուր:
16 *Ասէ ցնա Յս. երթ կոչեա զայր քո՝ և եկ
17 այսր: *Պատասխանի ետ նմա կինն և ասէ.
չիք իմ այր: Ասէ ցնա Յս, բարւոք ա-

սացեր՝

ասացեր՝ թէ չէք իմ այր. * զի հինգ այր փո- 18
խեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր.
զայդ արդար ասացեր: * Ասէ ցնա կինն. 19
Տէր՝ թուի ինձ, թէ մարգարէ իցես դու:
* Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիրպա- 20
‖2. Օրէն. գին. և դուք ասէք՝ ‖ եթէ յԵրուսաղէմ է
12. 5. տեղի, ուր արժան իցէ երկիրպագանել.
* Ասէ ցնա Յս. կին դու՝ հաւատա ինձ, զի 21
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ 'ի լերինս
յայսմիկ և ոչ յԵրուսաղէմ երկիրպագանիցեն Հօր.
‖4. Թագ. * ‖ Դուք երկիրպագանէք՝ որում ոչն գի- 22
17. 41. տէք, մեք երկիրպագանեմք որում գի-
տեմքն. զի փրկութիւն 'ի Հրէից է. * Այլ 23
եկեսցէ ժամանակ՝ և այժմ իսկ է. յորժամ
ճշմարիտքն երկրպագուք՝ երկիրպագանի-
ցեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ. քանզի և
Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ.
Գ. Ա. * ‖ Հոգի է Ած, և երկրպագուաց նր՝ հոգ- 24
‖2. Կորն. ւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագա-
2. 17. նել: * Ասէ ցնա կինն, գիտեմք զի Մեսիայ 25
գայ՝ անուանեալն Քս. յորժամ եկեսցէ նա,
պատմեսցէ մեզ զամ: * Ասէ ցնա Յս. ես 26
եմ՝ որ խօսիմս ընդ քեզ. * Եւ յայն բան 27
եկին աշակերտքն նր, և զարմանային՝ զի ընդ
կնոջն խօսէր. բայց ոչոք ասաց 'ի նոցանէ,
թէ զի՞նչ խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ
դմա: * Եթող կինն զսափորն իւր՝ և չո- 28
գաւ 'ի քաղաքն, և ասէ ցմարդիկն: * Ե- 29
կայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամ՝ որ
ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քսն.

* Ե-

30 *Ելին 'ի քաղաքէն՝ և գային առ նա: *Եւ
31 մինչչև եկեալ էին նոքա, աղաչէին զնա ա-
շակերտքն և ասէին. ռաբբի՛ հաց կեր.
32 *Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ու-
33 տել, զոր դուքն ոչ գիտէք: *Ասէին աշա-
կերտքն ընդ միմեանս. միթէ երէ՞ր ինչ ոք
34 դմա ուտել: *Ասէ ցնս Յս. իմ կերակուր
այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ առա-
քեացն զիս, և կատարեցից զգործն նորա:
35 *Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ ևս չորք ամիսք
են, և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ
ձեզ. ամբարձէք զաչս ձեր, և տեսէք զար-
տորայսն, ‖ զի սպիտակացեալ են՝ և 'ի ‖ Մատթ.
36 հունձս հասեալ: *Եւ որ հնձէն՝ վարձս 9. 37.
առնու, և ժողովէ զպտուղ 'ի կեանսն յա- Ղուկ.
ւիտենականս. զի որ սերմանէն՝ և որ հնձէ՝ 10. 2.
37 հասարակ ցնծասցեն: *Յայսմ իսկ է բանն
ճշմարիտ. զի այլ է որ սերմանէ, և այլ է
38 որ հնձէ: *Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր
ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին,
39 և դուք 'ի վաստակս նց մտէք: *Եւ 'ի քա-
ղաքէն յայնմանէ Սամարացւոց՝ բազումք
հաւատացին 'ի նա, վս բանի կնոջն վկայե-
լոյ՝ եթէ ասաց ինձ զամ, որ ինչ իմ գործեալ
40 էր: *Իսկ իբրև եկին առ նա Սամարացիքն,
աղաչէին զնա լինել առ նս. և եղև անդ ա-
41 ւուրս երկուս: *Եւ ևս բազումք հաւա-
42 տացին 'ի նա վս բանին նր: *Եւ ասէին
ցկինն, թէ ոչ այսուհետև վասն քո խօսիցդ
հաւատամք, զի մեզէն իսկ լուաք 'ի դմա-
նէ.

նէ . և գիտեմք եթէ դա է ճշմարտիւ փր-
կիչ աշխարհաց:
Գ. Ծ *Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց 43
Մատթ. 'ի Գալիլեա: *Զի ինքն իսկ Յս վկայեաց՝ 44
13. 57. եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ
Մարկ. ոչ ունի: *Արդ յորժամ եկն նա 'ի Գալի- 45
6. 4. լեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տե-
Ղուկ. սեալ էին զամ նշանսն, զոր արար յԵմ
4. 24. 'ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին 'ի տօնն:
*Եկն դարձեալ 'ի Կանա Գալիլեացւոց՝ ուր 46
Վեր. արար զջուրն գինի. և անդ էր թագաւո-
2. 9. րազն մի, որոյ որդի նր հիւանդ կայր 'ի Կա-
փառնայում: *Նա իբրև լուաւ եթէ Յս 47
եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ
նա՝ և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի
նր. քանզի մերձ էր 'ի մեռանել: *Ասէ 48
ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տե-
սանէք՝ ոչ հաւատայք: *Ասէ ցնա թագա- 49
ւորազն. Տէր՝ էջ մինչչև մեռեալ իցէ մա-
նուկն իմ: *Ասէ ցնա Յս. երթ՝ որդին քո 50
կենդանի է: Եւ հաւատաց այրն բանին՝ զոր
ասաց նմա Յս, և գնաց: *Եւ մինչդեռ իջա- 51
նէր, ընդառաջ եղեն նմա ծառայքն նր. ա-
ւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա
կենդանի է: *Հարցանէր ցնս վն ժամուն՝ 52
յորում ապաքինեաց. և ասեն ցնա. երէկ
յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն:
*Գիտաց հայրն նր՝ եթէ յայնմ ժամու՝ յո- 53
րում ասացն ցնա Յս՝ թէ որդին քո կենդա-
նի է. և հաւատաց ինքն և ամ տունն իւր:
*Զայս

54 * Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յս
եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա։

## ԳԼ. Ե։

Գ. Ե.
1 Յետ || այսորիկ տօն էր Հրէից. եւ ել Յս
2 յԵրուսաղէմ։ * Եւ էր յԵրուսաղէմ 'ի Պրոբատիկէ || Դէւտ.
աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեթ- 23. 5.
3 հեզդա, հինգ սրահ։ * Յորս անկեալ դնէր 2. Օրէն.
բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց 16. 1.
գօսացելոց, որ ակնունէին ջրոյն յուզելոյ։
4 * Եւ հրեշտակ Տն իջանէր ըստ ժամանակի
յաւազանն՝ եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ
'ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ ու-
5 նելով նշան հիւանդութեան։ * Եւ անդ էր այր
մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր 'ի հիւան-
6 դութեան իւրում։ * Զնա իբրեւ ետես Յս՝ զի
անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամա-
նակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամի՞ս
7 ողջ լինել։ * Պատասխանի ետ նմա հիւանդն.
Տէր՝ ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յու-
զիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես
դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն
8 իջանէ։ * Ասէ ցնա Յս. արի առ զմահիճս
9 քո՝ եւ գնա։ * Եւ ողջացաւ այրն, եւ յա-
րեաւ՝ առ զմահիճս իւր՝ եւ շրջէր. եւ էր շա-
10 բաթ յաւուրն յայնմիկ։ * Ասեն Հրէայքն
ցբժշկեալն. Շաբաթ է՝ եւ ոչ է արժան քեզ || Եզեկ.
11 առնուլ զմահիճս քո։ * Պատասխանի ետ 20. 11.
նոցա եւ ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց Երեմ.
ցիս, 17. 24.

ցիս, առ զմահիճս քո՝ և գնա։ * Հարցին 12
ցնա և ասեն. ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ,
առ զմահիճս քո՝ և շրջեա՛ց։ * Եւ բժշկեալն 13
ոչ գիտէր թէ ո՞վ իցէ. քանզի Յս խոյս ետ
վասն ամբոխին 'ի տեղւոջէ անտի. * Յետ 14
այսորիկ գտանէ զնա Յս 'ի տաճարին, և ա-
սէ ցնա. Ահաւադիկ ողջացար, մի ևս մե-
ղանչեր՝ զի մի չար ևս ինչ լինիցի քեզ։ * Գն-
նաց այրն՝ և պատմեաց Հրէիցն, եթէ Յս էր՝ 15
որ բժշկեացն զիս։ * Եւ վն այնորիկ հալա- 16
ծէին զՅս Հրեայքն, զի զայն առնէր 'ի շա-
բաթու։ * Եւ Յս պատասխանի ետ նց. Հայր 17
իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։
* Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայ- 18
քն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր
ծ զշաբաթս, այլ և հայր իւր կոչէր զԱծ, և
հաւասար առնէր զանձն Այ։
* Պատասխանի ետ Յս և ասէ ցնս. ամէն ա- 19
Դ. Կ մէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առ-
նել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զզ-
Հայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն
և որդին նմին նման գործէ։ * Զի Հայր սի- 20
րէ զորդի, և զամ ինչ ցուցանէ նմա՝ զոր
ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս
ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք զարմա-
նայք։ * Զի որպէս Հայր յարուցանէ զմե- 21
ռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որ-
դի՝ զորս կամի կենդանի առնէ։ * Եւ ոչ ե- 22
թէ Հայր դատի զոք՝ այլ զամ դատաստան
ետ որդւոյ իւրոյ. * զի ամենեքեան պատ- 23
ուեսցեն

ուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր: Որ ոչ
պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառա-
24 քիչն նր: * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ
զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առա-
քեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենա-
կանս. և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ
25 փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս: * Ամէն
ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և ար-
դէն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի
26 որդւոյն Այ. և որք լուիցենն՝ կեցցեն: * Զի
որպ Հայր ունի կեանս յանձին իւրում. նոյն-
պէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւ-
27 րում. * և իշխանութի ետ նմա դատաստան
28 առնել. և զի որդի մարդոյ է՝ * ընդ այն զի
զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում
ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուի-
29 ցեն ձայնի նր, * ‖ և եկեսցեն արտաքս. ո- ‖ Մատթ.
րոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութի կենաց. 25. 46.
և որոց զչար արարեալ՝ 'ի յարութի դատաս- Դանի.
30 տանաց: * Ոչ կարեմ ես յանձնէ առնել և 12. 2.
ոչինչ. այլ որպ լսեմ՝ դատեմ, և դատաս-
տանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս
իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս:
31 * Եթէ ես վկայեմ վս իմ, վկայութին իմ Գ. Ի.
32 չէ ճշմարիտ: * ‖ Այլ է՝ որ վկայէ վս իմ. ‖ Մատթ.
և դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութին 3. 17.
33 զոր վկայեաց վասն իմ: * Դուք առաքեցիք Վեր.
առ Յովհաննէս՝ և վկայեաց ճշմարտութեն: 1. 15.
34 * Այլ ես ոչ եթէ 'ի մարդկանէ առնում
վկայութի. այլ զայս ասեմ՝ զի դուք ապ-

րես.

րեսջիք ։ * Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր և 35
ծագէր . և դուք կամեցարուք ցնծալ առ
ժամանակ մի 'ի լոյս նր̃ ։ * Այլ ես ունիմ 36
վկայութիւն մեծ ևս քան զՅովհաննու . ըզ-
գործս՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից
զնն̃ . նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ , վը-
կայեն վն̃ իմ , եթէ Հայր առաքեաց զիս .
‖ Մատթ. * և որ առաքեացն զիս Հայր՝ ‖ նա վկայեաց 37
3. 17. վն̃ իմ ։ Ոչ զձայն նորա երբէք լուա-
17. 5. րուք . ‖ և ոչ զտեսիլ նր̃ տեսէք ։ * Եւ ոչ ըզ- 38
‖ 2. Օրէն. բան նր̃ ունիք 'ի ձեզ բնակեալ . զի զոր նա
4. 12. առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք ։ * Քըն- 39
նեցէք զգիրս . զի դուք համարիք նոքօք ու-
նել զկեանսն յաւիտենականս . և նոքին իսկ
են՝ որ վկայեն վն̃ իմ , որովք համարիք ու-
նել կեանս . * և դուք ոչ կամիք գալ առ իս՝ 40
զի զկեանսն ունիցիք ։ * Ես փառս 'ի մարդ- 41
կանէ ոչ առնում ։ * Այլ գիտեմ զձեզ՝ թէ 42
զսէրն Այ̃ ոչ ունիք յանձինս ։ * Ես եկի յա- 43
նուն Հօր իմոյ՝ և ոչ ընդունիք զիս . եթէ այլ
ոք եկեսցէ յիւր անուն , զնա ընդունիցիք ։
* Զիա՞րդ կարէք դուք հաւատալ . զի փառս 44
‖ Մատթ. 'ի միմեանց առնուք , ‖ և զփառս զառ 'ի
12. 43. միոյն Այ̃ ոչ խնդրէք ։ * Մի՛ համարիք՝ եթէ 45
ես չարախօս լինիցիմ զձէնջ առ Հօր . գոյ
որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս , յոր դուքն
յուսացեալ էք ։ * Զի եթէ հաւատայիք 46
‖ Ծննդ. դուք Մովսեսի , հաւատայիք արդեօք և ինձ .
49. 10. ‖ զի նա վն̃ իմ իսկ գրեաց ։ * Զի եթէ նր̃ 47
2. Օրէն. գրոցն ոչ հաւատայք , զիա՞րդ իմոց բանիցս
18. 15. հաւատայցէք ։

ԳԼ.

## ԳԼ. Զ.

1 Յետ | այսորիկ գնաց Յս յայնկոյս ծովուն Գ. Գ.
2 Գալիլեացւոց Տիբերեայ. * Եւ զհետ եր- Մատթ.
թայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին 14. 13.
զնշանսն՝ զոր առնէր ի վերայ հիւանդաց. Մարկ.
3 *Ել ի լեառն Յս, եւ անդ նստէր աշակեր- 6. 32.
4 տօքն հանդերձ: *Եւ էր մերձ զատիկ տօնն Ղուկ.
5 հրէից: *Համբարձ ի վեր զաչս իւր Յս՝ եւ ե- 9. 10.
տես, զի ժողովուրդ բազում գայր առ նա.
ասէ ցՓիլիպպոս. ուստի գնեսցուք հաց՝ զի
6 կերիցեն դոքա: *Զայս ասէր փորձելով
զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոցն էր:
7 *Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. երկե-
րիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական,
թէպէտ եւ իւրաքանչիւրոք սակաւ ինչ առ-
8 նուցու: *Ասէ ցնա մի յաշակերտացն նորա
9 Անդրէաս՝ եղբայր Սիմովնի վիմի. *Է աստ
պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ գա-
րեղէն՝ եւ երկուս ձկունս. այլ այն զինչ է
10 առ այսչափ մարդիկ: *Ասէ Յս. բազմե-
ցուցէք զմարդիկդ. եւ էր խոտ յոյժ ի տեղ-
ւոջն. եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ
11 հինգ հազար: *Եւ առ զհացն Յս եւ գոհա-
ցաւ՝ եւ բաշխեաց բազմականացն. նոյնպէս
12 եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան: *Եւ իբ-
րեւ յագեցան, ասէ ցաշակերտսն. ժողովե-
ցէք զնշխարհսն կոտորոց՝ զի մի ինչ կորի-
13 ցէ: *Ժողովեցին, եւ լցին երկոտասան սա-

կառի զկոտորոցն 'ի հինգ գարեղէն նկանա-
կէ անտի, որ յաւելաւ 'ի կերողացն: * Իսկ 14
մարդիկն իբրև տեսին զնշանսն զոր արար՝
ասէին, եթէ սա է ճշմարիտ մարգարէն, որ
գալոց էր յաշխարհ:
Գ Գ * Յս իբրև գիտաց եթէ գալոց են յափշտա- 15
‖ Մատթ. կել զնա, զի արասցեն զնա թագաւոր, ‖ գնաց
14. 23. դարձեալ 'ի լեառն միայն: * Եւ իբրև երեկոյ 16
Մարկ. եղև, իջին աշակերտքն նր 'ի ծովեզրն: * Եւ 17
6. 46. մտեալ 'ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն 'ի Կա-
փառնայում. և իբրև նսեմացաւ, և չև ևս
եկեալ էր առ նս Յս: * Եւ ծովն 'ի սաստիկ 18
հողմոյ շնչելոյ յուզէր: * Եւ վարեալ իբրև 19
ասպարէզս քսան և հինգ՝ կամ երեսուն, տե-
սանէին զՅս՝ զի գնայր 'ի վր ծովուն՝ և մերձ
էր 'ի նաւն, զարհուրեցան յոյժ: * Նա ա- 20
սէ ցնոսա. Ես եմ՝ մի երկնչիք: * Եւ կա- 21
մէին ընդունել զնա 'ի նաւն. և վաղվաղա-
կի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային:
Գ Ն * 'Ի վաղիւն անդր ժողովուրդն՝ որ կայր 22
յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ
ոչ գոյր անդ բայց միայն 'ի միոյն, յոր մտին
աշակերտքն Յսի. և զի չէր մտել Յս ը աշա-
կերտսն իւր 'ի նաւն. բայց միայն աշակերտ-
քն նր գնացին: * Իբրև այլ նաւք գային 23
'ի Տիբերիայ մօտ յայն տեղին՝ ուր զհացն
կերան: * Իսկ իբրև ետես ժողովուրդն ե- 24
թէ Յս ոչ է անդ՝ և ոչ աշակերտքն նր, առին
նոքա զնաւսն, և եկին 'ի Կափառնայում
խնդրել զՅս: * Եւ իբրև գտին զնա յայն- 25
կոյս

կոյս ծովուն, ասեն ցնա. ռաբբի՝ ե՞րբ եկիր
26 այսր։ *Պատասխանի ետ նոցա Յս և ասէ. ա-
մէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իբր
ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք
27 'ի հացէ անտի՝ և յագեցարուք։ *Երթայք
գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ
զկերակուրն, որ մնայ 'ի կեանսն յաւիտե-
նականս, զոր որդին մարդոյ տացէ ձեզ.
28 ‖ քանզի զնա Հայր կնքեաց Ած։ *Ասեն ‖ Մէր.
ցնա. զի՞նչ առնիցեմք՝ զի զգործն Այ գոր- 1. 34.
29 ծեսցուք։ *Պատասխանի ետ Յս, և ասէ Մատթ.
ցնա. ‖ այս է գործն Այ, զի հաւատասջիք 3. 17.
30 յայն՝ որ առաքեացն զիս։ *Ասեն ցնա. 17. 5.
զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք և հաւա- ‖ 1. Յովհ.
31 տասցուք, զի՞նչ գործիցես։ *‖ Հարքն մեր 3. 23.
կերան զմանանայն յանապատի անդ՝ ոպ և ‖ Ելից.
գրեալ է. ‖ Հաց յերկնից ետ նոցա ուտել։ 16. 14.
32 *Ասէ ցնա Յս. ամէն ամէն ասեմ ձեզ. ե- ‖ Սաղմ.
թէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ 77. 24.
Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմա- ‖ Իմաստ.
33 րիտ։ *Զի հաց Այ է, որ իջանէ յերկնից՝ 16. 20.
34 և կեանս տայ աշխարհի։ *Ասեն ցնա. Տէր՝
35 յամ ժամ տուր մեզ զհացն զայն։ *Ասէ
ցնա Յս. ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝
ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք
36 ծարաւեսցի։ *Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք
37 զիս, և ոչ հաւատայք։ *Զամենայն՝ զոր
տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ. և որ գայ
38 առ իս, ոչ հանից արտաքս։ *Զի իջի ես
յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ ըզ-
կամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Գլ. Զ. * Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն 39
զիս. զի զամ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից
՚ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետ-
նում: * Այս են կամք Հօր իմոյ. զի ամ որ 40
տեսանիցէ զՈրդի՝ և հաւատայցէ ՚ի նա,
ընկալցի զկեանսն յաւիտենականս. և ես
յարուցից զնա յաւուրն յետնում: * Տրտըն- 41
ջէին զնմանէ Հրէայքն, զի ասաց թէ ես
‖ Ղուկ. եմ Հացն իջեալ յերկնից. * և ասէին, ‖ ո՞չ 42
4. 16. սա է Յս որդին Յովսեփու, զորոյ մեք գի-
տեմք զՀայրն և զմայր. իսկ արդ՝ զիա՞րդ ա-
սէ՝ թէ ես յերկնից իջի: * Պատասխանի 43
ետ Յս, և ասէ ցնոսա. մի՛ քրթմնջէք ընդ մի-
մեանս. * ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ 44
Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. և
ես յարուցից զնա յաւուրն յետնում: * Գրեալ 45
‖ Եսայ. է ՚ի մարգարէս, ‖ և եղիցին ամենեքեան ու-
54. 13. սեալք յԱյ. ամ որ լսէ ՚ի Հօրէ՝ և ուսանի,
գայ առ իս: * Իբրև ոչ եթէ զՀայր ուրուք 46
‖ Մատթ. տեսեալ իցէ, ‖ եթէ ոչ՝ որ էն յԱյ, նա ե-
11. 27. տես զՀայր: * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի 47
որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւի-
‖ Ելք. տենականս: * Ես եմ Հացն կենաց: * ‖ Հարք- 48
16. 13. քըն ձեր կերան զմանանայն յանապատին՝ և 49
մեռան: * Այս է Հացն, որ յերկնից իջեալ 50
է, զի որ ուտիցէ ոք ՚ի նմանէ՝ մի՛ մեռանի-
ցի. * Ես եմ Հացն կենդանի, որ յերկնից 51
իջեալ: * Եթէ ոք ուտիցէ ՚ի Հացէ յայս- 52
մանէ՝ կեցցէ ՚ի յաւիտեան. և Հացն զոր ես
տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վս կենաց

աշ-

53 աշխարհի ։ * Մարտնչէին ընդ միմեանս
Հրէայքն՝ և ասէին. զիա՞րդ կարէ սա տալ
54 մեզ զմարմին իւր յուտել ։ * Ասէ ցնոսա
Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերի-
ջիք զմարմին որդւոյ մարդոյ՝ և արբջիք զա-
55 րիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ։ * Որ
ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ու-
նի զկեանսն յաւիտենականս. և ես յարու-
56 ցից զնա յաւուրն յետնում ։ * ‖ Զի մարմինն ‖ I. Կորն.
իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճըշ- II. 27.
57 մարիտ ըմպելի է ։ * Որ ուտէ զմարմին իմ
և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, և ես
58 'ի նմա ։ * Որպէս առաքեաց զիս կենդանին
Հայր, և ես կենդանի եմ վն Հօր. և որ ու-
59 տէն զիս, և նա կեցցէ վասն իմ ։ * Այս է
հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան
հարքն ձեր զմանանայն՝ և մեռան. որ ուտէ
60 զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան ։ * Զայս ա-
սաց 'ի ժողովրդեանն՝ յուսուցանելն 'ի Կա-
61 փառնայում ։ * Եւ բազումք յաշակերտացն
իբրև լուան՝ ասեն. խիստ է բանդ այդ, ո՞
62 կարէ լսել դմա ։ * Իբրև գիտաց Յս յանձն
իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշա-
կերտքն, ասէ ցնս. ա՞յդ գայթագղեցուցա-
63 նէ զձեզ ։ * ‖ Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք ‖ Վեր.
զորդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառա- 3. 13.
64 ջինն ։ * Հոգին է կենդանարար, մարմին
ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ
65 ձեզ՝ հոգի է և կեանք ։ * Այլ են ոմանք 'ի
ձէնջ՝ որ ոչ հաւատան, քանզի գիտէր Յս 'ի

սկզբանէ, ո՞վ են այնոքիկ՝ որ ոչն հաւա-
տան, և ո՞վ է այն՝ որ մատնելոցն է զնա։ Եւ
ասէր. * Վ՟ն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչոք 66
կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա
'ի Հօրէ իմմէ։ * Յայսմանէ բազումք յաշա- 67
կերտացն նր՟ չոգան յետս, և ոչ ևս շրջէին
ը՟ նմա։ * Ասէ Յս՟ ցերկոտասան աշակերտ- 68
սն. միթէ և դո՞ւք կամիք երթալ։ * Պա- 69
տասխանի ետ նմա Սիմոն Պետրոս. Տէր՝ առ
ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենակա-
* Մատթ. նաց ունիս։ * Եւ մեք հաւատացաք՝ և 70
16. 16. ծանեաք՝ եթէ դու ես Քս՟ որդի Այ՟։ * Պա- 71
Մարկ. տասխանի ետ նց Յս՟. ո՞չ ես զձեզ զերկոտա-
8. 29. սանսդ ընտրեցի, և մի 'ի ձէնջ սատանայ
Ղուկ. է։ * Եւ ասէր զՍիմոնեան Յուդայէ սկա- 72
9. 20. րիովտացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա.
և մի էր յերկոտասանիցն։

## ԳԼ. Է.

Գ. Է. Եւ յետ այսորիկ շրջէր Յս՟ 'ի Գալիլեա. 1
քանզի ոչ կամէր 'ի Հրէաստանի շրջել,
զի խնդրէին զնա Հրէայքն սպանանել։ * Եւ 2
* Ղևտ. էր մերձ տօնն Հրէից Տաղաւարահարաց։
23. 34. * Ասեն ցնա եղբարքն նորա. գնա՛ աստի և 3
երթ 'ի Հրէաստան, զի և աշակերտքն քո
տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես։ * Զի 4
ոչոք է՝ որ 'ի ծածուկ ինչ գործէ՝ և խնդրէ
ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես,
յայտնեա՛ զանձն քո աշխարհի։ * Քանզի 5

Եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ 'ի նա։
6 * Ասէ ցնս Յս՟. ժամանակ իմ չեւ է հասեալ.
բայց ձեր ժամանակ յամ ժամու պատրաստ
7 է։ * Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նր՝ եթէ
8 գործքն իւր չարութեան են։ * Դուք ելէ՛ք
'ի տօնն յայն, ես ոչ ելանեմ 'ի տօնն յայն.
9 զի իմ ժամանակ չեւ է լցեալ։ * Զայս իբ-
րեւ ասաց՝ ինքն մնաց անդէն 'ի Գալիլեա։
10 * Իբրեւ ելին եղբարքն նր, ապա եւ ինքն
ել 'ի տօնն, ոչ յայտնի, այլ իբրեւ 'ի ծա-
11 ծուկ։ * Իսկ Հրէայքն խնդրէին զնա 'ի տօ-
12 նի անդ՝ եւ ասէին, ո՞ւր իցէ նա։ * Եւ
քրթմնջիւն էր զնմանէ 'ի ժողովուրդսն.
կէսքն ասէին՝ թէ բարւոք է. այլքն ասէին,
13 ոչ՝ այլ մոլորեցուցանէ զժողովուրդն. * Եւ
ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն եր-
կիւղին Հրէից։
14 * Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել Յս՟ 'ի տա- Ե. Կ
15 ճարն՝ եւ ուսուցանէր. * Զարմանային
Հրէայքն եւ ասէին. զիա՞րդ գգիրս գիտէ
16 սա, զի ուսեալ բնաւ չէր։ * Պատասխանի
ետ նց Յս՟ եւ ասէ. իմ վարդապետութիւս չէ
17 իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս։ * Ե-
թէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ
վասն վարդապետութեանս, յԱյ իցէ արդեօք՝
18 եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ։ * Որ
յանձնէ իւրմէ խօսի՝ զփառս անձին իւրում
խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ որ
առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, և անիրա-

Ելից. ւութի. ոչ գոյ 'ի նմա։ * Ո՞չ Մովսէս ետ 19
24. 3. ձեզ զօրէնսն, և ոչ ոք 'ի ձէնջ առնէ զօ-
Վեր. րէնսն։ * Զի՞ խնդրէք զիս սպանանել։ 20
5. 18. Պատասխանի ետ ժողովուրդն և ասէ. դև
գոյ 'ի քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։
* Պատասխանի ետ նց̃ Յս̃ և ասէ. գործ մի 21
գործեցի, և ամենեքին զարմացեալ էք։
Ղեւտ. * Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփա- 22
12. 3. տութիւն. զի ոչ եթէ 'ի Մովսիսէ էր, այլ
Ծննդ. 'ի հարց անտի. և 'ի շաբաթու թլփատէք
17. 11. զմարդ։ * Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն առ- 23
նու մարդ 'ի շաբաթու, զի մի օրէնքն Մով-
սիսի լուծցին. ընդ իս ցասուցեալ էք՝ զի
ողջոյն իսկ մարդ բժշկեցի 'ի շաբաթու։
ԵԲ * Մի ըստ աչս դատէք, այլ ուղիղ դա- 24
Բ. Օրէն. տաստան արարէք։ * Ասէին ոմանք յԵրու- 25
1. 16. սաղէմացւոց անտի. ո՞չ նա է սա՝ զոր խնդ-
րէին սպանանել. * և աւասիկ յայտնապէս 26
խօսի, և չասեն ինչ ընդ դմա. դուցէ արդեօք
և իշխանքն գիտացին՝ թէ սա իցէ Քսն̃։
* Այլ զսա գիտեմք ուստի է. իսկ Քսն̃ յոր- 27
ժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։ * Աղա- 28
ղակեաց Յս̃ 'ի տաճարին, ուսուցանէր՝ և
ասէր. և զիս գիտէք, և ուստի եմ գիտէք.
և յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմա-
րիտ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գի-
տէք. * Ես գիտեմ զնա, զի 'ի նմանէ իսկ 29
եմ, և նա առաքեաց զիս։ * Խնդրէին զնա 30
ունել՝ և ել 'ի ձեռաց նց̃. և ոչ ոք արկ 'ի նա
ձեռն, զի չև էր հասեալ ժամ նորա։ * Եւ 31

բազումք 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի
նա, և ասէին. Քս յորժամ գայցէ՝ միթէ
աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սա
32 առնէ: *Լուան փարիսեցիքն զտրտունջ
ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին քա-
հանայապետքն և փարիսեցիք սպասաւորս՝
33 զի կալցին զնա: *Ասէ Յս. փոքր մի ևս
ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝
34 որ առաքեացն զիս: *||Խնդրիցէք զիս՝ և ||Վայր.
ոչ գտանիցէք. և ուր եսն երթամ, դուք 13. 33.
35 ոչ կարէք գալ: *Ասեն Հրէայքն ընդ մի-
մեանս. իսկ յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գը-
տանիցեմք զդա. միթէ 'ի սփիւռս հեթա-
նոսա՞ց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթա-
36 նոսս: *Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց.
խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եսն
երթամ, դուք ոչ կարէք գալ:
37 *'Ի վերջնում ||աւուր մեծի տօնին կայր Ե. Գ.
Յս՝ աղաղակէր և ասէր. եթէ որ ծարաւի ||Ղևտ.
38 իցէ՝ եկեսցէ առ իս, և արբցէ: *||Որ հա- 23. 36.
ւատայ յիս՝ որպէս և ասեն գիրք, գետք յորո- ||Եսայ.
վայնէ նորա բղխեսցեն ջրոյ կենդանութեան: 58. 11.
39 *Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունե-
լոց էին որ հաւատային 'ի նա. ||զի չև էր ||Յովէլ.
40 Հոգի, քանզի Յս չև էր փառաւորեալ: *Ո- 2. 28.
մանք 'ի ժողովրդենէն իբրև լսէին զբանս Գործ.
զայս, ասէին. սա է ճշմարիտ մարգարէն: 2. 17.
41 *Այլքն ասէին՝ սա է Քս. իսկ կէսքն ա- ||Միք.
սէին՝ միթէ 'ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քս: 5. 2.
42 *||Ո՞չ գիրք ասեն, եթէ 'ի զաւակէ Դաւ- Մատթ.
թի, 2. 6.

թի, և 'ի Բեթղեհեմ գեղջէ՝ ուր Դաւիթն
էր, գալոց է Քս ։ * Եւ եղև հերձուած 'ի 43
մէջ ժողովրդեանն վասն նր ։ * Եւ ոմանք 44
'ի նոցանէ կամէին ունել զնա . այլ ոչոք
մխեաց 'ի նա ձեռս ։ * Եւ եկին անդրէն 45
սպասաւորքն առ քահանայապետսն և փա-
րիսեցիս, և ասեն ոքա ցնոսա . ընդէ՞ր ոչ
ածէք զնա այսր ։ * Պատասխանի ետուն սպա- 46
սաւորքն՝ և ասեն . ոչ երբէք այնպէս խօսե-
ցաւ մարդ՝ որպ այրն այն ։ * Պատասխանի 47
ետուն փարիսեցիքն՝ և ասեն . միթէ և դո՞ւք
մոլորեցարուք ։ * Միթէ ոք յիշխանացն հա- 48
ւատաց 'ի նա՝ կամ 'ի փարիսեցւոց . * այլ 49
այն խառնամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօ-
րէնս, և նզովեալ են ։ * Ասէ Նիկոդեմոս 50
‖ Յով. ցնոսա՝ ‖ որ եկեալն էր առ նա գիշերի յա-
3. 2. ռաջագոյն՝ և մի էր 'ի նոցանէ ։ * Միթէ 51
օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն
‖ Բ. Օրէն. ինչ նախ 'ի նմանէ . ‖ կամ գիտեն զինչ գոր-
17. 8. ծէ ։ * Պատասխանի ետուն նմա և ասեն . 52
միթէ և դու ես 'ի Գալիլեէ՞ իցես . քննեա՛
և տե՛ս . զի մարգարէ 'ի Գալիլեէ ոչ յառ-
նէ ։ * Եւ գնացին իւրաքանչիւրոք 'ի տեղի 53
իւր ։

## ԳԼ. Ը.

Իսկ Յս գնաց 'ի լեառն ձիթենեաց . * և 1
ընդ առաւօտն դարձեալ եկն 'ի տաճարն .
և գայր առ նա ամենայն ժողովուրդն . և 2
նստեալ

3 նստեալ ուսուցանէր զնոսա: * Ածին առ
նա դպիրքն և քահանայապետքն և փարի-
սեցիք՝ կին մի ըմբռնեալ 'ի շնութեան. և կա-
4 ցուցեալ զնա առաջի, * ասեն ցնա. վար-
դապետ, կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտ-
5 նապէս շնացեալ է: * ‖ Եւ յօրէնս Մովսէս ‖ Ղևտ.
մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել. 20. 10
6 արդ՝ դու զի՞նչ ասես վասն դորա: * Զայս
ասէին փորձելով զնա՝ զի ունիցին ամբաս-
տանութիւն զնմանէ: Իսկ Յս 'ի խոնարհ նայե-
7 լով գրէր մատամբն յերկրի: * Իսկ իբրև
ստիպեցին հարցանելով ցնա, հայեցեալ 'ի
վեր՝ ասէ ցնոսա. անմեղն 'ի ձէնջ՝ նախ նա
8 ընկեսցէ քար 'ի վր դորա: * Եւ դարձեալ
9 'ի խոնարհ նայելով՝ գրէր յերկրի: * Եւ
լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յա-
ռաջնոցն մինչև 'ի վերջինս. և մնաց միայն
10 Յս, և կինն կայր առաջի նր: * Պատասխա-
նի ետ Յս՝ և ասէ ցնա. կին դու՝ ո՞ւր են,
11 ոչ ոք զքեզ դատապարտեաց: * Եւ ասէ.
ոչ Տր: Եւ ասէ Յս. և ոչ ես դատապարտեմ
զքեզ. երթ՝ յայսմհետէ մի մեղանչեր:
12 * Դարձեալ խօսեցաւ ը նոսա Յս, և ասէ. Լ Դ
‖ Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ը ‖ 1. Յովհ.
խաւար մի գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կե- 1. 5.
13 նաց: * Ասեն ցնա փարիսեցիքն. դու վասն
անձին քո վկայես՝ և վկայութիւն քո չէ ճըշ-
14 մարիտ: * Պատասխանի ետ Յս և ասէ ցնո-
սա. թէպէտ և ես վկայեմ վասն անձին ի-
մոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ

ուս-

ուստի եկի՝ և յո՛ երթամ. բայց դուք ոչ գի-
տէք, ուստի գամ՝ կամ յո՛ երթամ: * Դուք 15
ըստ մարմնոյ դատիք. ես ոչ դատիմ և ոչ
զոք. * Թէպէտ և դատիմ ես զոք՝ դատաս- 16
տանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ
ես՝ և որ առաքեացն զիս Հայր: * Եւ յօ- 17
§2. Օրէ. րէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ || երկուց մար-
17. 6. դոց վկայութիւն ճշմարիտ է. * Ես եմ որ 18
19. 15. վկայեմ վասն իմ, և վկայէ վասն իմ որ ա-
Մատթ. ռաքեացն զիս Հայր: * Ասէին ցնա, ո՞ւր է 19
18. 16. Հայր քո. պատասխանի ետ Յս և ասէ ցնս.
2. Կորն. ոչ զիս գիտէք՝ և ոչ զՀայրն իմ. եթէ զիս
13. 1. գիտէիք, և զՀայրն իմ թերևս գիտէիք.
* Զայս բան խօսեցաւ ՚ի տան գանձին՝ յոր- 20
ժամ ուսուցանէր ՚ի տաճարի անդ. և ոչոք
կալաւ զնա, զի չև ևս հասեալ էր ժամ նր:
ԽԸ * Ասէ դարձեալ ցնոսա Յս. ես երթամ, և 21
խնդրիցէք զիս. և ՚ի մեղս ձեր մեռանիցիք.
զի ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ:
* Ասէին Հրեայքն. միթէ զիւրովի՞ն երթայ- 22
ցէ, զի ասէ՝ թէ ուր ես երթամ՝ դուք ոչ
կարէք գալ: * Եւ ասէ ցնոսա. դուք ՚ի ներ- 23
քուստ աստի էք, և ես ՚ի վերուստ անտի
եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ
յայսմ աշխարհէ: * Բայց ասացի ձեզ՝ թէ 24
՚ի մեղս ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւա-
տայցէք թէ ես եմ, մեռանիցիք ՚ի մեղս ձեր:
* Ասեն ցնա. դու ո՞վ ես. ասէ ցնոսա Յս. 25
նախ զի և խօսիմս իսկ ընդ ձեզ. * Բազում 26
ինչ ունիմ վն ձեր խօսել և դատել. այլ որ

առա-

առաքեացն զիս՝ ‖ ճշմարիտ է. և ես զոր ‖ Հռովմ.
լուայ 'ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի: 3. 4.
27 *Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա:
28 *Ասէ ցնոսա Յս. յորժամ բարձրացուցանի-
ցէք զՈրդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք՝
թէ ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ,
այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ:
29 *Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ ե-
թող զիս միայն, զի ես զհաճոյս նորա առնեմ
30 հանապազ: *Իբրև զայս խօսեցաւ՝ բա-
զումք հաւատացին 'ի նա:
31 *Եւ ասէր Յս առ Հրէայսն հաւատացեալս. Ե. Օ.
եթէ դուք կայցէք 'ի բանի իմում, ճշմա-
32 րիտ աշակերտք իմ էք. *և ծանիջիք զճշ-
մարտութիւն, և ճշմարտութիւն ազատեսցէ
33 զձեզ: *Պատասխանի ետուն նմա և ասեն.
զաւակ Աբրահամու եմք, և ոչ ուրուք եր-
բէք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ ազատք
34 լինիջիք: *Պատասխանի ետ նոցա Յս. ամէն
ամէն ասեմ ձեզ. ‖ եթէ ամենայն որ առնէ զմե- ‖ Հռովմ.
35 ղս, ծառայ է մեղաց: *Եւ ծառայն ոչ 6. 16.
յաւիտեան կայ 'ի տան, իսկ որդին յաւի- 2. Պետ.
36 տեան կայ. *Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ 2. 19.
ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:
37 *Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ
խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չիք
38 տեղի 'ի ձեզ: *Ես՝ զոր տեսի առ Հօր ի-
մում, խօսիմ. և դուք՝ զոր լուարուք 'ի հօ-
39 րէն ձերմէ՝ առնէք: *Պատասխանի ետուն
նմա և ասեն. հայր մեր Աբրահամ է. Ասէ

ցնս

ցնս Յս. եթէ որդիք Աբրահամու էիք՝ ըզ-
գործսն Աբրահամու գործէիք: * Այլ այժ- 40
միկ խնդրէք սպանանել զիս՝ զայր մի, որ
ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ՚ի
Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար:
* Դուք առնէք զգործս հօրն ձերոյ. Ասեն 41
ցնա. մեք ՚ի պոռնկութենէ չեմք ծնեալ. մի
է հայր մեր Ած: * Ասէ ցնս Յս. եթէ Ած 42
էր հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես
յԱյ ելի և եկի. և ոչ եթէ յանձնէ ինչ ե-
կի, այլ նա առաքեաց զիս: * Ընդէ՞ր զխօսս 43
իմ ոչ գիտէք դուք. վն զի ոչ կարէք լսել
Ա.Յովհ. զբանն իմ: * Դուք ՚ի հօրէ ՚ի սատանայէ 44
3. 8. էք. և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առ-
նել. զի նա մարդասպան էր ՚ի սկզբանէ,
և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճըշ-
մարտութիւն ՚ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւ-
րոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա:
* Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հա- 45
ւատայք ինձ: * Ո՞ ՚ի ձէնջ յանդիմանէ զիս 46
վասն մեղաց. եթէ զճշմարիտն ասեմ ձեզ՝
Ա.Յովհ. ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ: * Որ էն յԱյ՝ 47
4. 5. զբանս Այ լսէ. և դուք վն այսորիկ ոչ լսէք,
զի չէք յԱյ: * Պատասխանի ետուն Հրեայքն 48
և ասեն ցնա. ո՞չ բարւոք ասեմք մեք՝ եթէ
Սամարացի ես դու, և դև գոյ ՚ի քեզ: * Պա- 49
տասխանի ետ Յս և ասէ. յիս դև ոչ գոյ՝
այլ պատուեմ զՀայր իմ, և դուք անարգէք
զիս: * Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ 50
խնդրէն՝ և դատի: * Ամէն ամէն ասեմ 51

ձեզ,

ձեզ, եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ զմահ
52 մի տեսցէ 'ի յաւիտեան: * Ասեն ցնա Հրէ-
այքն. արդ՝ գիտացաք թէ դև գոյ 'ի քեզ.
Աբրահամ մեռաւ՝ և մարգարէքն. և դու
ասես՝ եթէ ոք զբանն իմ պահեսցէ, մի ճա-
53 շակեսցէ զմահ 'ի յաւիտեան: * Միթէ դու
մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր Աբրահամ,
որ մեռաւ, և մարգարէքն մեռան. արդ՝
54 դու զո՞ առնես զքեզ: * Պատասխանի ետ
Յս. եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն
իմ ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս,
55 զորմէ դուքդ ասէք՝ թէ Այ մեր է. * և ոչ
ճանաչէք զնա. բայց ես գիտեմ զնա. և թէ
ասեմ, թէ ոչ գիտեմ զնա՝ ձեզ նման սուտ
լինիմ. այլ գիտեմ զնա, և զբան նորա պա-
56 հեմ: * Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տե-
57 սանել զօր իմ, ետես՝ և ուրախ եղև: * Ա-
սեն ցնա Հրէայքն. յիսուն ամ չև ևս է քո,
58 և զԱբրահա՞մ տեսեր: * Ասէ ցնս Յս. ա-
մէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն
59 Աբրահամու եմ ես: * Վէմս առին, զի
արկցեն 'ի վր̃ նր̃. և Յս̃ խոյս ետ, և ել
գնաց 'ի տաճարէ անտի:

## Գլ. Թ.

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի ✠ Եւ:
2 կոյր 'ի ծնէ. * և հարցին ցնա աշակերտքն
նորա՝ և ասեն. ռաբբի՝ ո՞յր մեղս է, սորա՞
3 թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնցի: * Պա-

տաս-

տասխանի ետ Յս․ ոչ դորա մեղաւ է, եւ ոչ
հօր եւ մօր իւրոյ․ այլ զի յայտնի լիցին
գործքն Այ ՚ի դմա։ * Այլ ինձ պարտ է գոր- 4
ծել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս,
մինչ աւուր կայ․ գայ գիշեր՝ յորժամ ոչոք
կարէ գործել։ * Մինչդեռ յաշխարհի եմ, 5
լոյս եմ աշխարհի։ * Զայս իբրեւ ասաց, 6
եթուք ՚ի գետին՝ եւ արար կաւ ՚ի թքոյն, եւ
ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին։ * Եւ 7
ասէ ցնա․ երթ՝ լուա յաւազանին Սիլովամայ․
որ թարգմանի առաքեալ․ չոգաւ լուացաւ,
եկն եւ տեսանէր։ * Իսկ դրացիքն՝ եւ որոց 8
տեսեալն էր զնա յառաջագոյն՝ թէ մուրա-
ցիկ էր, ասէին․ ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ
մուրանայր․ կէսքն ասէին․ նա է։ * Այլքն 9
ասէին․ ոչ՝ այլ նման է նմա․ եւ ինքն ասէր՝
թէ ես եմ։ * Ասեն ցնա․ իսկ զիա՞րդ բա- 10
ցան աչք քո։ * Ետ նա պատասխանի․ այր 11
մի որում Յիսուս անուն, կաւ արար՝ եւ ծե-
փեաց զաչս իմ, եւ ասէ ցիս․ երթ ՚ի Սիլո-
վամ, եւ լուա․ չոգայ լուացայ՝ եւ տեսա-
նեմ։ * Ասեն ցնա․ ո՞ւր է նա․ ասէ ցնոսա․ 12
ոչ գիտեմ։ * Ածին առ փարիսեցիսն զնա, 13
որ երբեմն կոյրն էր։ * Եւ էր շաբաթ՝ յոր- 14
ժամ զկաւն արար Յս․ եւ եբաց զաչս կու-
րին։ * Դարձեալ հարցանէին զնա փարի- 15
սեցիքն, թէ զիա՞րդ տեսանես։ Եւ նա ասէ
ցնն․ կաւ եդ ՚ի վերայ աչաց իմոց, եւ լուացայ՝
եւ տեսանեմ։ * Ասեն ոմանք ՚ի փարիսեց- 16
ւոցն․ յԱյ ոչ է այրն այն, զի զշաբաթս ոչ
պահէ․

պահէ . Այլքն ասէին . իսկ զիա՞րդ կարէ
մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել . Եւ
17 էին հերձուածք 'ի մէջ նց: * Ասեն դար-
ձեալ ցկոյրն . դու զի՞ ասես վն նր՝ զի եբաց
18 զաչս քո: Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է: * Եւ
ոչ հաւատային Հրեայքն զնմանէ՝ թէ կոյր
էր՝ և բացաւ, մինչև կոչեցին զծնօղս բա-
19 ցելոյն. * Հարցին ցնս և ասեն՝ սա՞ է որդին
ձեր, զորմէ դուքն ասէիք, եթէ կոյր ծնաւ.
20 արդ՝ զիա՞րդ տեսանէ. * Պատասխանի ե-
տուն նց ծնօղքն նր՝ և ասեն . գիտեմք զի
21 սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. * Բայց
զիա՞րդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք . կամ
թէ՝ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք.
ցդա իսկ հարցէք, ինքնին 'ի չափ հասեալ
22 է. ինքն իսկ խօսեսցի վն իւր: * Զայս ա-
սացին ծնօղքն նր, զի երկնչէին 'ի Հրէից.
քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք
խոստովանեսցի զնա Քս՝ 'ի բաց կացցէ 'ի ժո-
23 ղովրդենէն. * Վն այնորիկ ասացին ծնօղքն
նր, թէ ինքնին 'ի չափ հասեալ է, ցնա իսկ
24 հարցէք. * Դարձեալ կրկին անգամ կոչե-
ցին զայրն՝ որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր
փառս Այ, մեք գիտեմք՝ զի այրն այն մե-
25 ղաւոր է. * Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝
ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր
26 էի՝ և արդ տեսանեմ. * Դարձեալ ասեն
ցնա. զի՞նչ արար քեզ, զիա՞րդ եբաց զաչս
27 քո: * Պատասխանի ետ նց. այժմ ասա-
ցի ձեզ՝ և ոչ լուարուք. զի՞ կամիք միւսան-

գամ լսել. միթէ և դուք կամիք աշակեր-
տել նմա: * Նոքա հայհոյեցին զնա՝ և ա- 28
սէին. դու լեր նորա աշակերտ. մեք Մով-
սեսի աշակերտք եմք: * Մեք գիտեմք՝ զի 29
ընդ Մովսեսի խօսեցաւ Ա՟Ծ. զսա ոչ գիտեմք
ուստի իցէ: * Պատասխանի ետ այրն և ա- 30
սէ ցնո. այդ իսկ են սքանչելիք. զի դուք
ոչ գիտէք՝ ուստի իցէ, և զիմ զաչս եբաց:
* Գիտեմք՝ զի Ա՟Ծ մեղաւորաց ոչ լսէ. բայց 31
եթէ ածապաշտ ոք իցէ՝ և զկամս նր առնի-
ցէ, նմա լսէ: * Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ 32
եթէ եբաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնե-
լոյ: * Եթէ ոչ յԱ՟Յ էր այրն այն՝ ոչ կարէր 33
առնել ինչ: * Պատասխանի ետուն և ասեն 34
ցնա. 'ի մեղս իսկ ծնեալ ես ամենեին, և
դու վարդապետ լինիս մեզ. և հանին զնա
արտաքս: * Լուաւ Յ՟Ս՝ եթէ հանին զնա ար- 35
տաքս, և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. դու
հաւատա՞ս յորդի Ա՟Յ: * Նա պատասխանի 36
ետ և ասէ. Տէր ո՞վ է՝ զի հաւատացից 'ի
նա: * Ասէ ցնա Յ՟Ս. և տեսեր զնա, և որ 37
խօսիդ ընդ քեզ՝ նա է: * Եւ նա ասէ. հա- 38
ւատամ Տէր, և երկիրպագ նմա:
Օ. Կ * Եւ ասէ Յ՟Ս. 'ի դատաստան եկի յաշ- 39
խարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տես-
ցեն, և որք տեսանենն՝ կուրասցին: * Լուան 40
ոմանք 'ի փարիսեցւոցն՝ որք ը՟ նմա էին, և
ասեն ցնա. միթէ և մեք կոյրք իցեմք: * Ա- 41
սէ ցնո Յ՟Ս. եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ.
բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, և մեղքն
ձեր 'ի ձեզ հաստատեալ են: Գ.Լ:

## ԳԼ. Ժ.

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ
դուռն 'ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ
2 ելանէ՝ նա գող է, եւ աւազակ. * Իսկ որ
մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց.
3 * Նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն ձայ-
նի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ յանուա-
4 նէ, եւ հանէ զնոսա. * Եւ յորժամ զիւրն
զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ՝
եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն
5 զձայն նորա. * Զօտարի զհետ ոչ երթիցեն,
այլ փախիցեն 'ի նմանէ, զի ոչ ճանաչեն
6 զձայն օտարաց. * Զայս առակ ասաց նոցա
Յս, եւ նոքա ոչ գիտէին՝ եթէ զինչ էր որ խօ-
7 սէրն ընդ նս. * Դարձեալ ասէ ցնս Յս. Ա-
մէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչ-
8 խարաց. * Ամենեքեան՝ որ յառաջ քան զիս
եկին, գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան
9 նց ոչխարքն. * Ես եմ դուռն. ընդ իս եթէ
ոք մտանիցէ, կեցցէ՝ մտցէ եւ ելցէ, եւ ճա-
10 րակ գտցէ. * Գող ոչ գայ՝ եթէ ոչ՝ զի գո-
ղասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի
զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին.
11 * Ես եմ հովիւն քաջ. ‖ Հովիւ քաջ զանձն Օ. Ի
12 իւր դնէ 'ի վր ոչխարաց. * Իսկ վարձկանն՝ ‖ Եսայ.
որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբ- 40. 11.
րեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխար- Եզեկ.
սն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնս եւ 34. 23.
ցրուէ. 37. 24.

ցրուէ. * Զանզի վարձկան է, և ոչ է փոյթ 13
նմա վն ոչխարացն։ * Ես եմ հովիւն քաջ, 14
և ճանաչեմ զիմսն՝ և ճանաչիմ յիմոցն։
Ա Մատթ. * Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես 15
11. 27. զՀայր. և զանձն իմ դնեմ ՚ի վն ոչխարաց։
Գործ. * Նաև՝ այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են 16
10. 22. յայսմ գաւթէ. և զայն ևս պարտ է ինձ ա-
ծել այսր. և ձայնի իմում լուիցեն, և եղի-
ցին մի հօտ՝ և մի հովիւ։ * Վն այնորիկ սի- 17
Եսայ. րէ զիս Հայր իմ, Զի ես դնեմ զանձն իմ.
53. 12. զի միւսանգամ առից զնա։ * Ոչ ոք հանէ 18
զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ ի-
մով. իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխա-
նութի ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս
պատուէր առի ՚ի Հօրէ իմմէ։ * Հերձուած 19
հերձուած լինէր ՚ի մէջ Հրէից վն բանիցս
այսոցիկ։ * Իսկ ասէին բազումք ՚ի նոցանէ. 20
դև գոյ ՚ի նմա՝ և մոլեգնի, զի՞ բնաւ լսէք
նմա։ * Այլքն ասէին. այսպիսի բանք ոչ 21
դիւահարի են. միթէ դև կարէ՞ զաչս կու-
րի բանալ։

Ծ Գ * Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրսղմ, և 22
Ա. Մակ. ձմեռն էր։ * Եւ շրջէր Յս ՚ի տաճարին՝ ՚ի սր- 23
4. 59. րահին Սողոմոնի։ * Շուրջ եկեն զնովաւ 24
Հրէայքն և ասեն. մինչև յե՞րբ թափես զո-
գիս մեր, եթէ դու ես Քսն՝ ասա մեզ հա-
մարձակ։ * Պատասխանի ետ նց Յս և ասէ. 25
ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք ինձ. զգործսն
զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին վկ
վկայեն վն իմ։ * Այլ դուք ոչ հաւատայք, 26
զի

27 զի չէք յոչխարաց անտի իմոց։ * Ոչխարք իմ
ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և
28 զհետ իմ գան. * և ես տամ նոցա զկեանսն
յաւիտենականս. և մի՛ կորիցեն յաւիտեան.
և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց։
29 * Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա, մեծ է քան
զամ, և ոչ ոք կարէ յափշտակել 'ի ձեռաց
30 Հօր իմոյ։ * Ես և Հայր իմ մի եմք։ * Առին
31 քարինս Հրէայքն՝ զի քարկոծ արասցեն զնա։
32 * Պատասխանի ետ նոցա Յիսուս. բազում գործս
բարիս ցուցի ձեզ 'ի Հօրէ իմմէ. վասն որոյ
գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս։
33 * Պատասխանի ետուն նմա Հրէայքն. վասն
բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ,
այլ վասն հայհոյութեան. և զի դու մարդ ես, և
34 զանձն քո Աստուած առնես. * Պատասխանի ետ
նոցա Յիսուս. ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. Ես ասացի Սաղմ.
35 թէ աստուածք իցէք։ * Իսկ եթէ զնոսա աստ- ՁԱ. 6.
ուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղև. և ոչ
36 մարթ եղծանել գրոյն. * իսկ զոր Հայր սըր-
բեաց՝ և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝
թէ հայհոյես. զի ասացի՝ թէ որդի Աստուծոյ եմ.
37 * Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛
38 հաւատայք ինձ։ * Ապա թէ գործեմ, թէ-
և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հա-
ւատացէք. զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ
39 Հայր յիս և ես 'ի Հայր։ * Դարձեալ խնդ-
40 րէին զնա ունել, և ել 'ի ձեռաց նոցա։ * Եւ
գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու՝
'ի տեղին, ուր էր Յովհաննէս զառաջինն՝ և

մկրտէր. և անդ լինէր։ *Եկին բազումք 41
առ նա՝ և ասէին. զի Յովհաննէս նշան ինչ
ոչ արար։ *Բայց զա̃մ, զոր ասաց Յովհան- 42
նէս վ̃ն նր̃, ճշմարիտ էր. և բազումք հա-
ւատացին 'ի նա անդ։

## ԳԼ. ԺԱ.

Օ. Գ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս 'ի Բեթա- 1
նիայ, 'ի գեղջէ Մարեմայ, և Մարթայի
Մատթ. քեռ նր̃։ *Այս այն Մարիամ էր | որ օծ 2
26. 7. զՏ̃րն իւղով՝ և ջնջեաց զոտս նր̃ հերով իւ-
Մարկ. րով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։
12. 3. *Առաքեցին առ նա քորքն նր̃՝ և ասեն, 3
Տէր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւան-
դացեալ է։ *Իբրև լուաւ Յ̃ս, ասէ. այն 4
հիւանդութիւն չէ 'ի մահ, այլ վ̃ն փառացն
Ա̃Յ. զի փառաւոր լիցի որդի Ա̃Յ այնուիկ։
*Եւ սիրէր Յ̃ս զՄարթա և զքոյր նր̃ զՄա- 5
րիամ, և զՂազար։ *Իբրև լուաւ թէ հիւան- 6
դացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝
աւուրս երկուս։ *Ապա յետ այնորիկ ասէ 7
ցն̃ս. եկայք երթիցուք միւսանգամ 'ի Հրէ-
աստան. *Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի՝ 8
այժմ եւս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ
առնել. և դարձեալ երթաս անդրէն։
*Պատասխանի ետ Յ̃ս. ո՞չ երկոտասան ժամ 9
է աւուր. եթէ ոք գնայ 'ի տուընջեան՝ ոչ
գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ
տեսանէ. *ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայ- 10

թագ-

11 թաղդէ, զի լոյս ոչ գոյ ՚ի նմա: * Զայս
իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ՝ ցնս̅. Ղա-
զարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ
12 զի զարթուցից զնա: * Ասեն ցնա աշակերտ-
13 քըն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի: * Այլ
Յս̅ վս̅ մահուն նր ասէր. նց այսպէս թը-
14 ուեցաւ՝ թէ վս̅ ննջելոյ քնոյն ասէ: * Յայն-
ժամ ասէ ցնոսա Յս̅ յայտնապէս. Ղազարոս
15 մեռաւ. * Եւ ես ուրախ եմ վս̅ ձեր, զի դուք
հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց
16 արդ՝ եկայք երթիցուք առ նա: * Ասէ Թով-
մաս՝ անուանեալն երկուորեակ՝ ցաշակեր-
տակիցսն. Ո՛ն՝ եկա՛յք եւ մեք՝ զի ընդ նմա մեռ-
17 ցուք: * Եկն Յս̅՝ եգիտ զնա չորեքօրեայ ՚ի
18 գերեզմանի: * Եւ էր Բեթանիա մերձ յԵ-
րուսաղէմ, իբրեւ ասպարիսօք հնգետասան:
19 * Բազումք ՚ի Հրէից անտի եկեալ էին առ
Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն զնս̅
20 վս̅ եղբօրն. * Մարթա իբրեւ լուաւ՝ թէ
Յս̅ գայ, ընդառաջ գնաց նր. բայց Մարիամ
21 նստէր անդէն ՚ի տան: * Ասէ Մարթա ցՅս̅.
Տէր՝ եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր
22 մեռեալ. * այլ եւ արդ գիտեմ, եթէ զորինչ
23 խնդրեսցես յԱյ̅՝ տացէ քեզ Այ̅: * Ասէ ցնա
24 Յս̅. յարիցէ եղբայրն քո: * Ասէ ցնա Մար-
թա. գիտեմ զի յարիցէ ՚ի յարութեան յա- ‖ Վեր.
25 ւուրն յետնում: * Ասէ ցնա Յս̅. Ես իսկ եմ 6. 40.
յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէ-
26 պէտ եւ մեռանի՝ կեցցէ. * Եւ ամ̅ որ կենդա-
նի է՝ եւ հաւատայ յիս, մի՛ մեռցի ՚ի յաւի-
տեան.

տեան. Հաւատա՞ս այսմիկ: * Ասէ ցնա. 27
այո՛ Տէր՝ ես հաւատացի՝ եթէ դու ես Ք̅ն
Որդի Ա̅Յ, որ յաշխարհ գալոց էիր: * Եւ 28
զայս իբրեւ ասաց, գնաց եւ կոչեաց զՄարիամ
զքոյր իւր լռելեայն՝ եւ ասէ. վարդապետն ե-
կեալ է եւ կոչէ զքեզ: * Նա իբրեւ լուաւ՝ 29
յարեաւ վաղվաղակի, եւ եկն առ նա: * Չեւ 30
եւս էր եկեալ Յ̅ս 'ի գիւղն. այլ էր անդէն
'ի տեղւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթա:
* Իսկ Հրէայքն՝ որ էին ը̅ նմա 'ի տանն անդ՝ 31
եւ մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ՝
թէ յարեաւ վաղվաղակի եւ գնաց, գնացին
եւ նոքա զհետ նորա. համարէին թէ 'ի գե-
րեզմանն երթայ՝ զի լացցէ անդ: * Իսկ Մա- 32
րիամ իբրեւ եկն ուր էրն Յ̅ս՝ եւ ետես զնա,
անկաւ առ ոտս ն̅ր եւ ասէ. Տէր՝ եթէ աստ
էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ:
* Յ̅ս իբրեւ ետես զնա զի լայր, եւ որ ը̅ նմա 33
էին Հրէայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր
իբրեւ զայրացեալ, * եւ ասէ. ո՞ւր եդիք ըզ- 34
նա: Ասեն ցնա. Տէր՝ եկ եւ տես: * Եւ ար- 35
տասուեաց Յ̅ս: * Ասէին Հրէայքն. տեսէք՝ 36
որչափ սիրէր զնա: * Կէսքն 'ի նոցանէ ա- 37
Վեր. սէին. ո՞չ կարէր սա, ‖ որ եբաց զաչս կու-
9. 6. րին, առնել՝ զի եւ սա մի մեռցի: * Յ̅ս դար- 38
ձեալ զայրացեալ ը̅ միտս իւր, գայ 'ի գե-
րեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ
'ի վ̅ր նորա: * Եւ ասէ Յ̅ս. 'ի բաց արարէք 39
զվէմդ: Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն.
Տէր՝ արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ
է:

40 է։ *Ասէ ցնա Յս. ոչ ասացի քեզ՝ եթէ հա-
41 ւատասցես, տեսցես զփառսն Այ։ *Եւ բար-
ձին 'ի վերայ տապանին զվէմն, Յն ամբարձ զաչս իւր
'ի վեր, և ասէ. Հայր՝ գոհանամ զքէն, զի
42 լուար ինձ։ *Եւ ես գիտէի՝ զի յամ ժամ
լսես ինձ. այլ վն ժողովրդեանս որ շուրջ
կան՝ ասեմ, զի հաւատասցեն՝ թէ դու
43 առաքեցեր զիս։ *Զայս իբրև ասաց, 'ի
ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ՝
44 արի եկ արտաքս։ *Եւ ել մեռեալն ոտիւք
կապկապովք, և ձեռօքն երիզապնդօք, և երե-
սօքն վարշամակապատօք. Եւ ասէ ցնոսա Յս.
45 լուծէք զդա՝ և թողէք երթալ։ *Բազումք
'ի Հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս,
իբրև տեսին զոր արարն՝ հաւատացին 'ի նա։
46 *Եւ ոմանք 'ի նոցանէ գնացին առ փարի-
սեցիսն, և պատմեցին նց՝ զոր արարն Յս։
47 *Ժողովեցին քահանայապետքն և փարի- Օ. Օ.
սեցիք ատեան, և ասեն. զի՞նչ արասցուք,
48 զի այրն այն բազում նշանս առնէ. *Եթէ
թողումք զնա այնպէս, ամենեքին հաւա-
տան 'ի նա. և գայցեն Հռոմք՝ և բառնայ-
49 ցեն զազգս մեր՝ և զտեղի։ *‖ Մի ոմն 'ի ‖ Վայր.
նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայա- 18. 14.
պետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնս. դուք
50 ոչինչ գիտէք, *և ոչ խորհիք իսկ.
թէ լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի 'ի վն
ժողովրդեանս, և մի ամ ազգս կորիցէ.
51 *Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քա-
հանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգա-
րէա-

րէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յս 'ի վր ազ-
գին. * և ոչ 'ի վր ազգին միայն, այլ զի և 52
զորդիսն Այ զցրուեալսն ժողովեսցէ 'ի մի։
* Այս յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի 53
սպանցեն զնա։ * Եւ Յս այնուհետև ոչ ե- 54
թէ համարձակ շրջէր 'ի մէջ Հրէիցն. այլ
գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանա-
պատ, 'ի քաղաք մի որում անուն էր Եփ-
րայիմ, և անդ լինէր աշակերտօքն հան-
դերձ։
Օ.Լ. * Եւ էր մերձ զատիկն Հրէից, և բազումք 55
ելին յԵրեմ 'ի գաւառէ անտի յառաջագոյն
քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւ-
րեանց։ * Խնդրէին զՅս, և ասէին ընդ մի- 56
մեանս մինչ կային 'ի տաճարին. զինչ թը-
ուի ձեզ՝ եթէ ո՞չ գայցէ 'ի տօն այսր։ Պատ-
ուէր տուեալ էր քահանայապետիցն և փա-
րիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է,
գուշակեսցէ զնմանէ՝ զի կալցին զնա։

## ԳԼ. ԺԲ.

Իսկ Յս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն 1
եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն,
զոր յարոյց 'ի մեռելոց։ * Եւ արարին 2
ԱՄ էջ. անդ նմա ընթրիս, և 'ի սպասու կայր Մար-
11. 2. թա, և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ
Մատթ. նմա. * Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ 3
26. 7. նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յսի,
Մարկ. և հերովն իւրով մաքրէր զոտս նր. և տունն
14. 3.

4 լի եղեւ 'ի հոտոյ իւղոյն ։ * Ասէ մի ոմն յա-
շակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ
5 մատնելոցն էր զնա. * Ընդէ՞ր ոչ իւղդ այդ
վաճառեցաւ երեք հարիւր դենարի, եւ տը-
6 ուաւ աղքատաց ։ * Զայս ասաց՝ ոչ զի
զաղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող
էր՝ եւ զարկղն ինքն ունէր. եւ որ ինչ անկա-
7 նէր՝ նա կրէր ։ * Ասէ Յս. Թո՛յլ տուր դմա,
զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ ։
8 * Զաղքատս յամ ժամ ընդ ձեզ ունիք.
9 զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք ։ * Իբրեւ
գիտաց ժողովուրդ բազում 'ի Հրէից թէ
անդ է՝ եկին, ոչ միայն վն Յսի, այլ զի եւ
զՂազար տեսցեն, զոր յարոյց 'ի մեռելոց ։
10 * Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի
11 եւ զՂազար սպանցեն. * քանզի բազումք 'ի
Հրէից երթային՝ եւ հաւատային 'ի Յս ։
12 * 'Ի վաղիւն անդր ժողովուրդ բազում որ Ի Կ
եկեալ էր 'ի տօնն, իբրեւ լուան թէ գայ
13 Յս յԵղէմ, * առին ոստս արմաւենեաց՝ եւ
ելին ընդառաջ նր աղաղակէին եւ ասէին.
Ովսաննա, օրհնեալ որ գաս յանուն Տն՝
14 թագաւորդ Իէլի ։ * Եւ գտեալ Յսի էշ մի, Մատթ.
նստաւ 'ի վերայ նորա. որպէս եւ գրեալ է ։ 21. 5.
15 * Մի երկնչիր դուստր Սիոնի՝ ահաւասիկ Մարկ.
թագաւոր քո գայ նստեալ 'ի վր յաւանակի 11. 7.
16 իշոյ ։ * Զայն ինչ ոչ գիտացին աշակերտ- Ղուկ.
քըն նր զառաջինն, այլ յորժամ փառաւոր- 19. 35.
եցաւ Յս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝ Զաքար.
որ գրեալն էր վն նր. եւ զայն արարին նմա ։ 9. 9.

* Եւ

* Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, 17
թէ զՂազար կոչեաց ի գերեզմանէն,
և յարոյց զնա ի մեռելոց: * Եւ վասն այնո- 18
րիկ ընդառաջ եղև նմա ժողովուրդն, զի
լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա:
* Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. 19
տեսանէք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշ-
խարհ ամ զհետ նորա գնաց: * Էին անդ ո- 20
մանք և հեթանոսք յելելոցն անդր, զի եր-
կիրպագանիցեն ի տօնին: * Նոքա մատեան 21
առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդա Գալիլեաց-
ւոցն էր, աղաչէին զնա և ասէին. տէր՝
կամիմք զՅս տեսանել: * Գայ Փիլիպպոս 22
և ասէ ցԱնդրէաս. Անդրէաս և Փիլիպպոս
ասեն ցՅս: * Եւ Յս պատասխանի ետ նոցա 23
և ասէ. եկեալ է ժամ զի փառաւորեսցի որդի
մարդոյ:

Իէ Բ

* Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն 24
ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, * ինքն 25
միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում
Մատթ. արդիւնս առնէ: || Որ սիրէ զանձն իւր՝ ար-
10. 39. ձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշ-
16. 25. խարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս
Մարկ. պահեսցէ զնա: * Եթէ ոք զիս պաշտիցէ, 26
8. 35. զհետ իմ եկեսցէ. և ուր եմ ես, անդ և
Ղուկ. պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշ-
9. 24. տիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

Իէ Գ

* Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զինչ 27
ասացից, եթէ Հայր՝ ապրեցո զիս ի ժամէ
աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ի

ժամս

28 ժամս յայս: * Հայր՝ փառաւորեա՛ զանուն
քո: Եկն բարբառ յերկնից. եւ փառաւոր
արարի, եւ դարձեալ փառաւոր արարից.
29 * Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր՝ ասէին,
որոտումն լինել: Այլքն ասէին. Հրեշտակ
30 խօսեցաւ ընդ նմա: * Պատասխանի ետ Յս՝ եւ
ասէ. ոչ վասն իմ եղեւ բարբառս այս, այլ
31 վասն ձեր: * Այժմիկ դատաստան է աշ-
խարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխար-
32 հիս այսորիկ ընկեսցի արտաքս: * Եւ ես
յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին
33 ձգեցից առ իս: * Զայս ասէր, նշանակեալ՝
34 թէ որով մահու մեռանելոց իցէ: * Պա-
տասխանի ետ նմա ժողովուրդն. մեք լուաք
‖ յօրինաց՝ եթէ Քս յաւիտեան կայ, եւ դու ‖ Սաղմ.
զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ որդ- 109. 4.
35 ւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ: * Աս- Եզեկ.
է ցնոսա Յս. փոքր միւս եւս ժամանակ լոյս ընդ 37. 25.
ձեզ է. գնացէք՝ մինչդեռ զլոյսն ունիք, զի Դանիէ.
մի խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ 'ի խա- 7. 14.
36 ւարի, ոչ գիտէ յո՛ երթայ: * Մինչդեռ
զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք 'ի լոյսն,
զի որդիք լուսոյ եղիջիք: Զայս խօսեցաւ Յս,
37 եւ չոգաւ՝ թաքեաւ 'ի նոցանէ: * Եւ այն- ‖ Եսայ.
չափ նշանս արարեալ էր առաջի նց. եւ նո- 53. 1.
38 քա ոչ հաւատային 'ի նա. * զի լցցի բանն Հռովմ.
Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. ‖ Տէ՛ր՝ ո՛ 10. 16.
հաւատաց 'ի լուր մեր, եւ բազուկ Տն ո՞ւմ ‖ Եսայ.
39 յայտնեցաւ: * Վն այնորիկ ոչ կարէին հա- 6. 9.
40 ւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի. * ‖ Թէ Գործ.
կու. 28. 26.

կուրացոյց զաչս նոցա, եւ ապշեցոյց զսիրտս
նց. զի մի՛ տեսցեն աչօք, եւ իմասցին սըր-
տիւք, եւ դարձցին՝ եւ բժշկեցից զնոսա։
* Զայս ասաց Եսայի՝ զի ետես զփառս նր, 41
եւ խօսեցաւ վս նր։ * Բայց սակայն եւ յիշ- 42
խանաց անտի բազումք հաւատացին ՚ի նա.
այլ վս փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի՛
՚ի ժողովրդենէն ելանիցեն։ * Զանզի սի- 43
րեցին զփառս մարդկան՝ առաւել քան զը-
փառսն Այ։
Ի Գ. * Եւ Յս աղաղակէր՝ եւ ասէր. որ հաւատայ 44
յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առա-
քեացն զիս։ * Եւ որ տեսանէ զիս, զայն 45
տեսանէ՝ որ առաքեացն զիս։ * Ես լոյս 46
յաշխարհ եկի, զի ամ որ հաւատայ յիս՝ ՚ի
խաւարի մի՛ մնասցէ։ * Եւ եթէ ոք լուիցէ 47
բանից իմոց, եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ
‖ Ղուկ. զնա. քանզի ոչ եկի՝ ‖ եթէ դատեցայց զաշ-
9. 56. խարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։ * Որ ա- 48
Ի վեր. նարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ. գոյ՝
3. 17. որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ, նա
դատի զնա յաւուրն յետնում։ * Զի ես 49
յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առա-
քեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝
զինչ ասացից՝ եւ զինչ խօսեցայց։ * Եւ գի- 50
տեմ՝ եթէ պատուէրն այն կեանք են յաւի-
տենականք։ Արդ՝ զոր ես խօսիմ, որպէս ա-
սաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ։

## ԳԼ. ԺԳ.

1 Յառաջագոյն ‖ քան զտօնն զատկի, գի- Ի. Ա
տաց Յս, թէ հասեալ է ժամ նորա՝ զի փո- ‖ Մատթ.
խեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց 26. 2.
զիւրսն՝ որ յաշխարհի աստ էին. ի սպառ սի-
2 րեաց զնոսա: * Եւ 'ի լինել ընթրեացն,
սատանայի իսկ արկեալ էր 'ի սիրտ՝ զի մատ-
նեսցէ զնա Յուդա Սիմովնի Իսկարիովտաց-
3 ւոյ. * գիտաց Յս՝ զի զամ ինչ ետ Հայր 'ի
ձեռս նր, եւ թէ յԱյ ել՝ եւ առ Այ երթայ,
4 * յառնէ յընթրեաց անտի, եւ դնէ զհան-
դերձսն, եւ առեալ զանջակ մի՝ սփածաւ.
5 * Եւ ապա առեալ ջուր՝ արկ 'ի կոնք, եւ
սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, եւ սր-
6 բէր զանջականն՝ զոր սփածեալ էր: * Գայ
առ Սիմովն Պետրոս. եւ նա ասէ ցնա. Տէր՝
7 դու զիմ զոտս լուանաս: * Պատասխանի
ետ նմա Յս՝ եւ ասէ. զոր ինչ ես գործեմ,
դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտասջիր:
8 * Ասէ ցնա Պետրոս, ոչ լուասցես զոտս իմ
յաւիտեան: Պատասխանի ետ նմ Յս. եթէ
9 ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս բաժին: * Ա-
սէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր՝ մի միայն զոտս
10 իմ, այլ եւ զձեռս եւ զգլուխ. * Ասէ ցնա
Յս. լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտ-
սըն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է.
11 ‖ եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին: * Զի ‖ Սաղմ.
գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա. վասն 15. 3.
այնո-

այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքին սուրբ էք:
* Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհան- 12
դերձս իւր՝ եւ դարձեալ բազմեցաւ, եւ ա-
սէ ցնս. գիտէք զինչ արարի ձեզ: * Դուք 13
կոչէք զիս վարդապետ եւ Տր. եւ բարւոք ա-
սէք, քանզի եմ իսկ: * Իսկ արդ՝ եթէ ես 14
լուացի զոտս ձեր՝ Տէրս եւ վարդապետս, եւ
դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ:
* Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես 15
ձեզ արարի, եւ դուք առնիջիք:
Լ. Օ. * Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ 16
Մատթ. ‖ քան զտէր իւր. եւ ոչ առաքեալ՝ մեծ քան
10. 24. զայն՝ որ առաքեացն զնա: * Եթէ զայս գի- 17
Յովհ. տէք, երանելի ես էք՝ եթէ առնիցէք զայս:
15. 20. * Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես 18
գիտեմ, զորս ընտրեցի. այլ զի լցցի գիրն,
Սաղմ. թէ ‖ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա-
40. 10. բէութիւն: * Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ 19
մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւա-
Մատթ. տասջիք թէ ես եմ: * ‖ Ամէն ամէն ասեմ 20
10. 40. ձեզ. որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զիս
Ղուկ. ընդունի. եւ որ զիս ընդունի, ընդունի զայն՝
10. 16. որ առաքեացն զիս: * Զայս իբրեւ ասաց 21
Յս, խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց եւ ասէ.
Մատթ. ‖ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ
26. 21. մատնելոց է զիս: * Հայէին ընդ միմեանս ա- 22
Մարկ. շակերտքն տարակուսեալք, թէ զումէ ա-
14. 18. սիցէ: * Եւ էր մի ոմն յաշակերտացն բազ- 23
Յովհ. մեալ առ Յսիւ, զոր սիրէր Յս: * Ակնարկէ 24
21. 20. նմա Սիմոն Պետրոս՝ հարցանել՝ ով իցէ, վն

որոյ

25 որոյ ասէն. * Եւ նա անկեալ զլանջօքն Յսի,
26 ասէ ցնա. Տէ՛ր՝ ո՞վ է. * Պատասխանի ետ
Յս և ասէ. այն է՝ որում ես թացից զպա-
տառն՝ և տաց: Եւ թացեալ զպատառն տայ
27 Յուդայի Սկարիովտացւոյ. * Եւ յետ պա-
տառոյն՝ ապա եմուտ 'ի նա սատանայ: Եւ
ասէ ցնա Յս. զոր՝ գործելոց ես՝ ա-
28 րա՛ վաղվաղակի: * Եւ զայս ոչոք իմացաւ 'ի
բազմականացն, թէ առ ինչ ասաց ցնա:
29 * Զի ոմանք համարէին, թէ՝ զի զարկղն
ունէր Յուդա, ասաց նմա Յս, գնեա՛ ինչ՝ որ
պիտոյ իցէ մեզ 'ի տօնիս. և կամ՝ զի աղքա-
30 տաց ինչ տացէ: * Իսկ նորա առեալ զպա-
տառն՝ ել արտաքս վաղվաղակի. և էր գի-
շեր:
31 * Եւ իբրև ել, ասէ Յս. այժմ փառաւորե- Ի: Ի:
ցաւ որդի մարդոյ. և Այ փառաւորեցաւ
32 'ի նմա: * Զի եթէ Այ փառաւորեցաւ 'ի
նմա, և Այ փառաւորեսցէ զնա յանձն իւր.
33 և վաղվաղակի փառաւորեսցէ զնա: * Որ-
դեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ.
‖ խնդրիցէք զիս. և որպ ասացի Հրէիցն, ‖ Ի վեր.
եթէ ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ. 7. 34.
34 և արդ ձեզ ասեմ: * ‖ Պատուիրան նոր ‖ Ղևտ.
տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպ սիրե- 19. 18.
ցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս: Ի վայր.
35 * Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ 15. 12.
աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս:
36 * Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր՝ յո՞ եր-
թաս: Պատասխանի ետ Յս, ուր ես եր-

երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զհետ իմ,
բայց ապա եկեսցես զհետ իմ։ * Ասէ ցնա 37
Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ
այժմ զհետ քո. արդէն զանձն իմ խոկ եդից
՚ի վերայ քո։ * Պատասխանի ետ Յս. զանձն 38
‖ Մատթ. քո դիցես ՚ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ
26. 34. քեզ. չեւ իցէ հաւու խօսեալ, մինչ դու ե-
Մարկ. րիցս ուրասցիս զիս։
14. 30.
Ղուկ.
22. 34.

## ԳԼ. ԺԴ.

Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւա- 1
տացէք յԱծ, եւ յիս հաւատացէք։ * Ի 2
տան Հօր իմոյ օթեվանք բազում են. ապա
թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ
պատրաստեմ ձեզ տեղի։ * Եւ եթէ եր- 3
թամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ
գամ, եւ առնում զձեզ առ իս. զի ուր եսն
իցեմ, եւ դուք անդ իցէք։ * Եւ ուր եր- 4
թամն՝ գիտիցէք, եւ զճանապարհն գիտի-
ցէք։ * Ասէ ցնա Թովմաս. Տէր՝ ոչ գի- 5
տեմք յո՞ երթաս, եւ զիա՞րդ զճանապարհն
կարասցուք գիտել։ * Ասէ ցնա Յս. ես եմ 6
ճանապարհ եւ ճշմարտութի եւ կեանք. ոչոք
գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։ * Եթէ զիս 7
գիտէիք՝ ապա եւ զՀայրն իմ գիտէիք, եւ այ-
սուհետեւ գիտասջիք զնա։ * Ասէ ցնա Փի- 8
լիպպոս. Տէր՝ ցո՛յց մեզ զՀայր՝ եւ շատ է
մեզ։ * Ասէ ցնա Յս. այսչափ ժամանակս 9
ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ
ե-

տեսեալ զիս՝ տեսեալ զՀ՟այրն. և դու զիա՞րդ ա-
10 սես՝ եթէ ցոյց մեզ զՀ՟այր: *Ոչ հաւատա՞ս
եթէ ես 'ի Հ՟այր, և Հ՟այր յիս է. զբանս զոր
ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ իմնէ խօ-
սիմ, այլ Հ՟այրն՝ որ յիս բնակեալ է, նա գոր-
11 ծէ զգործսն: *Հաւատա՞յք ինձ, եթէ ես
12 'ի Հ՟այր՝ և Հ՟այր յիս: *Ապա թէ ոչ՝ գոնէ
վ՟ն գործոյն հաւատացէք ինձ: Ամէն ամէն
ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործ-
սն զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մե-
ծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի ես
13 առ Հ՟այր երթամ: *Եւ զորինչ խնդրի- ‖Մատթ.
14 ցէք յանուն իմ, արարից զայն. *զի փառա- 7. 7.
ւորեսցի Հ՟այր յՈրդի: Ս՟այր.
15 *Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պա- 16. 23.
16 հեսջիք: *Եւ ես աղաչեցից զՀ՟այր, և այլ ‖ԵՒՐ.Գ.
մխիթարիչ տացէ ձեզ. զի ը՟ ձեզ բնակես-
17 ցէ 'ի յաւիտեան. *զՀ՟ոգին ճշմարտութե՟ն,
զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տե-
սանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք
ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ՝ և ը՟
18 ձեզ եղիցի: *Ոչ թողից զձեզ որբս. գամ
19 առ ձեզ: *Փոքր մի ևս՝ և աշխարհս ոչ
ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք
զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի
20 լինելոց էք: *Յայնմ աւուր գիտասջիք
դուք, զի ես 'ի Հ՟օր իմում՝ և դուք յիս՝ և
21 ես 'ի ձեզ: *Որ ունի զպատուիրանս իմ՝ և
պահէ զնա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն
զիս՝ սիրեսցի 'ի Հ՟օրէ իմմէ. և ես սիրեցից
 զնա,

զնա, եւ երեւեցուցից նմա զիս։ * Ասէ ցնա 22
Յուդա ոչ Սկարիովտացին. Տէր՝ զի՞ եղեւ՝ զի
մեզ յայտնելոց ես զքեզ՝ եւ ոչ աշխարհի։
* Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնա. Եթէ 23
ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, եւ Հայր
իմ սիրեսցէ զնա. եւ առ նա եկեսցուք՝ եւ
օթեւանս առ նմա արասցուք. * Եւ որ ոչն 24
սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. եւ բանն իմ
զոր լսէքդ՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն
զիս։
* Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս 25
եմ։ * Բայց մխիթարիչն Հոգին Սբ՝ զոր ա- 26
ռաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ
ձեզ զամ, եւ յիշեցուսցէ զամ՝ որինչ ասա-
ցի ձեզ։ * Խաղաղութիւն թողում ձեզ, ըզ- 27
խաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս
տայ՝ տամ ես ձեզ։ Մի խռովեսցին սիրտք
ձեր, եւ մի զանգիտեսցեն։ * Լուարուք, զի 28
ասացի ես ձեզ՝ թէ երթամ, եւ գամ առ ձեզ.
Եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լինել էր ձեր՝
թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ
է քան զիս։ * Եւ այժմ ասացի ձեզ մինչ- 29
չեւ եղեալ. զի յորժամ լինիցի՝ հաւատաս-
ջիք։ * Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. 30
գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ եւ յիս ինչ
ոչ գտանէ։ * Այլ զի ծանիցէ աշխարհ. 31
‖ Գործ. Եթէ սիրեմ զՀայր. ‖ Եւ որպէս պատուիրեաց
Ժ. ԻԳ. ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օ՛ն արիք՝ գնաս-
ցուք աստի։

## Գլ. ԺԵ.

1 Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ
2 է: * Զամենայն ուռ որ յիս է՝ եւ ոչ բերէ
պտուղ, կտրէ զնա. եւ զամ որ բերէ պտուղ՝
սրբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի:
3 * Դուք արդէն իսկ սուրբ էք վն բանին՝ Վեր.
4 զոր խօսեցայ ընդ ձեզ: * Կացէք յիս՝ եւ ես ՚ի 13. 10.
ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ
յորթն, նոյնպէս եւ դուք՝ եթէ ոչ յիս հաս-
5 տատեալ իցէք: * Ես եմ որթ՝ եւ դուք ուռ.
որ հաստատեալ է յիս՝ եւ ես ՚ի նա, նա բե-
րէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կա-
6 րէք առնել: * Եթէ ոք ոչ է հաստատեալ
յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն՝ եւ ցամա-
քեցաւ, եւ ժողովեն զնա եւ ՚ի հուր արկա-
7 նեն՝ եւ այրի: * Եթէ կայցէք յիս՝ եւ բանք
իմ ՚ի ձեզ կայցեն, որինչ կամիցիք խնդրես-
8 ջիք՝ եւ լինիցի ձեզ: * Յայսմիկ փառաւորե-
ցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. եւ
9 եղիջիք իմ աշակերտք: * Որպէս սիրեաց
զիս Հայր, եւ ես սիրեցի զձեզ. հաստատուն
10 կացէք ՚ի սէր իմ: * Եթէ պահիցէք զպատ-
ուիրանս իմ, կացջիք ՚ի սէր իմ. որպ ես զպ-
պատուիրանս Հօր իմոյ պահեցի, կամ ՚ի
11 սէր նր: * Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ու- Վեր.
րախութիւն իմ ՚ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախու- 13. 34.
12 թիւն լցեալ եղիցի: * Այս է պատուէր Յովհ.

իմ. զի սիրեսջիք զմիմեանս, որպ̃ և ես զձեզ
սիրեցի։ * Մեծ ևս քան զայս սէր ոչոք ու- 13
նի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վ̃ր բարեկա-
մաց իւրոց։ * Դուք բարեկամք էք իմ, ե- 14
թէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։
* Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն 15
ոչ գիտէ զինչ գործէ տէրն նր̃. այլ զձեզ
կոչեցի բարեկամս, զի զամ̃, զոր լուայ ՚ի
Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ * Ոչ եթէ դուք 16
ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և ե-
դի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք
լինիցիք. և պտուղն ձեր կացցէ. և զոր ինչ
խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ
Ի. Յովհ. ձեզ։ * Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք 17
3. 11. զմիմեանս։ * Եթէ աշխարհ զձեզ ատեայ. 18
4. 7. գիտասջիք զի նախ զիս ատեաց։ * Եթէ 19
յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սի-
րէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ. այլ
ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վ̃ն այնորիկ
ատեայ զձեզ աշխարհ։ * Յիշեցէք զբանն 20
Վեր. զոր ասացի ձեզ, թէ Ոչ է ծառայ մեծ քան
13. 16. զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և
Մտթ. զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահե-
10. 24. ցին, ապա և զձերն պահեսցեն։ * Այլ ըզ- 21
Մտթ. նոյնս արասցեն ը̃ ձեզ վ̃ն անուան իմոյ. զի
24. 9. ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։ * Իսկ 22
եթէ չէր եկեալ՝ և խօսեցեալ ը̃ նոսա, մեղ
ինչ ոչ գոյր նց̃. բայց արդ չիք պատճառք
վ̃ն մեղաց իւրեանց։ * Որ զիս ատեայ՝ և 23
զՀայրն իմ ատեայ։ * Եթէ զգործսն չէր 24
գոր-

գործեալ 'ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց,
մեղ ինչ ոչ գո՛յր նց, բայց արդ տեսին և
25 ատեցին և զիս և զՀայր իմ։ * Այլ զի լցցի
բանն, որ յօրէնս նց գրեալ է, ‖ Թէ ատե- ‖ Սաղմ.
26 ցին զիս տարապարտուց։ * ‖ Բայց յորժամ 24. 19.
եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ‖ Ղուկ.
'ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութ, որ 'ի Հօրէ 24. 49.
27 ելանէ, նա վկայեսցէ վս իմ. * և դուք վկա-
յեսջիք՝ զի 'ի սկզբանէ ը̄ իս էք։

## ԳԼ. ԺԶ.

1 Զայս խօսեցայ ը̄ ձեզ՝ զի մի՛ գայթագ-
2 ղեսջիք։ * 'Ի ժողովրդոց հերեանց հանե-
ցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամ
որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն
3 մատուցանել Այ։ * Եւ զայն արասցեն ընդ
ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր՝ և ոչ զիս։
4 * Այլ և զայս խօսեցայ ը̄ ձեզ՝ զի յորժամ
եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի
5 ձեզ։ * Զայս 'ի սկզբանէ ոչ ասացի ձեզ,
քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես
առ առաքիչն իմ. և ոչոք 'ի ձէնջ հարցանէ
6 զիս, թէ յո՞ երթաս։ * Այլ զի զայս խօսե-
ցայ ը̄ ձեզ, տրտմութի ելից զսիրտս ձեր։
7 * Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է
ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ա-
պա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։
8 * Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ

վասն մեղաց՝ և վասն արդարութեան՝ և վասն
դատաստանի: * Վասն մեղաց՝ զի ոչ հա- 9
ւատան յիս. * վասն արդարութեան՝ զի առ 10
Հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք զիս.
* վասն դատաստանին՝ զի իշխան աշխարհիս 11
այսորիկ դատապարտեալ է: * Դեռ բազում 12
ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք համ-
բառնալ այժմիկ: * Յորժամ եկեսցէ նա 13
Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ
ա̃մ ճշմարտութիւն. զի ոչ եթէ յանձնէ ինչ
խօսիցի, այլ զոր լուիցէ՝ խօսիցի, և զգալոցն
պատմեսցէ ձեզ: * Նա զիս փառաւորեսցէ, 14
զի յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ
ձեզ: * Զա̃մ ինչ զոր ունի Հայր՝ իմ է. 15
վ̃ն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի
առնուցու՝ և պատմեսցէ ձեզ:
* Փոքր մի, և ոչ ևս տեսանէք զիս, և ա- 16
պա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և ես
երթամ առ Հայր: * Ասէին ոմանք յաշա- 17
կերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր
ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս,
և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս.
և թէ ես առ Հայր երթամ: * Ասէին, 18
զի՞նչ իցէ այն փոքր միւս ևսն, չգիտեմք
զի՞նչ խօսի. * Գիտաց Յ̃ս եթէ կամէին զնա 19
հարցանել, և ասէ ցն̃ս. վ̃ն այդորիկ խնդր-
րէք ը̃ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի՝ և
ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս
ևս, և տեսանիցէք զիս: * Ամէն ամէն ա- 20
սեմ ձեզ, զի լայցիք՝ և ողբասջիք դուք, և

աշ-

աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ
21 տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի. * Կին
յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի
հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի ըզ-
մանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւն վասն խըն-
22 դութեանն. զի ծնաւ մարդ յաշխարհ. * Եւ
դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ
տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և
զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ.
23 * Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք.
Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդ- Մատթ.
րիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ. 7. 7.
24 * Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն Մարկ.
իմ. խնդրեցէք, և առնուցուք. զի ուրա- 11. 24.
25 խութիւն ձեր լցեալ իցէ. * Զայս առակօք Ղուկ.
խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յոր- 11. 9.
ժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ Անդ.
26 յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ. * Յայնմ 14. 13.
աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ
ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր.
27 * զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս
սիրեցիք, և հաւատացիք՝ եթէ ես յԱյ ելի.
28 * Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ
թողում զաշխարհ, և երթամ առ Հայր.
29 * Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտ-
նութեամբ խօսիս. և առակ և ոչ մի ինչ ասես.
30 * Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամ. և
ոչինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ.
31 յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱյ ելեր. * Պա-
տասխանի ետ նց Յս, և ասէ. այժմ հաւա-
տայք.

Մատթ. տայք. * Ահա եկեսցէ ժամ, և եկեալ 32
26. 31. իսկ է, զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս,
Մարկ. և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի
14. 27. Հայր ընդ իս է.
* Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղա- 33
ղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն
ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղ-
թեցի աշխարհի.

## ԳԼ. ԺԷ.

Զայս իբրև խօսեցաւ Յս, ամբարձ զաչս 1
իւր յերկինս և ասէ. Հայր՝ հասեալ է
ժամ, փառաւորեա զորդի քո, զի և որդի
Մատթ. քո փառաւորեսցէ զքեզ: * Որպէս ետուր 2
28. 18. նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ. զի ամենայնի,
զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտե-
նականս. * Այս են յաւիտենական կեանք, 3
զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ած՝ և զոր
առաքեցեր զՅս Քս: * Ես զքեզ փառա- 4
ւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր
ետուր ցիս՝ զի արարից. * և այժմ փառա- 5
ւորեա զիս Հայր՝ առ 'ի քեն փառօքն՝ զոր
ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ
'ի քեն: * Յայտնեցի զանուն քո մարդկանն՝ 6
զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և
ինձ ետուր զնոսա. և զբանն քո պահեցին.
* Արդ գիտացին՝ եթէ զամ ինչ զոր ետուր 7
ինձ, առ 'ի քեն են. * զի զբանն՝ զոր ետուր 8
ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ծա-

նեան

նեան ճշմարտութիւն՝ թէ առ 'ի քէն ելի. և
հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս.
9 * Եւ՝ ես վասն նց աղաչեմ, և ոչ վս աշ-
խարհի աղաչեմ. այլ վն նոցա՝ զորս ետուրն
10 ինձ, զի քո են: * Եւ որ ինչ իմ է, ամ
քո է. և որ ինչ քո է, այն իմ է. և փա-
11 առաւորեալ եմ 'ի նոսա: * Եւ ես ոչ եւս
եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և
ես առ քեզ գամ. Հայր սբ՝ պահեա զնս յա-
նուն քո, որով ետուր ինձ. զի եղիցին մի,
12 որպէս և մեք մի եմք: * Մինչ էի յաշխարհի
ընդ նս, ես պահէի զնս յանուն քո՝ ‖ որով ‖ Սոյն.
ետուր ինձ, և պահեցի. և ոչ ոք 'ի նոցանէ 18. 9.
կորեաւ, բայց որդին կորստեան, | զի գիրն | Սաղմ.
լցցի. 108. 8.
13 * Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշ-
խարհի, զի ունիցին զուրախութիւն իմ լցեալ
14 յանձինս իւրեանց: * Ես ետու նոցա զբանն
քո. և աշխարհս ատեաց զնս, զի չեն յաշ-
15 խարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ: * Ոչ
զայս աղաչեմ, զի բարձցես զնս յաշխարհէ.
16 այլ զի պահեսցես զնս 'ի չարէ: * Յաշխարհէ
աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ.
17 * Սուրբ արա զնս ճշմարտութբ քով. զի քո
18 բանդ ճշմարտութի է: * Որպէս զիս առա-
քեցեր յաշխարհ. և ես առաքեցի զնս յաշ-
19 խարհ: * Եւ 'ի վս նոցա ես սուրբ առնեմ
զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշ-
20 մարտութբ: * Եւ ոչ վս նց միայն աղա-
չեմ, այլև վասն ամ հաւատացելոց բանիւն

նց

նդ յիս, * զի ամենեքին մի իցեն, որպ դու 21
Հայր յիս՝ և ես ՚ի քեզ, զի և նոքա ՚ի մեզ
իցեն. զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու
առաքեցեր զիս: * Եւ ես՝ զփառսն զոր ետուր 22
ինձ ետու նոցա, զի իցեն մի որպ և մեք մի
եմք: * Ես ՚ի նոսա՝ և դու յիս, զի եղիցին 23
կատարեալք ՚ի մի. և գիտասցէ աշխարհ
եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա
որպէս դու զիս սիրեցեր: * Հայր՝ զորս ե- 24
տուրն ինձ, կամիմ՝ զի ուր եմն ես, և նո-
քա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ,
զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ
քան զլինելն աշխարհի: * Հայր արդար՝ և 25
աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ
ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առա-
քեցեր զիս: * Եւ ծանուցի նոցա զանուն քո, 26
և ծանուցից. զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ ՚ի
նոսա իցէ, և ես ՚ի նոսա:

## ԳԼ. ԺԸ.

‖ Բ. Թագ. 15. 23. Զայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն 1
հանդերձ ‖ յայնկոյս ձորոյն կեդրոնի, ուր
էր պարտէզ. յոր եմուտ ինքն և աշակերտքն
իւր:
‖ Մատթ. 26. 47. * Գիտէր և Յուդա, որ զնա մատնելոց էր՝ 2
զտեղին. զի բազում անգամ ժողովեալ էր
Մարկ. 14. 43. անդր Յիսուսի աշակերտօքն հանդերձ: * ‖ Եւ 3
Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ՚ի
Ղուկ. 22. 47. քահանայապետից և ՚ի փարիսեցւոց սպա-

սաւ-

սաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք և
4 զինուք: * Իսկ Յն իբրև ետես զայն ամ ե֊
կեալ ՚ի վր նորա, ել և ասէ ցնս. զո՞ խնդ֊
5 րէք: * Պատասխանի ետուն նմա. զՅն Նա֊
զովրեցի: Ասէ ցնս Յն. ես եմ: Կայր ընդ
6 նոսա և Յուդա՝ որ մատնէրն զնա: * Իբրև
ասաց՝ թէ ես եմ, յետս յետս չոգան և
7 զարկան զգետնի: * Դարձեալ եհարց զնս.
զո՞ խնդրէք: Եւ նոքա ասեն. զՅն Նազովրե֊
8 ցի: * Պատասխանի ետ նոցա Յն. ասացի ձեզ
թէ ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թոյլ
9 տուք դոցա երթալ: * Զի լցցի բանն՝ զոր
ասաց. ‖ Թէ զոր ետուրն ցիս՝ ոչ կորուսի ՚ի ‖ Վեր.
10 նոցանէ և ոչ զոք: * Իսկ Սիմովն Պետրոս՝ 17. 12.
քանզի ունէր սուր, ձգեաց զնա՝ և եհար
զքահանայապետին ծառայ, և ՚ի բաց ատ֊
զունկն նորա զաջոյ. և էր անուն ծառային
11 Մաղքոս: * Ասէ Յն ցՊետրոս. արկ զսուրդ
անդրէն ՚ի պատեանս իւր. զբաժակն զոր
12 ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա: * Իսկ գուն֊
դըն և հազարապետն և սպասաւորք Հրէից
13 կալան զՅն՝ և կապեցին. * և ածին զնա
նախ առ ‖ Աննա՝ որ էր աներ Կայիափայի. ‖ Ղուկ.
որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ: 3. 2.
14 * Այս այն Կայիափայ էր՝ ‖ որ խրատն ետ ‖ Վեր.
Հրէից, եթէ լաւ է առն միում մեռանել 11. 49.
15 ՚ի վր ժողովրդեանն: * Եւ երթայր զհետ
Յնի Սիմովն Պետրոս՝ և միւս աշակերտն:
Եւ աշակերտն այն քանզի ծանօթ էր քա֊
հանայապետին՝ եմուտ ընդ Յնի ՚ի գաւիթ

քա֊

քահանայապետին: * Եւ Պետրոս կայր առ 16
‖ Մատթ. դրանն արտաքոյ: ‖ Ել միւս աշակերտն՝ որ էր
26. 58. ծանօթ քահանայապետին՝ և ասաց դռնա-
Մարկ. պանին՝ և եմոյծ 'ի ներքս զՊետրոս: * Ա- 17
14. 54. սէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս.
Ղուկ. միթէ և դու յաշակերտաց առնն այնորիկ
22. 54. իցես: Եւ նա ասէ՝ ոչ եմ: * Կային անդ ծա- 18
ռայքն և սպասաւորք խարոյկ արկեալ՝ քան-
զի ցուրտ էր՝ և ջեռնուին. կայր ընդ նոսա և
Պետրոս՝ և ջեռնոյր: * Եւ քահանայապետն 19
եհարց զՅս վն աշակերտացն՝ և վն վարդա-
պետութեան նորա: * Պատասխանի ետ նմա 20
Յս. ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի.
ես յամ ժամ ուսուցի 'ի ժողովրդեանն, և
'ի տաճարի անդ՝ ուր ամ հրէայք ժողովեալ
էին, և 'ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ. * Զի 21
հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որ լուանն,
թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահաւանիկ
նոքա գիտեն զինչ ասացի ես: * Իբրև նա 22
զայն ասաց, մի ոմն 'ի սպասաւորացն որ անդ
կայր, ած ապտակ Յսի և ասէ. այդպէս
պատասխանի տաս քահանայապետին: * Եւ 23
Յս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկա-
յեա վն չարին, իսկ եթէ բարի, ընդէր
հարկանես զիս: * Եւ առաքեաց զնա Ան-
‖ Մատթ. նա կապեալ առ Կայիափա քահանայապետ: 24
26. 69. * ‖ Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝ և ջեռ- 25
Մարկ. նոյր. ասեն ցնա՝ միթէ և դու յաշակեր-
14. 67. տաց նորա իցես: Նա ուրացաւ և ասէ՝
Ղուկ. թէ չեմ: * Եւ ասէ մի ոմն 'ի ծառայից քա- 26
22. 56.

հան-

հանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ
զունկն եհատ Պետրոս. ո՞չ ես իսկ տեսի
27 զքեզ 'ի պարտիզի անդ ընդ նմա: * Դար-
ձեալ ուրացաւ Պետրոս. և վաղվաղակի հաւ
խօսեցաւ:
28 * ‖ Ածեն զՅս 'ի վանացն Կայիափայ յա- ‖ Մատթ.
պարանս դատաւորին. և էր այգուց. և նո- 27. 2.
քա ոչ մտին յապարանն, ‖ զի մի պղծես- Մարկ.
29 ցին, այլ զի ուտիցեն զզատիկն: * Ել առ 15. 1.
նոսա Պիղատոս արտաքս՝ և ասէ. զի՞նչ չարա- ‖ Գործ.
խօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ: 10. 28.
30 * Պատասխանի ետուն և ասեն ցնա. եթէ
չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք
31 զնա քեզ: * Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա
դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարուք:
Ասեն ցնա Հրէայքն. մեզ ոչ է արժան սպա-
32 նանել զոք: * Զի լցցի բանն Յսի՝ զոր ա- ‖ Մատթ.
սաց, նշանակելով՝ թէ որով մահու մեռանե- 20. 19.
33 լոց իցէ: * ‖ Եմուտ միւսանգամ յապարան- ‖ Մատթ.
սըն Պիղատոս, կոչեաց զՅս՝ և ասէ ցնա. 27. 11.
34 դու ես թագաւորն Հրէից: * Պատասխանի Մարկ.
ետ Յս. 'ի քէն ասես զայդ՝ եթէ այլք ասա- 15. 2.
35 ցին քեզ զինէն: * Պատասխանի ետ Պիղա- Ղուկ.
տոս. միթէ և ես Հրեա՞յ իցեմ. ազգն քո և 23. 3.
քահանայապետք մատնեցին զքեզ ինձ,
36 զի՞նչ գործեալ է քո: * Պատասխանի ետ
Յս, իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ.
եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ,
սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի
մատնեցայց Հրէից. բայց արդ՝ թագաւո-
րու-

րութիւն իմ չէ աստի։ * Ասէ ցնա Պիղա- 37
տոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր
ոմն ես դու։ Պատասխանի ետ Յիսուս. դու ա-
սես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ
ծնեալ եմ, և 'ի դոյն իսկ եկեալ եմ յաշ-
խարհ, զի վկայեցից ճշմարտութեան. ամենայն որ
'ի ճշմարտութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ.
* Ասէ ցնա Պիղատոս. զի՞նչ է ճշմարտու- 38
թիւն։ Զայս իբրև ասաց, դարձեալ ել առ
Հրեայսն՝ և ասէ ցնոսա. ես՝ և ոչ մի ինչ պատ-
Մատթ. ճառս գտանեմ 'ի նմա։ * Բայց է ձեր սո- 39
27. 15. վորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ 'ի զատ-
Մարկ. կիս. արդ՝ կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ ըզ-
15. 6. թագաւորն Հրէից։ * Աղաղակեցին ամե- 40
Ղուկ. նեքեան՝ և ասէին. մի զդա, այլ զԲարաբ-
23. 17. բա։ Եւ էր Բարաբբայն այն աւազակ։

ԳԼ. ԺԹ.

Մատթ. Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս՝ և գան ե- 1
27. 27. հար։ * Եւ զինուորացն արարեալ պսակ 2
Մարկ. 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ նորա, և զգեցուցին
15. 16. նմա հանդերձ ծիրանի. * և գային առ նա, 3
և ասէին. ողջ եր արքայ Հրէից. և հանէին
նմա ապտակս։ * Ել դարձեալ պիղատոս 4
արտաքս և ասէ ցնոսա. ահա ածեմ զնա ար-
տաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես զվնաս
ինչ 'ի նմա ոչ գտանեմ։ * Ել Յիսուս արտաքս 5
և ունէր պսակ 'ի փշոց՝ և հանդերձ ծիրա-
նի. և ասէ ցնոսա. ահա այրդ ցձեզ. * Իբրև 6
տե-

տեսին զնա քահանայապետքն և սպասա-
ւորք, զաղաղակ բարձին՝ և ասեն. 'ի խաչ
հա՛ն՝ 'ի խաչ հան զդա: Ասէ ցնոսա Պիղա-
տոս. առէ՛ք զդա 'ի ձեզ, և ձեզէն հանէ՛ք 'ի
խաչ. զի ես 'ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ:
7 * Պատասխանի ետուն նմա Հրեայքն. մեք
օրէնս ունիմք. և ը̅ օրինաց մերոց պարտի
մեռանել. զի զանձն իւր որդի Ա̅Յ արար:
8 * Իբրև լուաւ զբանս զայս Պիղատոս, ա-
9 ռաւել ևս երկեաւ: * Եմուտ դարձեալ
անդրէն յապարանսն, և ասէ ցՅ̅ս. ուստի
ես դու. և Յ̅ս ոչ ետ նմա պատասխանի:
10 * Ասէ ցնա Պիղատոս. ը̅ իս ո՞չ խօսիս, ո՞չ
գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զ-
քեզ 'ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձա-
11 կել զքեզ: * Պատասխանի ետ Յ̅ս. ոչ ու-
նէիր դու իշխանութիւն 'ի վերայ իմ և ո՛չ մի,
եթէ ոչ էր տուեալ քեզ 'ի վերուստ. վասն
այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ
12 մեղք են: * Յու յայնմանէ Պիղատոս խնդ-
րէր արձակել զնա. և Հրեայքն աղաղակէին
և ասէին. եթէ զդա արձակես՝ չես բարե-
կամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կո-
13 չէ զանձն իւր, հակառակ է կայսեր: * Իսկ
Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ,
ած զՅ̅ս արտաքս. և նստաւ 'ի վ̅ի բեմին,
'ի տեղւոջն որ կոչէր քարայատակ, և եբ-
14 րայեցերէն Կապպաթա: * Էր ուրբաթն
զատկի. և էր ժամ իբրև վեցերորդ, և ա-
սէ ցՀրեայսն. ահա՛ թագաւորդ ձեր ցձեզ:

* Եւ նոքա աղաղակէին, բարձ 'ի միջոյ 15
բարձ 'ի միջոյ՝ եւ հան զդա 'ի խաչ ։ Ասէ ցնս
Պիղատոս. եւ զթագաւորդ ձեր 'ի խաչ հա-
նիցեմ ։ Պատասխանի ետուն քահանայա-
պետքն. չիք մեր թագաւոր բաց 'ի Կայսե-
րէ ։ * Յայնժամ ետ զնա 'ի ձեռս նց, զի 'ի 16
խաչ ելանիցէ ։
‡ Մատթ. * ‡ Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ բար- 17
27. 33. ձեալ էր ինքնին զխաչափայտն, եւ ելանէր
Մարկ. 'ի տեղին՝ որ անուանեալ էր գագաթան,
15. 22. եւ կոչէր եբրայեցերէն Գողգոթա ։ * Ուր եւ 18
Ղուկ. 'ի խաչն իսկ հանին զնա. եւ ը՛ նմա երկուս
23. 33. եւս այլս աստի եւ անտի, եւ 'ի միջի զՅս ։
* Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եդ 19
'ի վր խաչին. եւ էր գրեալ. Յս Նազովրե-
ցի՝ թագաւոր Հրէից ։ * Զայն տախտակ 20
ընթերցան բազումք 'ի Հրէից, զի մօտ էր
'ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յս.
եւ էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն եւ
յունարէն ։ * Ասեն ցՊիղատոս քահանայա- 21
պետքն Հրէից. մի՛ գրեր թագաւոր Հրէից,
այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից ։
* Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրե- 22
ցի՝ գրեցի ։ * Իսկ զինուորքն իբրեւ հանին 23
‡ Մատթ. 'ի խաչ զՅս, ‡ առին զհանդերձս նր՝ եւ ա-
27. 35. րարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուո-
Մարկ. րի մասն ։ Իսկ զպատմուճանն՝ քանզի էր ա-
15. 24. ռանց կարանի՝ 'ի վերուստ փորանկեալ ա-
Ղուկ. մենեւին, * ասեն ցմիմեանս. մի՛ պատա- 24
23. 34. ռեսցուք զդա, այլ արկցուք վիճակս 'ի վր

դո-

դորա՝ ում և ելցէ։ Զի լցցի գիրն՝ որ ասէ.
| Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և || Սաղ.
'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին։ 21. 19.
Զինուորքն զայս ինչ գործեցին։
25 * Եւ կային առ խաչին Յսի մայրն նորա, և
քոյր մօր նր Մարիամ Կղէոփայ, և Մարիամ
26 Մագդաղենացի։ * Յս իբրև ետես զմայրն
և զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ,
27 ասէ ցմայրն, կին դու՝ ահա որդի քո։ * Ա-
պա ասէ ցաշակերտն. ահա մայր քո։ Եւ
յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ
28 իւր։ * Յետ այսորիկ իբրև գիտաց Յս, ե-
թէ ահա ամ ինչ կատարեալ է, | զի կա- || Սաղ.
29 տարեսցի գիրն, ասէ. ծարաւի եմ։ * Եւ 68. 22.
անդ կայր աման լի քացախով. և նոցա
սպունգ լցեալ քացախով ը լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բե-
30 րան նորա։ * Իբրև առ Յս զքացախն հան-
դերձ լեղւովն՝ ասէ. ամ ինչ կատարեալ է։
Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց
31 զոգին։ * Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր,
զի մի անդէն 'ի խաչին ագանիցին մարմինքն
մինչև ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն
այնորիկ. աղաչեցին զՊիղատոս՝ զի խորտա-
32 կեսցեն զբարձս նց՝ և բարձցին։ * Եկին
զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին
զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ ը նմա 'ի
33 խաչն ելեալ էր։ * Այլ իբրև եկին առ
Յս՝ և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ
34 խորտակեցին զբարձս նորա. * այլ մի ոմն

'ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նր.
եւ ել վաղվաղակի արիւն եւ ջուր։ * Եւ որ 35
եսեսն՝ վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութի
նր. եւ նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի եւ
դուք հաւատասջիք։ * Այս եղեւ՝ զի լցցի 36
Ելից. գիրն, ‖ եթէ ոսկր նր մի փշրեսցի։ * Եւ 37
12. 46. դարձեալ միւս գիր ‖ ասէ, եթէ հայեսցին
Սաղմոս. 'ի նա՝ յոր խոցեցինն.
33. 20. * ‖ Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, 38
Զաքար. որ յԱրիմաթեայ էր աշակերտ Յսի 'ի
12. 10. ծածուկ՝ վս ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յսի։ Եւ հրամայեաց Պիղատոս.
Մատթ. 27. 57. եկն եւ բարձ զնա։ * Եկն եւ Նիկոդեմոս՝ 39
Մարկ. ‖ որ եկեալն էր առ Յս 'ի գիշերի զառաջինն.
15. 43. եւ բերէր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրեւ
Ղուկ. լտերս հարիւր։ * Առին զմարմինն Յսի, եւ 40
23. 50. պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։ * Եւ էր 'ի 41
Ա Եզր. 3. 2. տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. եւ 'ի
պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք
երբէք էր եդեալ։ * Անդ վս ուրբաթուն 42
Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅս։

## Գլ. Ի.

Մատթ. Եւ ‖ 'ի միաշաբաթուջն Մարիամ Մագդա- Ա
28. 1. ղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն
Մարկ. 'ի գերեզման անդր. եւ տեսանէ զվէմն
16. 1. բարձեալ 'ի դրաց գերեզմանին։ * Ապա Բ
Ղուկ. ընթանայ՝ եւ գայ առ Սիմովն Պետրոս եւ առ
24. 1.

միւս

միւս աշակերտին՝ զոր սիրէրն Յս, և ասէ ցնո-
սա. բարձին զՏր 'ի գերեզմանէ անտի, և
3 ոչ գիտեմ՝ ո՞ւր եդին զնա: *Ել Պետրոս և
միւս աշակերտն՝ և գային 'ի գերեզմանն:
4 *Ընթանային երկոքեան 'ի միասին. և միւս
աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն
քան զՊետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն:
5 *Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ
6 կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ: *Եկն
և Սիմովն Պետրոս՝ որ գայրն զկնի նր. և ե-
մուտ 'ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝
7 զի կային անդ. *և վարշամակն որ էր 'ի
գլուխ նր՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ու-
8 րոյն ծալեալ 'ի մի կողմն: *Յայնժամ ե-
մուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յա-
ռաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւա-
9 տաց. *զի չև ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ
10 է նմա 'ի մեռելոց յառնել: *Չոգան դար-
11 ձեալ առ միմեանս աշակերտքն: *‖Իսկ ‖Մատթ.
Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և 28. 1.
լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գե- Մարկ.
12 րեզմանն, *և տեսանէ երկուս հրեշտակս 16. 5.
'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից և մի Ղուկ.
13 յանոտից՝ ուր կայր մարմինն Յսի: *Եւ նո- 24. 4.
քա ասեն ցնա. կին դու զի՞ լաս: Ասէ ցնս.
զի բարձին զՏրն իմ 'ի գերեզմանէ անտի,
14 և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա: *Զայս իբ-
րև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և
տեսանէ զՅս զի կայր. և ոչ գիտէր թէ Յս
15 իցէ: *Ասէ ցնա Յս. կին դու՝ զի՞ լաս, զո՞

խնդրես: Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պար-
տիզպանն իցէ, ասէ ցնա. Տէ՛ր՝ եթէ դու
բարձեր զնա՝ ասա՛ ինձ ուր եդիր զնա, զի
ես առից զնա: * Ասէ ցնա Յս. Մարիամ: 16
Եւ նա դարձաւ, և ասէ ցնա եբրայեցերէն.
ռաբբոնի, որ թարգմանի՝ վարդապետ: * Ա- 17
սէ ցնա Յս. մի՛ մերձենար յիս, զի չև ևս ե-
լեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղ-
բարսն իմ, և ասա՛ ցնոսա. ելանեմ ես առ
Հայրն իմ՝ և առ Հայր ձեր, և Ածն իմ՝ և
Ած ձեր: * Գնայ Մարիամ մագդաղենացի՝ 18
և պատմէ աշակերտացն, եթէ ետես նա
զՏր, և զայս ինչ ասաց ցնա:
Մարկ. * Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթոջ աւուրն. 19
16. 14. և դրունք փակեալ էին՝ ուր էին աշակերտքն ժո-
Ղուկ. ղովեալ վս ահին Հրէից, եկն Յս՝ և եկաց 'ի
24. 36. մէջ նց, և ասէ ցնս. ողջոյն ը ձեզ. * Իբ- 20
Ա. Կոր. րև զայս ասաց՝ եցոյց նոցա զձեռսն և զկողս
15. 5. իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին
զՏր: * Ասէ ցնս դարձեալ. ողջոյն ը ձեզ, 21
որպ առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ
զձեզ: * Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց 'ի նո- 22
Մատթ. սա և ասէ. առէք Հոգի սբ. * Եթէ ու- 23
16. 19. մեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա.
18. 18. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի: * Իսկ 24
Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն
երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն
Յս: * Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ 25
տեսաք զՏր: Եւ նա ասէ ցնոսա. եթէ ոչ
տեսից 'ի ձեռս նր զնշան բևեռացն, և ար-

կից

կիցս զմատունս իմ 'ի տեղիս բեւեռացն, եւ
մխեցից զձեռս իմ 'ի կողս նորա, ոչ հաւա-
տամ.
26 * Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 'ի ներքս
աշակերտքն, եւ Թովմաս ընդ նոսա. գայ Յս
դրօքն փակելովք. եւ եկաց 'ի մէջ, եւ ասէ.
27 ողջոյն ընդ ձեզ: * Ապա ասէ ցԹովմաս. բեր
զմատունս քո եւ արկ այսր, եւ տես զձեռս
իմ, եւ բեր զձեռն քո՝ եւ մխեա՛ 'ի կողս իմ,
եւ մի՛ լիներ անհաւատ՝ այլ հաւատացեալ:
28 * Պատասխանի ետ Թովմաս՝ եւ ասէ ցնա.
29 Տէր իմ՝ եւ Այ իմ: * Ասէ ցնա Յս. այդ զի
տեսեր զիս՝ եւ հաւատացեր, երանի՜ որոց
30 ոչ իցէ տեսեալ՝ եւ հաւատասցեն: * Բա- ‖ Այբ.
զում եւ այլ նշանս արար Յս առաջի աշակեր- 21. 25.
տացն իւրոց որ ոչ է գրեալ 'ի գիրս յայսմիկ:
31 * Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւա-
տայցէք, եթէ Յս Քս է որդի Այ. եւ զի
հաւատայցէք, եւ կեանսն յաւիտենականս
ընդունիցիք յանուն նը.

## Գլ. ԻԱ.

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն
իւր Յս աշակերտացն իւրոց առ ծովե-
զերբն Տիբերեայ. եւ յայտնեաց այսպէս.
2 * Էին 'ի միասին Սիմովն Պետրոս, եւ Թով-
մաս անուանեալն երկուորեակ, եւ Նաթա-
նայէլ՝ որ 'ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն
Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի եր-

կու ։ * Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս . երթամ 3
ձուկն որսալ ։ Ասեն ցնա . գամք և մեք ը՛
քեզ . գնացին և մտին 'ի նաւ , և յայնմ գի-
շերի կալան և ոչինչ ։ * Իբրև այգ եղև՝ կայր 4
Յս յեզր ծովուն , բայց ոչ ծանեան աշա-
կերտքն թէ Յս իցէ ։ * Ասէ ցնս Յս . մանու- 5
կունք՝ մի՞ թէ ունիք ինչ ուտելոյ . պատաս-
խանի ետուն և ասեն ցնա , ոչ ։ * Ասէ ցնո- 6
սա . արկէք յաջակողմն նաւին զուռկանդ ,
և գտանիցէք ։ Արկին , և ոչ կարէին ձգել
'ի բազմութենէ անտի ձկանցն ։ * Ասէ աշա- 7
կերտն այն , զոր սիրէր Յս՝ ցՊետրոս . Տր
է այն ։ Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տր է ,
արկաւ զիւրև զսփածանելին՝ քանզի մերկ
էր , և ընկէց զինքն 'ի ծովն ։ * Եւ այլ ա- 8
շակերտքն նաւաւն իսկ գային , քանզի չէին
հեռի 'ի ցամաքէն . այլ իբրև երկերիւր
կանգնաւ , քարշէին զգործին հանդերձ
ձկամբն ։ * Իբրև ելին 'ի ցամաք , տեսա- 9
նեն կրակետղ կայծականց , և ձուկն մի 'ի
վերայ , և հաց ։ * Ասէ ցնոսա Յս . բերէք 'ի 10
ձկանց այտի՝ զոր դուք կալարուք այժմիկ ։
* Եմուտ Սիմոն Պետրոս , և ձգէր զգոր- 11
ծին 'ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք , հա-
րիւր յիսուն և երիւք . և այնչափ ինչ կայր ,
և ոչ պատառեցաւ գործին ։ * Ասէ ցնոսա 12
Յս . եկայք ճաշեցէք ։ Եւ ոչոք յաշակերտացն
իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես , զի գի-
տէին թէ Տրն է ։ * Գայ Յս՝ և առնու ըզ- 13
հացն՝ և տայ նոցա , նոյնպէս և զձուկնն ։

* Զայս

14 * Զայս երիցս անգամ երեւեցաւ Յս աշա-
կերտացն յարուցեալ 'ի մեռելոց։
15 * Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս
Յս. Սիմոն Յովնանու սիրես զիս առաւել
քան զդոսա։ Ասէ ցնա. այո Տէր, և դու գի-
տես' զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա' արածեա՛
16 զգառինս իմ։ * Դարձեալ ասէ ցնա, Սի-
մովն Յովնանու սիրես զիս։ Ասէ ցնա. այո
Տէր և դու գիտես' զի սիրեմ զքեզ։ Ասէ
17 ցնա' արածեա՛ զոչխարս իմ։ * Ասէ ցնա ե-
րիցս անգամ. Սիմոն Յովնանու սիրես զիս.
տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս'
թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր' դու զամ
գիտես. և դու խսկ զամենայն ճանաչես, և
եթէ սիրեմ զքեզ։ Ասէ ցնա Յս. արածեա
18 զոչխարս իմ. * || Ամէն ամէն ասեմ քեզ. || Բ. Պետ.
զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօ- 1. 14.
տի ածէիր' և երթայիր յո՛ և կամէիր. և յոր-
ժամ ծերասցիս, ձեռս 'ի վեր կալցես. և
այլք ածցեն քեզ գօտի, և տարցին' ուր ոչն
19 կամիցիս։ * Զայս ասաց' նշանակել թէ
որով մահու փառաւոր առնիցէ զԱծ. և
զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. եկ զկնի իմ։
20 * Դարձաւ Պետրոս' և տեսանէ զաշակեր-
տըն զոր սիրէր Յս, զի երթայր զկնի. || որ || Վ. Յէ.
և անկաւ զլանջօքն նր' և ասէ, Տէր ով է' 13. 23.
21 որ մատնելոցն է զքեզ։ * Զնա տեսեալ
22 Պետրոսի, ասէ ցՅս. Տէր' խսկ սա զի։ * Ա-
սէ ցնա Յս. եթէ կամիմ, զի կացցէ դա'
մինչև ես գամ. քեզ զի՞ փոյթ է' դու եկ
զկնի

զկնի իմ. * Ել եւ բանս այս յեղբարս՝ և 23
համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանի-
ցի. և ոչ ասաց նմա Յս եթէ ոչ մեռանիցի.
այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ դա՝ մինչև ես
գամ։ * Այս աշակերտ է՝ որ վկայէ վն այ- 24
սոցիկ. որ և գրեացն իսկ զայսոսիկ. և գի-
տեմք, եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա.
ԱՎ Իբ. * ‖ Բայց է և այլ ինչ բազում զոր արար Յս, 25
ՑՕ. 30. զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ
թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն՝ որ թէ գրեալ էին.

## ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՅ
## ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

# ՑՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Զանգատեան, Տաճարի, Խաչաբերից, Բժշկութեան, և Ննջաստանի. որ ընթերցեալ լինին 'ի կարգաւորութեան հասարակաց աղօթից՝ ըստ ձայնին։

## ԱՒԵՏԱՐԱՆՔ ԶԱՆԳԻՍՏԵԱՆ.

Որք յայսմ տպագրութեան ունին 'ի սկիզբն խորհրդոց զնշանս զայս ※※. իսկ 'ի վախճանի զայս ※.

### 'Ի ՄԱՏԹԷՈՍ.

գլ. ժա. 25. Յայնմ ժամանակի։ վ. 30. իմ փոքրոգի է։
գլ. ժզ. 36. Յայնժամ [illegible]։ վ. 52. զսուրդ [illegible]։
գլ. իա. 18. Ընդ այգուցն էր։ վ. 32. հաւատալ նմա։
գլ. իե. 31. Եւ յորժամ եկեսցէ։ վ. 46. յաւիտենականս։

### 'Ի ՄԱՐԿՈՍ.

գլ. գ. 1. Դարձեալ [illegible]։ վ. 9. [illegible]։
գլ. դ. 26. Նա ասէր՝ այսպէս։ վ. 34. Մեկնէր զամ.
գլ. ժգ. 24. Այլ յաւուրսն յայն։ վ. 31. անցանիցեն։
գլ. ժգ. 32. Այլ վասն աւուրն։ վ. 37. արթուն կացջիք։

## 'Ի ՂՈՒԿԱՍ.

Գլ. Թ. 10. Դարձեալ առաքեալքն ։ մ. 17. աւելորդաւք ։
Գլ. ԺԲ. 32. Մի՛ երկնչիր ։ մ. 48. պահանջեսցեն 'ի նմանէ։
Գլ. ԺԷ. 3. Զգո՛յշ կացէք ։ մ. 10. առնել՝ արարաք։
Գլ. ԻԱ. 27. Եւ յայնժամ տեսցեն ։ մ. 38. լսել 'ի նմանէ։

## 'Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. Բ. 13. Եւ էր մերձ զատ ։ մ. 22. զոր ասաց Յս ։
Գլ. Ե. 19. Պատասխանի ետ ։ մ. 23. զառաքիչն նր ։
Գլ. Ե. 24. Ամէն ամէն ասեմ ։ մ. 30. առաքեացն զիս ։
Գլ. ԺԲ. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ ։ մ. 26. Հայրն իմ ։

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ.

*Որք ունին 'ի սկիզբն խորանաց զնշանս զայս*  *. իսկ 'ի վախճանի զայս*  ։

## 'Ի ՄԱՏԹԷՈՍ.

Գլ. ԻԴ. 1. Եւ ելեալ Յս ։ մ. 51. կրճել ատամանց ։

## 'Ի ՄԱՐԿՈՍ.

Գլ. ԺԳ. 1. Եւ յելանելն նր ։ մ. 37. արթուն կացէք ։

## 'Ի ՂՈՒԿԱՍ.

Գլ. ԻԱ. 5. Եւ ցասել ոմանց ։ մ. 38. լսել 'ի նմանէ։

'Ի

## Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. ԺԴ. 16. Ե՛րեն ասեն: Վ. ԺԵ. 13. Հայր յորդէ.

Կամ:

Գլ. Ժ. 22. Եղեն յայնժամ նաւա: Վ. 42. ի նա անդ:

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

## Ի ՄԱՏԹԷՈՍ.

Գլ. ԻԸ. 1. Երա յերեկոյի շաբ: Վ. 20. կատարած աշխարհի:

## Ի ՄԱՐԿՈՍ.

Գլ. ԺԵ. 42. Եւ իբրեւ երեկ: Վ. ԺԶ. 8. զի երկնչէին.

## Ի ՂՈՒԿԱՍ.

Գլ. ԻԳ. 50. Եւ ահա այր մի: Վ. ԻԴ. 12. զեղեալն եղե:

## Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Գլ. ԺԹ. 38. Յետ այսորիկ. Վ. Ի. 18. ինչ ասաց նմա.

# ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ·

*Որք ունին 'ի սկիզբն խորանաց զնշանս զայս ✠·*
*իսկ 'ի վախճանի զայս ◌ :*

## 'Ի ՄԱՏԹԷՈՍ·

Գլ· Դ· 23· Եւ շրջէր Յս: մ· 25· և յայնկոյս Յորդանանու:
Գլ· Ը· 1· Իբրեւ էջ 'ի լեռնէ: մ· 17· ցաւս մեր եբարձ:
Գլ· Ը· 28· Եւ եկեալ անդր: մ· 34· 'ի սահմանաց նոցա:
Գլ· Թ· 1· Եւ մտեալ 'ի նաւ՝ անց: մ· 8· մարդկան:
Գլ· Թ· 18· Մինչդեռ նա: մ· 26· երկիրն ընդ այն:
Գլ· Թ· 27· Եւ մինչդեռ: մ· 34· հանէ դա զդեւս:
Գլ· Թ· 35· Եւ շրջէր Յս: մ· Ժ· 1· հիւանդութիւնս:
Գլ· ԺԲ· 9· Եւ փոխեցաւ անտի: մ· 14· կորուսցեն զնա:
Գլ· ԺԲ· 22· Յայնժամ մա: մ· 37· պարտաւորեսցիս:
Գլ· ԺԴ· 22· Եւ աճապարեաց վաղվաղակի: մ· 36· փրկեցան:
Գլ· ԺԵ· 21· Եւ ելեալ անտի: մ· 31· առնէին զԱծ Իէլի:
Գլ· ԺԷ· 14· Եւ իբրեւ եկ: մ· 20· ոչինչ իցէ անհնարին ձեզ:
Գլ· Ի· 29· Եւ յելանելն նոցա: մ· 34· զհետ նորա:

## 'Ի ՄԱՐԿՈՍ·

Գլ· Ա· 21· Եւ մտանեն 'ի Կփառ: մ· 34· զնա թէ Քս է:
Գլ· Ա· 35· Եւ ընդ այգն ընդ: մ· 45· յամ կողմանց:
Գլ· Բ· 1· Եւ մտեալ դարձ: մ· 12· երբեք ոչ տեսաք:
Գլ· Գ· 1· Եւ եմուտ միւսանգամ: մ· 5· ձեռն նորա:
Գլ· Գ· 7· Իսկ Յս աշակերտ: մ· 12· արասցեն զնա:
Գլ· Ե· 1· Եւ եկին յայնկոյս: մ· 20· զարմանային:
Գլ· Ե· 21· Եւ իբրեւ անց Յս: մ· 43· նմա ուտել:

գլ. Զ. 53. Մինչ եերեկն ան։ մ. 56. մերձեցան՝ փրկեցան։
գլ. Է. 24. Մինչ անդր յայս։ մ. 30. ընդէր ՚ի մաքրեմն։
գլ. Է. 31. Մինչ եկեալ մն։ մ. 37. և համբերց խօսել։
գլ. Ը. 22. Գնան ՚ի Բեթսայ։ մ. 26. ասիցես ՚ի շինէն։
գլ. Թ. 13. Մինչ եկեալ ասա։ մ. 28. և աղօթեսյ։
գլ. Ժ. 46. Մինչ գան յերիքով։ մ. 52. ՚ի ճանապարհին։

## ՚Ի ՂՈՒԿԱՍ։

գլ. Դ. 31. Մինչ էջ ՚ի Կափառնաում։ մ. 42. Ել Յիսուս էր։
գլ. Ե. 12. Մինչ եղեւ ՚ի հա։ մ. 16. կայր յաղօթս։
գլ. Ե. 17. Մինչ եղեւ ՚ի միում։ մ. 26. նոր նշանս։
գլ. Զ. 1. Մինչ եղեւ ՚ի շա։ մ. 11. առնիցեն Յսի։
գլ. Է. 1. Մինչ էերեկն կա։ մ. 10. հիւանդ բժշկեալ։
գլ. Է. 11. Մինչ եղեւ ՚ի։ մ. 23. գայթակղեսցի յիս։
գլ. Ը. 22. Մինչ եղեւ ՚ի միում։ մ. 39. արարանմա Յս։
գլ. Ը. 40. Մինչ էերեկն դարձ։ մ. 57. որ ինչ եղեւն։
գլ. Թ. 37. Մինչ եղեւ ՚ի վա։ մ. 44. մեծամեծացն Այ։
գլ. ԺԱ. 14. Մինչ հաներ դեւ մի։ մ. 23. ընդ իս՝ ցրուէ։
գլ. ԺԴ. 10. Մինչ ասաց։ մ. 17. գործեցէք ՚ի նմանէ։
գլ. ԺԴ. 1. Մինչ եղեւ ՚ի մտա։ մ. 6. ոչ կարացին տալ այն։
գլ. ԺԷ. 11. Մինչ եղեւ մնալ։ մ. 19. կեցուցին զքեզ։
գլ. ԺԸ. 35. Մինչ եղեւ ՚ի մօ։ մ. 43. օրհնութիւն Այ։

## ՚Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ.

գլ. Դ. 46. Մինչ դարձեալ ՚ի Կա։ մ. 54. ՚ի Գալիլեա։
գլ. Ե. 1. Յետ այսորիկ։ մ. 18. առնէր զանձն Այ։
գլ. Թ. 1. Մինչ մինչդեռ ան։ մ. 38. երկրպագ նմա։
գլ. ԺԱ. 1. Մինչ էր ոմն հիւ։ մ. 46. զոր արար Յս։

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ·

## Ի ՄԱՏԹԷՈՍ·

գլ· ԻԷ· 27· Օձ որպէս փայ: վ· 35· եւ մի անցցեն:
գլ· ԻԷ· 35· Եւ հանեալ: վ· 50· արձակեաց զհոգին:
գլ· ԻԷ· 50· Եւ Յս դարձեալ: վ· 61· գերեզմանին:

## Ի ՄԱՐԿՈՍ·

գլ· ԺԵ· 22· Եւ ածեն զնա: վ· 37· եւ եհան զոգին:

## Ի ՂՈՒԿԱՍ·

գլ· ԻԳ· 32· Ածէին եւ այլ երկս· վ· 46· եհան զոգին:

## Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ·

գլ· Գ· 13· Եւ ոչ ոք ել յերկ: վ· 21· գործեցան:
գլ· ԺԹ· 16· Յայնժամ ետ: վ· 22· գրեցի՝ գրեցի:
գլ· ԺԹ· 25· Եւ կային: վ· 30· աւանդեաց զհոգին:

Բ. Ա.
№ 8378